

ԲԵՆԻԱՄԻՆ ՄԱԻԼՅԱՆ


ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ ԵՎ  
ՀԱՅԵՐԻ ԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ  
ՎՐԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
(1918 – 1921 թթ.)

ԵՐԵՎԱՆ

2016



6



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ  
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

БЕНИАМИН МАИЛЯН

НАЦИОНАЛЬНЫЙ ВОПРОС  
И  
ПОЛОЖЕНИЕ АРМЯН  
В РЕСПУБЛИКЕ ГРУЗИЯ  
(1918 – 1921 гг.)

ЕРЕВАН  
2016

---

REPUBLIC OF ARMENIA  
NATIONAL ACADEMY OF SCIENCES  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

BENIAMIN MAILYAN

NATIONAL ISSUE  
AND  
STATE OF ARMENIAN POPULATION  
IN THE REPUBLIC OF GEORGIA  
(1918 – 1921)

YEREVAN  
2016

118242

947.925

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱՍՏԻՈՒՅՏ

ԲԵՆԻԱՄԻՆ ՄԱԿԻՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ ԵՎ  
ՀԱՅԵՐԻ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ  
ՎՐԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ  
(1918 – 1921 թթ.)

ԵՐԵՎԱՆ  
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2016



Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ ք. գ. դ. Ա.Հ. Զաքարյան

Մահյան Բենիամին Վիկտորի

Մ 159 Ազգային հարցը և հայերի կացությունը Վրաստանի Հանրապետությունում 1918-1921 թթ., - Եր.: «Գիտություն» հրատ., 2016թ., 2016, 280 էջ:

Մենագրությունը նվիրված է Վրաստանի ազգամիջյան փոխհարաբերությունների ներքաղաքական ասպարեզում 1918-1921 թթ. ի հայտ եկած հիմնական գերակայությունների ուսումնասիրությանը: Հետազոտությունում աղյուրագիտական լայն հիմքի վրա հանրագումարի են բերված վրաց առաջին հանրապետության կառավարման բնագավառի նշանակայի առաջնայնությունները և զյուսպոր սկզբունքները. բացահայտվում են երկրում ազգային հարցի առաջացման ու արմատավորման րուն պատճառները: Հեղինակը, վերլուծելով հայերի և ազգային այլ փոքրամասնությունների կացությունը Վրաստանում, նոր մոտեցում է ցուցաբերում քննարկվող հիմնահարցին, ուսումնասիրում է խողիքը սոցիալ-տնտեսական, իրավական և կարևոր այլ գործոնների ազդեցության համատեքսուս:

Գիրքը նախատեսվում է պատմաբանների, քաղաքագետների, կովկասագետների և ընթերցող լայն հասարակայնության համար:

## ՆԱԽԱԲԱՆ

Քաղաքակրթության զարգացման պատմությունը ցույց է տալիս, որ որքան բարդանում են հասարակության սոցիալական կառուցվածքները, այնքան ենթակառուցվածքներում գործառվող և վերարտադրվող փոխհարաբերությունները նորանոր խնդիրներն են առաջադրում, որոնց համար կոնկրետ լուծումներ գտնելը դառնում է ժամանակի հրամայական պահանջ: Յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր առանձնահատկությունների հիման վրա մշակած գոյատևման իր կենսափիլիստիայությունը, որի հիմքի վրա և որոշակի տրամաբանությամբ կառուցվում է նրա ապագան: Պատմական երկարատև կամ էլ կարճ ժամանակաշրջանում ամեն մի ազգ որպես գոյատևման հզոր ուժ ունենում է իր առանցքային գաղափարը: Դա է կանխորոշում հասարակության զարգացման հետազա ուղիները, որոնք նրան կամ մ դուրս են բերում ներդաշնակ, դինամիկ առաջընթացի մայրուղի, որը թույլ է տալիս առանց ներքաղաքական և ներտնտեսական լուրջ ցնցումների հաղթահարել հասարակության ներսում առկա սուր հակասությունները՝ հիմնվելով քաղաքացիական համաձայնության բարձր ինքնազիտակցության վրա, կամ մ էլ դրա բացակայությունը երկիրը տանում է փակուղի, առճակատումների, դեգրադացիայի և, ի վերջո, կործանման: Թերևս այդպես եղավ ոուսական հին պետականության արագ քայլայման դեպքում: Եվ դրան նպաստեց, անշուշտ, ազգային հարցի առաջացումը: Անծայրածիր ու հսկայական այդ երկրի անթիվ ժողովուրդները ձգուում էին թոթափել կայսերական լուծը և ընտրել սեփական զարգացման ազատ ու անկաշկանդ ուղին:

1917-ի փետրվարյան իրադարձություններից հետո Ռուսական պետություններին կայսրությունում կյանքի էր կոչվում այն ամենը, ինչ այնքան ոգևորությամբ փառաբանվել էր փողոցներում ու հրապարակներում ազատության դրոշի տակ: Ռուսական միապետության անկումից անմիջապես հետո եվրասիական այս գեր-

պետության ողջ տարածքում լուծման առանձնահատող տեղ ուներ նրա բազմազան ազգությունների ինքնորոշման հիմնախնդիրը, այսինքն՝ իրենց սեփական կամրով ապազան կերտելու հարցը: Վրացական քաղաքական վերնախավը հենց սկզբից իրեն էր վերապահում Կովկասի ժողովուրդների զիսավոր ուժի և, հետևաբար, ազգային հարցի լուծման առաջնորդի պատասխանաւոր դերը: Կովկասում ազգային-տարածքային լուրջ վեճերի ու քաղաքական տարամերժ դիրքորոշումների հետևանքով, սակայն, տիրում էր փոխադարձ անվտակություն և թշնամանք: Վրացական ազգային շարժման արմատական թևը հանդէս էկավ վրացարնակ շրջաններին ինքնորոշման իրավունք տալու պահանջով: Հոկտեմբերյան հեղաշրջումը Ռուսաստանի մայրաքաղաքում նոր ընթացք տվեց զարգացող դեպքերին, երկրի ողջ տարածքում կտրականապէս փոխեց քաղաքական իրադրությունը: Խարթարվեց Այսրկովկասի երերուն միասնականությունը, ինչն առիջ տվեց 1918-ի մայիսի 26-ին վրացական անկախ պետականության հոչակմանը: Ազգային հարցը, սակայն, չէր կարող վերջնական իր հանգուցալուծումը ստանալ միայն վրաց ժողովրդի ինքնորոշման ակտով, քանզի «Վրաստան» կոչված տարածքն ուներ բազմազգ և այլացեղ բնակչություն: Ըստ այդմ<sup>1</sup> էլ ավելի է կարևորվում Վրաստանի նորագոյն պատմության խորքային կողմերի անաշառ լուսաբանումը: Ս. Մ. Մինասյանի արժեքավոր ուսումնասիրության մեջ զետեղված բազմաթիվ վավերագրերը և վկայությունները բացահայտում են, որ ազգային հարցը Վրաստանում տակավին մնում է չլուծված<sup>2</sup>: Եվ այդ կարևոր հանգամանքը չեն ուզում ճանաչել ոչ պաշտոնական թբիլիսին, ոչ էլ վրաց քաղաքական միջավայրը և զիտական հասարակայնությունը: Ուստի, «ուկե գեղմի» երկրում ազգային փոքրամասնությունների իրավունքների ասպարեզը ցայսօր էլ կարու է արդար և ազնիվ կարգավորման: Այսուեղից էլ ինքնին հասկանալի է դառնում, թե որքան այժմեական ու հրատապ կարևորություն է

<sup>1</sup>Տե՛ս Մինասյան Ս. Մ. Этнические меньшинства Грузии: потенциал интеграции на примере армянского населения страны. Ереван, 2006.

ստանում այս բնագավառում անցյալի ողջ փորձի համակողմանի ուսումնասիրումը և ընդհանրացումը, որն ունի ոչ միայն ճանաշողական, այլև գործնական նշանակություն:

Վրաստանի առաջին հանրապետության պատմության լուսաբանումը զիտահետազոտական նշանակություն ունի հատկապես արխագների, օսերի, վիրահայերի և այլ ազգությունների սոցիալ-քաղաքական կացության բացահայտման տեսակետից: Թեմայի հետազոտման արդիականությունը պայմանավորված է նաև այն տեսանելի իրողությամբ, որ հենց առաջին հանրապետության շրջանում դրվեցին այն սկզբունքները և հիմքերը, որոնցով Վրաստանն առաջնորդվում է ժամանակակից ներքին իր քաղաքականության նպատակները սահմանելիս: Այսպիսով, կարելի է արձանագրել, որ սույն թեման ուսումնասիրելու անհրաժեշտությունը համահունչ է ներկա գործընթացներին, երբ պատմաքաղաքական զանազան հանգամանքների բերումով ինքնուրույն և հիրավի անկախ պետություն դառնալու ուղին բռնած Վրաստանը որոշակի քայլեր է կատարում իրավական անհրաժեշտ դաշտ ստեղծելու հումանիտար ոլորտում և այն կատարելագործելու ճանապարհին: Սակայն դրա հետ մեկտեղ, մեր կարծիքով, իշխող մուայնություն են դարձել որոշ զաղափարներ, որոնք վստահություն չեն ներշնչում և չեն բխում ուժեղ ու լիարժեք պետություն դառնալու այն նպատակադրումների ոգուց, որ իրենց առաջ դրել են վրաց հասարակական լավագույն և առաջանայի ուժերը: Խոսքը վերաբերում է ազգային փորբամասնությունների իրավական կացության կարգավորման տեսակետից կասկածելի և միանգանայն ոչ արդարացված հանրաճանաչ սահմանափակումներին:

ԽՍՀՄ-ի կազմաքանդման հետևանքով տեղի ունեցած հասարակական հարաբերությունների արմատական հեղափելումները և քաղաքական մարտահրավերները նոր խնդիրներ առաջադրեցին պատմագետներին: Վերջին տարիներին, սակայն, ակնհայտ դարձավ, որ Վրաստանի նորագույն ժամանակաշրջանի բազմակուտակ և խճճված պատմության մի շարք հիմնահարցեր, որոնք ունեն զիտաքաղաքական արդիական նշանակու-

թյուն, ոչ միայն չեն գտել իրենց հայեցակարգային լուծումները, այլև շարունակում են մնալ տակավին շլուսաբանված հարեւան երկրի պատմագիտության մեջ: Պետք է նշել, որ վրաց հեղինակները ազգամիջյան փոխհարաբերությունների ասպարեզում առաջ եկած իրարամերդ հիմնախնդիրները հաճախ դիտարկում են ժամանակի իշխանությունների պաշտոնական դիրքորոշումների և պետական քարոզության համատեքստում, ինչի հետեւանքով այդ ուսումնասիրություններում մի շարք կարևոր իրողություններ մեծ մասամբ ներկայացվել են հպանցիկ կամ ընդհանրապես չեն հիշատակվել: Ուստի, Վրաստանում ազգային հարցի առաջացման և նրա խորքային կողմերի քննությունը պատմագիտական առանձին հետազոտության առարկա մինչդեռ չի դարձել, առավել ևս, որ այդպիսի նպատակ մեզանում չեն էլ դրել:

Սեր հետազոտության նորույթն այն է, որ գիտական շրջանառության մեջ ներգրավելով մեծ քանակությամբ փաստաթթերու կարևոր այլնայլ նյութեր, առաջին անգամ փորձ է արվում վեր հանել ազգային հարցի գոյության իրողությունը վրացական առաջին հանրապետությունում և այն դիտարկել իր բոլոր արտահայտումների ու առանձնահատկությունների մեջ:

Առ այսօր կովկասագետ պատմաբանները համադրման մեջ չեն լուսաբանել օսական, արխազական, աջարական ու այլնայլ կնճռոտ հիմնահարցերը: Հետևաբար, վերոնշյալ պատմագիտական խնդիրները համեմատական և քազմակողմանի վերլուծության ենթարկելու փորձ է իրականացվել ընթերցողի դատին ներկայացված սույն ուսումնասիրության շրջանակներում:

Սենք, սակայն, Զավախիքի հայ քնակչության կացության լուսաբանման գիտահետազոտական կարևոր խնդրին չենք անդրադառնում, քանզի երա պատմությունն ամբողջացվել և սպառիչ մեկնաբանության է արժանացել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Ա. Մելքոնյանի համապարփակ ուսումնասիրությունների մեջ<sup>2</sup>: Սեր

<sup>2</sup>Տե՛ս Մելքոնյան Ա. Ա. Զավախիքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Երևան, 2003, նույնի՝ Նյութեր Ախալցխայի և Ախալքալաքի

հետագույնության հիմնական առարկան վիրահայերի և արխա-  
զահայերի պատմության շլուսարանված էջերն են<sup>3</sup>: Սույն մենա-  
գրության նպատակն է, ըստ էության, զիստական ասպարեզ հա-  
նել, համակարգված մեկնաբանել և վերծանել Վրաստանի հայու-  
թյան կյանքի և կացության այն կողմերն ու իրադարձություն-  
ները, որոնք առաջին մութ են մնացել և, հետևաբար, դեռ չեն գտել  
իրենց պատշաճ տեղը հայրենի պատմագիտությունում:

**Մենագրության աղյուրագիտական հենքը Հայաստանի**

---

դպրոցների պատմությունից (19-րդ դար – 20-րդ դարի սկիզբ). Երևան,  
2005, նույնի՝ Javakhet: in the 19<sup>th</sup> century and the 1<sup>st</sup> quarter of the 20<sup>th</sup>  
century (A historical research), Yerevan, 2007.

<sup>3</sup> Այս թեմային վերաբերող մի շարք աշխատություններ ունի միայն  
տողերիս հեղինակը. տե՛ս Սահյան Բ. Վ. Հայկական դպրոցները  
Վրաստանի Հանրապետությունում 1918 – 1920 թթ. // ՊԲԸ, 2006, № 1, էջ  
181–199, նույնի՝ Հայոց մշակութային ինքնավարության ծրագիրը Վրաս-  
տանի Հանրապետությունում (1920 թ.) // Մերձավոր և Միջին Արևելիքի  
երկրներ և ժողովուրդներ, հ. XXVI, Երևան, 2007, էջ 173–179, նույնի՝ Ար-  
խագիրայի հայ զարդուի պատմությունից // Մերձավոր և Միջին Արևելիքի  
երկրներ և ժողովուրդներ, հ. XXVII, Երևան, 2009, էջ 111 – 122, նույնի՝  
Вопросы армянской школы в Демократической Республике Грузия // ВЕСТ-  
НИК Российско-Армянского Университета (гуманитарные и общественные  
науки), 2010, № 1, с. 23 – 24, նույնի՝ Արխագիրայի հայկական դպրոցների  
պատմությունից (1918 – 1921 թթ.) // Հայ – Շուտական Համալսարանի  
հիմներորդ տարեկան գիտաժողով (6 – 10 դեկտեմբերի 2010 թ.), Գիտա-  
կան հոդվածների ժողովածու, Երևան, 2011, էջ 25–35, նույնի՝ Վրաստա-  
նի Հայոց ազգային խորհրդի գործունեության պատմությունից (1918 թ.  
օգոստոս – 1921 թ. փետրվար) // ՊԲԸ, 2011, № 1, էջ 61–81, նույնի՝ Արмения  
в контексте миграционных процессов в Абхазии и её этнополитической ис-  
тории конца XIX – начала XX веков // НАИРИ (Альманах: сборник мате-  
риалов об Армении и армянской диаспоре). Ниж. Новгород, 2013, № 6, с.  
169–187, նույնի՝ Программа учреждения культурной автономии армян в  
первой республике Грузии // Десятая годичная научная конференция Рос-  
сийско-Армянского Университета. Сборник статей, Ереван, 2015, с. 524–  
529.

ազգային արխիվի (ՀԱԱ) փաստաթղթերն են<sup>4</sup>, նաև Վրաստանի Կենտրոնական պետական պատմական արխիվի (ՎԿՊՊԱ) նյութերը<sup>5</sup>: Արխիվային վավերագրերից բացի, աշխատության համար փաստագրական կարևոր հիմք են ծառայել ժամանակի պարբերական մամուլում հրապարակված արժեքավոր բազմաթիվ վկայությունները: Կատարվել է նաև վիճակագրական տվյալների վերլուծություն:

Ուսումնասիրության համար արժեքավոր սկզբնաղբյուր են նաև այն հրապարակումները, որոնցում քննարկվող հիմնահարցի լուսաբանման տեսակետից կան կարևորություն ներկայացնող փաստեր ու զանազան տվյալներ: Այդ առումով առանձնանում են Վրաստանում ՀՀ-ի դեսպանորդ Ա. Զամայանի աշխատությունը<sup>6</sup>, ինչպես նաև Սոչիի Հայոց ազգային խորհրդի նախագահ Ա. Հակոբյանի հուշերը<sup>7</sup>:

<sup>4</sup>Տե՛ս ՀԱԱ, Վրաստանի Հայոց ազգային խորհրդի № 441 ֆոնդ, Հայաստանի առաջին Հանրապետության Արտաքին գործերի նախարարության № 200 ֆոնդ:

<sup>5</sup>Տե՛ս ՎԿՊՊԱ, Վրաստանի դեմոկրատական հանրապետության կառավարության քարտուղարության № 1861 ֆոնդ:

<sup>6</sup>Տե՛ս Զամայան Ա. Հայ-վրացական կենճոր, Երևան, 2011:

<sup>7</sup>Տե՛ս Կարեն, Արևմտահայ գաղութ մը Կովկասի մէջ // ՀԱՅՐԵՆԻՔ (հանդես, Բուստոն), 1930, դեկտեմբեր, էջ 145–156, 1931, հունվար, էջ 105–115, մարտ, էջ 159–164, ապրիլ, էջ 161–166, հունիս, էջ 138–146, օգոստոս, էջ 148–155, սեպտեմբեր, էջ 156–159, հոկտեմբեր, էջ 134–141, նոյեմբեր, էջ 141–149, դեկտեմբեր, էջ 149–159, 1932, հունվար, էջ 154–159, մարտ, էջ 139–145, ապրիլ, էջ 141–147:

Գլուխ I

ՎՐԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊԱՆԻ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՄՐԱՊԱՆ ՍԿԳԲՈՒՆԿԵՐԵՐԸ

1918 թ. մայիսի 26-ին Թիֆլիսում հոչակվեց վրացական անկախ պետականության վերականգնումը՝ Վրաստանի Դեմքրատական Հանրապետություն (այսուհետև՝ ՎԴՀ): Այդ օրը Վրաստանի Ազգային Խորհուրդը (այսուհետև՝ ՎԱԽ) հաստատեց «Անկախության մասին ակտ»-ը<sup>1</sup>: Ազելի քան 100 տարի վրաց ժողովուրդը զրկված էր եղել սեփական ուժերով իր ճակատազիրը տնօրինելու իրավունքից, և այդ հոչակագրով հնարավոր դարձավ նորովի կերտել ազգային կառույցներն ու խորհրդանիշերը<sup>2</sup>, առանց որոնց անհնարին է պատկերացնել ցանկացած կազմակերպված պետության գոյությունը: Սուեդվեց կույիշին սկզբունքի վրա հիմնված հանրապետական առաջնորդությունը:

<sup>1</sup> Сб. «Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии [под ред. Войтинского В. С.]. Тифлис, 1919, с. 336–337. Чрши-тшанի аնқвадупირյան զաղափարի վերածնման, տարածման և արմա-տավորման մասին մանրամասն տե՛ս և Մայլян Բ.В. *К проблеме актуализации вопроса самоопределения Грузии на рубеже XIX и XX веков // ИСТОРИЧЕСКОЕ ПРОСТРАНСТВО* (Проблемы истории стран СНГ), Москва, 2014, с. 33–50.

<sup>2</sup> ՎՀՀ-ի պետական դրոշն առաջին անգամ բարձրացվել է 1918 թ. մայիսի 26-ին ոուս փոխարքաների նախկին պալատի շենքի զիմին՝ Վրաստանի անկախության հիշակման արարողության ավարտից անմիջապես հետո: Հանրապետական բանկանզ դրոշի հեղինակն էր քանիակազործ և նկարիչ Յ. Ի. Նիկողաձեն: 1918 թ. հոկտեմբերի 8-ին կառավարությունը հաստատեց պատմաբան Ի. Զավահիշվիլու կազմած և նկարիչ Ի. Ա. Շաղենանի գծած զինանշանի նախագիծը, որի կենտրոնական մասում պատկերված է Սր. Գևորգը՝ Պետական օրիներգն էր դարձել Կ. Փողիկերաշվիլու «Դիդերա» («Ի փառ») մեղեղին (տե՛ս և Տաճարացքությունը օնթորություն, ՀՀ Տաշանք, տօնություն, 2003. ջ. 62):

կառավարությունը<sup>3</sup>: 1918 թ. հունիսի 24-ին վարչապետի պաշտոնը ստանձնեց Ն. Ն. Ժորդանիան:

Վրաց առաջին հանրապետության կազմավորումն ընթանում էր ղծկարին պայմաններում: Անհրաժեշտ էր կարճատև ժամանակամիջոցում հաղթահարել ներքին հակասությունները, խաղաղեցնել սոցիալական և ազգային խմբերին, մի խորով դուրս գալ քառոսի ու անհջանանության ճիրաններից:

Քանի որ անկախության հոչակումից հետո հնարավոր չէր միանգամից անցկացնել իրավագոր խորհրդարանի ընտրություններ, ուստի ՎԱԽ-ը իրեն էր վերապահել ժամանակավոր օրենսդիր բարձրագույն մարմնի կարգավիճակը, որի նախագահ ընտրվեց սոցիալ-դեմոկրատ Ն. Ս. Չիւեհձեն (Կառլո): Հաջորդ օրերին ձևավորվեց, կուսակցական ներկայացուցչության սկզբունքով ընդլայնված, ՎԱԽ-ի նոր կազմը, որին անդամակցեցին 67 սոցիալ-դեմոկրատ (այդ թվում հայազգի՝ Բ. Միկիրտումովը և Ս. Վարդյանը)<sup>4</sup>, 16 սոցիալիստ ֆեդերալիստ<sup>5</sup>, 15 ազգային դե-

<sup>3</sup> Նրա կազմի մեջ մտան չորս սոցիալ-դեմոկրատ՝ Ն. Ռամիշվիլի (ներքին գործերի նախարար, որը առժամանակ վարեց նաև վարչապետի պաշտոնը), Ա. Չիւենկելի (արտաքին գործերի նախարար), Գ. Գիորգաձե (զինվորական նախարար), Ն. Խոմերիկի (երկրագործության և աշխատանքի նախարար), Երկու սոցիալիստ ֆեդերալիստ՝ Գ. Լասիխչվիլի (ժողովրդական լուսավորության նախարար), Շ. Ալեքսի-Մեսիխչվիլի (արդարադատության նախարար), ազգային դեմոկրատ՝ Գ. Շուրուլի (ֆինանսների, արևտրի և արդյունաբերության նախարար), սոցիալիստ հեղափոխական՝ Ի. Լորթիփիանիձե (հաղորդակցության ուղիների նախարար): Տե՛ս Silogava V. & Shengelia K. *History of Georgia: from the ancient times through the «Rose revolution»*. Tbilisi, 2007, p. 208–209.

<sup>4</sup> Տե՛ս Խրոնիկա // КАВКАЗСКОЕ СЛОВО, 30. V. 1918. Ն. Ս. Չիւեհձեի Եվրոպա գործուղվելուց հետո (1919 թ., հունվար) խորհրդարանի նախագահ կարգվեց ականավոր պատմաբան ու ազգագրագետ Է. Թադիշվիլին (ազգային դեմոկրատ):

<sup>5</sup> Տե՛ս ՀՈՐԻԶՈՆ, 2. VI. 1918:

<sup>6</sup> 1904 թ. Ծննդում հիմնվում է սոցիալիստ ֆեդերալիստների (ՍՖ) կազմակերպությունը՝ առաջին քաղաքական կուսակցությունը Վրաց իրականության մեջ: Ակզենտապետ այն ընդգրկում էր բոլոր նրանց, ովքեր

մոկրասո՞ւ, 12 սոցիալիստ հեղափոխական<sup>8</sup>, 3 ռադիկալ-դեմոկրատ, 4 «այլոնական» և 2 անկուսակցական<sup>9</sup>: ՎԱԽ-ը հետագա-

ձգուում էին վերականգնել Վրաստանի ինքնուրույնությունը: Կուսակցության կարգախոսները միաձուլել էին և ազգային, և սոցիալական ազատագրման գաղափարախոսական դրույթները: Իր գոյության վաղ շրջանում ՍՖ բաղկացած էր երկու՝ «ինքնավարականների» ու ազգային դեմոկրատների թերթից: Վերջինիս հարեցին նաև վրաց «անարիխիստները» (Ս. Շերեթելի, Վ. Զերեգիշվիլի և այլք): Չինելով միատարր և վերապրելով մի շարք պառակուումներ՝ 1919 թ. հունվարին ՍՖ հոսմբը դարձյալ կիսվեց: Մեծամասնությունը համախմբվեց *Սոցիալիստ ֆեդերալիստների հեղափոխական (բանվորական)* կուսակցության մեջ, որի առաջնորդն էր Գ. Լասիխչվիլի (Լալի), իսկ լրատվամիջոցը՝ «Աշխալյուն սարմե» («Ժողովրդական գործ») պարբերականը: Երկրորդ՝ սակավաթիվ հոսմբը ձևավորեց Զախ սոցիալիստ ֆեդերալիստների «Աշաշվարտա» կուսակցությունը (Ա. Ի. Շերեթելի և ուրիշներ): Ունեալով «սինդիկալիստական» հակումներ՝ ՍՖ-ի այս թևը, ի վերջո (1920 թ.), վերադարձավ մայր կուսակցության գիրկը:

<sup>7</sup> Ազգային դեմոկրատների (ԱԴ) բաղարական հոսմբը գոյություն ուներ դեռևս 1905 թ. հունվարից, երբ մի խումբ հասարակական գործիչներ մտադրվեցին ստեղծել ազգային կուսակցություն: Այդ առաջին փորձը, սակայն, ապարդյուն եղավ: Վրաց գրականության դասական նյայ Ճավճավաձեն առաջինը եղավ, ով համակարգեց ազգայնականների գաղափարախոսությունը և 1906 թ. շարադրեց նրանց ծրագիրը: Միևնույն միապետության տապալումը, գոյություն ուներ այդ գաղափարախոսության կրողների երկու խումբ: Մեկը համախմբված էր «Երի» («Ազգ») ամսագրի շուրջ, մյուսը՝ «Կլիք» («Ժայռ»): Գլխավոր ջրբաժանը ազնվականության և քաղքենիության, նաև ունենոր գյուղացիության սոցիալ-տնտեսական շահերի հակադիր լինելու մեջ էր, սակայն նրանց բաղարական ձգումների համատեղումը և մերձեցումը, ի վերջո, հիմնականում և գերազանցապես հետարար եղավ հակահայկական պլատֆորմի վրա: 1917 թ. հունիսին հիմնվեց ազգային դեմոկրատների ինքնուրույն կուսակցություն, որը հանդես էր գալիս լիբերալ-բուրժուական վերափոխումների իրականացման ծրագրով: Սակայն եվրոպական չափանիշների տեսակետից նրան կարելի է դասել պահպանողական հակումներ ունեցող կազմակերպությունների շարքը: Կուսակցության կարկառուն դեմքերից էին Ն. Նիկոլաձեն, Ս. Քեղիան, Գ.

Գվազավան, Է. Թաղախշվիլին, Պ. Գուտուան, Գ. Կիկոձեն: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Վրաստանի հասարակական կյանքում վրաց սոցիալ-դեմոկրատներից հետո ԱԴ իրականում քաղաքական երկրորդ ուժն էր: Սույն կազմակերպությունը լույս էր ընծայում վրացատար «Սարարթվելո» (նաև՝ «Ախալի Սարարթվելո», «Խվերիա») և ոռուսատար «Վոզրոդինիե», «Գրուզիա», «Օքնովլենիե» պարբերականները: Վրաստանի պետական և հասարակական կյանքում անհամեմատ համեստ դեր էին խաղում ԱԴ-ից առանձնացած ևս երկու կուսակցությունները: Ռադիկալ դեմոկրատների գյուղացիական կուսակցությունը ստեղծվել էր 1917 թ. աշնանը՝ ԱԴ-ից իր սակավաթիվ «ձախ» թևի անջատման հետևանքով: Հոդային բարեփոխման շուրջ ծագած սկզբունքային հակասությունների պատճառով՝ 1919 թ. հունվարին ԱԴ - ից առանձնացավ նաև «աջ»՝ առավել պահպանողական թևը, որն արտահայտում էր կալվածատերերի շահերը: Նրա անդամները (Գ. Վեշապելի, Ռ. Գարաչվիլի, Շ. Վաչնաձե, Մ. Մաշաբելի, Գ. Ամիրեշիբի և այլք) հայտնի են որպես «անկախ» ազգային դեմոկրատներ, սակայն նրանց ձևավորած կուսակցությունը կրում էր «ազգային» անվանումը: Քաղաքական այդ հոսանքի տեսակետները տարածում էր «Կլիկ» (նաև՝ «Սալի Կլիկ») շաբարաթերթը: «Անկախ» ազգային դեմոկրատներին զաղափարապես հարում էին նաև «Վրաստանի անկախության կոմիտե»-ի (ստեղծվել էր 1914 թ.) նախկին անդամները (Պ. Սուրզուլաձե, Գ. Մաշաբելի, Մ. Շերեթելի, Լ. Կերեսելիձե և այլք), որոնք միաձուվեցին ընդհանուր կազմակերպության մեջ: 1921 թ. հունվարին «անկախ» և «ռադիկալ» ազգային դեմոկրատները, ինչպես նաև «անկուսակցականների միություն» կոչված հասարակական կազմակերպության անդամները ստեղծեցին Շեմոկրատական կուսակցություն, որը մտածված էր պահպանողական և ազգային-արմատական բոլոր ուժերի համախմբման համար:

<sup>8</sup> Ուսասատանի սոցիալիստ հեղափոխականների (էսէռներ) անդրկովկասյան ճյուղից առանձնացած վրաց կուսակիցները ստեղծեցին (1918 թ., հունիս) ինքնուրույն ՍՀ կուսակցություն: Քաղաքական այդ հոսանքի տեսակետներն արտահայտված են «Շրոմա» («Աշխատանք») պարբերականի էջերում: Կուսակցությունը զիսավորում էին Լ. Շենգելայան (նոյն ինքը ականավոր գրող Լեռ Կիաչելի), Ի. Նուցուրիձեն և Ի. Գորեշիան:

<sup>9</sup> Национальный совет Грузии // КАВКАЗСКОЕ СЛОВО, 1. VI. 1918.

յում որոշում կայացրեց իր կազմում ընդգրկել նաև Վրաստանի ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին՝ հայերին հատկացնելով 10, արխազներին՝ 5, թաթարներին՝ 4, ոուսներին՝ 3, օսերին<sup>10</sup> և հրեաներին<sup>11</sup>՝ 2-ական, իսկ հույներին ու գերմանացիներին<sup>12</sup>, 1-ական պատգամավորական տեղ<sup>13</sup>: ՎԱԽՈՒՄ աշխատանքի համար լիազորվեցին Վրաստանի Հայոց ազգային խորհրդի (այսուհետև՝ ՀԱԽ) անդամները<sup>14</sup>: Հարկ է փաստել, որ վրաց խորհրդարանում այլ ազգությունների ներկայա-

<sup>10</sup> Իբրև պատգամավորներ լիազորվեցին Գ. Գազլուք և Ա. Թիֆիլովը (տե՛ս Լրատու // ՀՈՐԻԶՈՆ, 20. X. 1918):

<sup>11</sup> «Վաղեմի ժամանակներից երկրում բնակվող վրացախոս հրեաները հայտարարեցին, որ իրենց զգալով խևական քարքվելներ, անհիմն են համարում սեփական ներկայացուցչություն ունենալ խորհրդարանում, «քանի որ այսուեղ իրենց իրավունքները պաշտպանված են ամբողջ վրաց ժողովրդի շահերի հետ հավասար կերպով» (տե՛ս Լրատու // ՀՈՐԻԶՈՆ, 11. X. 1918, նաև՝ Հրոնիկա: գրuzinckie eobrei // КАВКАЗСКОЕ СЛОВО, 11. X. 1918): Ռուսական տիրապետության շրջանում առավելապես Թիֆլիսում բնակություն հաստատած Եվրոպական աշքենազ-հրեաները, որոնց միջավայրում գորեղ էր սփռնաստական կազմակերպությունների ազրեցությունը, բողոքարկեցին իրենց ցեղակիցների անջատ այս քայլը, սակայն ապարդյուն (տե՛ս Հրոնիկա: промтесем еօրեօ // КАВКАЗСКОЕ СЛОВО, 12. XI. 1918):

<sup>12</sup> Վրաստանի գերմանացիների ազգային խորհուրդը երաշխավորել էր «Kaukasische Post» լրագիրը խմբագրող ճանաչված հրապարակախոս և հասարակական գործիչ Ա. Ֆ. Լայսերի (Լիստ) թեկնածությունը (տե՛ս Լրատու // ՀՈՐԻԶՈՆ, 2. VI. 1918): Մինչև 1941 թ. Վրաստանում գոյություն ուներ շուրջ 20 գերմանական բնակավայր, որոնցից առավել խոշորն էին՝ Եկատերինենքելը (այժմ՝ Բոլիսիի), Սարիենքելը (այժմ՝ Սարթիձալա), Ալեքսանդերորդը (այժմ՝ Ավճալա) և Էլիզաբեթալը (այժմ՝ Ասուրեթի):

<sup>13</sup> Հրոնիկա: Национальные меньшинства // КАВКАЗСКОЕ СЛОВО, 27. VIII. 1918.

<sup>14</sup> Բացի ՀԱԽ-ից, Թիֆլիսում գործում էր հայկական մշակութալուսավորչական, քարեգործական, արհեստակցական և հայրենակցական ևս 43 միություն (տե՛ս Հրոնիկա: Карабахский митинг // КАВКАЗСКОЕ СЛОВО, 22. VI. 1919):

ցուցառթյունը սահմանվել էր «Անկախության մասին ակտով»: ՎԱԽ-ը, սակայն, գիտակցաբար հապաղում էր այդ իրավունքը գործնականում իրականացնող քայլերից, մինչև որ երկրի ազգաբնակչության բաղաքացիության մասին ընդհանուր հարցը շատացավ իր նպաստավոր լուծումը՝ հատկապես էթնիկ վրացիների շահերի տեսանկյունից:

Խորհրդարանում ոչ վրաց փորրամասնությունների ներկայացուցության մասին օրենքն ընտրության իրավունք էր տալիս սույն ազգային այն լիազոր կառույցներին, որոնք բաղկացած էին Վրաստանի բաղաքացիներից և որոնց գործունեությունը սահմանափակվում էր հանրապետության շրջանակներով<sup>15</sup>: Հետևաբար, «կազմւեցին փորրամասնութեան կողմից մի շարք ազգային

<sup>15</sup> Վրաստանի պառլամենտ // ՍՇԱԿ, 31. X. 1918: «Դեմոկրատական հանրապետության» ժամանակաշրջանում գոյություն ունեին ուս, հույն, հրեա, ասորի և Վրաստանի այլ ազգությունների շահերն ու տեսակետները ներկայացնող բազմաթիվ ու բազմազան կազմակերպություններ: Բաղաքական դաշտում առավելապես աշքի էին ընկնում ուս եւեների և սոցիալ-դեմոկրատների կուսակցությունների անդրկովկայան ճյուղերը: Այդ հոսանքների ներկայացուցիչներն իրականում չեին հաշտվում Վրաստանի և կովկասյան այլ հանրապետությունների անկախության փաստի հետ և իրենց ոուսակեզրու մամուլի էջերում («Զնամյա տրուդ», «Նարողնոյե զնամյա», «Զնամյա ռեվոլյուցիի», «Սոցիալ Դեմոկրատ» և այլն) «միջազգայնականության» տեսակետից խստորեն դատապարտում էին Այսրկովկասի բաղաքական կյանքում գոյություն ունեցող այս կամ այն բացասական ու արատավոր երևությունները: 1919 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին կոմունիստների կազմակերպած խոռվությունների ճնշումից անմիջապես հետո Վրաստանում արգելվեց այդ կառույցների պարբերականների լուս ընծայումը: Խորհրդային Ռուսաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելուց հետո վրաց իշխանությունները թույլատրեցին ՌՍԴԲԿ-ի «միջազգայնականների» ճյուղի գոյությունը, որի տեսակետներն արտահայտում էր նաև հայալեզրու «Նոր Խոսք» շաբաթաթերթը: 1920 թ. ավարտին սակավաթիվ այդ խումբը միացավ վրաց կոմկուսին: Վերջինիս հետ միաձուլվեց նաև մուսուլմանական սոցիալիստամետ «Աղալյաթ» կազմակերպությունը:

*Հ Յ Ո Ւ Յ Ե Ր*

խորհուրդներ՝ հայկական, ուստական<sup>16</sup>, յունական, օսմական, արխագական, սակայն նրանց ոչ իրաւական դրութիւնն էր յայտնի և ոչ էլ իրաւունքի ու պարտականութեան սահմանները որոշւած ու ընդգծւած: Ազգային խորհուրդների գոյութիւնը վրաց կառավարութիւնն իբրև փաստ ընդունում ու հանդուրժում էր ըստ իր ցանկութեան և մումենտի ճնշման տակ միայն: Այն էլ ճիշտ է, որ թէ՝ կարինետների դեկլարացիաները և թէ՝ Ազգային խորհուրդների կազմից վրաց պաղամենտի համար անդամներ իրաւիրելը ստեղծել են պրեցենդէնս և որոշ չափով գրաւական են հանդիսանում փորրամասնութեան իրաւունքի ճանաշման, բայց այդ դեռ չի նշանակում, թէ այդ իրաւունքը վերջնականապէս հաստատված է Վրաստանում<sup>17</sup>: Իրավական անորոշ կացությունը, որի մեջ գտնվում էին ոչ վրաց ազգությունների շահերը ներկայացնող այս կառույցները, ունաց հնարավորություն էր ընձեռում առաջ քաշել դրանց հետագա գոյությունն արգելելու մասին պահնօք: Ըստ ԱԴ-ի կուսակցական մամուլում արտահայտված տեսակետի, «կառավարութեան ձեռք առնելիք հերթական միջոցները այդ խորհուրդների լիկվիդացիայի գործին պէտք է վերաբերին»<sup>18</sup>:

ՎԴՀ-ի առաջնորդների համար ուսկանական ոլորտը եղել է մշտական հոգածության առարկան: 1918 թ. հուլիսի 2-ին ՎԱԽ-ը հաստատեց «ժողովրդական զվարդիայի» մասին օրենքը, ըստ

<sup>16</sup> Վրաց պատգամավորները մոգնած պատրվակով մերժեցին խորհրդարանում աշխատելու համար գործուղված Ռուսական ազգային խորհրդի (նախագահ՝ Ֆ. Ն. Լեբեդի) թեկնածուների լիազորությունները (տե՛ս Լրատու // ՀՈՐԻԶՈՆ, 30. X. 1918): Ըստ ԱԴ-ի մամուլի էջերում զետեղված կարծիքի, երկրի «սահմաներում մնացած ուստաներն ել միմիայն թշնամական վերաբերմունք ու գործունեութիւն են ցոյց տալիս Վրաստանի հանդեպ» [«Տայառություն» («Սաքարթվելո», 1919, № 240) լրագրից արտատպված հոդվածը տե՛ս Շուս գրադիականները Թիֆլիսում// ԱՇԽԱՏԱԽՈՐ, 13. XI. 1919]:

<sup>17</sup> Փորրամասնութեան իրաւունքը // ԱՇԽԱՏԱԽՈՐ, 27. VI. 1919:

<sup>18</sup> «Տայառություն» («Սաքարթվելո», 1919, № 68) օրաբերից արտատպված հոդվածը տե՛ս Վրաց կեանք // ԱՇԽԱՏԱԽՈՐ, 30. III. 1919:

որի՝ կառույցը համալրվելու էր կամավորական սկզբունքով։ Նրա կորիզը կազմեց զանազան ազգային տարրերից բաղկացած «կարմիր զվարդիան», որը մինչ այդ կցված էր Թիֆլիսի բանվորական պատզամավորների խորհրդին։ Օրենքով ժողովարդիան անմիջապես ենթարկված էր վարչապետին, սակայն նրա իրական հրամանատարն այդ կառույցի զիսավոր շտաբի պետ Վ. Ա. Զուլեյին էր (Վալիկո)։ Վրաստանի քաղաքական տարբեր հոսանքներ դժգոհում էին, որ ժողովարդիայի վերահսկողությունը վերածվել է ՎՍԴԲԿ-ի<sup>19</sup> մենաշնորհի, այսինքն, ըստ Հության, այն շարունակում էր մնալ այդ կուսակցության գինուժը<sup>20</sup>։

<sup>19</sup> ՎԴՀ-ի տարածքում և առհասարակ վրաց իրականության մեջ գործող ամենախոշոր և ամենազդեցիկ քաղաքական ուժը Վրաստանի Սոցիալ-Հեմոկրատական Բանվորական Կուսակցությունն էր, որը և հիմնականում իր ուսերի վրա կրեց անկախ հանրապետության կառուցման ողջ պատասխանատվությունը։ ՎՍԴԲԿ-ն առաջացել է 1918 թ. նոյեմբերին ՌՍԴԲԿ-ի անդրկովկայան ճյուղի պառակտման հետևանքով։ Նրա անդամները հայտնի են նաև որպես վրաց «մենշևիկներ»։ Կուսակցությունն առաջնորդում էին Ն. Ժորդանիան, Ս. Զիրլաձեն, Ն. Չիւեհձեն, Ի. Ծերեթելին, Ա. Չիւենկելին, Ե. Գեգեձկորին։ Նրանք ՎՍԴԲԿ-ն դասում էին չափավոր մարքսիստական կազմակերպությունների շարքին, հետևաբար, խոստանում էին երկրում հաստատել ժողովրդավարություն և իրականացնել սոցիալական վերափոխումներ։ ՎՍԴԲԿ-ին միացավ (1919 թ., հունվար) «Ալիոնի» («Արշալույս») խոմքը, որի անդամները (Ի. Գումարթելի և այլք), մեղադրվելով ազգայնականության մեջ, վտարվել էին ՌՍԴԲԿ-ից։ ՎՍԴԲԿ-ին անդամակցում էին մտավորականության, գուղացիության և բանվոր դասակարգի ներկայացուցիչներ շուրջ 80 հազ. մարդ։ Կուսակցությունը լրիս էր ընծայում տպագիր մամուլ, այդ թվում Կենտկոմի մարմիններ՝ վրացալեզու «Էրթոքա» («Միասնություն») և ոռոսական «Բորբա», նաև Սովյուտի ճյուղի ոռոսական «Նաշե Սլովո» պարբերականը։ 1921 թ. ՎՍԴԲԿ-ն պառակտվեց, նրա կազմից դուրս եկան «Ճախ» թերին պատկանող մի խումբ կուսակցականներ, ովքեր ստեղծեցին «Ախիվի» («Ճառագայթ») խոմքը (տպագիր մարմին՝ «Ախալի Ախիվի»)։ Ընկալվելով որպես վրացական ազգային կուսակցություն՝ ՎՍԴԲԿ-ն, այնուամենայնիվ, բազմազգ էր։ Նրա շրջանակներում գործում էր նաև «հայկական սեկցիա»

1918 թ. օգոստոսի 20-ին կայացվեց բանակի ստեղծման և նրա կազմավորման սկզբունքների մասին որոշում<sup>21</sup>: Թուրք-թարարների և մահմեդական այլ տարրերի ծառայությունը պարտադիր չէր Վրաստանի բանակի շարքերում: Զինապարտությունից ազատված էր նաև ոուս<sup>22</sup> և արխագ<sup>23</sup> ազգաբնակչությունը: Առժամանակ գոյություն ուներ «արխազական հարյուրյակ» կոչված կամավորական մի գորագունդ բաղկացած 300-400 հեծյալներից, որը, սակայն, կազմալուծվեց Սուխումի շրջանում առաջացած խլրությունների ժամանակ: Վրաստանի բանակ գորակոչվեցին զգայի թվով հայեր, իսկ երանք, ովքեր հրաժարվեցին, ենթարկվեցին խստագույն պատճենների: Մի խումբ ախալցիսացի դասավորներ գնդակահարվեցին<sup>24</sup>:

Պետական անվտանգության ոլորտը վերահսկում էր ՆԳ նախարարությանը կից գործող «Հասուլկ ջրկատ»-ը (ղեկավար՝ Մ. Ն. Քեղիա): Այդ ծառայությունը, որ ստեղծվել էր «հակահեղա-

(շուրջ 150 կուսակցական), որը ղեկավարն էր ՎՍԴԲԿ Կենտկոմի անդամ Մ. Կ. Վարդոյանը: Մեկշիան ուներ պարբերական՝ «Բանվորի Զայն» շաբաթաթերթը: Առավելապես աշքի էր ընկնում «հայկական սեկցիայի Արխազիայի ձյուրը», որի անդամները (Խ. Ավդալբեյյան, Տ. Սուխումյան, Ե. Սինասյան, Վ. Ռշտունի և այլք) զիսավորում էին նաև Սուխումի հայոց շրջանային ազգային խորհուրդը: Վրաստանի թուրք-թարարական ազգաբնակչության շրջանակներում, ի նպաստ վրաց պետության կենսական շահերի, քաղաքական աշխատանք իրականացնելու նպատակով, կազմավորվեց «ինքնուրույն» սոցիալ-դեմոկրատական «Հումմեր» («Հյումմար») կուսակցությունը: Վերջինս ՎՍԴԲԿ-ի նկատմամբ ոչ թե կրտսեր գործընկերոց դերում էր գտնվում, այլ, փաստորեն, նրա պարզ ստորաբաժանումն էր [տե՛ս Յ. Ա. Վահագիան, Հայաստանի պատմության առաջնային դաշտերը՝ 1917-1920 թվականներին, Երևան, 2003, էջ 317]:

<sup>20</sup> Տե՛ս Silogava V. & Shengelia K. Նշանական աշխատանքները 1918-1920 թվականներին, Երևան, 2003, էջ 210-211:

<sup>21</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>22</sup> Ներքին գործերի և զինուորական մինիստրութեան հրամանը // ԱԺԽԱՏԱՒԻ-Ը, 24. X. 1919:

<sup>23</sup> ՎԿՊԴԱ, ֆ. 1861, գ. 1, գ. 243, թ. 1-1 շրջ.:

<sup>24</sup> Մելքոնյան Ա. Ա. Զավախյալ XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Երևան, 2003, էջ 317:

փոխության և սպեկուլիացիայի» դեմ՝ պայքարի նպատակով, իր մեջ ներառում էր երկու փարզություն՝ քաղաքական և տնտեսական։ Հիմնականում քաղաքական ոստիկանության պարտականությունները կատարող այս կառույցը զիսավորապես կազմված էր ՎՄԴԿ-ի անդամներից ու նրանց համակիրներից։

Վրաստանի խորհրդարանը 1918 թ. սեպտեմբերի 24-ին հաստատեց հանրապետության դատական համակարգի մասին օրենքը։ Գերազույն դատարանի դերը ստանձնեց «Սենատ»-ը, որը բաղկացած էր նշանակովի 12 անդամից<sup>25</sup>։ Տեղերում բնակչությանն իրավունք էր վերապահված ընտրել «հաշտարար» դատավորներ, որոնք քննում էին քաղաքացիական քնույթ ունեցող գործերը։ Քրեական և քաղաքական հանցանքների մեղադրանքով հարուցված գործերը պարտադիր քննվում էին «արտակարգ» դատարաններում, որոնք նաև մահապատճի մասին վճիռ կայացնելու իրավունք ունեին։ Թիֆլիսում, Քութայիսում և Սուլիումում գործող «արտակարգ» դատարանների վոխարեն 1920 թ. մարտին բացվեցին երդվալ ատենակալների ատյանները։ Կառավարությունը, սակայն, խուսափեց դատական համակարգի բարեկիոնում իրականացնել ազգային փորրամասնությունների բնակության մի շարք շրջաններում, հատկապես Ախալքալաքի և Բորչալուի գավառներում։ Արդարադատության նախարարի պահանջով՝ 1921 թ. հունվարից դատարաններում բոլոր գործերն անվերապահության պետք է քննվեին վրացերեն լեզվով<sup>26</sup>։

1918 թ. հոկտեմբերի 8-ին ՎԱԽ-ը վերանվանվեց Պաղամենստ։ Այս մարմնի գործունեության ժամկետը սահմանվել էր մինչև 1919 թ. հունվարի 31-ը։ Նրա արտակարգ նիստերը, սակայն, գումարվեցին նաև փետրվարին, որոնք նվիրված էին Սովորի<sup>27</sup> ու Ախալցխայի դեպքերի քննարկմանը։

<sup>25</sup> Silogava V. & Shengelia K. Նշանակությունը պահպանության մասին օրենքը պահպանության մասին օրենքում առաջին անգամ հայտնվել է 1918 թ. սեպտեմբերի 24-ին։

<sup>26</sup> ГРУЗИЯ, 1. XII. 1920.

<sup>27</sup> Малиян Б.В. «Сочинский вопрос» в российско – грузинских отношениях (июль 1918 г. – май 1920 г.) // Третья годичная научная конференция РАУ. Сборник. Часть I. Ер., 2009, с. 77–82. Նույնի՝ Կ վորոս օ տերրիուրալնություն կամ պահպանության մասին օրենքը պահպանության մասին օրենքում առաջին անգամ հայտնվել է 1918 թ. սեպտեմբերի 24-ին։

1918 թ. մայիսից մինչև 1919 թ. փետրվար նորակազմ Վրաստանի Հանրապետությունը հաղթահարել էր իր կայացման կարևոր փուլը: Փետրվարի 14-16-ին, համաձայն 1918 թ. նոյեմբերի 12-ի Սահմանադիր ժողովի (ՍԺ) մասին օրինագծի, հանրապետությունում տեղի ունեցան ընտրություններ, որտեղ բացարձակ հաղթանակ տարան ՎՍԴԲԿ-ի թեկնածուները: ՍԺ ընտրված պատգամավորներից 109-ը սոցիալ-դեմոկրատ էին, 8-ը՝ ազգային դեմոկրատ, 8-ը՝ սոցիալիստ ֆեներայիստ, 5-ը՝ սոցիալիստ հեղափոխական<sup>28</sup>: ՎՍԴԲԿ-ի ցուցակով խորհրդարան մտան նաև հայազգի չորս պատգամավոր<sup>29</sup>: Այսպիսով, ձայների պահանջված քանակը ապահովեցին միայն վրացական ազգային կուսակցությունների համամասնական ցուցակները: Դա պայմանավորված էր «դեմոկրատական հանրապետությունում» որդեգրված «ընդհանուր, հավասար, ուղղակի և զարտնի քվեարկության» սկզբունքի լուրջ խախտումներով: ՎԴՀ-ի «հպատակություն» սահմանող կանոնակարգի դիմավորյալ արգելքների շնորհիվ ձայնի իրավունքից գրկվեց ոչ վրացի ազգաբնակչության ստվար զանգվածը: 1918 թ. դեկտեմբերին Վրաստանի ու Հայաստանի միջև ուազմական բախման հետևանքով ՎԴՀ-ի հայաշատ վայրերում բնակչությունն ահաբեկված էր այսպես, Սղնայիտմ (Կախեթ) վրաց գվարդիականները ընտրողների ձեռքից խլում էին ՀՅԴ-ի օգտին տրված քվեաթերթիկները<sup>30</sup>: Մթնոլորտը շիկացած

май 1920 ց.) // ИСТОРИЧЕСКОЕ ПРОСТРАНСТВО (Проблемы истории стран СНГ), Москва, 2013, с. 174-207.

<sup>28</sup> К выборам в Учредительное собрание // ЗАКАВКАЗСКОЕ СЛОВО, 12. III. 1919.

<sup>29</sup> Իտարբերություն Ս. Կ. Վարդոյանի և Ռ. Գ. Առշտրովի, խորհրդարանի մյուս հայազգի անդամ Կ. Ա. Պանիսը (Փակյան), միաժամանակ լինելով Թիֆլիսի քաղաքային վարչության բարձրաստիճան պաշտոնյա, իրեն առհասարակ հեռու էր պահում վիրահայ համայնքի գործերից (տե՛ս և ՀԱԱ, ֆ. 441, գ. 1, գ. 61, թ. 26: Նաև՝ Письмо в редакцию // БОРЬБА, 3. VIII. 1919): ՍԺ-ի չորս կին պատգամավորների շարքում էր նաև Է. Սեր-Բարսեղյանը (Տեր-Պարսեղովա, Մախմիլյանե):

<sup>30</sup> Выборы в Сигнахе // НАРОДНОЕ ЗНАМЯ, 9. III. 1919.

Էր նաև Դուշերում, որտեղ «արգելած է խօսել հայերէն: Ընտրութիւնների ժամանակ յայտարարել են, որ այն հայը, որ ձայն կը տայ № 4-ին (ՀՅԴ-ի ընտրացուցակին – Բ. Ա.) իսկոյն և եթ կարսորի...»<sup>31</sup>: Բացի այդ, Ախալցիսայի (Սամցխէ-Մէսխէթի), Ախալքալաքի (Զավախը), Բորչալուի (Տաշիր) զավառների, ինչպէս նաև Սվանեթիայի, Խետուրեթիայի ու Աբխազիայի ազգաբնակչության մասնակցությունն ընտրություններին առժամանակ հետաձգվել էր<sup>32</sup>: 1919 թ. օգոստոսին տեղի ունեցած ՍԺ-ի լրացուցիչ ընտրությունների արդյունքում նրա կազմի մեջ ընդգրկվեցին նաև ՀՅԴ-ի ներկայացուցիչները<sup>33</sup>:

ՍԺ-ի նախազահ ընտրվեց Ն. Ս. Չիսեհձեն, սակայն վերջինիս տեսական բացակայության հետևանքով այդ կառույցի նախագահությունը, նրա գոյության գրեթե ողջ շրջանում, վարում էր փոխանորդ Ա. Ս. Լոմթաթիձեն (նա միաժամանակ զբաղեցնում էր Թիֆլիսի քաղաքային դումայի դեկանարի աթոռը): ՍԺ-ի գումարման գիշավոր նպատակն էր մշակել Վրաստանի առաջին սահմանադրությունը: Պետական այդ մարմինն օժնվեց նաև խորհրդարանին բնորոշ բոլոր հատկանիշներով:

ՍԺ-ն իր անդրանիկ նիստում՝ 1919 թ. մարտի 12-ին, հանդիսավոր վերահաստատեց «Անկախության մասին ակտ»-ը: Այնուհետև, դարձյալ Ն. Ն. Ժորդանիայի գլխավորությամբ, ստեղծվեց նոր կառավարություն, որը բաղկացած էր միմիայն ՎՄՀԿ-ի ներկայացուցիչներից<sup>34</sup>:

<sup>31</sup> Տե՛ս Դրութիւնը Դուշերում // ՅԱՌԱԶ, 18.II.1919:

<sup>32</sup> Парламент Грузии // ЗАКАВКАЗСКОЕ СЛОВО, 4. II.1919.

<sup>33</sup> Զ. Ն. Զորյան, Տ. Գ. Ավետիսյան և Դ. Գ. Դավիթիսակյան, որին փոխարինեց Գ. Ա. Տեր-Ստեփանյանը (տե՛ս ԱՇԽԱՏԱԽՈՐ, 20. IX. 1919):

<sup>34</sup> Կառավարության կազմի մեջ մտան. Ն. Վ. Ռամիշվիլի (զինվորական, ներքին գործերի և ժողովրդական լրասավորության նախարար), Ե. Պ. Գեգենզորի (արտաքին գործերի և արդարադատության նախարար), Վ. Պ. Կանդելակի (ֆինանսների, արևորի և արդյունաբերության նախարար), Ն. Գ. Խոմերիկի (երկրագործության, աշխատանքի և հաղորդակցության ուղիների նախարար) [տե՛ս Խայմանիշվիլի օնքության 22 Խ Խայմանիշվիլի շաբաթական գլուխական աշխատանքի և աշխատանքի նախարարական գործադրության ուղիների նախարար] 1919 թ. դեկտեմբերին կառավարության կա-

Վրաստանի առաջնորդները հավակնում էին իրենց նորաստեղծ պետության տարածքում ներառել ոչ միայն Թիֆլիսի և Քուրայիսի նահանգները, այլև ծավալապաշտական ծրագրեր էին մշակում Սուխումի (Արբաւզիա), Սոչիի (Չիբերի), Զարաթալայի (Ճար-Բելորքանի) շրջանների, նաև Լոռի-Փամբակի, Ղազախ-Շամշադինի (Տավուշ) և Ղարայազի (Կամբեճան) նկատմամբ: Էթնիկ այլ խմբերի բնակության մի շարք շրջանները վրացական կողմը շուապեց կանխալ հայտարարել որպես իր պատմական ժառանգություն արխազների, օսերի, զավախրահայերի, թաթարների, մեղրելների սկզբ առած ինքնորոշման գործընթացը խոցներուտելու համար: Հետևաբար, «Վրաստան» կոչված տարածքի ոչ վրաց ազգությունները բռնի ճնշումների և քաղաքական մերենայությունների պատճառով չկարողացան իրականում ինքնուրույն գործել և որոշել սեփական ճակատագիրը:

Փարիզի վեհաժողովում (1919 թ.) վրացական կողմը հանդես եկավ մի շարք տարածքային նոր պահանջներով: Պաշտոնական Թիֆլիսը շուրջ 93 հազ. քառ. կմ ընդգրկող տարածքն Այսրկովկասում իր «անվիճելի» մասնաբաժին էր համարում, որի մեջ էին նաև Բաթումի մարզը, Արդահանի ու Օլժիի (Տայր) շրջանները: Այդ տարածքն ուներ շուրջ 3 մին 400 հազ. ազգաբնակչություն, որից 1 մին 757 հազ. ազգությամբ վրացի<sup>35</sup>: Վերջիններս բացարձակ մեծամասնություն էին Քուրայիսի նահանգում՝ 97.3%: Հարեւան Թիֆլիսի նահանգում վրացիները կազմում էին ազգաբնակչության 44.6%-ը, հայերը՝ 21.5%-ը, իսկ թյուրքախոսու տարրերը՝ 10.5%-ը<sup>36</sup>: Թիֆլիս քաղաքը մեծ մասամբ բնակեցված

ուսուցվածքում, նաև անհատական կազմում որոշակի փոփոխություններ կատարվեցին. արդարադատության նախարար կարգվեց Ռ. Ս. Արտենիձեն, իսկ զինվորական նախարարի պաշտոնը ստանձնեց Գ. Ս. Լոռքիվանիձեն (տե՛ս ԸՆՈՎՈ, 3. 1. 1920):

<sup>35</sup> Ментешавили А. Октябрьская революция и национально-освободительное движение в Грузии. 1917–1921. Тб., 1987. с. 115.

<sup>36</sup> Хармандарян С. В. Ленин и становление Закавказской Федерации. 1921–1923. Еր., 1969. с. 12. Գրականության մեջ երեսմն հանդիպում են բերված թվերից փոքր շեղումներ: Այդուհանդերձ, դրանք, ըստիանուր

էր հայ (43.1%), ուսւ (26.5%) և վրացի (10.8%) ազգություններում:  
Կառավարությունը չկաշկանդվեց գենրի ուժով հաստակության  
բերել Բորչալուի և արևելյան այլևայլ շրջանների քուրք-թաթա-  
րական ազգաբնակչությանը<sup>38</sup>: Հետևաբար, հանրապետությունն  
ուներ նաև 300 հազ. (1921 թ.) մահմեղական բնակչի<sup>39</sup>: Հայերն  
առավել մեծ ազգային փոքրամասնություն էին՝ շուրջ 400 հա-  
զար<sup>40</sup>: Այսպիսով, ազգային ու կրոնական տեսակետից խայտա-  
բղետ Վրաստանում փոքրամասնությունները կազմում էին  
բնակչության ստվար հատվածը:

ՎԴՀ-ի կառավարության իրական իշխանության սահման-  
ներում գտնվող տարածքը 1918 թ. ներառում էր երկու նահանգ  
(16 գավառ) և վարչական երկու շրջան: Պաշտոնական Թիֆլիսը  
հետզհետե (1919 թ., ապրիլ) իրեն ենթարկեց Արդահանի շրջանի  
հյուսիսարևմտյան մասը, նաև Բաթումի մարզը (1920 թ., մարտ-

---

առմամբ, մոտ են ճշմարտությանը: Վրաստանի ազգաբնակչության  
թվաքանակի, տեղաբաշխման, լեզվական պատկանելության և վիճա-  
կագրական այլ տվյալների վերաբերյալ ավելի ստույգ տեղեկություններ  
կան միայն ԽՍՀՄ-ի առաջին միութենական մարդահամարում [տե՛ս և  
Население Закавказья (Всесоюзная перепись населения 1926 г. Краткие  
итоги. Издание ЗакЦСУ). Тифлис, 1928]:

<sup>37</sup> *Кавказский Календарь на 1917 г.* Тифлис, 1916, с. 206–207. Վրաց  
«մենչևիկյան» կառավարության «արգասարեր» գործունեության շնոր-  
հիվ թվերի այս հարաբերակչությունը զգալի վոփոխություն կրեց: Այսպիսով, Վրաստանի մայրաքաղաքում առաջնությունն անցել էր  
քարթվելական ազգությանը, որը, համաձայն 1922 թ. կատարված հաշ-  
վառման, ուներ 35.3%: Վրացիներից հետո հայերն էին՝ 34.9%, ապա  
ուսւները՝ 17.3% [տե՛ս յայշլուա Շ. յ. տօնօնօնօն մթեածլյոն 1803–  
1970 թթ. (Եթագություն-ցյոննոմույնություն ճարշեցնո), տօնօնօն, 1979, ՅՅ.  
70, Յերօնոց № 12]:

<sup>38</sup> Տե՛ս Բորչալուի հնագանդությունը // ՀՈՐԻԶՈՆ, 18. VI. 1918:

<sup>39</sup> *Мерквиладзе В. Н. Создание и укрепление советской государственности в Грузии (1921–1936)*. Тбилиси, 1969, с. 187.

<sup>40</sup> Տե՛ս Կուրտօս Ա. Ա., Վյունօվ Վ. Ա. *Миф о попранной демократии // КАВКАЗСКИЕ НАУЧНЫЕ ЗАПИСКИ* (հանդես, Սոսկվա), 2010, № 1, с.  
183.

հուլիս): Խորհրդարանի 1918 թ. օգոստոսի 2-ի որոշման համաձայն՝ նահանգներում, շրջաններում (ենթաշրջաններում), զավառներում (զավառակներում) և զուղական տիպի բնակավայրերում տեղական վարչակազմը ենթարկվեց հանձնակատարներին (կոմիսարներ): Միաժամանակ, հիմք ընդունելով Անդրկովկասյան կոմիսարիատի 1918 թ. հունվարի 25-ի որոշումը, ՎԱԽ-ը վճիռ կայացրեց զավառական գեմսուղոների (վրաց.՝ «էրոբա») կազմավորման մասին, որի հիման վրա 1918 թ. օգոստոս-նոյեմբեր ամիսներին տեղի ունեցան զավառական ժողովների (վրաց.՝ «սակրեբուլո») ընտրություններ<sup>41</sup>: 1919 թ. հունվարի 28-ի օրենքը գեմսուղոներին հանձնեց տեղական վարչակազմի և ոստիկանության (միլիցիա) կազմավորման իրավունքը, որից հետո զավառներում հետզինտե սկսեց վերանալ կառավարական հանձնակատարների ինստիտուտը: 1919 թ. հունվարի 30-ի օրենքն էլ լուծարեց երկրի նահանգային կառուցվածքը. Վրաստանը բաժանվեց զավառական գեմսուղոների, որոնք, իրենց հերթին, ներառում էին առանձին համայնքներ՝ «թեմի»:

Վրաստանի սոցիալիստ առաջնորդների կողմից երկրում պետական կառավարման տեսակը մտածված էր որպես «դեմոկրատական հանրապետություն», ի տարրերություն կումունիտական «խորհրդային» կարգերի: Վրաց ժողովրդի համար նախադեպը չը ունեցող պետական նոր համակարգը կերտողների համար զիսավորապես օրինակ էին ծառայում ֆրանսիական պաղամենտական հանրապետության և շվեյցարական ինքնա-

<sup>41</sup>Տե՛ս Silogava V. & Shengelia K. Նշվ. աշխ., էջ 211:

<sup>42</sup>Կյանքի կազմակերպման ու ապազայի մասին մարդկանց պատկերացումները և մուտքումները դեռևս աղոս էին, ինչի արդյունքում նրանց գործողությունները կրավորական ու անվճռական էին: Մամուլ իրազեկում էր, որ «земские выборы проходят довольно вяло. Везде и всюду заметен значительный абсентизм населения. В выборах принимают участие 20–30 % общего числа населения» (տե՛ս БОРЬБА, 10. VIII. 1918):

վար կանտոնների կառավարման մոդելները<sup>43</sup>: Հիմքում պետք է յինեին գեմստվոները՝ օժոված տեղական վարչական մարմինների գործառույթով: «Վրաստանն անկախ հանրապետութիւն դառնալուց յետոյ, – կարդում ենք թիֆլիսահայ մամուլում, – երկրում կազմակերպուեցին ինքնավար գեմստվօներ լայն իրաւունքներով: Ազգաբնակութեան ամբողջ տնտեսական և քաղաքակրթական գործը կենդրոնացաւ այդ հիմնարկութիւնների մէջ և կենդրոնական կառավարութեան դերը սահմանափակուեց ընդհանուր օրէնքներ հրատարակելով և ցուցմունքներ տալով: <...> Տարրական դպրոցների անմիջական դեկավարութիւնը յանձնուած է նոյնական այդ [գեմստվոների] վարչութիւններին, որոնց ձեռքով պէտք է կարճ ժամանակի ընթացքում իրականանայ Վրաստանում ընդհանուր պարտադիր ուսուցումը»<sup>44</sup>:

Մյսպիսով, զավանների մակարդակով կենտրոնական պետական հիմնարկները զրկվում էին իրենց ենթակա որևէ պաշտոնյաներ կամ վարչական մարմիններ ունենալու իրավունքից: Հետեաբար, լիազորությունների ու գործառույթների ապակենտրոնացման պարագայում՝ յուրաքանչյուր զավար, փաստորեն, վերածվում էր տեղական (վարչական) ինքնավարության: Սակայն դա դեռ չէր նշանակում տարածքային ազգային ինքնավարությունների հնարավոր առաջացումը: «ՍԴՀԲԿ-ն, որի առաջնորդները ստանձնել էին երկրի կառավարումը, իրականացնում էր «ունիտար (միահեծան) պէտության» զաղափարը: Ն. Ն. Ժորդանիան խորհրդարանում (1920 թ., դեկտեմբեր) երկրի պապականականադրության նկատմամբ առաջ էր քաշել պարտադիր պահանջներ, այլ թվում՝ Վրաստանում դաշնային որևէ միավորների բացակայության սկզբունքը»<sup>45</sup>: Դրա հետ մեկտեղ նա խոստանում էր, որ սահմանադրությունը կլինի «իսկապես ժողովրդ

<sup>43</sup> Pipes R. *The formation of the Soviet Union (Communism and Nationalism 1917–1923)*. Cambridge, Massachusetts (USA), 1964, p. 212.

<sup>44</sup> Վրաստանի գեմստվօները և հայոց դպրոցները// ՍՇԱԿ, 9. Ա. 1921:

<sup>45</sup> БОРЬБА , 8. XII. 1920.

դավարական և սրա հետ նաև սոցիալիստական»<sup>46</sup>: «Անցեալի փորձից զիտեմ, - գրում է ՎԴՀ-ի ներքին կացությանը և անցուղարձին լավատեղյակ Ա. Զամայյանը, - թէ [ժորդանիան], գործնական քաղաքականութեան մէջ, որքան թիշ կարևորութիւն է տալիս սկզբունքներին, երբ նրանք չեն համապատասխանում Վրաստանի ազգայնական շահերին <...> ահա այստեղ, խօսքի և գործի այս հակասութեան մէջ, ընդունելի սկզբունքները գործնական քաղաքականութեամբ անընդունելի դարձնելու մէջ պէտք է որոնել <...> տարածայնութիւնների և վէճերի բուն արմատը»<sup>47</sup>:

Երկրի ոչ վրաց ազգությունների միջավայրում օր օրի վրա աճող դժողովության ալիքը, զիլավորապես, պայմանավորված էր «ազգայնացման» (իմա՝ վրացացման) բիրտ քաղաքականությամբ: Այդ գործում առաջնահերթ գերխնդիր դարձավ քարթվելական լեզվի արմատավորումը պետական համակարգում, որտեղ իշխում էր ոռուսերենը: 1918 թ. հոկտեմբերի 1-ին ՎԱԽ-ը երկրում պետական լեզու ճանաչեց վրացերենը: Սակայն մինչ այդ էլ ազգային մեծամասնության լեզուն չիմացողների համար մտցվել էին մի շարք սահմանափակումներ: Վրաստանի ՆԳՆ-ի հուլիսի 20-ին արձակած «ազգայնացման մասին կանոնադրության» հիման վրա աշխատանքից ազատվեցին ոչ միայն վարչական մարմիններում ծառայող և վրացերենին չտիրապետող պաշտոնյանները, այլև պետական ենթակայության տակ գտնվող հիմնարկներում աշխատող շատ ու շատ բժիշկներ, ուսուցիչներ, բանվորներ, փոստ-հեռուստական ծառայողներ<sup>48</sup>: «Պետք է բոլոր հիմնարկութիւնները վրացիացին, - պնդում էր ՍՖ-ի պարբերականը: - Դրանով մեր կառավարութիւնը կազատվի այն վնասակար տարրերից, որոնք <...> ճիճունների ու որդերի նման սողում ու կրծում են նրան <...> [օստարների] տեղը կը բռնեն երիտասարդ վրացի ոյժերը, որոնք ամեն կերպ կաջակցեն իրանց հայրենիքի

<sup>46</sup> ԱՇԽԱՏԱԲՈՐ, 19. XII. 1920:

<sup>47</sup> ՀԱՅՐԵՆԻՔ, 1928, մարտ, էջ 76:

<sup>48</sup> Մենտեաշվիլի Ա. Նշվ. աշխ., էջ 109:

կառավարութեան»<sup>49</sup>: *Այսպիսով, ամենատարածված և հուսալի աշխատանքը՝ պետական ծառայությունը, գործնականում հայ, ուս և այլազգի մտավորականների, առհասարակ կրթված ոչ վրաց գանգվածի համար դարձավ անհասանելի<sup>50</sup>:* Խորակա-

<sup>49</sup> «Եօեալու Եօյմց» («Սախալին սարմե», 1918, № 273) պարբերականից արտատպված հոդվածը տե՛ս Հիմնարկությունների մաքրելու հարցի աղյօտվ// ՀՈՐԻԶՈՆ, 12. VII. 1918:

<sup>50</sup> 1920 – ական թվականների քաղաքական ազդեցիկ գործից U. Օրախելաշվիլին, մեր կարծիքով, դիպուկ զնահատական է տվել այս երկույթին: «[Грузинская] интеллигенция – разночинная и дворянская, сплошь шовинистична, – упомянут է նաև, – национализация государственных учреждений <...>, школы, суда и т[ак] д[алее] поставили ее во главе управления страной, у каждого винтика государственного механизма, в земстве, в городских самоуправлениях, кооперативах и в прочих хлебных местах. Независимость Грузии <...> для этих слоев стала идолом поклонения, которая дает и сейчас, а в будущем сулит еще больше реальных материальных благ» (տե՛ս և ՀԻԶՆ ՀԱԿՈՆԱԼՈՒՆՈՒԹԵԱՅ, 3. X. 1920). Կովկասի «կարմիր կուսակալ» Սերգո Օրջոնիկիձեն իր ելույթներից մեկում, անդրադառնալով Վրացական շովինիզմի դրսարումներին, ասում էր. «Грузинская интеллигенция <...> арmenoфобски настроена <...> В Тифлисе она видит своей конкуренткой армянскую и русскую интеллигенцию, она хочет меньшевиков, надеясь на то, что меньшевики повыгоняют интеллигенцию других национальностей и грузинский интеллигент станет монополистом чиновничих и общественных мест» (տե՛ս և ՎԵСՏՆԻԿ ԳՐԱՅԻ, 19. II. 1991): Պետական հիմնարկներում կադրերի ազգայնացման թերի պրակտիկան և դրան հաջորդած տիտուր հետևանքները ստիպեցին արձագանքել նաև ՆԳ և արդարադատության փոխնախարար, փաստարանների մինիստրան և այլազգի U. Զափարիձեին: Նա գրում է «этая борьба за теплые места. Поскорее прогнать других и самим занять их должности <...> так и произошло по образованию грузинской республики с вопросом о национализации учреждений. Скорее гоните русских, армян и других <...> Есть ли достаточный контингент подготовленных грузин, могущих сразу заменить удаляемых инженеров, техников, судей и других специалистов, не пострадают от этого интересы молодого государства – это их не касается, свой карман выше всего» (տե՛ս և Ջազարիձե Ս. Դ. Կ հազորավական սահմանադրության մասին կարդում ենք ժամանակի մամուլում: «Վրաց պետությունում, –

նության այս արատավոր պրակտիկան հեզնանքի արժանացակ մամուլի էջերում, որտեղ կարդում ենք. «Այսպէս են հասկանում “ռեֆորմը” վրացի սոցիալիստները: Երբ այդ անում էին ցարական ռեժիմի սպասարքները, այդ որակում էր որպէս “ոուսիֆիկացիա”, իսկ երբ այդ անում են իրենք՝ կոչում են “նացիոնալիզացիա”»<sup>51</sup>:

1918 թ. հուլիսի 16-ին ՎԱՆ-ը հաստատեց «Վրաստանի դեմոկրատական հանրապետության հպատակության մասին կանոնադրություն»-ը: Հստ որի՝ Վրաստանի քաղաքացի էին ճանաշվում, բացի էթնիկ վրացիներից, նաև այն անձինք, ովքեր իբրև ավանդական խավերի (իմա՝ ազնվական, քաղքենի, զյուղացի) ներկայացուցիչներ գրանցված են եղել երկրի մաս կազմող վարչական որեւէ օղակին կից մինչև 1914 թ. հուլիսի 19-ը (և ու օգոստոսի 1-ը): Այս կանոնադրության համաձայն քաղաքացիության ձեռքբերման որեւէ եղանակ նախատեսված չէր<sup>52</sup>: Այդ «օրէն-

---

գանգատվում էր ազգայնականների լրագիրը, –ամեն գործ կամենում են յանձնել միայն Քութայիսի նահանգի մի երկու զաւառներից եկածներին, իսկ Թիֆլիսի վրացիներին բոլորովին անպետք են համարում» [«յլոց» («Կլրէ», 1919, № 42) շաբաթաթերթից արտատպված հոդվածը տե՛ս ս Վրաց կեանք // ԱԾԽԱՏԱԲՈՂ, 12. IV. 1919]:

<sup>51</sup>Տէ՛ս և Լեզվի խնդիրը // ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ, 29.X.1918:

<sup>52</sup> КАВКАЗСКОЕ СЛОВО, 24. VII. 1918. Այս օրենքի իրականացման եղանակը պետք է լրացուցիչ որոշվեր ՆԳ-ի և արդարադատության նախարարների հայեցողությամբ, ինչը պարարտ դաշտ էր ստեղծել տարբեր տեսակի կամայականությունների և շարաշահումների համար: «Կանոնադրության» կիրառման պրակտիկայի տխուր հետևանքների մասին ստիպված էր բարձրաձայնել նաև Վրաստանի Հայոց ազգային խորհուրդը: «Закон 16 июля объявляет гражданами республики, за исключением лиц грузинского происхождения, лишь тех из не-грузин, которые могли представить доказательства о приписке к какой-либо администрации единице бывших Тифлисской и Кутаисской губерний до 19 июля 1914 года. Такое определение понятия подданства означало в отношении в частности городского населения армян исключение более половины их из числа граждан Грузии...»; «в порядке же разъяснений Министерства Внутренних Дел, целые группы армянской интеллигенции, служащих и рабочих не только в государственно-общественных, но даже и в частных

թր, քննել և ընդունել է վրաց ազգային խորհուրդը այն ժամանակ, երբ նա գուտ միատարր վրացական ներկայացնութիւնն էր, երբ այնտեղ իրենց ձայնը հնչեցնելու և իրաւունքները պաշտպանելու հնարաւորութիւնից գուրկ էին ազգային փոքրամասնութիւնները»<sup>53</sup>:

1919 թ. մայիսին ՍԺ-ին վավերացրեց «Վրաստանի հանրապետության քաղաքացիության մասին օրենք»-ը<sup>54</sup>, որը գրեթե անփոփոխ էր թողել նախկին վավերացրի «կանոնադրության» հիմնական սկզբունքները: Դրա գլխավոր նպատակն էր՝ հնարավորինս դարձալ խոշընդունել ու դժվարացնել Վրաստանում մինչև 1918 թ. մայիսի 26-ը մշտական բնակություն հաստատած ոչ վրացի ազգությունների ներկայացուցիչների համար նորակազմ հանրապետության քաղաքացիության ձեռքբերումը: Այդ կնճուտ հարցին բազմից անդրադարձ էր ժամանակի մասուլը<sup>55</sup>: Գոյու-

---

учреждениях, оказались не-грузинско-подданными и потому зловредными, почему и снимались с мест и мерами администрации выселялись из пределов Грузии...»; «результатом такого разъяснения явилось исключение из городских избирательных списков по Тифлису и другим городам большинства не-грузин и, в особенности армян, благодаря чему последние оказались почти поголовно лишенными избирательных прав и, Тифлисская Городская Дума оказалась сплошь грузинской...», — Մատևանշում էին ՀԱԱ-ի անդամները (տե՛ս MEMORANDUM, Учредительному Собранию о Национальном Самоуправлении армян в Грузии. [Тифлис, 1921], с. 15, 20):

<sup>53</sup> Խմբագրական // ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ, 14. XII. 1918:

<sup>54</sup> «Եսայածառաջարկություն» («Սարքավելու Ռեսպոնսիվիկա»), 16. VI. 1919.

<sup>55</sup> «...» Այս օրենքը ամենից առաջ իրաւական հիմնաւորութիւնն է տալիս այն քաղաքականութեանը, որ փառաբանում է «Կլեի» և «Գրովիայի» էջերից – «Վրաստանը վրացոց համար»: «...»

Օրենքին նայելով, Վրաստանի հպատակ է նա, ով մինչև 1914 թ. յուլիսի 19-ը գրիած է այս կամ այն վարչական միութեան մէջ, (кто до 19 июля 1914 г. был приписанъ къ той или другой административной единицѣ въ пределахъ Грузіи), բացի այդ բոլոր ծագումով վրացիները համարում են վրացահպատակ: (Այս միտքը արտայայտած է Սահմանադիր ժողովին վերաբերեալ օրենքում):

թյուն ուներ նաև ինպրի բարոյահոգեքանական կողմը: *Այլազգի բնակչությունը տեսնում էր, որ միևն այդ վրացիները ևս իրենց նման Ռուսաստանի պարզ հպատակներն էին, որ և իրավական,*

---

Այսպիսով, քաղաքային ընտրութիւնների ժամանակ վրացիները երբեք պարտաւոր չեն իրենց հպատակութիւնը ապացուցանել և այս իսկ հիման վրայ ամեն մի վրացի, թէկուզ ոչ թիֆլիսեցի, իրաւունք ունի ցուցակագրւելու և ընտրողական իրաւունք ստանալու, եթե նոյնիսկ նա իր կեանքում առաջին օրը եկած լինի Թիֆլիս և նա ցանկութիւն է չունենայ Թիֆլիսում յետազայում ապրելու:

Հայը, ոուսը, թարաքը և ուրիշները իրենց ծագումով ոչ թէ միայն չեն ստանում վրացահպատակութիւն, նրանք, ընդհակառակը, պարտաւորապէս պիտի ապացուցանեն իրենց վրացահպատակ լինելը:

Եթե ոչ-վրացին ապացուցանում է, թէ արդեն 20 տարի է, որ ինք ապրում է Թիֆլիսում, այդ դեռ չի նշանակում, թէ նա վրացահպատակ է, որովհետև նա կարող էր այդ ժամանակամիջոցը անցկացրած լինել այստեղ առանց ցուցակագրւելու մի Վարչական միութեան մէջ (և բայցու որութիւն կ'ունի այս պատճենը առաջարկութեան մէջ), այսինքն՝ մեշշանական (*քաղքենի - F. U.*), գիւղացիական, կամ ազնական դասի (сословие) մէջ, այլ իր ձեռքին ունենալով առաջին անցագիրը, որը ստացել է նա, ասենք, Երևանից Թիֆլիս գաղթելու ժամանակ, սրանից 20-30 տարի առաջ:

Այսպիսով՝ մի հայ կամ ոուս, իր որդիներով պիտի զրկի ընտրական իրաւունքից միայն նրա համար, որ նրանք չեն կատարել մի ձևականութիւն և Երևանի մեշշանների ցուցակից չեն անցկացրել իրենց [Թիֆլիսի քաղքենիների խավի մէջ], թէպէս 20-30 տարի, առանց ընդմիջումների ապրել են Թիֆլիսում և նրա հետ աւելի սերտ են կապւած, քան մի վրացի:

Թիֆլիսի այլազգի բնակչութեան 90 տոկոսը այդպիսիներից է քաղկացած <...> (տե՛ս *Հպատակութեան օրէնքը Վրաստանում // ՅԱՐԱՔ, 14. I. 1919): ՎԴՀ-ի ոչ վրաց բնակչության իրավական կացության մասին խոսելիս քաղաքական ականավոր գործիչ Ֆ. Մահարաձեն վկայում էր, որ «все граждане Грузии оказались подразделенными на две категории: грузины и не-грузины. Во вновь образовавшемся "демократическом" государстве граждане последней категории, то есть не-грузины, оказались пасынками, с ними можно обращаться как угодно» (տե՛ս *Махадзе Ф. Диктатура меньшевистской партии в Грузии*. М., 1921, с. 68):*

և՝ ազգային տեսակետից որևէ տարբերություն չկար նրանց մեջ, այնինչ 1918-ից մեկը դարձել է իշխող տարր, մյուսը՝ ստորադաս: Այսպիսով, ժողովրդավարական գործընթացների արհեստական վիճեցումը Վրաստանում առաջ բերեց ազգային հարցի հիմնախնդիրը:

ՎԴՀ-ին բաժին հասած տարածքները, ինչպես և ողջ Անդրկովկասը, ընդամենը ուստական կազմալուծված կայսրության ազրարային կցորդն էին: Երկրի գյուղական ոլորտի համար առավել քան բնորոշ էր տնտեսության վարման չափազանց էքստենսիվ եղանակը: Վրաց ազգի վերնախավի՝ ազնվականության, որը սերտ կապված էր ավատատիրական հարաբերությունների հետ, հզորությունն ու հասարակական դերը կապիտալիզմի զարգացմանը զուգահեռ անկում էր ապրում: Վրաց կալվածատերերի խավը, չկարողանալով հարմարվել շուկայական տնտեսության պահանջներին, սնանկանում էր և իր հողային սեփականությունը զիջում էր աճող կապիտալի ներկայացուցիչներին, առաջին հերթին՝ հայկական<sup>56</sup>: Վրաց ազնվականությունը, տարիներ շարունակ օգտվելով բանկային վարկերից, ավաղ, չարաշահում էր այդ հնարավորությունը՝ ընձեռված ֆինանսական միջոցները զիսավորապես ուղղելով ոչ արտադրական ոլորտ: Շատ ու շատ դեպքերում նրա ներկայացուցիչներն իրենց կենցաղային կարիքները հոգալու համար դրամական հսկայական զումարներ էին

<sup>56</sup> Տնտեսական ասպարեզում հայ գործարար դասի ձեռքբերումների մասին տե՛ս Դադայան Խ. Հայոց արևորատնտեսական ներկայությունը Թիֆլիսում (ուշ միջնադար – 1918 թ.) // 21-րդ ԴԱՐ, 2008, № 1, էջ 124–150: Հայերը հիմնել և մշտապես իրենց ձեռորում էին պահել Թիֆլիսի բանկային գրեթե ողջ բիզնեսը (տե՛ս Օգանձանян Ա. Ա. Բանկ Զակավազъя до у становления советской власти и идея создания «Армянского банка» // ИФЖ, 1970, № 1. с. 229 – 230): Հայ ձեռնարկատերերի առաջատար դերը XX դարի 10-ական թվականներին շեշտում է նաև արդի Վրաց հետազոտողը: Տե՛ս յշեածածյ ծանծածք. եռմեւշր ծարցյանուս հունո և այսաշուշանու (XX եալյանու 10-օճո վայցօ) // յարտցածո քումամաժուա, նյալովայցածո 5. տօնուածո 1998. զյ. 485–497.

փոշիացնում<sup>57</sup>: Գերազանցապէս դա պատճառը եղավ, որ Վրաստանի ազնվականության 40 %-ը, բանկային պարտքերի մեջ ընկնելով, մինչև 1905 թ. փաստացի գրկվել էր իր ժառանգական տիրույթներից<sup>58</sup>: Սակայն այդ կալվածքների գերակշիր մասը, ֆորմալ տեսակետից, դեռ գրանցված էր նախկին տերերի անունով<sup>59</sup>: 1917 թ. հոկտեմբերի 29-ին Թիֆլիսի նահանգի կալվածատեր ազնվականությունը, գրկված լինելով կործանված ուստի կան ինքնակալության հովանավորությունից և, ինչպէս երևում է, ակներնարար խուսափելով հայկական ֆինանսական շրջանակների հնարավոր պահանջատիրությունից, ժողով գումարեց և վճռեց գրավ դրված իր հողային ունեցվածքը, որի արժեքն էր 30

<sup>57</sup> «Присущая грузинскому дворянству страсть к широкой расточительности и богатой светской жизни, создала для класса помещиков острую нужду в деньгах, которые неоткуда было им взять <..> появились земельные банки разных наименований и грузинское дворянство широко воспользовалось их услугами, не осталось почти ни одного сколько-нибудь крупного имения, под обеспечение которого не были бы получены деньги <..> Задолженность дворянстваросла, но сельско-хозяйственная культура, производительность сельского труда и доходность имений ничуть не изменилась к лучшему. Началось обнищание и разорение помещиков...» [տե՛ս և *Из грузинской жизни // КАВКАЗСКИЙ ВЕСТНИК* (ежемесячный научно-литературный журнал), Тифлис, 1905, октябрь, с. 78].

<sup>58</sup> Драбкина Е. *Грузинская контр-революция*. Ленинград, [1928], с. 19. Կովկասի կուսակալ Գ. Ա. Գոլիցինն այս հարցի վերաբերյալ գրում էր. «Крайняя задолженность землевладельческого класса, составляющая в Закавказье общее явление, с одной стороны, а с другой – сосредоточение денежных средств в руках армян-капиталистов неизбежно имеет самым ближайшим последствием концентрацию в руках последних землевладения в названном крае» (տե՛ս և նոյն տեղում, էջ 36):

<sup>59</sup> Թիֆլիսում լուս տեսնող «Кавказ» թերթի խմբագիր, մոլեզին հայտնական Վ. Վելիչկոն, ժամանակին անդրադառնալով այս երևույթին, շնչառում էր, թե «грузинское землевладение тает с невероятной быстротой <..> Нужно заметить, что громадная часть этого процесса совершается тайно: армяне еще не смеют открыто предъявлять всех своих документов <..> Они боятся взрыва отчаяния в грузинском [дворянском] обществе и подозревают, что русское правительство, вследствие резкого кризиса, станет поближе присматриваться к кавказским делам» (տե՛ս և Величко В.Լ. *Кавказ: Русское дело и междулеменные вопросы*. М., 2003, с. 40).

մին ոռութիւն նվիրաբերել վրաց ժողովրդին<sup>60</sup>: Քութայիսի նահանգի ազնվականությունը, որն անհամեմատ նվազ չափով էր առնչվում հայկական կապիտալի հետ<sup>61</sup>, նման քայլի չղիմեց: Սակայն, ինչպես հայտնի է, կալվածատիրական սեփականության քայրայման աստիճանը գրեթե չէր էլ թողել վրաց ազնվականության ակնառու մասի ձեռքբերում լիիրավ իրավունքներ այդ գույրի նկատմամբ: Իզուր չէ, որ վերոհիշյալ «բարեգործական» արարքը չգուավ իր օրենադրական շարունակությունը: Սակայն դա, այնուամենայնիվ, շխանգառեց ՎԱԽ-ին իսկույն տեր կանգնել «ազգային» կարողությանը<sup>62</sup>: «Նվիրատվության» հարցում բավականաշափ հնամաշ տիտղոսներ ունեցող վրաց «ընտրախավի» կեցվածքը սկզբից ի վեր եղել է կեղծ և խուսանավող: Նրա «խորամանկությունն» իսկույն բացահայտվեց և հօդս ցնեց կայզերական գորքերի Թիֆլիս ժամանումից անմիջապես հետո, երբ 200 վրաց ազնվական դիմել էին գերմանական դեսպանորդ և զտարյուն մեծասուհմիկ Ֆ. Վ. Շուլցենբուրգին՝ հայցելով նրա օժանդակությունն իրենց ժառանգական հոդային տիրույթների վերադարձման գործում<sup>63</sup>: Ազնվականական շրջանակները, այլ «հեշտ» ճանապարհներ որոնելով, պահանջ առաջ քաշեցին, թե «կառավարությունը պետք է ընտրի հայկական կապիտալի կոնֆինակացիայի ուղին»<sup>64</sup>:

Բեկումնային դարաշրջանի վրաց մտավորականությունը, որը մեծապես առաջացել էր ազնվական խավից, մասնավոր կալվածքների վաճառքը հավասարեցնում էր հայրենիքի զիջման հետ: Ազգային գրականության դասական Իյա Ճավճավաձեն և նրա համախոհները կործանարար էին հայտարարում այդ ոլորտում սեփականության վերաբաշխման գործընթացն ամրող վրաց ժողովրդի քաղաքական հետագա շահերի համար: Ուստի,

<sup>60</sup> Տե՛ս «Երթուղօձա» («Էրթորբա»), 31. X. 1917.

<sup>61</sup> Էրիստով-Շարվաшиձե Հ. Памятная записка о нуждах грузинского народа. М., 1906, с. 62.

<sup>62</sup> Տե՛ս «Երթուղօձա» («Էրթորբա»), 14. XI. 1917.

<sup>63</sup> Տե՛ս ԼՐԱԲԵՐ (լրագիր, Թիֆլիս), 17. VI. 1918:

<sup>64</sup> Տե՛ս «Տայարացաւընթաց» («Սաքարթավելո»), 31. I. 1919.

նորածին վրաց ազգային գաղափարախոսության ձևավորման ընթացքը հայտնվել էր սնանկացող ազնվականների ձեռքում: Վերջիններին հակահայկական հայացքները պարարտ եռ էին գտել վրացազգի քաղքենիության շրջանակներում, քանի որ հայկական կապիտալի հետ առաջացած մրցակցությունը բացահայտեց նրա թույլ կողմերը: Հայ ձեռնարկատերերը վերահսկում էին շուկայի գրեթե բոլոր շահութաբեր ոլորտները, ինչը կասեցնում էր ոչ միայն վրաց միջին և խոշոր բուրժուազիայի ձևավորման գործընթացը, այլև նպաստում էր մանր գործարարների սնանկացմանը: Վրաստանում հարազատ ազնվականական վերնախավի փոշիացումը և նրա փոխարեն նոր, մեծաթիվ և հզոր հայսեփականատիրական դասի ի հայտ գալը վրաց մտավորականությունը համարում էր համազային ողբերգություն և աղետաբեր հետևանքներ էր գուշակում ողջ վրաց ժողովրդի համար: *Սոցիալ-տնտեսական ասպարեզում հայ-վրացական հակասությունները* նպաստել էին նաև քարթվելական ազնվականության ու քաղյենիության միավորմանը քաղաքական ընդհանուր ճամբարի շրջանակներում: Հայ բուրժուազիայի հանդեպ ունեցած սինդրոմը նրանք, կամա թե ակամա, վերածում էին թշնամության ամբողջ հայ ազգի նկատմամբ, ինչով էլ սկսում էր տառապել նորածին վրաց ազգային գաղափարախոսությունը: Նման գաղափարներ կերտողների կարծիքով հայ կապիտալի հզորությունը կարելի էր կործանել միմիայն վարչարարական մեթոդներով՝ անզամ սեփականության բռնազրավումով<sup>65</sup>: Դա իրականությունը դարձավ ՎԴՀ-ի գոյության տարիներին, երբ կյանքի կոչվեց վրաց ազգային գաղափարախոսության զինավոր պահանջներից մեկը, թեև սոցիալական «քարեփոխումների» քողի տակ, քանի որ այդ առաքելությունը ստանձնեց սոցիալիստական կառավարությունը: Այսպիսով, տնտեսական ոլորտում հայատյաց քաղաքականության իրականացման հիմնական գործիքը դարձավ 1919 թ.

<sup>65</sup> Ишханян Б. Экономические и общественные основы армяно-грузинского антагонизма (критический анализ). Тифлис, 1914, с. 75.

հուլիսի 11-ին ընդունված՝ անշարժ գույքի հարկադիր օտարման մասին օրենքը<sup>66</sup>:

Նորաստեղծ վրացական կառավարությունը ձեռնամուխ եղավ նաև հողային բարեփոխմանը, որի զիսավոր նպատակն էր ձերբագատել հարազատ ազնվականությանը բանկային ահոելի պարտքերի բեռից և, թերևս, հետ վերադարձնել նախկին կալվածատերերին իրենց պապենական տիրույթների որոշ մասը: Քողարկելով, սակայն, սույն գործարքի բուն էռույթունը և հեռու գնացող նպատակները, ՎԴՀ-ի առաջնորդներն ի լուր աշխարհի հայտարարում էին, թե, իբր, այդ բարենորոգումը իրականացվում է միմիայն հողագուրկ գյուղացիության շահերը պաշտպանելու համար:

Վրաստանում հողային բարեփոխումը զիսավորապես իրականացվեց Անդրկովկասյան Սեյմի 1918 թ. մարտի 7-ի օրենքի դրույթների հիման վրա<sup>67</sup>: Ոչ վրաց ազգությամբ իտշոր հողատերերի, առաջին հերթին ոուսական թագավորական ընտանիքին պատկանող հողային սեփականությունը, ինչպես նաև Փրիդոնյանի, Մանքաշյանի, Արամյանցի, Անանյանի առաջնությունը հակութաբեր հսկա տնտեսությունները պետականացվեցին և ստացան «ազգային կալվածքների» կարգավիճակ: Հողային բարեփոխումը հիմնականում ավարտվեց 1919 թ. գարեանը, և, ըստ հունիսի 1-ի վիճակագրության, առգրավվել էր 447816 դեսյատինների: Այդ տվյալները վերաբերում են Թիֆլիսի և Քութայիսի նահանգներին: Բայումի մարզում հողային վերափոխում չէր էլ իրականացվել, իսկ Արխազիայի տարածքում կառավարությունը դրան ձեռնամուխ եղավ միայն 1920 թվականին<sup>68</sup>:

Սակավահող երկրագործներին իշխանությունները հատ-

<sup>66</sup> Съезд и Принудительное отчуждение и практика органов самоуправления // СЛОВО, 26. II. 1920.

<sup>67</sup> Сборник законов, инструкций и разъяснений по министерству земледелия. Тифлис, 1918, с. 45

<sup>68</sup> Ход аграрной реформы // КАВКАЗСКОЕ СЛОВО, 8. VII. 1919.

<sup>69</sup> Прием культурно-ценных имений в Абхазии // БОРЬБА, 12. II. 1920.

կացրեցին 340 հազ. դեսյատին<sup>70</sup>, սակայն ոչ անհատույց: Այդ հոդերից օգտվելու համար զյուղացիները պետք է կապալավարձ վճարեին պետությանը: Ազրարային ոլորտի բարեփոխման շրջանակներում վրաց կառավարությունը նաև վաճառքի հանեց հոդերի մի մասը, քանզի ջանում էր այդ եղանակով, իբր, մարել նախկին կալվածատերերի բանկային պարտքերը շուրջ 15-18 մլն ռուբլի<sup>71</sup>: Վրաստանի սոցիալիստական կառավարության ջանքերով իրականացված այս բարեփոխումը եղավ նրա ամենախոշոր և նշանակալի բաղաքական ձեռնարկումներից մեկը, որը, սակայն ունեցավ հակասական հետևանքներ:

1919 թ. հունվարի 28-ին Վրաստանի Պաղամենտը սակավահող այգեգործներին բույլատրեց իրենց հասկացված հոդերը մասնավորեցնել: Այդ քայլը հետապնդում էր զյուղացիական խոշոր տնտեսությունների ստեղծման նպատակ: «Սոցիալիստական» այդ փորձերին վերջ դրեց ՍԺ-ի որոշումը (1920 թ., փետրվար), որը դարձյալ արտոնեց հոդերի առուժախը: Հոդային բարեփոխման հարցում իրականացվող ՎՄԴԲԿ-ի ծրագրի դեմ հանդես եկան ընդդիմադիր մի շարք հոսանքներ: ՍԺ և ՍՀ կուսակցությունները մերժում էին հոդի վաճառքը և պահանջում իրականացնել նրա «սոցիալիզացիա» (համայնացում), այսինքն՝ արտադրական և սպառողական նորմավորումներով անհատույց հանձնել մշակողների օգտագործմանը<sup>72</sup>: Ըստ ՎՄԴԲԿ-ի, հարցի

<sup>70</sup> Տայարագոց օնթորոս. XX Տայյընճ. ՃՅ. 74.

<sup>71</sup> Միրցխլավա Ի. Ի. *Аграрно-крестьянский вопрос в Грузии в 1900-1921 гг.* Тб., 1978, с. 306. Ըստ պաշտոնական տեսակետի, որը հնչել էր վրաց խորհրդարանի բարձր ամբիոնից, «բռնագրավված կալվածքները պարտը են բանկերին և, քանզի մենք չենք որոշել էքսպրոպրիացիայի ենթարկել կապիտալը, պետությունը պարտավոր է վերցնել իր վրա բանկային պարտքերը» (տե՛ս «Տայարագոց» [«Սարարթվելով»], 21. I. 1919):

<sup>72</sup> *Парламент Грузии // ЗАКАВКАЗСКОЕ СЛОВО*, 21. I. 1919. Այս հարցի առթիվ մեր շարադրանքի մեջ արդեն մեջքերված Ֆ. Սահարաձեն նաև գրում էր, թե «нам кажется, что этих шовинистов в этом случае интересует не столько улучшение положения крестьянской бедно-

լուծման այս տարբերակը չէր գոհացնի երկրում շուկայի լայնածավալ պահանջները, քանզի դա տանում էր հողաբաժինների պարբերական վերաբաշխման և, հետևաբար, կիսումնդրութեր ապագայում կենտունակ, արդյունավետ ու շահութափեր գյուղատնտեսության ստեղծմանը: Իր հերթին, ԱԴ-ի «աջ» թեն ընդհանրապես դեմ էր հողային բարեփոխման ընկերվարական նման եղանակին և պնդում էր, թե այն արմատապես բայրայում և ոչչացնում է կալվածատեր ազնվականության տնտեսությունները<sup>73</sup>:

Զեռնարկված միջոցները ազրարային ոլորտում թեն տպավորիչ էին քաղաքական տեսակետից, սակայն գործնականում դրանք զարկ չտվեցին երկրի զարգացմանը, ինչպես նաև հակասական հետևանքներ ունեցան սոցիալական ասպարեզում: 1920 թ. դրությամբ 274720 գյուղացիական տնտեսությանը պատկանում էր 1019767 դեսյատին վարեկահող (կամ մեկ ծիմին ընկնում էր 3.7 դեսյատին): Այնինչ 27971 ազնվական ընտանիք միայն այգեգործական գոտում ուներ շուրջ 204785 դեսյատին, այսինքն՝ յուրաքանչյուր նախկին կալվածատեր շարունակում էր տնօրինել միջին չափով 7.3 դեսյատին մշակելի հող<sup>74</sup>:

---

ты, сколько конфискация или отобрание земли у не-грузинских землевладельцев» (տե՛ս Մախարաձե Փ. *Диктатура меньшевистской партии в Грузии*, с. 110): Նոյն միտքը հնչում է պատգամավոր Ս. Վ. Մաշարելիի ելույթում: «Հողերի տրամադրումը հայերին, ուսւսերին և ուրիշներին, – պնդում էր նա, – զարհուրելի անարդարություն կհանդիսանա վրաց գյուղացիների նկատմամբ» (տե՛ս ՅԱԿԱՎԿԱՅՍԿՈЕ СЛОВО, 26. I. 1919):

<sup>73</sup> *Парламент Грузии // ЗАКАВКАЗСКОЕ СЛОВО*, 22. I. 1919. Վրաստանում հողային բարեփոխման անհրաժեշտության հարցին և նրա իրականացման ընթացքում առաջացած խնդիրներին անդրադարձել են նաև մի շարք հեղինակներ. տե՛ս Lang D. M. *A modern history of Georgia*. London, 1962, p. 212-213. Suny R. G. *The making of the Georgian nation*. California (USA), 1988, p. 195-200. Kazemzadeh F. *The struggle for Transcaucasia (1917-1921)*. New York, Oxford, 1951, p. 188-189.

<sup>74</sup> Ժվանիա Գ. *Великий Октябрь и победа советской власти в Грузии*. Тб., 1987, с. 178.

*Հստ Թելավ քաղաքի վարչության անդամ Գ. Հ. Տեր-Ճարությունյանի, «հողերի բաշխումը կատարվել է հօգուս հողատերերի ու կուլակների, մինչդեռ սակավահող ու հողազուրկ գյուղացիները մնացել են նույն ծանր կացության մեջ: Այդ պատճառով դժգոհությունը մեծ է իշխանությունների դեմ: Մենշևիլյան կառավարությունը գուր է մտածում հողերի այդպիսի բաշխումով գյուղերի ազդեցիկներին իր կողմը քաշել: Նրանք իրենց տնտեսական, իրավական ու հոգեբանական տվյալներով ավելի հակած են դեպի ազգային դեմոկրատները»<sup>75</sup>:*

*Այսպիսով, վրաց կալվածատեր ազնվականությունն իր ժողովրդին «նվիրեց» այն ունեցվածքը, որի նշանավոր մասը փաստացի իրեն արդեն չէր էլ պատկանում: Սակայն այդ մտածված քայլի դիմաց նա ետ ստացավ իր նախկին հողային սեփականության զգայի մասը, որն այժմ ազատ էր բանկային պարտքերից, քանզի նշված գումարների վճարման հոգսը դրվել էր զիխավորապես պետքյուջեի վրա<sup>76</sup>: Կառավարության «զբարսության» այս դրսնորումը բխում էր, ինչպես վկայում են ներկայացված փաստերը, գուտ քաղաքական հաշվարկներից և, ակներևարք, հետապնդում էր «ազգային խաղաղության» պահպանման հեռանկարը<sup>77</sup>:*

*Իրենց կարճատև կառավարման ընթացքում «մենշևիկ» սոցիալ-դեմոկրատները ձգուում էին տնտեսական ոլորտում ամրա-*

<sup>75</sup> Տե՛ս ՆՈՐ ԱՇԽԱՏԱԲՈՂ, 12. VIII. 1919:

<sup>76</sup> Այս առթիվ, ուշադրության է արժանի Վրաստանի ՀԱԽ-ի անդամների այն պնդումը, ըստ որի «без преувеличения, хотя и гипотетически, можно утверждать, что самый бюджет грузинского государства в своей значительной части держится именно на гражданах армянской национальности» (տե՛ս MEMORANDUM, с. 79):

<sup>77</sup> Այս սկզբունքը առավելապես կարևորում էն արդի վրաց պատմանները՝ զրելով. «Аграрная реформа, проведенная в Грузии не оставила без земли ни бывших землевладельцев (дворян, помещиков), ни крестьян. Такая политика помогла избежать столкновений между классами на социальной почве» (տե՛ս Вачнадзе М., Гурули В. История Грузии (XIX–XX века). Учебное пособие. Тбилиси, 2004, с. 92):

պնդել վրաց գործարարների դերը՝ օգտագործելով պետական մենաշնորհների լծակը և քաղաքացիության մասին օրենքը, որոնք պարզորոշ ուղղված էին հայ բուրժուազիայի թուլացման և ապա վերացման նպատակին: Տնտեսական «ճնշումները հանդես էին զայս ապազգային դիմակով, իբրեւ հանրապարտադիր օրէնքներ կամ կանոններ առեւտրա-արդիւնաբերական գործերով պարապող բոլոր քաղաքացիների համար: Բայց ոչ որի համար զայտնիք չէր, որ նրանց զիսաւոր զոհերը հայերը պէտք է լինեն, որովհետեւ այդ գործերը զիսաւորապէս նրանց ձեռքին էին գտնում: <...> Մի կողմից՝ ծանր տուրքերի էին ենթարկում հայերի առեւտրա-արդիւնաբերական ձեռնարկները, նոր ձեռնարկների արտօնությանը դժուարացնում, նրանց համար չարաշահութեան մեղադրանքով մեծամեծ տուգանքներ դնում նրանց վրայ, իսկ միևս կողմից՝ ամեն դիւրութիւն ու աջակցութիւն տալիս էին տնտեսագործական հակումներ ունեցող վրացիներին, որպէսզի նրանք մրցունակ դառնան հայերի դէմ»<sup>78</sup>: Հստ մեկ այլ արժեքավոր վկայության «վրաց մենշևիկեան կառավարութիւնը <...> կը կոուէր բուրժուազիայի դէմ՝ ուժեղացած տուրքերու, կալուածներու պետականացման, ստիպողական փոխառութիւնների միջոցով <...> Եւ երէ նկատի առնենք, որ բուրժուազիան Թիֆլիսի մէջ բաղկացած էր Հայերէ <...> բոլորովին պարզ կ'ըլլայ, որ վերոյիշեալ քաղաքականութեան <...> զիծերն ալ ամենէն շատ կը հարուածէին Հայերու անմիջական շահերը, եւ Հայերն էին, որ զիսաւորաբար, կը տուժէին թէ՛ նիւթապէս եւ թէ՛ բարոյապէս, կը կորսնցնեին իրենց տունները եւ դրամազլուխները, ազդեցութիւնն ու դիրքը, եւ կ'ընդհարուէին Վրացիներու հետապնդած արհեստական ազգայնացման հետ: Թիֆլիսի ամենալաւ թատրոնը, “Արտիստական Ընկերութիւն” անունով, չնչին գումարով անցաւ Իւզբաշեաններու ձեռքէն պետութեան: Քաղաքի ամենալաւ տունը Ս. Արամեանցինը, Վրացիք գրաւեցին՝ վերածելով “բանութրական տան”: Փրիտոննեաններու տունը դարձաւ նախարարի

<sup>78</sup> Տե՛ս ՀԱՅՐԵՆԻՔ, 1929, մարտ, էջ 119:

բնակարան, Մանքաշեանի տունը՝ դիւանագիտական ներկայացուցութիւն, եւ այլն»<sup>79</sup>:

Վրաց բուրժուազիան, որը հիմնականում ներկայացված էր մանր առևտրականների դասով և ունեոր զյուղացիությամբ, պետական հովանափորության սուր կարիք ուներ, իսկ նրա արագ զարգացման համար «Ձերմոցային» կամ մենաշնորհային պայմաններ էին անհրաժեշտ, որոնց կիրառման պարագայում պեսոք է բացառված լիներ թէ՝ ներքին և թէ՝ արտաքին տնտեսական մրցակցությունը: Հայ գործարար խավը վրաց կառավարության «սոցիալիստական» քաղաքականության շնորհիվ սնանկացավ ավելի արագ, քան վրաց բուրժուազիայի կայացման գործընթացը կանգնեց իր լիարժեք և հուսալի ուղու վրա: Այսպիսով, վրաց քաղաքական վերնախավի անհեռատես «քարեփոխումները», որոնք ավելի շատ բխում էին քաղաքական նախասահրություններից, քան հենվում կյանքի իրական պահանջների վրա, անտարակույս, մեծապես նպաստեցին այն լայնածավալ ճգնաժամի խորացմանը, որն արդեն խեղում էր Վրաստանի տնտեսությունը:

Համառուսաստանյան շուկայի կազմաքանդման հետևանքով Վրաստանն ապրեց տնտեսական վիլուզում: Կրճատվեց արդյունաբերության ու զյուղատնտեսության արտադրանքը: Տնտեսական կապերի խզումն առաջացրեց նաև զների հսկայական տեղաշարժ: Դրա հետևանքով առանց այն էլ հետամնաց տնտեսությունը քայրայվեց: Կրճատվեցին ցանքատարածություններն ու ընտանի կենդանիների զյուղանակը: Ապրանքների թանկացումները աշխատավոր ժողովրդին հասցրին ծայրահեղ աղքատության: Հատկապես աղետաբեր էր պարենային ճգնաժամը: Քաղաքաբնակների հիմնական մասը գրեթե մատնվել էր սովորության: Արտաքին առևտրում առաջացած դեֆիցիտը զնահատվում էր 219 մլն ռուբլի

<sup>79</sup> Խատիսեան Ա. Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պեյրութ, 1968, էջ 225–226:

<sup>80</sup> Գոլօծ օ Օնи // ԲՈՐՅԲԱ, 5. Ա. 1920.

(1919 р.), որի հետևանքով զնամի չափը մեծ ցուցանիշների էր հասել<sup>81</sup>: Դրան նպաստում էր նաև պետական բյուջեի հսկայական ճեղքածքը, որը կառավարությունը «բուժում էր» նոր «1000 ռուբլի» նույնալ ունեցող սեփական բոների թողարկմամբ (1919 թ., հուլիս) և դրանց լրացուցիչ Էմիսիայով<sup>82</sup>: «Մեր տնտեսական քաղաքականությունը, — զրկած է թիֆլիսան ժամանակի մամուլի էջերում, — հայտնվել է ինչ-որ կախարդված շրջանում: Երեք տարի շարունակ տարբեր տնտեսական միջոցների կիրառման փորձեր են արվում և այդ ամենը սուս դուս եկավ»<sup>83</sup>: Տնտեսական ճգնաժամի ցայտուն դրսնորումներից մեկը 1920 թ. օգոստոսյան խուճապն էր տարադրամի ստվերային շուկայում, երբ վրացական բոնի կուրսը, մեկ անգլիական ֆունտի դիմաց, կարճ ժամանակամիջոցում արժեզրկվեց 3000-ից մինչև 7 հազարի<sup>84</sup>: ՎՌՀ-ի Պետական Բանկի (հիմնադրվել էր 1920 թ. հունիսին) դատարկ զանձարանը որևէ կերպ չէր կարող ազդել խելազարդված շուկայի վրա ստեղծված տխուր իրավիճակը փորբիշատե կարգավորելու նպատակով: Զուրկ լինելով հարկային եկամուտների հուսալի աղբյուրներից՝ վրաց կառավարությունը փորձեց ձեռք բերել վարկային միջոցներ արտաքին շուկայում, բայց Անգլիայի և Ֆրանսիայի պետական ու մասնավոր ֆինանսական կառույցները ձեռնպահ մնացին և չշուապեցին Վրաստանին դրամական որևէ շոշափելի օժանդակություն հատկացնել: Վարչապետ Ն. Շորդանիան ստիպված էր խոսել ճգնաժամային լուրջ երեսութեների մասին<sup>85</sup>: Մամուլը իսկույն արձագանքեց դրան, սակայն նաև տեղեկացնելով, որ «ճգնաժամը ոչ միայն տնտեսական է, այլ նաև քաղաքական ու բարոյական: Սա ամբողջական սնանկացում է»<sup>86</sup>:

<sup>81</sup> Учредительное собрание // СЛОВО, 4. I. 1920.

<sup>82</sup> Грузинская жизнь в 1919 году // СЛОВО, 1. I. 1920.

<sup>83</sup> Опять старые ошибки// СЛОВО, 27. VIII. 1920.

<sup>84</sup> «Եայլարտզըլո» («Սաքարբվելո»), 12. XI. 1920.

<sup>85</sup> БОРЬБА, 16. X. 1920.

<sup>86</sup> «Եայլարտզըլո» («Սաքարբվելո»), 16. XI. 1920.

Ճգնաժամը խորանում էր նաև այն պատճառով, որ վրացական ազգային պետության ստեղծման նպատակին զոհարերվում էին երկրում ապրող ազգային փոքրամասնությունների շահերը, որի հետևանքով վերջիններին և վրաց իշխանությունների միջև փոխարաքերությունները կամա թե ակամա լարվում էին: Վրաց բաղաքական շրջանակների կողմից ազգային փոքրամասնությունների պահանջները երբեմն մեկնաբանվում էին որպես «հակավրացական»: Քաղաքական գործիչների մի մասը (խորհրդարանի պատգամավորներ՝ Վեշապեկի, Գվազավա, Գոտուա, Մաշարեկի, Գումարթեկի և այլք) առանցքային խնդիրների շուրջը վրաց ժողովրդին համախմբելու նպատակով օգտագործում էր ներքին թշնամու զաղափարը՝ հանձինս ազգային փոքրամասնությունների<sup>87</sup>: Սեփական սոցիալական նեղ շահերի թելադրանքով այդ տեսակի տարրերն աշխատում էին թունավորել վրաց ժողովրդի լայն զանգվածները շովինիստական նենց և ստոր իրենց քարոզով: Խնամքով և զիտակցաբար նրանք սերմանում էին ազգայնական հոգեբանությունը, որի զինավոր նպատակն էր նաև աշխատավոր զանգվածին սոցիալական պահանջներից հեռու պահելը: Վրաց բանվորին փորձում էին համոզել, թե սոցիալական ոլորտում օրեցօր խորացող իր բազմակուտակ խնդիրները, իբր, կարելի է, և նույնիսկ անհրաժեշտ է լուծել, նրա այլազգի զործքներների հեռացման միջոցով<sup>88</sup>: Դրա հետևանքով ևս պակաս չէին դեպքեր, եթե վրաց ազգայնական մասուլում ոչ վրացի ազգաբնակչության, հատկապես հայերի վտարման կոչեր

<sup>87</sup> Ազգայնական թեկի ելույթները իրականում բացահայտում էին երկրում տիբրող անհանդուրժողականության մթնոլորտը, որի մասին «մենշվարդի» պաշտոնաթերթը ստիպված էր խոստովանել, որ՝ «Смысл каждого их речи сводился к тому, что все армяне, русские, осетины и проч. – враги грузинского народа, что против них надо принимать репрессивные меры. Изгнание армян в Армению, русских в Россию...[бот их требование]» (տե՛ս և *Hu одного голоса грузинским шовинистам // БОРЬБА*, 2. II. 1919):

<sup>88</sup> Տե՛ս և *Հայ բանուորներին արձակելու մասին // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ. 9. II. 1919:*

Էին հնչում<sup>89</sup>: Նման քարոզությունը վրաց հասարակության ներսում արձանագրում էր ազգայնական տրամադրությունների աննախադեպ աճ, որը տեղերում էրբեմն վերածվում էր հայահալած միջոցառումների: Վրաստանի ՀԱԽ-ի անդամներն մատնանշում էին, որ «հայ բնակչության նկատմամբ շուրջ երկու տարի տարրողության և մնջման քաղաքականության արդյունքում գրեթե ամեն հայ դիտվում է իրքն պետության թշնամի <...> Անկախ Վրաստանի գոյության երկու տարրում հականայությունը ոչ թե բռլացել է, այլև հակառակը՝ ներզրավել է վրացական հասարակության նորանոր շրջանակներ, վերածվելով մոռավորական երևույթից զանգվածայինի»<sup>90</sup>:

Վրաց ազգայնականները համառորեն պահանջում էին «նորացնել» Վրաստանի հայ ազգաբնակչությունը: Հազարավոր հայ մարդիկ Վրաստանի շատ ու շատ վայրերից ոչ միայն հարկադրված էին հեռանալ «դեմոկրատական հանրապետությունից», այլ նաև վրաց իշխանությունների կարգադրանքով նրանցից շատերը բռնի արտաքսվում էին երկրից: Վրաց-հայկական պատերազմի հետևանքով Թիֆլիսի հայության համար ծայրահեղ ծանր կացություն էր ստեղծվել: Ապօրինի ձերբակալությունները, խուզարկություններն ու բռնազրավումները դարձել էին սովորական երևույթ: Զինապարտ հասակի հայ տղամարդկանց կալանավորում էին, Քութայիսի մոտ ստեղծված հատուկ նշանակության ճամբարներում նրանց սովաստանց էին անում և օգտագործում ծանր աշխատանքների համար<sup>91</sup>: Բուն Վրաստանի քաղաքներում ու գյուղերում (Գորի, Սղնախ, Թելավ, Գուրջաանի և այլն)

<sup>89</sup> Տե՛ս «Եսեացներ Եսայթյ» («Սահմալիս սարմեն»), 20. XII. 1918, «Եսայարտզյալու» («Սարարթվելու»), 22. XII. 1918, «ՅՇՄՈՒԾԱ» («Երթուրա»), 26. V. 1919.

<sup>90</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 441, գ. 1, գ. 140, թ. 2-6:

<sup>91</sup> Ճամբարներ աքսորված հայերի թվաքանակը 1919 թ. հունվարի 3-ի դրությամբ կազմեց 1600 մարդ (տե՛ս Ձերբակալւած հայերի մասին // ՑԱՌԱԶ, 12. I. 1919):

տեղի ունեցան հայերի տների և խանութների թալան ու ավեր<sup>92</sup>: Այս ամենն արդարացնելու և քրեածին տարրերին «դասակարգային զիտակցություն» իր հաղորդելու նպատակով՝ վրաց «դեմոկրատիայի» և հայ «բուրժուազիայի» միջև եղածը լկտիաբար սոցիալական պայքար անվանեցին: Հալածանքների էին ենթարկվել հայ մոտավորականության ներկայացուցիչներ և հասարակական հայտնի գործիչներ: Խախտելով պատգամավորական անձեռնմխելիությունը՝ իշխանությունները կալաքի տակ վերցրեցին խորհրդարանի անդամ Զ. Զորյանին, Թիֆլիսի քաղաքային դումայի իրավասուներ U. Աբեղյանին, U. Թոսունյանին, U. Ամիրխանյանին, Գ. Ճոնյանին, Ե. Պայյանին<sup>93</sup>: «Հասուկ ջոկատ»-ի գործակալների «եռանդագին» աշխատանքի շնորհիվ բերման եր ենթարկվել, ի թիվս շատերի նաև Հովհաննես Թումանյանը<sup>94</sup>:

Սուկալի ծանր կացություն էր ստեղծվել նաև զավառներում: Այսպես, Բորչալուի հյուսիսային մասում (Տաշիր) վրաց զինվորականությունը վրեժինդիր եղավ տեղի խաղաղ հայ բնակչությունից: Ազգային հալածանքը Դադեր-Խաչենի և Շուշավերի զավառակներում հայերի սպանության բազմաթիվ դեպքերի

<sup>92</sup> Անդրադառնալով այս դեպքերին՝ քաղաքական գործի Ֆ. Մախարաძեն գրում է. «В самой Грузии во время этой войны все армянское население было взято под подозрение и обвинялось в измене отечеству. По всей Грузии гвардейцами, милиционерами и чинами особого отряда армяне подвергались неслыханным оскорблению, арестам, высылке и т. д. без всякого повода с их стороны. С армянами всякий мог сделать то, что хотел» (Махарадзе Ф. Диктатура меньшевистской партии в Грузии, с. 74): Ամորալի այս երկույթների մասին բազմից հիշատակում է ժամանակի մամուլը (տե՛ս Դմիտր Վրաց դեմոկրատական հանրապետութեան կառավարութեան նախագահին // ՍԴԱԿ, 12. I. 1919, Զурաբ Ա. Օտկрытое письмо Н. Н. Жордания // СОЦИАЛ-ДЕМОКРАТ, 13. I. 1919): Վիրահայ բնակչության կրած վնասների մասին մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 238, թ. 1-55:

<sup>93</sup> Տե՛ս Լրատու // ՅԱՌԱՋ, 23. I. 1919:

<sup>94</sup> Սարդարյան Կ. Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921թթ., Եր., 2002, էջ 91:

պատճառ դարձավ: Հազարավոր մարդիկ ստիպված էին թաքնվել անտառներում՝ կոտորվելով սովոր ու ցրտից<sup>95</sup>:

Ըստ U. Զամայյանի արժեքավոր վկայության, «հայ-վրացական պատերազմի կապակցութեամբ կատարուած հակահայկական հալածանքների <...> բացասորութիւնը պէտք է որոնել Վրաստանի հայութիւնը նօսրացնելու եւ տնտեսապէս թուլացնելու այն քաղաքականութեան մէջ <...> որին, հետեւում էր Ժորդանիա-Մամիշվիլի կառավարութիւնը իր գոյութեան պահից սկսած՝ վրաց շովինիստներին բաւարարութիւն տալու համար: Պատերազմը հարթել էր այս քաղաքականութեան ճանապարհը: Նրա իրականացման համար այլևս կարիք չկար օրինական ձեւակերպութիւնների յետեւից ընկնել...»<sup>96</sup>: Ժամանակի նշանավոր և իրազեկ գործի այս սպառիչ խոսքերը հավեյալ մեկնաբանության անհրաժեշտություն չունեն:

1919 թ. հունվարի 5-ին Թիֆլիսում դարձյալ տեղի են ունեցել հայերի զանգվածային ձերբակալությունները<sup>97</sup>: Շուրջկալների մէջ ընկած բոլոր հայ տղամարդկանց անխտիր մեկուսարան էին նեռում: Նման կերպ էին վարկում նույնիսկ այն օսարազդի անձանց հետ, ովքեր «չէին կարողանում ապացուցել, որ հայ չեն»<sup>98</sup>: Անդրկովկասյան Ռուսական ազգային խորհուրդը, որի գրասենյակը գտնվում էր Թիֆլիսում, պահանջեց ազատել «ձերբակալ-

<sup>95</sup> Տե՛ս ՅԱՌԱԶ-ի հետևյալ նյութերը. Դադեթ-Խաչենը (16.I.1919), Բոլնիս-Խաչեն (30.I.1919), Շուկավերում և իր շրջանի հայ գյուղերում վրաց գորքերի ձեռքով կատարած թալանն ու ավերածությունները (31. I. 1919), Վրաց գորքերի անկարգությունները հայ գյուղերում (7. II. 1919), Գագանություններ Դադեթի շրջանում (11. II. 1919), Վրաց գորքերի գագանությունները Բոլնիս-Խաչենում (15. II. 1919), Շամշուդայում (19. II. 1919):

<sup>96</sup> Տե՛ս ՀԱՅՐԵՆԻՔ, 1929, ապրիլ, էջ 145:

<sup>97</sup> Տե՛ս Մասսովա արեստներ // ՀՐԱՅԻ, 7. I. 1919.

<sup>98</sup> Տե՛ս ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 9. I. 1919:

ված բոլոր քաղաքացիներին՝ առանց ազգի և կրոնի խտրության»<sup>99</sup>:

Իշխանությունների այս ապօրինությունների պատճառն արդեն Հայաստանի հետ պատերազմը չէր: Պարզապես այդ ձևով վրաց իշխանությունները փորձում էին Թիֆլիսի քաղաքացին դրւմայի առաջիկա ընտրությունների նախօրյակին ահաբեկել և չեզորացնել հայ ընտրազանգվածին: Մայրաքաղաքի 346 հազ. բնակչությունից 149 հազարը հայեր էին<sup>100</sup>: 1918 թ. հուլիսի 16-ի չարաքաստիկ «կանոնադրության» համաձայն թիֆլիսարևակ 110000 ընտրողներից իշխանությունները ձայն տալու իրավունքից գրկեցին 60000-ին<sup>101</sup>: Այդ խորականությունը դժողովության այլիք բարձրացրեց Թիֆլիսի բազմազգ բնակչության շրջանակներում: Ռուսազգի էսէռները, ՀՅԴ-ն ու ՀԺԿ-ն ի նշան բողոքի բոյկոտեցին 1919 թ. ընտրությունները<sup>102</sup>: Այս վայրիվերումների արդյունքում Թիֆլիսի դրւմայում վրացազգի իրավասուներին բաժին ընկած աթոռների թիվը կազմեց 87 տոկոս<sup>103</sup>: Վրացիները, այդուհանդերձ, ճնշող մեծամասնությունն էին կազմում մայրաքաղաքի վարչության մեջ:

<sup>99</sup> Տե՛ս Շուսաց ազգային խորհրդի դիմումը // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 5. I. 1919:

<sup>100</sup> Տե՛ս Կավказский Календарь на 1917 г. Тифлис, 1916, с. 206 – 207.

<sup>101</sup> Մենտեաշվիլի Ա. Նշվ. աշխ., էջ 111: Մատևանշենք, որ Թիֆլիսի 1917 թ. քաղաքացին ընտրություններին այդպիսի խորականության մասին խոսր չէր կարող լինել: Այդ հիրավի ժողովդական քվեարկության մասնակից եղան ոչ միայն քաղաքի շափական բոլոր բնակչները, այլև կայագորի ոուս զինվորականությունը: Վերջին հանգամանքից վարպետորեն օգտվեցին վրաց սոցիալ-դեմոկրատները, որոնք, շահարկելով հեղափոխական կարգախոսները, շահեցին նաև զինվորական ընտրազանգվածի ձայների գերակշիռ մասը: Հետևաբար, քաղաքացին դրւմայում հայազգի թեկնածուներին բաժին հասավ աթոռների 40 %-ը, վրացիներին՝ 32.5 %-ը, ոուսներին՝ 27.5 %-ը (տե՛ս Կարապետյան Ս. Մերս Տիֆլիսա. Եր., 2003, с. 22):

<sup>102</sup> Տիֆլি�սская дума в 1919 году // СЛОВО, 1. I. 1920.

<sup>103</sup> Տե՛ս Քաղաքային ընտրութիւնները // ՅԱՌԱՋ, 7. II. 1919:

Նկատենք, որ կառավարչական մարմիններում քարթվելական գերակայության հաստատումը, թերևս, բացասական ազդեցություն ունեցավ երկրի այլազգի բնակչիների կացության հարցում։ ՆԳ նախարարությունը 1919 թ. աշնանը որոշում էր ընդունել Թիֆլիսը «օտար տարրերից» հետզհետև «քեռնաթափելու» մասին<sup>104</sup>։ Դա մեծ իրարանցում առաջ բերեց մայրաքաղաքի բազմազգ բնակչության միջավայրում, քանզի ցանկացած անձինչները առիթով անզամ կարող էին արտաքսել երկրից<sup>105</sup>։

Վրաստանի կառավարության ներքին քաղաքականության կարեռագույն ուղղություններից էր նաև իր իշխանության տարածումն ու ամրապնդումը ոչ վրացարնակ զավառներում։ Իշխանությունները, օգտվելով զանազան միջոցներից, չխորշելով նաև ուժային լծակներ գործադրելուց, տևական պայքարից հետո կարողացան ՎԴՀ-ի գերակայությունը հաստատել մի շարք վիճելի, բարություն և հանդրազն շրջաններում։ ՎԴՀ-ի բնակչության շուրջ

<sup>104</sup> Վերոհիշյալ խնդրին վերաբերող՝ «Օտար տարրերը Թիֆլիսից հեռացնելու մասին (կառավարական հաղորդագրության)», «Թիֆլիսը ազգայնացում է» և «Տագնապը չի վերացում» խորագրով նյութերը տե՛ս ԱՇԽԱՏԱՄԻՈՐ-ի 1919 թ. նոյեմբերի 14, 18 և 19-ի համարներում։ Ի դեպ, նման միջոցառումները խորթ չեն նաև հետազայում Վրաստանի կումունիստական կառավարությանը, որի համար էլ նա արժանացավ Ի. Ստալինի թեթևակի նախատանըրին։ «В Грузии принят известный декрет о “регулировании” населения в Тифлисе, – 1923 թ. шутц էր ազգությունների ժողկումը: – <...> Имелось в виду некоторое перемещение населения произвести так, чтобы армян из года в год оказывалось меньше в Тифлисе, чем грузин, и, таким образом, превратить Тифлис в настоящую грузинскую столицу. <...> У них в руках имеется масса возможностей, масса таких гибких форм (например, “разгрузка”), при помощи которых можно было бы, соблюдая видимость интернационализма, устроить дело так, что армян в Тифлисе оказалось бы меньше» (տե՛ս Ստалиն Ի. Վ. Հօգուածական գործառնությունները, 1923 թ., համար 1, էջ 11)։

<sup>105</sup> Այդ որոշումը Վրաստանի ՀԱԽ-ը փորձել է քեկանել։ Նրա վարչությունը երկրի վարչապետին է դիմել մի ծավալուն նամակով, որտեղ հիմնավորված հերթել էր ՆԳ-ի կարգադրության մեջ տեղ գտած շինծու բոլոր պատրվակները (տե՛ս ՀԱԽ, ֆ. 441, գ. 1, գ. 84, թ. 30-33)։

մեկ երրորդը, ինչպես ասվեց, կազմում էին ոչ վրաց ազգությունները: Հետևաբար, վրաց մեծամասնության թվային գերակշռությունն այնքան վճռորոշ չէր, որպեսզի նրան թույլ տար ամբողջովին և մշտապես անտեսել ազգային ու կրոնական փոքրամասնությունների ձգտումները: Ըստ երկրի ղեկավարների, քաղաքացիների ազգային կարիքները պիտի յուրացվեին տեղական ինքնակառավարման մակարդակով, քանի որ Վրաստանում հոչակված «դեմոկրատական» կարգերը երաշխիք են ստեղծում որևէ հալածանքի դեմ:

Թե ինչ արժեք ունեին այդ հավաստիացումները, վկայում է, գուցե, Դուրնուկի (Թիֆլիսի գավառ) հայկական դպրոցի փակման դեպքը: Ուսուցիչը և կրթարանի հոգաբարձուները առանց քննության ու դատարանի որոշման, միայն ոստիկանապետի կարգադրությամբ, արտաքսեցին երկրի սահմաններից դուրս ու շպարզվեց «թե ինչ է եղել նրանց հանցանքը»<sup>106</sup>: Հենց այս մեկ օրինակով անզամ կարելի է դատել, որ ՎԴՀ-ում վարչական հիմնարկների դեմոկրատացումը ձեական քննություն էր կրում, իսկ վարչակարգը նախկինի պես մնում էր «ոստիկանական»: Ավելին, ձևադրությունը և բռնությունների հետևանքով «Վրաստանի անկախութիւնը»<sup>107</sup>:

Դժգոհության և վրդովմունքի զգացմունքը առաջացել էր նաև թիֆլիսահայ մոտավորականության լայն շրջանակներում: Նրա լավագույն ներկայացուցիչների տրամադրությունները, սակայն, շատ անզամ հակասական էին, ինչն արտահայտված է Ս. Աբեղյանի մտորումներում: «Վերջին ժամանակներս, - գրում է ականավոր զիտնականը, - իմ մեջ դեպի վրացիները մտել է մի անցանկալի դառնություն, որ անջուշու միայն իմ մեջ չեն, այլ նաև հազարավոր իմ հայրենակիցների մեջ: Եվ եթե այդ դատնությունն

<sup>106</sup> Յարութիւնեան Ի. Վրաստանի տարրական դպրոցների զիտաւոր վարիչ պ. Ճումբուրիձեի յոդածի առթիվ // ՆՈՐ ԽՕՍՔ, 4. X. 1920:

<sup>107</sup> Վալադեան Վ. Ճամբորդային խոհեր // ՆՈՐ ԱՇԽԱՏԱՒՈՐ, 24. VIII. 1919:

այսպես շարունակվի, լավ հետևանքներ չի խոստանում ոչ հայի և ոչ վրացու համար: <...> Հայր երբեք վրացու վատը չի կամեցել իբրև ազգի, և այժմ էլ, ինչքան էլ մեր սիրոր դառնացած լինի, չենք կարող չկամենալ, որ վրաց ազգը գորանա և կազմակերպվի իբրև անկախ պետություն: Մենք չենք կարող չկամենալ այդ, որովհետև վրացու հաջողությունը և գորացումը միշտ մեզ օգուտ է»<sup>108</sup>:

Վրաստանի սահմաններում գտնվող հայությունը շարունակում է պահպանել իր ազգային ինքնուրույն նկարագիրն ու դիմազիծը: Քանի որ հայկական համայնքները երկրի բնակչության նկատելի մասն էին կազմում ու նշանակալի դերակատարություն ունեին տնտեսական կյանքում, ուստի վրաց իշխող վերնախավը վստահություն չուներ, թե կրանք պահանջված չափով են իրենց նորաթուիս հանրապետության «զավակները» համարում և արտաքին դրդումներին կարող են ընդդիմանալ: Հստ Միմոն Վրացյանի, «Վրացիները կը նկատեն հայ տարրը խոչընդուռ իրենց անկախ պետութեան կառուցման: Հայկական բուժուազիան չի ուզեր հաշտուել Վրացական տիրապետութեան հետ: Չ՞է որ մօտիկ անցեալում իրենք էին տիրողը Թիֆլիսում, որ հայկական քաղաք էր, հիմա ինչպէ՞ս տանել “տուտուց” Վրացիների յոխորուանքները»<sup>109</sup>: Հստ դաշնակցական լրագրում գետեղ-

<sup>108</sup> Տե՛ս Էջեր Սանուկ Արեւյանի պատմահրապարակախոսական ժառանգությունից, Եր., 2013, էջ 40–41:

<sup>109</sup> Տե՛ս Վրացեան Ս. Հին թղթեր նոր պատմութեան համար, Բեյրութ, 1962, էջ 267: Վրաց իշխանությունների վարած հալածական քաղաքականությունը, իբրոք, որոշ հայերի ստիպում էր համակրանքով վերաբերվել դրսից երկրի դեմ ուղղված ձեռնարկումներին: Այդպես, թերևս, եղավ Սոշի–Աղլեր առափնյա շրջանում առաջ եկած ուսւվրացական գինաբախման ժամանակ: Ումանք զուր պատրանք ունեին, թե ոուս մեծապետականները կգրավեն Վրաստանի մայրաքաղաքը: «Հայ ապազգայնացած, հայրենախոյս և տնտեսական նաճռողական մեծ ախտրժակ ունեցող բուժուազիան, – ցեղակից ունետր խավին նախատում էր ՀՅԴ-ի պարբերականը, – ցնցվում է կողակների ներարշավի շեփորի ձայնը լսելով: Նա ուրախ է, որ նորէն, Ռուսաստանի տիրա-

զած տեսանկյունի, հայ-վրացական ժամանակի լարված փոխհարաբերությունների բուն արմատը, նախ և առաջ, պետք է որոնել սոցիալական ասպարեզում: Հողվածագիրը համոզված էր, թե «ամեն մեկի համար պարզ է, որ հայկական կապիտալի մրցման չդիմացող և մասսայորեն սնանկացող վրացական մակր բուրժուազիան ու ազնվականությունն են, որ տարված են հակահայկական նացիոնալիզմով»<sup>110</sup>:

Արմատավորվելով իշխանության զլուխ, վրաց սոցիալ-դեմոկրատիան իր հերթին կրում էր տեղական պայմանների ազեցությունը, որի հետևանքով էական էվոլյուցիա ապրեց և իր ուսական նախատիպից նկատելի չափով հեռացավ ինչպես քաղաքական, այդպես էլ սոցիալական կազմի տեսակետից՝ այս առումով մոտենալով ԱԴ ազգայնական կուսակցությանը և յուրացնելով նրա քաղաքական վարկը<sup>111</sup>: Ըստ Մ. Աբեղյանի, «Վրացի ազնվականների հին տիտոր դերը դեպի հայերը մեծ ճարաշի կությամբ կատարում են վրաց սոցիալ-դեմոկրատները, մի կու-

\* պետութեան տակ տնտեսապէս և մասամբ էլ քաղաքականապէս տեր կը լինի իր ձեռքից գեացած, բայց իր կապիտալի կենտրոն Թիֆլիսին» (տե՛ս Ղիմակները վար են դնում // ԱԺԽԱՏԱԲՈՐ, 11. VI. 1919): Թիֆլիսի ձակատագիրը, բնականաբար, շատ էր հուզում վրաց հասարակայնությանը: Նրանք համոզված էին, թե «армяне вообще были недовольны, что Тифлис стал грузинской столицей. Они думали, что этот город их. В Тифлисе раньше политически господствовали русские, а экономически армяне. Русские ушли и они считали, что город достанется им» (տե՛ս և Ջօրդանիա Հ. Ի. Մоя յշին. Ստենֆորդ, 1968, с. 89):

<sup>110</sup> Տէ՛ս Ո՞վ է «Եղբայրականը» // ԱԺԽԱՏԱԲՈՐ, 25. IX. 1918: Ունեոր վերևախավի միջավայրում վրաց-հայկական սոցիալ-տնտեսական հակասությունների առաջացման բուն պատճառների մասին մանրամասն տե՛ս Մանլյան Բ.Վ. *О некоторых аспектах армяно-грузинских отношений на рубеже XIX и XX веков* // Армения и христианский Кавказ (Республиканский симпозиум, посвященный 1700-летию принятия христианства в Кавказской Албании и Грузии, Ереван, 15-16 декабря 2015 г.), Ереван, 2015, с. 143-146.

<sup>111</sup> Տէ՛ս Իշխանյան Բ. *Метаморфоза грузинской социал-демократии (причины и критика явления)*. Баку, 1919.

սակցություն, որ միջազգային [համերաշխության] պատրվակն ունի երևան քաղած և դրա համար էլ ավելի հեշտությամբ և համարձակ է շարժվում: Ինչ խաղ ասես, որ այդ լոկ խոսքով սոցիալիստներն ու դեմոկրատները իրենց մամուլով ու վարած քաղաքականությամբ շնաղացին հայերի զիսին»<sup>112</sup>: ՎԱԴԲԿ-ի առաջնորդները վարպետորեն օգոստորձեցին «հեղափոխական» կարգախոսները՝ իրենց ազգայնական և շովինիստական բուն քաղաքականությունը բողարքելու համար: Նրանց ջանքերով ստեղծված վարչակարգն իրականում «ունեցել է սոսկ մի գործելակերպ՝ երևոյթապէս, մարդկանց աչքերը շլացնելու համար պահպանել ոռուսական մեծ յեղափոխութեան արդինք քաղաքական և սոցիալիստական բոլոր կազմակերպութիւններն ու հիմնարկութիւնները, իսկ էապէս նրանց բուն արժեքը ոչնչի հաւասարեցնել՝ սոսկ մի խրուխիակ դարձնելով նրանց՝ կառավարութեան նազի տակ պարելու համար:

Եւ իրաւ, կառավարութիւնը մինչև այժմ բոլոր դէպքերում հասել է իր նպատակին. – ապացոյց Թիֆլիսի բանտորական պատզամատորական խորհուրդը, արհեստակցական միութիւնների կենտրոնական խորհուրդը, քաղաքային դուման և ... և այլն»<sup>113</sup>:

1921 թ. փետրվարին Վրաստանի Սահմանադիր ժողովը վավերացրեց երկրի առաջին՝ «դեմոկրատական» սահմանադրությունը: Այն ամրագրեց «ունիտար (միահեծան) պետության» գաղափարը<sup>114</sup>: Տեղական կառավարման հիմնական օղակը, ինչպէս ասվեց, զավառական «էրորա»-ն էր՝ օժուված լայն լիազորություններով: Ընտրովի զավառային խորհրդի («սակրերուլո») գոյության իրողությունը, այդուհանդերձ, արդեն դիտվում էր ինքնավարությանը հավասարագոր<sup>115</sup>: Այս ամենն արվում էր

<sup>112</sup> Տե՛ս Էջեր Սանուկ Աբեղյանի պատմահրապարակախոսական ժառանգությունից, էջ 42:

<sup>113</sup> Բոլութեան նոր ակտը // ՆՈՐ ԱՇԽԱՏԱԲՈՐ, 22. VII. 1919:

<sup>114</sup> Տե՛ս Silogava V. & Shengelia K. Նշվ. աշխ., էջ 222:

<sup>115</sup> Թե ինչպէս դա աշխատեց, օրինակ, Զավախիրի պարագայում,

նաև երկրի ազգային փոքրամասնություններին մոլորեցնելու և նրանց նկատմամբ առավել շահեկան վիճակում հայտնվելու նպատակով։ Վրաց կառավարական շրջանակները երբեք հետևողական չեն պաշտպանել ինքնավարության սկզբունքը և խուսանավոր քայլերով մշտապես փորձել են հնարավորինս սահմանափակել երկրի այլ ազգությունների իրավունքները։ Իրականությունն այն է, որ սոցիալիստական պատմուման հազած Վրաստանի «Ենունկրատական» առաջնորդները ինքնավարության սկզբունքի մասին, այդ թվում նաև մշակութային, խոսում էին միմիայն քաղաքական դաշտում ժողովրդավար երևալու և երկրի մյուս ազգությունների հետ առերես համերաշխվելու նպատակով։ Ծայրագավառների ինքնավարության մասին վրաց նախարարների բերանով նախապես տրված շրայլ խոսումներն՝ ունեին լոկ դատարկ խայծի նշանակություն<sup>116</sup>։ Դրա փո-

կարելի է դատել վարչակազմի անվանացանկից. «սակրեբուլո»-ի նախագահ՝ Փաշովիա, գործադիր մարմին դեկավար՝ Վ. Ռամիշվիլի, հաշտարար դատավոր՝ Ս. Լ. Փիրավիշվիլի (տե՛ս Առակալակ // ԲՈՐԵԱ, 31. VIII. 1920)։ Դժվար է, սակայն, հավատալ, որ ջավախքահայ ընտրազանգվածն իր ձայնը տվել էր նրանց, ովքեր հալածել և կեղերել են նրան զաղթականության մեջ։ Ուստի, «Մենչևիլյան» վարչակարգի գործադրան նախընտրական հնարքների մասին աշխատել է բարձրածայնել մամուլը։ «Միլիցիոններները, - կարդում ենք ՀՅԴ-ի լրագրում, - շրջերով գիտել-զիտ, սպառնում էին ժողովրդին, մասնաւրապէս հայերին, թէ եթէ ձայն չտան № 1-ին [իմա՝ ՎՄԴՔ-ին - Բ. Մ.] այն ժամանակ վրաց դեմոկրատական կառավարութիւնը կը վրնէ նրանց իր երկրից, կը փակէ բոլոր ճանապարհները, որտեղից հնարաւոր է պարենաւորման <...> մթերքները ներմուծել Ախալքալաքի զաւառը և այդպիսով [նրանց] կատարեալ սովոր կը մատնեն» (տե՛ս Վրաստանի Սահմանադիր ժողովի ընսրութիւններն Ախալքալաքում// ՆՈՐ ԱՇԽԱՏԱԽՈՐ, 6. IX. 1919):

<sup>116</sup> Քաղաքական հնարքների հմուտ վարպէտ Ն. Ն. Ժորդանիան գտել էր, իր կարծիքով, այն «ոսկէ միջինը», որը, իբր, պետք է հաշտեցներ վրաց պետության զաղափարը և նրա տարածում բնակվող ազգային փոքրամասնությունների շահերը։ Նա ասում էր, «...мы все их [իմա՝ ազգային փոքրամասնությունների - Բ. Մ.] требования, касающиеся автономии, как бы ни была она широка, можем принять. Не можем

խարեն, այդուհանդերձ, ազգային փոքրամասնություններին առաջարկվեց բավարարվել միայն լայն ժողովրդավարացման մասին «ցնցող» և «շլացուցիչ» կարգախոսություն<sup>117</sup>:

Այսպիսով, հանրագումարի բերելով վերը շարադրած նյութը, կարելի է հանգել հետևյալ եղանակության:

- ✓ Վրաստանի Դեմոկրատական Հանրապետությունը կայացավ որպես անկախ պետականություն՝ իրեն բնորոշ բոլոր հատկանիշներով.
- ✓ Վրացական վերածնված պետականության առաջնորդներն իրականում նպատակ ունեին ստեղծել ունիտար և միատարր երկիր, սակայն այդ ձգուումը փորձում էին քողարկել դեմոկրատական կարգախոսներով,

---

принять лишь одного: отделения от нас» (տե՛ս և Դни господства меньшевиков в Грузии. Документы и материалы. Тифлис, 1931, с. 239):

<sup>117</sup> Վրաստանում տիրող քաղաքական բարեկի մասին, ի դեպ, շափազանց դիպուկ զնահատական է հնչել ժամանակի մամուլում: Թիֆլիսահայ օրաթերթի էջերում մի իրազեկ անձնավորություն վրաց ընտրախավի մասին գրում էր, որ «ինքնահաւան ու ինքնազոհ, նրանք կարծում են, որ Աստծո ողորմութեամբ Վրաստանը մի այնպիսի Արկադիա է, որ ոչ մի քաղաքացի կամ ազգութիւն ոչինչ պահանջելու իրաւունք չունի: Սոսանալով [ցարական ինքնակալության դեմ] իրենց անցեալ պայքարի ամենատարրական լոգունգները, նրանք յամաօրէն պնդում են, որ մեր երկրում գոյութիւն ունեն միայն այն իրաւունքները, որոնք շնորհիած են մենշևիկ մինիստրներից: Այդ մինիստրական հայեցողութիւնից դուրս ամեն մի պահանջ ու իրաւունք պետական դաւաճանութեան համագօր է յայտարարաւծ» (տե՛ս և Ազատ բիւրոկրատիզմ // ՆՈՐ ԱՇԽԱՏԱԲՈՐ, 3. VIII. 1919): Շատ ավելի անհրապույր զնահատական է տվել, սակայն, մի անզիջացի լրագրող, որը շրջայցով ժամանել էր այդ կովկասյան երկիր: «Ազատ և անկախ սոցիալ-դեմոկրատական Վրաստանի պետությունը, - գրում է նա, - կմնա ընդմիշտ իմ հիշողության մեջ, իբրև իմպերիալիստական "փոքր ազգի" դասական օրինակ: Տարածքների զավթումը դրսում, թե բյուրոկրատական բոնապետությունը ներսում՝ միննույն է, նրա շովիմիզմը որևէ սահման չի ճանաչում» (տե՛ս Bechhofer C. E. In Denikin's Russia and the Caucasus. 1919 – 1920. London, 1921, p. 14):

- ✓ առօրյա քաղաքականության մեջ գերիսնդիր էր համարվում Վրաստանում քաղաքացիական պատերազմի տարածման վտանգի չեղորացումը և սոցիալական խաղաղության պահպանումը վրաց ժողովրդի տարրեր խավերի միջն,
- ✓ ՎԴՀ-ի կառավարության սոցիալ-տնտեսական գործունեությունը, որը զուգակցվում էր շոայլաբար տարածվող սոցիալական բարեփոխումների մասին խոստումներով, հիմնականում ուղղված էր ոչ վրաց, գերազանցապես հայ գործարար տարրի ոչնչացման նպատակին և, ի վերջո, ճգնաժամային երևոյթները երկրում վերածեց համբարձիանուր տնտեսական աղետի,
- ✓ ազգային փորբամասնությունների նկատմամբ իրականացվող քաղաքականության նպատակն էր երկրում նրանց համար ստեղծել գոյատևման այնպիսի պայմաններ, որոնք ուղղված կլինեն, եթե ոչ այլազգիների ամբողջական վտարման, ապա գոնե հեռանկարում նրանց ազգաձևման համար:

**ԱԶԱՐԻԱՅԻ ԵՎ ՍԱՍՑԽԵ-ՄԵՍԽԵԹԻԱՅԻ  
ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՀԱՎԱՔՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՍՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Վրաց քաղաքական վերնախավը 1918 թ. հունիսի 4-ին Բարումի վեհաժողովում տեղի տվեց թուրքական ճնշումներին և, ինչպես հայունի է, պարտադրված եղավ կնքել տիկրահոչակ «հաշտություն»: Ըստ դրա պահանջների՝ նորաստեղծ Վրաստանը, որն Ազարիայի (նաև՝ Աճառա) և Սամցխե-Մեսխեթիայի<sup>1</sup> նկատմամբ մեծ հավակնություններ ուներ<sup>2</sup>, այնուամենայնիվ ստիպված եղավ ձանաչել այդ մարգերի վրա օսմանյան կայսրության գերակայությունը<sup>3</sup>: Ըստ վրացական լրատվամիջոցների

<sup>1</sup> Պատմական մարզ, որը ժամանակին ընդգրկում էր Ախալցխայի գավառը և Արդահանի շրջանի հյուսիսարևմտյան հատվածը:

<sup>2</sup> Այդ մարգերի պատմական անվանումը համարժեք է նաև ուսումնասիրվող ժամանակաշրջանում առավել գործածական «մահմեդական Վրաստան» քաղաքական անվանը, որի բնակչության նկատմամբ կիրառվում էր ոչ թե էրնիկ-ազգային, այլ կրոնադավանության սկզբունքը: Զարարակայի շրջանը (Ճար-Բելորանի, Սայինզիլո, պատմ. Եխմի - Խենի), որտեղ նույնպես բնակվում են իսլամադավան վրացիներ (ինզիլյոներ) ավանդաբար չի դասվել հիշյալ եզրը կրող տարածքներին:

<sup>3</sup> Սույն շրջանների ապագա ճակատագրի հարցն արձարձվել էր դեռևս առաջին աշխարհամարտի սկզբում: Ոչ անհայտ «որոկուր» [խոսրով բեզզ] Սուլթանովը բարեգործութեան դիմակի տակ համարիւրքական ազիտացիա էր մղում Բարումի և Ախալցխայի շրջաններում: Միւս ազիտատորներն են [Ահմեդ] Պետինով, Օմար Ֆայիկ Էֆենդի [Կիփիանի] <...> նրանց նպատակն է Բարումի, Ղարսի, Ախալցխայի և Ախալքալաքի շրջաններն իբր ավտոնոմ միացնել Տաճկաստանին: 1917 թ. աշնանն Ախալցխայում կայացաւ Կովկասի մահմեդականների համագումար՝ մասնակցութեամբ [հյուսիսկովկասյան] լեռնականների: Համագումարը վճռապէս պահանջեց ամեն մի կուլտուրական ու քաղաքական կապ խզել Վրաստանի հետ» (տե՛ս «Վրաստանի Սահմանադիր

պնդման, «միայն բեզերը և խոշոր հողատերերն են շահագրգոված նրանում, որ մահմեղական վրացիներով բնակեցված տարածքները ենթարկվեն Թուրքիային, քանզի վերջինս կպահպանի կալվածատերերի [ձեռքերում եղած] հողերը»<sup>4</sup>: Թուրքական տիրապետության առաջին իսկ օրից, սակայն, Աջարիայում հաստատվել էր ռազմակալման այնպիսի խիստ ռեժիմ, որ դրանից, առանց չափազանցության, սկսեցին տառապել նույնիսկ տեղի վրացի մահմեղականները: Աջարացիների միջավայրում մեծ իրարանցում էր առաջ բերել զորահավաքի մասին թուրք զինվորական հրամանատարության խիստ կարգադրությունը<sup>5</sup>: Պետք է փաստել, որ ռուսական տիրապետության օրոր վրաց մահմեղականները զինվորությունից ազատ էին: Ուստի, հրաժարվելով մտնել օսմանյան զնդերի շարքերը՝ զգալի թվով անհնագանդ աջարացիներ, կազմելով զորայինքեր՝ «չետաներ», բարձրացել էին անառիկ լեռները<sup>6</sup>: Հարկ է առանձնահատուկ նշել, որ միաժամանակ տարածում ստացավ նաև երկրամասի ինքնավարության մասին տեղի բնակչության պահանջը<sup>7</sup>:

Գերմանիան խանդով էր նայում, թե ինչպես Բարումի վեհաժողովում Թուրքիան ձեռք բերեց միակողմանի առավելու-

**Ժողով // ԱՇԽԱՏԱԲՈՐ, 8. IV. 1919):** Մեկ այլ կարևոր վկայությունը հաղորդում է, թե «ինչպես կասկածվում է, Թուրքիայից եկած Եփս-սարները վաղուց գործում են Ախալցիայի իրենց հայրենակիցների մեջ, նրանք այն այրովազանդան են մղել, թե Ախալցիան իր շրջաններով ոչ թե վրացական երկիր է, այլ՝ մուսուլմանական, հետևաբար, սահմանաբաժանումից ժամանակ այն պետք է մտնի մուսուլմանական ինքնավար միության մեջ...» (Սանոսյան Ա. Ա. Ախալցիայի և Ախալքալաքի գավառների 1918-ի ինքնապաշտպանությունը, Եր., 1992, էջ 7):

<sup>4</sup> «ერთობა» («Ертопра») թերթից արտասպան հոդվածը տև և *O воз-вращении грузин-мусульман* // КАВКАЗСКОЕ СЛОВО, 14. XI. 1918.

<sup>5</sup> Աջարիայում // ՀՈՐԻԶՈՆ, 6. VI. 1918:

<sup>6</sup> Ազարացիների անհնազանդութիւնը // ՀՈՐԻՇՈՆ, 14. VII. 1918:  
Նման իբաղարձություն էր տեղի ունեցել նաև 1875 թ., երբ կամակոր-  
աջարացիները հանդուզն կերպով հրաժարվեցին ենթարկվել զորահա-  
վաքի մասին սովորակն կարգադրությանը:

*Хроника: Мятеж в Аджарии // КАВКАЗСКОЕ СЛОВО, 14. VII. 1918.*

թյուններ և պնդեց, որ հրավիրվի մի նոր կոնֆերանս: Նախատեսվում էր, որ Կ. Պոլսում կլոր սեղանի շուրջ նստած պիտի բանակցեին Քառյակ միության և կովկասյան նորակազմ հանրապետությունների ներկայացուցիչները: Ենթադրվում էր, որ, մինչև նոր խորհրդաժողովը, վիճելի տարածքների հարցը մնալու է առկաի: Վրացիներն իրենց շահերի թելադրանքով, ինչպես հայտնի է, հակվեցին դեպի Գերմանիան: Տեղի ունեցավ վրաց-գերմանական հարաբերությունների սերտացում: Վրաց կառավարությունը որոշակի հույսեր էր փայփայում, թե նրան կհաջողվի Բեռլինի աջակցությամբ ազատել Աջարիան և Սամցխե-Մեսխեթիան թուրքերի ճիրաններից: Թուրքիայի մայրաքաղաք ժամանած վրաց պատվիրակությունն առանձնապես չէր էլ թարցնում այդ մուադրությունը: Դա համընկնում էր նաև Գերմանիայի շահերին:

Բյեստ-Լիստվակի պայմանագրում պահանջ էր դրված, ըստ որի օսմանների կողմից նվաճված, սակայն դեռ փաստացի վիճելի Բաթումի վարչական մարզի<sup>8</sup> տարածքում պետք է հանրարկե անցկացվեր: Ուստի, թուրքերը 1918 թ. հուլիսին շտապեցին կազմակերպել այդ «հանրարկեն», որպեսզի վրացիներին զրկեն մարզի նկատմամբ պահանջներ առաջ բաշելու հեռանկարից:

Եթե 1918-ի գարնանն Աջարիայի մահմեդական բնակչու-

<sup>8</sup> Մարզը բաղկացած էր երկու՝ Բաթումի և Արդվինի վարչական շրջաններից: Առաջինը՝ բուն Աջարիան, ուներ վրացի (63.9%), ոռու (10.1%), հայ (8.1%), հույն (5.3%) և բուրք (3.6%) ազգաբնակչություն (տե՛ս Եատումսկий округ // Էնցիկլոպեդիческий словарь, русского библиографического института «Гранат», том 5-й, Москва, 1911, с. 99): Երկրամասի հարավը՝ Կղարքը (Արդվին-Արտանուց) և Շավելը, բնակեցված էր բուրք (73.9 %), հայ (14%), վրացի (9.8%) և ոռու (2%) ազգություններով (տե՛ս Արտևինский округ // там же, том 3-й, Москва, 1911, с. 572): Հայերը, որոնք մինչև առաջին աշխարհամարտը կազմում էին մարզի բնակչության 10.3 տոկոսը, 1914 թ. Արդվինի շրջանում կոտորածի ենթարկվեցին: Այսպիսով՝ XX դարի շեմին, մարզն ուներ երկու՝ վրացի (42.9%) և բուրք (30.9%) առավելապես մեծաթիվ ազգություններ (տե՛ս Եատումսкая область // там же, том 5-й, с. 93):

թյունը խանդավառությամբ էր ողջունում օսմանյան գորքերի հաղթական մուտքը երկրամաս, ապա որոշ ժամանակ անց թուրքերի «ազատարար» վարկը զգալիորեն մարեց, ինչից և շխապահեցին օգովել վրացիների համախմբվածությանը ձգողող թիֆլիսամետ տեղի ուժերը: Այդ աջարացիները հիշեցին, որ իրենք ևս վրացի են և ուզում են, որպեսզի Բաթումը անցնի Վրաստանին: Մի խումբ աջարացի ազնվականների անունից էնվերին և Բաթում ժամանած երիտրուրը այլ պարագույխներին դիմեց Մեմեդ թեգ Արաշիձեն<sup>9</sup>: «Մենք կրիմավորենք ձեզ իբրև հյուրերի, սակայն վրաց ժողովուրդը ոչ մեկին չի զիջի Բաթումը»<sup>10</sup>, – ի միջի այլոց ասաց նա: Նման համարձակ կույրերն ու առհասարակ ընթիմադիր կեցվածքը շուտով դարձան Ս. Արաշիձեի, ինչպես և նրա այն համակիրների ձերքակալման պատճառը<sup>11</sup>, որոնք բողոքի թուցիկներ են պատրաստել Աջարիայում թուրքերի ունեցած կոշտ և անհարզայից գործելակերպի դեմ<sup>12</sup>: Քանզի համավաճական միասնության զաղափարին համակրող տարրերին տեղում չհաջողվեց ձախողել «հանրաքվե» կոչված թուրքական կատակերգությունը, ապա պաշտոնական Թիֆլիսին այլընտրանք չէր էլ մնում, քան Վրաստանում գերմանական բարձրաստիճան ներկայացուցիչների առջև բողոքարկել դրա ընթացքում տեղ գտած բազմաթիվ չարաշահումներն ու լկտի կեղծարարությունները<sup>13</sup>: Շուտով Թուրքիայի պարտությունն առաջին աշխարհամարտում փորր-ինչ սահմանափակեց նրա վերնախավի ծավալապաշտական ախտրժակները Այսրկովկաստում: Թուրքերը ստիպված եղան հետ քաշվել Աջարիայից:

<sup>9</sup> Աջարիայի մուսուլմանադավան զանգվածների մեջ մեծ համբավ վայելող Ս. Արաշիձեն 1905 թ. կանխեց ցարական իշխանությունների կողմից Բաթումի հայերի ծրագրավորվող ջարդերը (տե՛ս Մեմեդ Աբասածե և Արմենիա. Եր., 2010):

<sup>10</sup> Տե՛ս և Բորբա за победу советской власти в Аджарии, документы и материалы (1917–1921). Батуми, 1961, с. 17.

<sup>11</sup> Հրոնիկ // КАВКАЗСКОЕ СЛОВО, 26. VII. 1918.

<sup>12</sup> Բաթումում // ՀՈՐԻԶՈՆ, 23. VI. 1918:

<sup>13</sup> Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, с. 370–371.

Բրիտանական զինված ուժերը, պարտադրելով հեռանալ թուրք զավթիչներին, 1918 թ. դեկտեմբերին, ինչպես հայտնի է, իսկույն զինազրավեցին ուսումնավարական չափազանց մեծ նշանակություն ունեցող Բաթումի նավահանգստը: Վրացական կողմը դարձյալ պարտադրված էր համաձայնել, որ այդ տարածքը «առժամանակ» գտնվի Մեծ Բրիտանիայի գորքերի վերահսկման ներքո: Լոնդոնում, հավանաբար, նախապես էին որոշել, որ Բաթումի և նրա մարզի հետազա ճակատագիրը պետք է վճռվեր Փարիզի խաղարարար վեհաժողովում: «Ֆորիե-օֆիսը», սակայն, վերապահումներով էր վերաբերվում Բաթումի մարզը Վրաստանի կազմի մեջ մտնելու հեռանկարին: Ուստի, ԱԳ նախարար Ե. Պ. Գեղեցկորին պարբերաբար անզիացիներին հիշեցնում էր (1919 թ. հունվարի 18-ի և փետրվարի 15-ի դիվանագիտական նոտաներ), որ սույն տարածքը հանդիսանում է Վրաստանի անքաժանելի հատվածը<sup>14</sup>: Հստ նրա պնդման, քանզի Բաթումի «նկատմամբ Վրաստանի իրավունքները չեն կարող կամած հարուցել ոչ պատմական, ոչ քաղաքական, ոչ բարյական տեսակետից», ուստի վրաց «կառավարությունը հույս ունի, որ Վրաստանի և Թուրքիայի միջև կվերականգնվի “status quo ante bellum”, և որ Բաթումի մարզը <...> դարձյալ կվերամիավորվի» մայր հայրենիքի հետ<sup>15</sup>:

Նկատենք, որ Վրաստանի կառավարության և, ընդհանրապես, ողջ հասարակության ուշադրության կիզակետում էր Բաթումի մարզի կնճոտ հարցը: Վարչապետ Ն. Ն. Ժորդանիան հատուկ ուղերձով դիմել էր մարզի մահմեդական վրացիներին և նրանց հորդորում էր միանալ Վրաստանի Հանրապետությանը: Միաժամանակ խոստանում էր, որ երկրամասին տրվելու է ինքնավար կարգավիճակ<sup>16</sup>: «Սահմեդական Վրաստանի ազատա-

<sup>14</sup> Учредительное собрание Грузии // КАВКАЗСКОЕ СЛОВО, 20. VI. 1919.

<sup>15</sup> Нота МИД Е.П. Гегечкори верховному комиссару Закавказья О.Уордрону // БОРЬБА, 10. X. 1919.

<sup>16</sup> Սահմեդական Վրաստանի ինքնավարությունը // ՅԱՆԱԶ, 17. I. 1919: «Սահմեդական Վրաստան» հնարավոր ինքնավարության մա-

գրման կոմիտե»-ի (որի նախագահը Մ. Արաշիձենն էր) անդամները լրջորեն ընդունել էին Թիֆլիսից հաճախ հնչող այս հորդորները և ծրագրում էին ենթադրվող «ինքնավարության» մեջ ընդգրկել նույնիսկ Ախալցիայի և Ախալցխարքի զավառները<sup>17</sup>:

Հարցի համատեքստում ուրույն տեղ է գրավում սուլթանական կառավարության նախկին անդամ Սահմուղ Թավդղիրիձեի, նաև վրացազգի այլ փաշաների խորհրդավոր ուղերձը: Նրանք միաբերան խորհուրդ էին տալիս իսլամադավան ցեղակիցներին գերծ մնալ Վրաստանին միանալու գործնական քայլերից՝ խոստանալով մոտ ապագայում վճռել Աջարիայի և Սամցխե-Եթունեթիայի ինքնորոշման խնդիրը: Սահմեդական վրացիների, առանձնապես քորուկեթցիների տրամադրությունները, որոնք մինչ այդ իրենց հայացքը Թիֆլիս էին հառել, Կ. Պոլսից իրենց հասցեազրկած հիշյալ նամակից հետո արմատապես փոխվեցին<sup>18</sup>:

---

սին միտքը՝ առաջին անգամ արծարծվել է 1917 թ. ամռանը՝ վրաց ազգային դեմքուրատների (լիբերալներ) կուսակցության անդրանիկ համագումարում (տե՛ս «Եայժա՛րություն» («ՍաքարթՎելո», 22 օցնօս 1917): Սակայն, եթե բուն բարթվելների հետ պատմականորեն սերտ և մշակութային չափազանց ամուր կապեր ունեցող մեզրելները՝ բարձրաձայնեցին սեփական վարչա-մշակութային ինքնավարություն ունենալու ցանկության մասին, ապա վրացական վերնախավի կողմից դա խսկույն դիտվեց իրքն «արկածախնդրություն» [«Եայժա՛րություն» («ՍաքարթՎելո», 1919, № 144) պարբերականից արտատպված հողվածը տե՛ս Սամեցրելոյի ինքնավարութեան հարցը // ՆՈՐ ԱՇԽԱՏԱԲՈՐ, 9. VII. 1919]: Այսպիսով՝ կարելի է դատել, որ «մահմեդական Վրաստանի» ինքնավարության մասին քաղցրահամ խոսքերը՝ ծառայում էին այլադապվան ցեղակիցներին միմիայն սիրաշահելու և թուրքերի ազդեցության ոլորտից դուրս բերելու նպատակին:

<sup>17</sup> «Եայժա՛րություն Ռյանցնոյոյա» («ՍաքարթՎելո Ռեսպուբլիկա», 1918, № 105) պաշտոնաթերթից արտատպված հողվածը տե՛ս Կոչ վրացի մահմեդականներին // ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ, 4. XII. 1918:

<sup>18</sup>Տե՛ս Պոպով Ա. Իз эпохи английской интервенции в Закавказье // ПРОЛЕТАРСКАЯ РЕВОЛЮЦИЯ (ամսագիր, Սոսկվա), 1923, № 6-7, с. 256, 265.

«Մահմեդական Վրաստանի» ճակատագրին էր նվիրված նաև Բարուսի քաղաքային վարչության գրասենյակում գումարված բազմամարդ խորհրդակցությունը: Նիստը վարում էր «Վրացասեր» թերին հարող Զիա բեզ Արաշիձեն: Նրա առաջարկությամբ թեժ քննարկման առարկա դարձավ Վրաստանին միանալու հարցը, որը, սակայն, ի վերջո, մերժվեց: Ներկաների գերակշիռ մասը արտահայտվեց մարզում անզյիական ժամանակավոր կառավարման օգտին<sup>19</sup>: Այսպիսով՝ վրացամետ ուժերը դարձյալ ձախողվեցին:

Ախալցխայից օսմանյան գորքերի հեռանալուց անմիջապես հետո, Օմար Ֆայիկ Կիփիանիի նախագահությամբ գործող Սեսիւթիայի մահմեդականների «ազգային կոմիտե»-ն հարկադրաբար ճանաչել էր Վրաստանի կառավարության գերակայությունը: Գավառը զինագրաված վրաց գորքերից պահանջվում էր ձեռնարկել զգույշ և ողջամիտ քայլեր, սակայն նրանք սանձարձակ անկարգությունների դիմեցին: Դրա հետևանքով 1919-ի հունվարին տեղի մահմեդականները նախընտրեցին «Հարավարևմտյան Կովկասի ժամանակավոր կառավարության» (կամ՝ Կարսի «Շուրա») իշխանությունը<sup>20</sup>: Վերջինս ուներ օսմանյան սվինի օգնությամբ ստեղծված արհեստաձին կազմավորման բնույթ, որի գոյությունը նշանակում էր նախկին ռազմակալված շրջաններում բուրք-օսմանների ազդեցության քողարկված օջախի պահպանում<sup>21</sup>: Շուրով սկսվեց նաև Կարսի «Շուրայի» զինուժի հարձա-

<sup>19</sup> Նոյն տեղում, էջ 260-261:

<sup>20</sup> Տե՛ս ԱՅԵՐԲԱЙԴՋԱՆ (օրաթերթ, Բարու), 19. III. 1919. Բարվից տարածվող վարկածի համաձայն՝ Սամցխեի մահմեդականների ելույթը պայմանավորված էր միմիայն վրաց զինվորականության այլանդակ պահվածքով: Ի դեմս «Ազերբայդջան» պանթյուրքիստական լրագիրում զետեղված տեղեկության, վրացի քաղաքագետները ապակայունացնող տարր էին նկատում գերազանցապես բեզական կալվածատեր խավը: Առանձնացնելով մահմեդական շարքային զյուղացիությունը՝ բեզերին էին վերագրում բոլոր շարիբները՝ նրանց մեղադրելով զիսավորապես կենտրոնախույս ձգուումների մեջ:

<sup>21</sup> Ոչ մեկի համար այդ տարիներին զաղտնիք չէր, որ թուրքական

## Կումը Սամցիս-Մեսիսեթիայի վրա<sup>22</sup>:

Վրաստանի կառավարությունը Ախալցիսայի, նաև հարևան Ախալքալաքի զավառներում ուղամական դրություն մտցրեց, և գորավար Ա. Մաղաշվիլու (Բայր Սական)<sup>23</sup> վոլոսարէն զինվորական գեներալ-նահանգապետ նշանակեց Գ. Ի. Մագնիաշվիլուն<sup>24</sup>: Սակայն վրացական գորախումբը 1919 թ. փետրվարին լուրջ անհաջողություն կրեց Ախալցիսան զիշելով հարևան Փոցիովի զավառամասից (Արդահանի շրջան) ներխուժած թուրքական ուժերին<sup>25</sup>: Գավառը, որտեղից դուրս մղվեցին վրացական կայագորները, շուրջ 26 օր գտնվում էր տեղի խոշորագույն կալվածատեր Սերվեր բեզ Աթաբեզ Քորիլիանելիի<sup>26</sup> դեկավարած «կոմիսարիատ»-ին ենթակա զինված ջոկատների վերահսկողության ներքո<sup>27</sup>: Այդ ընթացքում Մեսիսեթիայի վրաց քրիստոնյա բնակչու-

---

նոր խամաճիկային պետության միջոցով տարածաշրջանը վերաձևելու ծրագրերի իրական հեղինակը հենց Թուրքիան էր: Ըստ Ե. Պ. Գեգեձկորու, վրացական կողմը երկրում տեղակայված բրիտանական գորքերի հրամանատարությանը հաղորդեց, որ «Կարսի կառավարութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ տաճկական կազմակերպութիւն»: Մենք փաստացի ապացուցեցինք նրանց, որ այդ ամբողջ կառավարութիւնը կազմած է տաճիկ կոմիսարների և գործակալների կողմից» (տե՛ս «Վրաստանի Սահմանադիր ժողով» // ԱՇԽԱՏԱԻՈՐ, 13. V. 1919): Անզիացիները, սակայն, որևէ կերպ չարձագանքեցին և անհետևանք թողեցին վրաց նախարարների նման դիմումները:

<sup>22</sup> Հրոնիկա: В Ахалцихском уезде и Ардаганском округе // ЗАКАВКАЗСКОЕ СЛОВО, 28. I. 1919.

<sup>23</sup> Տաօտօծյ զցլա, զցբցթածո օձցլո (ծալոր) մացա շցոլո და ցցեսցո-քցա եցու եայոտხ (1918 թ.) // ქարտշլո დօձլոմաճօ, წցոնց գցցու, թուրքական ժողով, 1999, զշ. 306-324.

<sup>24</sup> Հրոնիկա // ЗАКАВКАЗСКОЕ СЛОВО, 1. II. 1919.

<sup>25</sup> К отступлению от Ахалциха // ЗАКАВКАЗСКОЕ СЛОВО, 20. II. 1919.

<sup>26</sup> Գրվում է նաև՝ Կոպլիանսկի:

<sup>27</sup> Աթաբեզ Քորիլիանելին տեղի հայերին առաջարկում էր իրենց թեկնածուներին լիազորել իր «կառավարության» մեջ որոշ պաշտոններ ստանձնելու համար, այդ թվում՝ լուսավորության և ֆինանսների «նախարարների»: Սակայն զավարի հայության ընդհանուր ժողովը իսկովն

թյունը մեծ վնասներ կրեց<sup>28</sup>: Բեգերի իշխանությանը լեզիտիմություն հաղորդելու համար՝ սույն «կոմիսարիատ»-ի ստեղծման հիմքում դրվում էր ինքնորոշման սկզբունքը: «Ախալցիսայի դէպքերը ոչ թէ ժողովրդի, այլ բէկերի ինքնորոշման հետևանքն էն»<sup>29</sup>, – «պարզաբանում» էր վրացալեզու մամուլը: Երկու պնդման միջև, սակայն, պետք չէ որևէ հակասություն որոնել: Թուրք շարքային զուլացիությունը, հասկանալի պատճառներով, հասարակարարական ինքնազիտակցության ցածր մակարդակ ուներ և ինքնորոշման զաղափարի տակ սոսկ հասկանում էր բեգերի ամրողական իշխանության հաստատումը:

Ինչ վերաբերում է Սամցխե-Մեսխեթիայում վրացական կողմի ձախողման պատճառներին, ապա ըստ Թիֆլիսի մահմեդական «ազգային կոմիտե»-ի, «եթէ կառավարութիւնն Ախալցիսան զրաւելուց ետոյ մերձեցում առաջացներ բէգերի ու իր միջն և հողային հարցն առժամանակ յետաձեր, ակներն էր, որ ապստամբութիւնը չծագէր»<sup>30</sup>: Այդ «կոմիտե»-ն նաև պատվիրակությունը ուղարկեց վրաց վարչապետի մոտ՝ գորքերի և վար-

---

մերժեց այդ առաջարկը (տէ՛ս Հ. Յ. Դաշնակցութեան Վրաստանի II ույոնական ժողով, Բ նիստ // ԱՇԽԱՏԱՒՈՐ, 30. III. 1919): Հայերի հետ մերձենալու թուրք-մեսխեթցիների ցանկության իրական դրդապատճառների մասին մանրամասն տէ՛ս Կնյազյան Դ. Աղրբեջանական դեմոկրատական հանրապետության կովկասյան քաղաքականությունը 1918-1920 թթ., Երևան, 2008, էջ 69:

<sup>28</sup> События в Ахалцихском уезде // КАВКАЗСКОЕ СЛОВО, 10. IV. 1919. Գավառում թուրքերը կողոպտել և ավերել էին վրացական 12 օյուլ (Անդրիածինդա, Դրել, Զուբարեթ, Միքելծինդա և այլն) (տէ՛ս Ախալցիսայի զաւարի վնասած գիտերը // ԱՇԽԱՏԱՒՈՐ, 13.IV. 1919): Բործումի կիրճում կուտակվել էր Ախալցիսայի զավաոից շուրջ 1500 վրացի զաղթական («Տայարություն» [«Սաքարբէլ», 1919, № 77] պարբերականից արտասպած հոդվածը տէ՛ս Վրացի փախստականներ // ԱՇԽԱՏԱՒՈՐ, 11. IV. 1919):

<sup>29</sup> «յշտործա» («Էրթորխ», 1919, № 59) պարբերականից արտասպած հոդվածը տէ՛ս Ախալցիսան և Աղրբեջանը // ԱՇԽԱՏԱՒՈՐ, 19. III. 1919:

<sup>30</sup>Տէ՛ս «Հումմէթի» տեսակետը Ախալցիսայի դէպքերի մասին // ԱՇԽԱՏԱՒՈՐ, 5. IV. 1919:

շակագմի անվայել արարքների դեմ իր բողոքի ձայնը պարզելու համար<sup>31</sup>: Վրացի մի շարք գործիչներ նույնպես նեցուկ կանգնեցին այդ բողոքին: «Տեղական մահմեդականների վրդովմունքը առաջացաւ վրացական աղմինիստրացիայի անպէտրութիւնից և նրա աւազակային բնոյթից»<sup>32</sup>, – պնդում էր վրաց արմատական

<sup>31</sup> Թիֆլիսահայ մամուլը լուսաբանում էր դեպքերը, ընթերցողին տեղեկացնելով, որ «թիվը գիտացիութիւնը ահաբեկւած է», «ոչ մի կառավարչական հիմնարկութեան մօտենալ չի կարելի առանց կաշառքի», «ամբողջ Քօպէանի և Փողխովի ազգաբնակութիւնը, նոյնիսկ վրացիները, զգւել են իշխանութիւնից» (տե՛ս Վրաց իշխանութիւնն Ախալցիայում // ԱՇԽԱՏԱԲՈՐ, 28. VI. 1919): «Այն օրւանից, երբ վրացական գօրքերը մտել են Ախալցիայի գաւառը, ամենօրեայ թալանն ու կողոպուտը զինարքների կողմից սովորական երևոյթ են դարձել», «մեր շրջանում այժմ կատարում է այն, ինչ մեր գիտացին չի տեսել նոյնիսկ օսմանեան կարճատև տիրապետութեան օրով» (տե՛ս Դրութիւնը Ախալցիայի գաւառում // ԱՇԽԱՏԱԲՈՐ, 22. V. 1919): Պարզ պատճառներով հայերը չեին կարող աջակից լինել հակամարտ կողմերից և ոչ մեկին: Հետևաբար, նրանք աշխատում էին թույլ չտալ իրենց ներքաշել վրաց-թուրքական զինարքային մեջ: Քանզի Մեսիսեթիայի հայ բնակչությունը չեղ տուժել «Շուրայի» տիրապետության օրերին, ապա այդ հանգամանքը ումանց երևակայությունը բորբոք ու մտածելու առիթ տվեց, թէ, իբր, նրանց և թուրք-մեսիսեթցիների միջն գոյություն ունի զադտնի որևէ համաձայնություն: Ուստի, վրաց զինվորականության հետապնդումներից անմասն չմնաց և դաժանաբար հալածվեց նաև տեղի հայ ազգաբնակչությունը: «Վրաց գօրքերը գաւառի հայկական գիտերում սոսկալի խժդութիւններ են կատարում», «այսպիսի բան չի կատարւել թուրքերի զալու ժամանակ» (տե՛ս Վրաց գօրքերի սիրազործութիւնները Ախալցիայի հայկական գիտերում // ԱՇԽԱՏԱԲՈՐ, 30. III. 1919): Դեպքերի ականատեսներից մեկը գրում էր, որ «թուրքերին հաջորդող վրաց մենշևիկների իշխանությունն էլ միսիթարական չեր. դարձյալ իրար հետևից եկան դառն օրեր, անիշխանություն, խոռվություն, ավեր ու բռնություն: <...> Կաշառքը, ազգային խորականությունը, ծեծը, կողոպուտը, սպանությունները՝ ահոելի շափերի էր հասել» (տե՛ս Սիմոնյան Ե. Ախալցիան կրակե օղակում՝ 1917-1921 թթ. դեպքերի հուշագրություն, Եր., 2000, էջ 111, 115):

<sup>32</sup> «Ճղճյ» («Կլէ», 1919, № 53) շաբաթաթերթից արտատպված

ազգայնականների այն թվով, որը 1914 թ. համաձայնության էր եկել երիտրուրքերի հետ<sup>33</sup>: Այժմ նրանք մերձեցման եղբեր էին՝ փնտրում Աղրբեջանի մուսավարական պարագլուխների հետ՝ հակառուսական և հակահայկական դաշինք կնքելու համար: Այդ խմբի ամենակարկառուն դեմքը՝ մոլեզին հայաստյաց Գ. Վեշապելին, խորհրդարանի բարձր ամբիոնից իր վրացազգի գործընկերներին հորդորում էր, թե «դաշնակցութիւն կապենք Աղրբեջանի ու [հյուսիսկովկասյան] լեռնականների հետ և մի անգամ ու ընդմիշտ ջախջախենք հայ քաղաքականութեան գլուխը. անողոր կերպով մաքրենք մեր մայրաքաղաքը այստեղ բոյն դրած հայերից և Վրաստանի տերրիտորիայի վրայ գտնող հայ կողոնիստներին էլ քշենք դէպի Սևանայ լիճը»<sup>34</sup>: Սամցխե-Մեսխեթիայում տեղի ունեցած ընդհարումը, ըստ իրենց, խոչընդոտում և մեծապես խանգարում էր նշված ծրագրի իրականացմանը:

Վրաստանի կառավարության ներքին քաղաքականության կարևորագույն ուղղություններից էր նաև իր իշխանության տարածումն ու ամրապնդումը վիճելի և ըստու զավառներում: Վրաց իշխանությունները, օգտվելով զանազան միջոցներից, չխորշելով անգամ ուժային լծակներ գործադրելուց, տեսական

---

հոդված տե՛ս՝ Դարձեալ Ախալքալաքի զաւարի մասին // ՆՈՐ ԱՇԽԱՏԱՀՈՐԾ, 8. VII. 1919: Վարչակազմի ոչ կանոնավոր, չարաշահումներով լի աշխատանքը նախատում էին նաև վրաց կուսակցություններին պատկանող այլ պարբերականները: «Մեր վարչութեան ներկայացուցիչները անսահման կամայականութիւն են ցոյց տալիս ամեն տեղ և ամեն ժամանակ» [«Տայարական» («Սաքարթշահ», 1919, № 205) օրաթերթից արտատպված հոդվածը տե՛ս Վրաց կենք՝ անսահման կամայականութիւն // ԱՇԽԱՏԱՀՈՐԾ, 1. X. 1919]: «Մեր աղմինիստրացիան ընկած է: Նա քաղաքացիների աշբում ոչ մի հեղինակութիւն չունի» [«Թրոմճ» («Երումա», 1919, № 8) պարբերականից արտատպված հոդվածը տե՛ս Աղմինիստրացիան ներկայ մոմենտում // ԱՇԽԱՏԱՀՈՐԾ, 24. X. 1919]:

<sup>33</sup> Закарян А. Малоизвестный исторический документ (грузино-турецкое соглашение 1914 г.) // ИФЖ, 2005, № 3, с. 254–257.

<sup>34</sup> «յօնք» («Ժայռ», 1918, № 7) պարբերականից արտատպված հոդվածը տե՛ս Պատերազմ հայերի դէմ// ՀՈՐԻԶՈՆ, 3. XI. 1918:

պայքարից հետո կարողացան հաստատել պաշտոնական Թիֆլիսի գերակայությունը խովարար մի շարք շրջաններում, այդ թվում՝ Սամցխե-Մեսիսեթիայում:

Զորավար Գ. Ի. Կվինիտաձեի հրամանատարության տակ գործող գորքերը 1919 թ. մարտ ամսին վերագրավեցին Ախալցիսան<sup>35</sup>, իսկ ապրիլին մտան Արդահան<sup>36</sup>: Վրաստանի ծավալած ուազմական գործողություններն առաջացրին Աղրբեջանի ԱԳՆ-ի արագ արձագանքը, որը, պատրվակ բռնելով արյունակցական և կրոնական կապը, փորձեց նախատել և սանձահարել պաշտոնական Թիֆլիսին<sup>37</sup>: Բարոն նաև նյութական լուրջ նպաստ (200

<sup>35</sup> Վրաց գորակրամանատարը իր հուշերում չի լուսաբանում Սամցիւի տարածքում առաջացած զինաբախման բոլոր մուր կողմերը և չափազանց սակավարար է դեպքերի քաղաքական աստաղը բացահայտելու գործում (տե՛ս և Կվինիտաձե Գ. Ի. *Ахалцихские события // Моя воспоминания в годы независимости Грузии, 1917–1921*. Париж, 1985, с. 84–132):

<sup>36</sup> Сե՛ս *Взятие Арадагана // КАВКАЗСКОЕ СЛОВО*, 24. IV. 1919.

<sup>37</sup> Իր արյունարրու քարքարությամբ հայտնի Աղրբեջանի մուսավարական կառավարությունը փարիսեցիական կեցվածք ընդունելով՝ փորձում էր կիրք քաղաքականության և մարդասիրության դասեր տալ իր հարևան պետությանը, որի առաջնորդները «ինտերնացիոնալի» մասին իրենց կեղծ ճարտասանությամբ՝ դժվար թե զիջեին որևէ մեկին: «Վրաց կառավարությունը միշտոներ է ձեռք առել ճաշելու Ախալցիսայի զաւադի և նրան հարևան շրջանների մուսուլման բնակչութեան ինքնօրէն և անկախ քաղաքական գոյութեան ձգումները, – մասնավորաբար ասված է Աղրբեջանի ԱԳ փոխնախարար Աղիլ խան Զիադխանովի հեռազրի մեջ: – Գտնելով, որ ինքնորոշման սկզբունքով բոլոր ժողովուրդներն իրաւունք ունեն որոշելու իրենց վիճակը իրենց ազատ կամքով և ժողովուրդների կամքի վրայ բոնանալը այս դեպքում չպիտի թոյլատրի, Աղրբեջանի կառավարութիւնն իր քարոյական պարտքն է համարում քարեկամաբար ինքրել վրաց կառավարութեանը, դադարեցնելով ամեն մի զինած գործողութիւնն Աղրբեջանին ցեղակից և հաւատակից այդ ժողովրդի դեմ, ձեռք առնելու բոլոր միշտոները՝ ծագած բոլոր վիճելի խնդիրները վճռելու համար խաղաղ կերպով փոխադարձ համաձայնութեամբ կամ՝ միջնորդ դատարանով» (տե՛ս և Աղրբե-

հազ. ոութի) հատկացրեց թուրք-մէսխէթցիների կարիքները հոգալու համար<sup>38</sup>: Վրացական կողմը այս ամենը զնահատեց իբրև կոպիտ միջամտություն իր երկրի ներքին գործերի մէջ<sup>39</sup>: «Միմայն բացահայտ թշնամիները կցանկանան պոլված տեսնել այդ վայրերը մէզանից»<sup>40</sup>, – զայրացած նկատել է վարչապետ Ն. Ն. Ժորդանիան՝ Ախալցխայի դեպքերին նվիրված խորհրդարանի արտահերթ նիստում: Իզուր չէ, որ Փարիզի կոնֆերանսում մուսավաթական կառավարությունը ներկայացրեց տարացքային պահանջների՝ Բարվից մինչև Բաթում ներառող քարտեզ՝ «ծովից-ծով Աղրբեջան» մտահացմամբ: Այդ հավակնությունները տարածվում էին նաև Սանցին-Մէսխէթիայի վրա<sup>41</sup>:

Սշխատելով սանձել Աղրբեջանի նման քայլերը, նրա միջամտությունը չեզորացնելու, նաև, ակներևարար, ժամանակ շահելու համար պաշտոնական Թիֆլիսը շտապեց Ախալցխայում գումարել զավառի զոլոտացիության լիազորների համագումար: Սայրաքաղաքից ժամանած բանազնացները, օգտագործելով ամրոխավարության բոլոր ընդունելի և անընդունելի եղանակները, ի վերջո, տեղացիներին համոզեցին իրենց հավատարմությունը հայտնել վրաց հանրապետությանը՝ Սամցին-Մէսխէթիան ճանաչելով որպես Վրաստանի անբաժան մաս<sup>42</sup>: Ժողովականները,

---

շան և Վրաստան // ԱՇԽԱՏԱՒՈՐ, 15. III. 1919): Վրացական քաղաքական վերնախավն այս դեմարքի առթիվ չէր ել թարցնում իր ծայրաստիճան զայրույթը: Աղրբեջանն «ուզում է լրկ խաղալ դեմոկրատական այն սկզբունքներով, որոնց հետ ինքը ոչ մի ընդհանուր բան չունի», – իրավացիորեն մատնանշվել եր վրացալեզու մամուլի եջերում («յերտօն») [«Էրբորք», 1919, № 59] պարբերականից արտատպված հոդվածը տես Ախալցխան և Աղրբեջան // ԱՇԽԱՏԱՒՈՐ, 19. III. 1919):

<sup>38</sup> Попов А. Նշվ. աշխ., էջ 267:

<sup>39</sup> Տե՛ս Ազերբեյջան և Հրցան օբ Ախալցխակոմ յեզծ // ЗАКАВ-КАЗСКОЕ СЛОВО, 15. III. 1919.

<sup>40</sup> Տե՛ս ՄՇԱԿ, 22. II. 1919:

<sup>41</sup> Տե՛ս Цуциев А. Атлас этнopolитической истории Кавказа (1774-2004). М., 2006, карта № 18.

<sup>42</sup> БОРЬБА, 23. III. 1919. XX դարի շեմին զավառը հիմնականում

անշուշտ, աչքի առաջ ունեին նաև վրաց կառավարության այն հավաստիացումը, որ Ախալցիսան որոշվել է դարձնել «մահմեդական Վրաստանի» վարչական կենտրոնը<sup>43</sup>: Դա, սակայն, մնաց լոկ դատարկ հայտարարություն: Տեղի վարչակազմը գերազանցապէս համայնքում վրաց մահմեդականներով, որի գլուխ կարգվեց զավառական կոմիսար Հայդար բեգ Արաշիձեն<sup>44</sup>: Կազմավորվեց նաև հեծյալ մուսուլմանական զորայինում (դիվիզիոն):

---

բնակեցված էր թուրք-սունի (35.1%), հայ (22%), թաթար-չիա (18%), վրացի (17.7%) և ուսու (3.3%) ազգություններով (տե՛ս Ախալցիսկի յեզծ // Էնցիկլոպեդический словарь, русского библиографического института «Гранат», том 4-й, Москва, 1911, с. 335): Արդի վրաց պատմագիտությունը շանում է Սամցինեի իսլամադավան և հայ-կաթոլիկ բնակչությունը ներկայացնել իրքն վրացիների, սակայն ստիլված է ակամայից խոստովանել ու ճանաչել նաև նրանց ճնշող մեծամասնության միջավայրում բուն քարրվելական էթնիկ ինքնության իսպառ բացակայության իրողությունը (տե՛ս Դյանարիդ Ա. Մեշետ: մուսուլմանաց արևոտնական ազգային հայությունների պատմությունը // Թბիլիսի, 2008): «Դեմոկրատական հանրապետության» կառավարությունը ձեռնամուխ եղավ ազգաձուլման, արշավ սկսեց կաթոլիկ հայերին «վրացացնելու» ուղղությամբ: Սամցինեի հայ կաթոլիկների ճնշող մեծամասնությունը շրնկրեց վրացական իշխանությունների այդ ազգայնամոլ ձեռնարկումների առօս և կտրականապես հրաժարվեց ազգափոխվել (տե՛ս Մելքոնյան Ա.Ա. Զավախիրը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, էջ 318): Մեսխիթիայի մի քանի զուտերի (Ուդե, Վալե, Արալ) բնակիչները, որ մի ժամանակ իրենց հայ էին համարում, 1919 թ. ընդունեցին վրացական դավանանք և եկեղեցիներում դադարեցրին հայերեն ժամերգությունները (տե՛ս Ղաֆարարյան Կ.Գ. Ախալցիսայի 1917-1918 թթ. ինքնապաշտպանական կոիկները // ԲԱՆԲԵՇ Հայաստանի արխիվների, 1988, № 1, էջ 143):

<sup>43</sup> Учредительное собрание Грузии: Декларация правительства // ЗАКАВКАЗСКОЕ СЛОВО, 23. III. 1919.

<sup>44</sup> «Տաճազմեա Տայմե» («Սախալիս սարմե»), 21. II. 1919. Ինչ վերաբերում է զավառական գեմստվային ժողովին, ապա նրա ձայնավորների հրավասուների գերակշիռ մասը պատկանում էր կառավարամետ ուժերին, քանզի նրանք «երկու վագնն եզիալտացորեն են բաժանում և պայման դնում, որ ձայները իրենց տան» (տե՛ս Ախալցիս // ԱՇԽԱՏԱԲՈՐ, 1. VII. 1919):

Բախչի բեկ Մաշարելու հրամատարությամբ, որը, ի դեպ, Արդահանում 1918-ին հայերի բնաջնջման ակտիվ մասնակիցներից էր:

Այսպիսով, Սամցիսե-Մեսիսեթիայի իսլամադավան բնակչության մի մասը դեմ չէր Վրաստանին միանալու գաղափարին՝ պահանջելով միայն իր համար ստեղծել կյանքի տանելի պայմաններ: Լարվածությունը հետզհետև տեղի տվեց, և զավառում այնուհետև հաստատվեց փոխհարաբերությունների շատ թե քիչ ընդունելի եղանակ:

Սամցիսի իրադարձությունները, անշուշտ, որոշակի ազդեցություն ունեցան և իրենց ուրույն հետքը թողեցին Աջարիայում ծավալված խմբումների վրա: Այդ համատերսում զգալի ազդեցություն էր ձեռք բերել նաև Այի Հայդար Զափարիձեի զյսավորած «Բաթումի մարզի համախմբված մահմեդական ցեղերի ազգային խորհուրդ»-ը (կամ՝ «Զամիեթ իսլամ»-ը): Այդ կառուցին Թիֆլիսի իշխանամետ մամուլը վերագրում էր թուրքամետ ընդգծված կողմնորոշում<sup>45</sup>: «Զամիեթ իսլամ»-ի զյսավոր «Մրցակիցը» Թիֆլիսից առատորեն ֆինանսավորվող Ս. Արաշիձեի կազմակերպությունն էր<sup>46</sup>: Վերջինիս հաջողվեց 1919 թ. օգոստոսի 31-ին Բաթումում հրավիրել վրաց մահմեդականների՝ աշարացիների և շավշերժիների «համագումարը»: Ս. Արաշիձեի համակարգության կազմակերպությունը կազմակերպությունների հետ այսպիսի հետաքանի համագումարը կազմակերպությունների մի մասը, ի վերջո, հանդես եկավ Վրաստանին միանալու առաջարկի օգտին<sup>47</sup>: Ժողովականները շտապեցին ստեղ-

<sup>45</sup> В Батуме // БОРЬБА, 13 и 25. II. 1920.

<sup>46</sup> Ս. Արաշիձեն հաճախակի լինում էր Վրաստանի մայրաքաղաքում, հանդիպումներ և բանակցություններ ունենում պետական բարձրաստիճան այրերի հետ: Այցելություններից մեկի ժամանակ նա կառավարությունից ստացել էր 1 մին ոուրբու նպաստ [տե՛ս Adjara and The British Empire 1918–1921, Second Edition (Selections from The British National Archives on Adjara), London, 2008, doc. 239, p. 620]:

<sup>47</sup> Կովկաս՝ Վրացի մահմեդականների համագումարը // 3. IX. 1919: «Համագումարի» թիֆլիսամետ այս բանաձևը վրաց պատմագիտությունը դիտարկում է իրեն առանցքային նշանակություն ունեցող երևոյթ և մսում է նրանից կառշած՝ Վուշի պատմությանը նվիրված ցանկացած

ծել ներկայացուցական մարմին՝ «մեջիս», որի գլուխ կարգվեցին Մ. Արաշիձեն և նրա հավատարիմ զինակիցն ու ընկերը Ռեցեփ բեգ Նիժարաձեն<sup>48</sup>: Թիֆլիս մեկնած «մեջիս»-ի լիազոր ներկայացուցիչների խումբը՝ վարչապետ Ն. Ն. Ժորդանիային հանդիսավոր հանձնեց «համագումարի» վրացանպաստ վճիռը<sup>49</sup>: «Աջարիայի իրական ցավոտ զգացմունքներից անտեղյակ են միմիայն Թիֆլիսում, ինչն առաջացել է Վրաստանի Հանրապետությունում մամուլի և կարծիքների յուրահատուկ ազատությունից<sup>50</sup>, – հեզնում էր բրիտանացի մի իրազեկ սպա: – Դա լավ հայտնի է Բաթումում, որի բնակչությունը խորապես վիրավորված է Թիֆլիս մեկնած “աջարական պատվիրակությունից”: Այս առաքելությունը Սուսումանական Ազգային Խորհրդի (խոսքը «Զամիեթ խալամ»-ի մասին է – Բ.Ա.) կողմից որակավորվել է իրու “կաշառված” և “նողկալի”»<sup>51</sup>:

Նկատենք, որ Քեդայի, Խուլոյի և Քոբուկեթիի շրջանները ներկայացված չեն հիշյալ «համագումարում»<sup>52</sup>: Արդվինի պատվիրակները՝ մի քանի աղալար հրաժարվեցին քվեարկել Վրա-

շարադրանքի պարագայում [տե՛ս Վաչնաձե Մ., Գյուրլի Յ. Նշվ. աշխ., եջ 90, նաև՝ Տայառություն օնթօռօս. XX Խայջյնե. ծ. 70]:

<sup>48</sup> Եայում // ԲՈՐԵԲԱ, 2. IX. 1919.

<sup>49</sup> Լրատու.՝ Աջարացիների ներկայացուցիչները Ն.Ն. Ժորդանիայի մօտ // ՆՈՐ ԱՇԽԱՏԱԲՈՐ, 10. IX. 1919:

<sup>50</sup> Վրաստանում տիրող «ազատական» յուրահատուկ բարքերի մասին կիսաբերան խոստովանում էր նաև վրացալեզու մամուլը: «Մեր դեմոկրատական հանրապետութեան մէջ ազատ ապրել չեն կարող այն մարդիկ, որոնք չեն մտածում ու զործում այնպէս, ինչպէս պահանջում են կառավարող կուսակցութեան շահն ու տրամաբանութիւնը: <...> Վտանգաւոր է խօսելը, վտանգաւոր է գրելը: Գոյութիւն չունի երաշխաւորութիւն քաղաքացիական ազատութեան համար» [«Տայառություն» («Աշքարթվելո», 1919, № 161) պարբերականից արտատպված հոդվածը տե՛ս Վրաց կեակը՝ Ճնշումներ մամուլի և խօսքի ազատութեան դէմ // ՆՈՐ ԱՇԽԱՏԱԲՈՐ, 5. VIII. 1919]:

<sup>51</sup> Տե՛ս Adjara and The British Empire 1918–1921, doc. 27, pp. 157–158.

<sup>52</sup> Թիրքաց մամուլ // ՆՈՐ ԱՇԽԱՏԱԲՈՐ, 12. IX. 1919:

տանին միանալու Մ. Արաշիձեի առաջարկին և ցուցադրաբար լրեցին դահլիճը: «Համագումարի» աշխատանքը շարունակվեց նաև սեպտեմբերի 1-ին ու ընդունվեց ևս մեկ բանաձեւ: Ժողովականները Աջարիայի համար հայցում էին սեփական կառավարություն, օրենսդիր մարմին և դատարան ունենալու իրավունք, որոնք ինքնավարության ներքին գործերի մեջ պետք է լինեին միանգամայն անկախ: Երկրամասում իշխանական բոլոր լծակները աջարական «մեջլիս»-ին հանձնելու հարցի շուրջը որոշվեց բանակցություններ վարել նաև բրիտանացիների հետ<sup>53</sup>: Զի բացառվում, որ այդ քայլը պահանջվեց իսլամադավան ազգաբնակչության բորբոքված կրթերը հանդարտեցնելու համար: Աջարիայի լայն ինքնավարության մասին բանաձեռ, սակայն, դարձյալ չգործացրեց «համագումարում» իրարանցում առաջ բերած և թիֆլիսամետներին ձեռնոց նետած աղալարներին: Նրանք հանդես եկան հակիճ հայուարարութեամբ, թէ «մեր ժողովրդի զիաւոր ցանկութիւնն է՝ սուլթանի հովանաւորութեան տակ անկախութեան ձեռոք բերելն է» և բոլոր դպրոցներում թիրքերէնի դասաւանդումը, ինչպես նաև «մենք անկախութիւն ձեռոք բերելուց յետոյ կարող ենք զինակցութիւն կնքել Ադրբէջանի և Վրաստանի միջն, այնպէս, ինչպէս արդէն գոյութիւն ունի այդ երկուսի միջև»<sup>54</sup>: Խոսքը 1919 թ. հունիսի 16-ին Թիֆլիսում կնքված վրացադրեցանական հակառական դաշինքի մասին է: Ինչպես տեսնում ենք, իսլամադավան վրացիների միջավայրում արդեն հասունացել էր սեփական «պետության» կարիքը: Զի բացառվում

<sup>53</sup> Տե՛ս *Adjara and The British Empire 1918–1921*, doc. 232, p. 606. Սույն նախագիծը կյանքի կոչելու դեպքում Աջարիան ձեռք էր բերում անհրաժեշտ լեզիտիմություն իր ինքնավարության համար: Եվ դա կլիներ Վրաստանի իշխանություններից զատ, ավելի զորեղ ուժի հայեցողությամբ, որի վճիռն այլևս բեկման ենթակա չէր: Այս հանգամանքը չէր կարող շանհանգաստացնել պաշտոնական Թիֆլիսին, քանզի աջարացիների սույն երազանքի իրականացման պարագայում Բաթումում իրական ինքնուրույն իշխանություն կձևավորվեր, որի հետ, այդուհանդերձ, նա ստիրակած կլիներ հաշվի նատել:

<sup>54</sup> Մի այլ բողոքագիր // ՆՈՐ ԱՇԽԱՏԱՒՈՐ, 11. IX. 1919:

նաև, որ սույն գաղափարը միտված էր ձախողված հարավարենույան Կովկասի «հանրապետության» վերակենդանացմանը, ինչը դարձյալ թուրք-աղբյուրեցանական շահերից էր բխում:

«Զամիեթ իսլամ»-ը չհապաղեց բողոքարկել իր քաղաքական մրցակցի՝ Վրաստանին միանալու միտված համարձակ քայլը և ցատումով արտահայտվեց Ս. Արաշիձեի խմբի «ստոր» արարքի դեմ: «Դուրս է ամեն մի կասկածից, որ վերոյիշեալ <...> անձինք ամենեին Բաթումի շրջանի մահմեդականների տեսչերի արտայայտիչը չեն, – համառ պնդում էին Ս. Հ. Զափարիձեն ու նրա թիմակիցները: – Ինքնակոչ կերպով իրենց ժողովրդի ներկայացուցիչներն անւանող այդ անձինք գտնում են Թիֆլիսի վարիչների լայն պրոպագանդայի ուժեղ ազդեցութեան տակ և ոչ պակաս չափով կովկասեան բոների գայթակղման ու ազդեցութեան ենթակայյ»<sup>55</sup>: «Զամիեթ իսլամ»-ը հորդորում էր երկրամասը ուազմակալած անզիւացի զինվորական վարիչներին մարզում հանրարվե անցկացնել, նրա ճակատագիրը, իբր, արդար որոշելու համար: Հստ Թիֆլիսին ընդդիմադիր ուժերի՝ «Բաթումի շրջանի մահմեդականները երթ կամովին չեն ցանկանայ իրենց բախտը կապելու, այսպես կոչւած, վրաց հանրապետութեան հետ, որի ինքնուրույն գոյութիւնն այնքան արորդեմատիկ է»<sup>56</sup>: Վերջին հանգամանքը, անշուշտ, լավ էին հասկանում նաև Թիֆլիսում: Հայունի է, որ վրաց պետական կարկառուն գործիչ Ա. Ի. Չիւենկեին՝ Վրաստանի անկախության «de jure» ճանաչման հեռանկարը սերտորեն կապում էր «Բաթումի հարցի» կարգավորման հետ<sup>57</sup>:

Թրքասեր «Սադայը Միլլեթ» («Ազգի ձայն») պարբերականը, որի խմբագիրը Աղբյուրեցանի խորհրդարանի անդամ ումն Ահմեդ Շամզի բեյն էր, շահարկելով դավանանքի խնդիրը, աշխատում էր դեմ առ դեմ հանել մահմեդական և քրիստոնյա վրացիներին: Այդ

<sup>55</sup> Բաթումի շրջանի մահմեդականների բողոքը // ՆՈՐ ԱՇԽԱՏԱ-ԻՈՐ, 10. IX. 1919:

<sup>56</sup> Նույն տեղում:

<sup>57</sup> Батумский вопрос в Учредительном собрании // СЛОВО, 26. III. 1920.

«լրագիրը» նաև փորձում էր հանդես գալ Բաթումի «սանչակում» բնակվող թուրքերի, լազերի, արխազների, չերքեզների և հեմշիլների անունից, որոնք, իբր, արտահայտվել էին Թուրքիայի հետ «վերամիավորվելու» զաղախարի օգտին: «Մենք՝ մահմեդականներս, անպատճեմ ենք համարում անձնառուր լինել քրիստոնեայ Վրաստանի կառավարութեանը՝ ազգութիւնը պատուակ բռնելով, և փառք ենք համարում մեռնել մեր կրօնի համար<sup>58</sup>, – պնդում էր Աջարիայի այդ ինքնակոչ «պաշտպանը»:

Աջարիայի և Սամցին-Մեսխեթիայի հարցում Աղրբեջանի կառավարության կազմակերպած դավերն ունեն ուշադրության և լուսաբանման առանձնակի կարիքը: Ինչպես տեսանք, Բաքուն ամեն կերպ ջանում էր ձախողել Սամցին-Մեսխեթիայի և Բաքումի մարզի ընդգրկումը Վրաստանի կազմի մեջ: Այդ զաղափարը հնչում է նաև բրիտանական զորավար Ու. Թումսոնին հղած Աղրբեջանի ԱԳՆ-ի պաշտոնական նամակում<sup>59</sup>: Բաթումի աղրբեջանական հյուպատոսարանը նմանվել էր իսկական կրետի բույնի, որին Բաքուն առատորեն ֆինանսավորում էր՝ մարզում հակավարացական քարոզությունն էլ ավելի ծավալելու և փութացնելու համար<sup>60</sup>: «Դաշնակից» երկրի այս անբարյացակամ ու դավադիր պահվածքը, բնականաբար, ցասկու արձագանք էր գտնում Թիֆլիսում: «Մեր «քարեկամ» Աղրբեջանն՝ այդ «թիվ երկրորդ թուրքիան» <...> [Աջարիայում] սահմարձակ քարոզություն է ծավալում Վրաստանի դեմ<sup>61</sup>, – բարձրածայնում էին վրացի

<sup>58</sup> Կովկաս՝ Բողոք «վրաց ազատազրման ընկերութեան» բանաձեի դէմ // ՆՈՐ ԱՇԽԱՏԱՀՈՐ, 11. IX. 1919: Սույն ելույթը, հավանաբար, պատկանում է Ա. Պետինովին, որը ժամանակին աշխատում էր առերես մերձենալ «զուրցիների» հետ: Ազգային նրանց համազումարում նա ասում էր, թե «Արևմտյան Անդրկովկասի մահմեդականները միշտ ել սերտորեն կապված են եղել վրացիների հետ, [ինտևաբար] ցանկանում են ձեզ հետ համընթաց քայլել և ձեզ հետ ապրել» [տե՛ս ՊԵՍՊԱՅԼԻԿԱ (լրագիր, Թիֆլիս), 21. XI. 1917]:

<sup>59</sup> Պոպօվ Ա. Նշվ. աշխ., էջ 258:

<sup>60</sup> Նույն տեղում, էջ 264:

<sup>61</sup> «Եաեալցեա եայթ» («Սախալիս սաքմե») թերթից արտատպված

բաղաքագետները: Վրդովմունքով լցված նման խոսքերի պակաս չկա ժամանակի վրացական մամուլի էջերում<sup>62</sup>: Այս առթիվ իր բողոքի ձայնը չհապաղեց արտահայտել նաև աջարական «մեջլիս»-ը, որը խորը «ցատումի զգացմունքով շեշտում է ադրբեջանական կառավարության անընդունելի անհավատարմությունը Վրաստանի նկատմամբ, ինչև արտահայտվում է Բաթումում նրա պաշտոնական և ոչ պաշտոնական գործակալների աշխատանքի միջոցով»<sup>63</sup>:

Այսպիսով, վրացական կողմը չարաշար սիալվեց, երբ վրաց-ադրբեջանական «դաշինքի» շրջանակներում՝ սեփական զինանոցներից առատորեն զենք ու զինամթերք մատակարեց հարեան երկրի բանակին<sup>64</sup>, որը, ի դեպ, նվեր ստացած այդ սպառազինությունը անմիջապես շրջեց Արցախի և Սյունիքի հայ խաղաղ ազգաբնակչության դեմ<sup>65</sup>: Աջարիայի և Սասլիսկի պարագայում ադրբեջանական պարագուիմների նենզ պահվածքը, զայրույթը և ցատում առաջացրեց վրաց նախարարների մոտ, որոնք, աջակից լինելով հայկական տարածքները նվաճելու Բարվի նպատակասղաց քաղաքականությանը, երևակայում էին, թէ դրանով իսկ կարող են շահել Ադրբեջանի խոնարի «հավատարմությունը»<sup>66</sup>:

Հայոնի է, որ 1920 թ. մարտին տեղի ունեցան Բաթումի քաղաքային ինքնավարության ընտրություններ: Քվեարկության

---

հոդվածը տե՛ս՝ Պրօձառտ Բաთում // СЛОВО, 21. III. 1920.

<sup>62</sup> «Տաճաջնություն այս պարագաների վերթից արտատպված մի այլ հոդված տե՛ս՝ Օլոյտ օ Բաթում // СЛОВО, 4. IV. 1920.

<sup>63</sup> БОРЬБА, 27. IV. 1920.

<sup>64</sup> Волхонский М., Муханов В. По следам Азербайджанской демократической республики. М., 2007, с. 141.

<sup>65</sup> События в Азербайджане // СЛОВО, 4. V. 1920.

<sup>66</sup> Ադրբեջանից արդյո հեղինակները աշխատում են շրջանցկ վրաց-ադրբեջանական փոխարարերությունների սուր անկյուններն ու լուսարդյան մատնել սույն ասպարեզում առաջացած երեմսի մարտահրավերները [տե՛ս և Գասымов З. Азербайджан и Грузия в период становления (1918-1921 гг.): военное строительство и сотрудничество в военной сфере // КАВКАЗ & ГЛОБАЛИЗАЦИЯ, 2007, № 1, с. 119-120]:

արդյունքում վրացազգի թեկնածուները շահեցին ձայների առավելապես մեծ մասը<sup>67</sup>: Սա հզոր ազդակ հանդիսացավ Աջարիայի ճակատագրի հանդեպ վրաց հասարակայնության ողջ ուշադրության բնեղուացման և Բաթումի հարցը երկրի խորհրդարանում առաջնային դարձնելու համար: Վրաց անվանի գործիչները (Ե. Պ. Գեղեցկորի, Ա. Ի. Զիւնկելի և այլը) ջանք չէին խնայում ապացուցելու, թէ Բաթումում իրենց ցեղակիցների ձեռք բերած հաջողությունը հավասարագոր է Վրաստանին միանալու օգտին տված քվեին<sup>68</sup>:

«Զամիեթ իշլամ»-ի և ոռուսական ազգային տեղի խորհրդի նախագահները՝ Ա. Հ. Զափարիձեն և Ռ. Տերմենը, համատեղ հայտարարությամբ Ազգերի Լիգայից պահանջում էին Բաթումի մարզի տարածքում ստեղծել առանձին պետություն<sup>69</sup>: Ըստ նրանց տեսակետի՝ անկախ «Աջարստան» պետք է բազմազգ կառավարություն և սեփական քանակ ունենար<sup>70</sup>: Այդ նախագիծն երկրամասի իշլամադավան բնակչության միջավայրում դրական արձագանք գտնավ: Այս զաղափարը հատկապես մեծ թվով կողմանակիցներ ձեռք բերեց Քորուկերիի շրջանում, քանզի նրա բնակչիները կտրականապես դեմ էին Վրաստանին միանալու պաշտոնական Թիֆլիսի պնդած ծրագրի իրականացմանը: Քորուկերցիները անվերապահորեն արտահայտվում էին «Աջարստան» ինքնուրույն պետության կազմավորման օգտին<sup>71</sup>: Նրանց քաջալերում էր նաև երկրամասում գտնվող ֆրանսիական զինվորական առաքելությունը, որի ներկայացուցիչներն «աջարացիներին դրդում էին դիմադրել Վրաստանին՝ խոստանալով, որ Ֆրան-

<sup>67</sup> Батум // СЛОВО, 3. III. 1920.

<sup>68</sup> Учредительное собрание: вопрос о Батуме // СЛОВО, 4. III. 1920.

<sup>69</sup> Բաթումում Աշոտ Մնդրյանի դեկավարությամբ գործում էր հայոց ազգային խորհուրդը: Զբաղվելով սուս ներհամայնքային խնդիրներով՝ նրա անդամներն աշխատում էին հեռու մնալ «մեծ» քաղաքականությունից:

<sup>70</sup> Adjara and The British Empire 1918–1921, doc. 149, p. 440–442.

<sup>71</sup> В Батуме и Аджарии // СЛОВО, 16 . III. 1920.

սիան պաշտպան կկանգնի իրենց անկախությանը»<sup>72</sup>: Շուտով հայոնի դարձավ Ազգերի Լիգայի բարձր հռվանու ներքո Բարուսի նավահանգստին «porto-franco» միջազգային կարգավիճակ տալու մասին Անտանտի ԳԽ-ի 1920 թ. փետրվարի 24-ի որոշումը<sup>73</sup>:

Թիֆլիսը, սակայն, ուշիուշով հետևում էր Աջարիայում առաջ եկող խմբումներին: Վրաց կառավարության անդամները երկրամասի ազգաբնակչությանը պարբերաբար կոչ էին անում զգոն լինել և հեռու մնալ տարբեր տեսակի արկածախնդիր ծրագրերից: Այսպէս, ԱԳ նախարար Յ. Պ. Գեղեցկորին առավելապես համարձակեներին անզամ խսկ հիշեցնում էր, որ «Վրաստանին բավական է փակել իր սահմանները, որ Աջարատան կոչված «պետությունից» մնա միայն անախորժ հիշողություն»<sup>74</sup>:

Այդբեջանի ԱԳ նախարար Ֆ. Խան Խոյսկին, իր հերթին, անմասն չմնաց Բարուսի ապագա ճակատագրի վճռման հարցում: Նա պաշտոնապես կողմ արտահայտվեց Անտանտի ԳԽ-ի վերոհիշյալ նախաձեռնությանը, քանզի մինչ այդ էլ Բարուն բարձրածայն բողոքարկում և ոչ մի պարագայում չէր ուզում համակերպվել Բարուսն ու Այսալցիան<sup>75</sup> Վրաստանի կազմում տեսնելու մորի հետ: Ֆ. Խան Խոյսկին նաև պահանջում էր Բարուսի նավահանգստի նկատմամբ իր երկրի համար սահմանել բացառիկ իրավունքներ, ինչը հիմնավորում էր, իբր, նավթամուղը անխափան սպասարկելու անհրաժեշտությամբ: Ըստ այդ պանթյուրքիստական «անվանի» գործի՝ Բարուսը «չի կարող

<sup>72</sup> *Adjara and The British Empire 1918–1921*, doc. 250, p. 674.

<sup>73</sup> Дипломатическая переписка по батумскому вопросу // СЛОВО, 23. III. 1920. Ըստ բարձրաստիճան դիվանագետ Զ. Պ. Ավալիշվիլու՝ չէր բացառվում ապագայում Աջարիայի հյուսիսարևմտյան հատվածը Վրաստանին հանձնելու տարբերակը, Արդվինի շրջանն էլ՝ Հայաստանին կցելու հնարավորությունը (տե՛ և Ավալօ Յ. Դ. *Независимость Грузии в международной политике (1918–1921 гг.)*. Париж, 1924, с. 257):

<sup>74</sup> Батумский вопрос в Учредительном собрании // СЛОВО, 24. III. 1920.

<sup>75</sup> Տե՛ս Ազերբայջան и Грузия об Ахалцихском уезде // ЗАКАВКАЗСКОЕ СЛОВО, 15. III. 1919.

լինելու մեկ ուժի բացառիկ և անվերապահ տիրության մեջ<sup>76</sup>: Բացի այդ, Աղրբեջանի նախկին վարչապետը պնդում էր, թե «Բարումի տնտեսական ապագան պետք է որոշվի բաղաքական նրա պատկանելությունից զատ»<sup>77</sup>: Աղրբեջանցի բարձրաստիճան այս դեմքի բողարկված ու հեռահար նպատակներ ունեցող սույն հայտարարությունները Թիֆլիսում ընկալվեցին որպես հակա-վրացական: «Աղրբեջանի կառավարությունը չի խորհում Բարումն իրքի վրացական նավահանգիստ, [հետևաբար] պարզ է, որ Բարումի հարցում նրա բաղաքականությունը թշնամական է վրաց ժողովրդի շահերին և ձգտումներին»<sup>78</sup>, – Բարվի հասցեին վրդովմուրով արտահայտվում էր վրաց պաշտոնական մամուլը: Բացի Աղրբեջանի հավակնություններից ժորդանիայի կառավա-րությունն աչքի առաջ ուներ ավելի վտանգավոր մարտահրա-վերներ: Հարևան Խովիայի առափնյա շրջանում քենալական գորր էր կուտակված, որոնք անհամբեր սպասում էին այն «երանելի» օրվան, եթե բրիտանացիները կհեռանային Բարումից, որպեսզի ժամ առաջ զինազրավեն բաղաքը<sup>79</sup>:

Այսպիսով, վրաց կառավարության կենսական շահերի հա-մար Բարումի մարզում մի անեղանելի, խճճված իրադրություն էր ստեղծվել: Եվ ահա նախարարները որոշեցին չհապաղել և հան-դես բերեցին վճռական կեցվածք. 1920 թ. մարտի 10-ին կառավա-րությունը իրեն ենթակա զինուժին հրահանգեց երեք ուղղու-թյուններով մուտք գործել Բարումի մարզի տարածքը<sup>80</sup>: Անզիա-ցինները, սակայն, վարպետորքն օգտվեցին աջարացիների միջա-վայրում լայն տարածում ստացած կենտրոնախույս տրամադրու-թյուններից և դարձյալ շահարկեցին «անկախ Աջարատանի» կար-գախոսը: Այդ խորամանկ բայլը հնարավորություն տվեց «ըմբուստ աջարացիներից ստեղծել բավականաշափ պատկառելի Քորուլե-

<sup>76</sup>Տե՛ս Փ.-խ. Խոյսկի օ Բաთуме // СЛОВО, 4. III. 1920.

<sup>77</sup>Министр иностранных дел Азербайджана о Батуме // БОРЬБА, 4. III. 1920.

<sup>78</sup>Редакционная // БОРЬБА, 5. III. 1920.

<sup>79</sup>Батуму грозит анархия // БОРЬБА, 22. II. 1920.

<sup>80</sup>Adjara and The British Empire 1918–1921, doc. 164, p. 483.

թիի ռազմաճակատը, ինչն անհապաղ իրենց օգտին գործադրեցին թուրք ազգայնականները (իմա՝ թէմալականները. – Բ. Ս.), և աջարացիների շարքերը համալրվեցին թուրքական [բանակի] բազմաթիվ սպաններով<sup>81</sup>: Վրացական զինվորական շարասյունը, որը գրեթե հասել էր մարզկենտրոնի մատուցներին, ետ կանչվեց:

Որոշակի բանակցություններից հետո<sup>82</sup> ձեռք բերվեց վրացանզիական ոչ պաշտոնական փոխհամաձայնություն, ըստ որի վրացական զինուժի գտնվելու իրողությունը ճանաչվեց վերին Աջարիայի (Խուլո), Շավշեթիայի և Կորչայի (Արտանուց) շրջաններում<sup>83</sup>, իսկ մայիսին նաև Արդվինում<sup>84</sup>: Բարումի ուղղությամբ ամենակարծ ճանապարհն անցնում էր Քորուկեթիի տարածքով, սակայն երբ վրաց գորքերը 1920 թ. մայիսին կրկին հատեցին այս ըմբուս շրջանի սահմանը<sup>85</sup>, նրանք դարձյալ արժանացան ոչ հյուրասեր ընդունելության: Քորուկեթիի մզկիթում արագորեն հրավիրված հոծ բազմությունը հանդես եկավ Բաթումի մարզը Վրաստանին բոնակցելու վրաց կառավարության անօրեն ձգտման դեմ: «Մահմեդական Վրաստանի ազատագրման կոմիտե»-ի տեղական հատվածի թիֆլիսամետ անդամները, որոնք պատրաստ էին աջակցել վրացական զինուժին, մասամբ ձերբակալվեցին կամ էլ վտարվեցին շրջանից<sup>86</sup>: Փորձելով հեռու մնալ Վրաստանից աջարացիները դիմեցին ակտիվ ու վճռական քայլերի. վրաց գորքի և նրանց միջև 1920 թ. մայիսի 11-16-ին տեղի ունեցան զինված ընդհարումներ: Այդ ընթացքում միջադեպ եղավ նաև բրիտանական զորավար Ջ. Սիլնի հետ, որն իր սպայակույտով հայտնվել էր վրացական հրետանու կրակի տակ: Պաշտոնական Թիֆլիսը համառորեն անտեսեց իր զինուժը Քո-

<sup>81</sup> ЖИЗНЬ НАЦИОНАЛЬНОСТЕЙ, 1. X. 1920.

<sup>82</sup> See u *Adjara and The British Empire 1918–1921*, doc. 165–169, p. 484–494.

<sup>83</sup> «Երթուծա» («Էրբորք»), 21. III. 1920.

<sup>84</sup> Оперативная сводка генерального штаба // СЛОВО, 6. V. 1920.

<sup>85</sup> Батумская область: вступление войск Грузии // СЛОВО, 4. V. 1920.

<sup>86</sup> ГОЛОС ТРУДА (լրագիր, Բաթում), 4. V. 1920.

բուլեթիից հեռացնելու մասին կատաղած բրիտանացիների պահանջը<sup>87</sup>: Սակայն ոտքի հանված հանդուգն ըորովզեթցիները վրաց զորագնդին դարձալ ստիպեցին լրել իրենց շրջանի տարածքը: Նրանց հաջողությանը, հավանաբար, նպաստեց վրաց-ալբրեշտանական սահմանազլխին ոռուսական «կարմիր» զորքերի կատարած հարձակումը<sup>88</sup>, ինչպես նաև Հարավային Օսխայում բռնկված ապստամբությունը:

Բայրումի հարցում Սուլկվան ևս ձեռքերը ծալած չէր: Նա ձգուում էր սեպ իրել Լոնդոնի և Թիֆլիսի միջև, որի զլիավոր նպաստակն էր սաղրել ռազմակալված Աջարիայից բրիտանական զորագնդերի դուրսքերման վրացիների հարկադիր պահանջը: 1920 թ. մայիսի 7-ին կնքված վրաց-խորհրդային պայմանագրի համաձայն Բարումը ճանաչվեց որպես Վրաստանին ենթակա շրջան: Բայց պետք է խոստովանել, որ Կրեմլը այս հարցում երկակի խաղ էր վարում. քեմալականների հետ բանակցելիս ԱԳ ժողկում Գ. Վ. Զիցերինը Բարումի մարզի խնդիրը համարում էր վիճելի, նրա ճակատազիրը, իբր, դեռ պետք է որոշվեր հանրարվելի միջոցով<sup>89</sup>:

Հայտնի է, որ դեռևս 1919-ի սեպտեմբերին բրիտանական բանակի ստորաբաժանումները հեռացան Թիֆլիսից: Աղրբեշանի խորհրդայնացումից հետո Բարումի նավահանգիստը, նաևթի արտահանման կասեցման պատճառով, կորցրեց իր նախկին կառնորությունը Միացյալ Թագավորության համար<sup>90</sup>: 1920 թ. հունիսի 7-ին բրիտանացիները նրա վերահսկման գործը զիջեցին վրացական կառավարությանը:

Բարումում հաստատվեց վրացական վարչակազմ, «մահմեդական Վրաստան» ինքնավարության հիմնահարցի լուծումն էլ «առժամանակ» հետաձգվեց և, ըստ հավաստիացումների, ապագայում ևս պետք է կարգավորվեր համապետական օրենս-

<sup>87</sup> Adjara and The British Empire 1918–1921, doc. 181, 187, p. 509, 515.

<sup>88</sup> Редакционная // БОРЬБА, 8. VI. 1920.

<sup>89</sup> ПРАВДА (լրագիր, Սուլկվա), 9. VI. 1920.

<sup>90</sup> Lang D.M. Նշ. աշխ., էջ 222:

դրությամբ<sup>91</sup>: Աջարիայի մահմեդական ազգարնակչությունը, իրեն խարված զգալով, սկսեց անհնազանդություն ցուցաբերել նորանշանակ վրաց իշխանությունների հանդեպ, ընդհուապ մինչև զինված դիմադրության դեպքերը<sup>92</sup>: Բեգերը, որոնց մինչ այդ պատկանում էին տեղական իշխանության իրական լծակները, թշնամաբար դիմավորեցին զավառական հանձնակատարների և վրաց այլ վարիչների նշանակման մասին որոշումը, ինչը նպաստեց մժնոլորտի շիկացմանը: Բացի այդ, ըստ լրատվամիջոցների, «Աջարիայում հայտնվել են բազմաթիվ բուրք սպաներ, որոնք բնակչությանն առատորեն մատակարարում են զենքով <...>, նրանք ամբողջ եռանդով ջանում են աջարացիների մեջ վրացականության հանդեպ սերմանել ամեն տեսակի չարություն և ատելություն»<sup>93</sup>: Հակավրացական պայքար մղող ջոկատները հայտնի էին իրեն «Սադայը Միլլետ» շարժում, որի դեկավարն էր իրեն «Աջարստանի զիսավոր հրամանատար» հոչակած ուն Սամեդ Քեսկին զադեն<sup>94</sup>: 1920 թ. հունիսին բուրք-աջարական «չետաները» մեկուսացրին Խուլո բարձրավայր ավանի վրացական կայազորը և նրան ստիպեցին անձնատուր լինել: Ընդզողները գրավեցին նաև ուսումնական մեծ նշանակություն ունեցող Գոդերձի լեռնանցքը<sup>95</sup>:

Վրաց կառավարությունը, սակայն, որոշել էր հիմնավորապես ամրապնդվել Աջարիայում, և լրացուցիչ գորք մտցնելով երկրամաս, իսկույն հրահանգեց բնակչությանը զանգվածարար զինաթափել: Խուցուբանի, Կոխի, Զախատի, Խինու և այլ գյուղերում, որոնք չէին ճանաչում ՎԴՀ-ի հանձնակատարների լիազորությունները<sup>96</sup>, կառավարական գորքերը, մի շարք ընդհարություններից հետո, «կարգ ու անդորր հաստատեցին»<sup>97</sup>: Բացի այդ,

<sup>91</sup> *Adjara and The British Empire 1918–1921*, doc. 268, p. 706.

<sup>92</sup> Նույն տեղում, վավ. № 262, էջ 693:

<sup>93</sup> В Аджарии // БОРЬБА, 9. VI. 1920.

<sup>94</sup> БОРЬБА, 8. VI. 1920.

<sup>95</sup> Оперативная сводка генерального штаба // СЛОВО, 10. VI. 1920.

<sup>96</sup>Տէ՛ և Боръба за победу.., док. № 209.

<sup>97</sup> *Adjara and The British Empire 1918–1921*, doc. 262, p. 693.

անհնազանդ ավանների բնակչությունը գինվորականները տուգանում էին և նրանցից պատանդ վերցնում<sup>98</sup>: Զորավար Գ. Ի. Կվինխտաձեն դիմել էր կոշտ և վճռական քայլերի: Նրա կարգադրությամբ ամենուրեք բռուցիկներ էին փակցվել, ըստ որի՝ գործին դիմադրողները կապատճեին մահով: Ըմրուտների մերձավորներից ու հարազատներից պետք է բռնազանձվեր իրենց ողջ ունեցվածքը: Ահ ու սարսափն էլ ավելի տարածելու համար նրանք, ի ցույց ամենքի, պետք է անողոք կերպով վտարվեին Բարումի մարզից<sup>99</sup>:

Ինչպես տեսնում ենք, վրացական կառավարությունը ուղամակաման կոշտ ուժիմ էր մտցրել Աջարիայում, որը զգայի տառապանք էր պատճառում իսլամադավան ողջ բնակչությանը: Վրաց մահմեդականների միջավայրում դարձալ լայն տարածում ստացավ իերևանավարության պահանջը, ինչպես նաև վերսկսվեց ուժեղ գործությունը դեպի Թուրքիա<sup>100</sup>:

«Թուրքական գործոնը», նաև տեղական վարչակազմի անկատար աշխատանքն ու ապիկարությունը մեծապես խանգարում ու խոչընդոտում էին վրաց կենտրոնական կառավարության ջանքերը՝ «մահմեդական Վրաստանի» շրջաններում կայուն իրավիճակ հաստատելու գործում:

Քայլումում այլացեղ բնակչության մեծ մասի՝ նոյնիսկ պաշտոնական Թիֆլիսի գերակայության նկատմամբ հաշու և բարեկամաբար տրամադրված տեղի վրացիների մոտ, դժգոհություններ առաջացան տնտեսական վիճակի վատթարացման

<sup>98</sup> Положение в Батумском округе // БОРЬБА, 13. X. 1920.

<sup>99</sup> Kazemzadeh F. Նշվ. աշխ., էջ 202-203:

<sup>100</sup> Հայ ժամանակի իրազեկ մարդկանց, «в Аджарском крае среди грузин-мусульман очень сильное тяготение к Турции и стремление к автономии. Поэтому настроение Аджарского края очень неспокойно, близкое к восстанию», ինչպես նաև «в Аджарии в последнее время создалось кошмарное положение – состояние гражданской войны» [տե՛ս և Մեշերյակов Н.Л. В менышевистском районе (Из впечатлений поездки в Грузию). М., 1921, с. 44–45. Նաև՝ Խախадзе Ф. Диктатура менышевистской партии в Грузии. М., 1921, с. 74]:

**պատճառով:** Առևտուրը կանց էր առել թանկությունն ածում էր, իիմնարկությունները անկանոն էին գործում: Պատճառները շատ էին: Բրիտանական ռազմակալման ավարտից հետո Բաթումից սկսեցին մեկնել Եվրոպացի գործարարները, ոուսները կասկածանքի տակ էին և զանգվածաբար հեռացվում էին աշխատանքից, հայերը անընդհատ հաղածվում էին, քանի որ վրացական իշխանությունները մի կողմից ծանրացնում էին նրանց հարկերն ու սուրբերը, մյուս կողմից՝ «ազգայնացնում» ամեն ինչ:

1920 թ. աշնանն աջարական երկրամասս էր ժամանել երկրագործության փոխնախարար Պ. Պ. Գելեցիլիին (Ղարիբի): Իր այցելության մասին նա հուսաբեկ բովանդակությամբ մի տեղեկություն է թողել, որի մեջ մասնավորապես ասված է, թե «այս մարզում, բացառությամբ [թերևս] Բաթումի, մենք ձեռք չենք բերել ոչ մի նոր կողմնակից և, նոյնիսկ, նրանց վանեցինք, ովքեր [մինչ այժմ էլ] մեզ հետ էին <...> մեր օգտին կողմնորոշում ունեցող տաս հոգի էլ չես հանդիպի ամբողջ մարզում <...> ժողովուրդը պարզապես բոյկոտում է մեր վարչակազմը <...> այստեղ հաղթանակ են տոնում թուրք գործակալները: <...> Առաջինը, ինչ, դուք այստեղ կլսեք, դա ինքնավարություն [բառն է]: Մեծ, թե փոքր, զյուղացի, թե՝ բեզ, զիտակ, թե՝ տղետ, ձեր երեսին իսկույն ինքնավարության մասին [խոսքն են] նետում: Նրանով կազմեն և նրանով էլ կավարտեն զրոյցը ձեզ հետաւոր: Աջարացիների այս պահանջը կիսում էր նաև վրաց հանրության մի չնչին մասը, որն առաջարկում էր «անհապաղ հրապարակել մահմեդական Վրաստանի ինքնավարության մասին ակտը և այստեղ ինքնավար իշխանությունն առժամանակ հանձնել մեջլիսին»<sup>102</sup>:

<sup>101</sup> Съ и Борьба за победу..., док. № 209.

<sup>102</sup> Տե՛ս «Թօվա» («Միջած», լրագիր, Թիֆլիս), 4. XI. 1920. Խորհրդաբանական պատմությունը կազմված է առաջնահատումներով, որոնք պատճենաբանում են պատմության առաջնահատումները՝ առաջնահատումների մեջ և առաջնահատումների մասին:

Աջարիայի մահմեդականները, անշուշտ, աչքի առաջ ունեին նաև ՆԳ նախարար Ն. Վ. Ռամիշվիլու պնդումը, թե «Ախալցիսը ստացել է այդ ինքնավարությունը, դրա մասին մենք վճռականապես հայտնել ենք ժողովրդին»<sup>103</sup>: Երկրի խորհրդարանի բարձր ամբիոնից՝ ի լուր ամենքի կատարած այս ամպագողոցո հայտարարությունը, սակայն, չստացավ իր օրենսդրական շարունակությունը և շուտով մոռացության մատնվեց Թիֆլիսում՝ նախ և առաջ դեկավար անձանց կողմից: Խալամադավան ցեղակիցների ենթադրյալ ինքնավարության հարցում Վրաստանի իշխող քաղաքական խումբը առաջնորդվում էր զիսավորապես մարտավարական նկատառումներով: Հետագա զարգացումները բացահայտեցին, որ այդ զաղափարը իրականում չէր մտնում հեռու գնացող նրանց ուզմավարական հաշվարկների մեջ:

Ինչպես հայտնի է, Մուկվայում 1921 թ. մարտին կնքված ոուս-թուրքական պայմանագիրը Աջարիայի տարածքում նախատեսում էր ստեղծել վարչական (տեղական) ինքնավարություն: ՌՍՖՍՀ-ի կառավարությունը պատասխանատվություն էր ստանձնում՝ ապահովելու ինքնավարության մահմեդական ազգարնակչության կրոնական իրավունքները<sup>104</sup>: Այդ օրերին լուծարվեց Վրաստանի Դեմկրատական Հանրապետությունը: Հավատարիմ մնալով իր զիշտատիչ էռությանը և օգուվելով Վրաստանի ծանր կացությունից թուրքական կողմն ընթացք տվեց իր նախօրոք մշակած զավթողական ծրագրերին: Թուրք պարագուխները, տեսնելով, որ Վրաստանը կուլ է զնում ՌՍՖՍՀ-ին, վերջին պահին որոշեցին իրենք էլ ծանկել մի խոշոր պատառ Քյազը Քարաբերիրի բանակի շտաբը հայտարարեց Աջարիան և

---

կան որութիւնը» (տե՛ս Պառակտում Վրաստանի սոց.-դեմոկրատ կուսակցութեան մէջ // ՍՇԱԿ, 15. Ա. 1921):

<sup>103</sup> Կրезвичайное заседание Парламента Грузии // ЗАКАВКАЗСКОЕ СЛОВО, 22. II. 1919.

<sup>104</sup>Տե՛ս Документы внешней политики СССР, том 3-й. М., 1959, с. 598:

Սամցին բոնազավթելու մասին<sup>105</sup>: Վրաց զինվորականները թուրք զավթիչների արկածախնդրությունը կանխելու համար դիմադրություն կազմակերպեցին: Բարումի ամրոցում և փողոցներում թեժ մարտեր բռնկվեցին վրաց ռազմիկների և թուրք ասլյարների միջև: Թուրքերը ստիպված հեռացան քաղաքից<sup>106</sup> Խորհրդային Ռուսաստանի գործոնը, հետագա պայքարը Բարումի հարցում, ի վերջո, վճռեց Վրաստանի օգտին: Աջարիայի ինքնավար հանրապետության ստեղծման մասին որոշումը գործնականում կայացրեց արդեն Վրացիներում 1921 թ. հուլիսին:

Այսպիսով՝ հանրազումարի բերելով վերը շարադրած նյութը, կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների, որ

- ✓ «մահմեդական Վրաստան» կոչված շրջաններում բախվում էին վրացամետները, թրքակերները և այդ շրջաններում անջատ պետության կազմավորման զաղափարի կողմնակիցները,
- ✓ «մահմեդական Վրաստանը» բուֆերային պետության վերածելու զաղափարը ձախողվեց, քանզի արտաքին ազգեցիկ ուժերից դրան հակված էր, թերևս, միմիայն Ֆրանսիան, իսկ Թուրքիայի պարագայում դա միայն հարմար պատրժվակ էր պետք եղած ժամանակ տարածքին տիրելու համար: Թուրքիայի հետ ձեռք ձեռքի տված Աղրբեջանի կառավարությունն այս հարցում գործում էր Վրաստանի կենսական շահերի դեմ,
- ✓ վրաց քաղաքական վերնախավը, անկախ կուսակցական պատկանելությունից, շահարկելով միասնական պատմա-

<sup>105</sup> «Вступление в Батум турецкого отряда местным мусульманским населением было встречено с большим энтузиазмом». Ст. и Шафир Я. Тайны меньшевистского царства, Тифлис, 1921, с. 125.

<sup>106</sup> «Кемалисты оставили город, но еще находятся <...> в Аджарии, они <...> призывают мусульманское население Аджарии вооружиться и не пускать сюда грузин. Они говорили массам, что автономия дарована аджарцам Кемалем <...> кемалисты скоро займут Батум обратно». Ст. и Борьба за победу..., док. № 269.

կան անցյալը՝ վճռական էր տրամադրված Աջարիան և Սամցիսե-Մեսխեթիան իր երկրի կազմում տեսնելու ցանկության մեջ: Պաշտոնական Թիֆլիսը հիշյալ մարզերի պետական ենթակայության հարցը որոշելիս՝ հարկ եղած պարագայում չէր խորշում բոնի ճնշումներից,

- ✓ Աջարիան և Սամցիսե-Մեսխեթիան բոնակցվեցին Վրաստանին, առանց ճշտելու այդ շրջանների ազգարնակշուրյան իրական կամքը,
- ✓ Վրաց մեծամասնության թվային գերակշռությունն այնքան վճռորոշ չէր, որպեսզի ամբողջովին և մշտապես անտեսեր երկրի ազգային ու կրոնական փորքամասնությունների օրինական ձգումները: Պաշտոնական Թիֆլիսը տարբեր տեսակի մերենայություններով և խուսանավող հնարքներով ամեն կերպ ջանում էր բարեցնել նրանց զգոնությունը: Ընկնելով նեղ կացության մեջ Վրաց նախարարները, հետևաբար, չէին խորշում կեղծ խոստումներ հնչեցնել Աջարիայի ու Սամցիսե-Մեսխեթիայի «լիակատար» ինքնակարության մասին: Այդ ամենն արվում էր իսլամադավական ազգաբնակչության համակրանքը շահելու և, այնուհետև, նույնադավան Թուրքիայից պոկելու համար,
- ✓ Սամցիսե-Մեսխեթիան օրենսդրորեն չստացավ խոստացված, թեկուզ և անվանական «ինքնակարություն», ինչպես դա եղավ հետազոտմ Աջարիայի պարագայում:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ՕՍԵՐԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ՀԱՐՑԸ

Ազգագրական բազմազանություն ունեցող օսերի այն զանգվածը, որը, ըստ ընդունված ավանդույթի, վաղեմի ժամանակներից քնակալություն է հաստատել Վրաստանում, համարվել է օստղովրդի հարավային հատված: Նրա հոծ մեծամասնությունը կուտակված էր Գորիի զավառի երեք շրջաններում՝ Զավա, Յիսինվալ և Թուեր:

1917 թ. մարտ ամսին Թիֆլիսում գումարվեց «Օսական հեղափոխական կոմիտե»-ն: Օգտվելով կովկասյան երկրամասի կառավարման ոլորտում առաջացած շիլաշփորհց գուտ հասարակական բնույթ ունեցող այս կազմակերպությունը դիմել էր Թիֆլիսի նահանգային գործկոմին խնդրանքով՝ «Հարավային Օսիա» կոչված տարածքում իշխանական բոլոր լծակները հանձնել իրեն<sup>1</sup>: Ինքնակոչ «հեղափոխական» այդ կազմակերպությունը, սակայն, չկարողացավ համագործակցության եզրեր գտնել անդրկովկասյան նորանշանակ վարիչների հետ: Սեփական իշխանական օրակներ ստեղծելու հարավային օսերի անդրանիկ այս փորձի ձախողման գործում, թերևս, իրենց ուրույն դերն ունեցան նաև վրաց գործիչները: «Կոմիտե»-ի մեջ մտնող սոցիալ-դեմոկրատների, էսէռների և բոլշևիկների միջն առաջացած քաղաքական լուրջ հակասությունների պատճեռով այն շուտով կազմալուծվեց: Ժողովրդավար երևալու համար իշխանությունները «Հարավային Օսիայում» ենթավարչական երկու միավոր ստեղծեցին: Զավայի զավառակում հանձննակատար նշանակվեց օս մենշևիկ Խ. Գասինը, իսկ հարևան Յիսինվալում վարչությունը զիսավորեց նրա կուսակից Ա. Տեր-Ստեփանյանը<sup>2</sup>:

Զավայում 1917 թ. հունիսին Վրաստանի օս բնակչության

<sup>1</sup> Плиев Б. З. Борьба трудающимся Южной Осетии за советскую власть в 1917-1921 гг. Цхинвали, 1977, с. 33.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 34:

անդրանիկ համագումարում կազմավորվել էր Հարավ-օսական ազգային խորհուրդը (այնուհետև՝ ՀՕԱԽ): Մինչև 1920 թ. հարավային օսերք գումարել են 7 ազգային համագումար, իսկ ՀՕԱԽ-ի կազմն այդ ընթացքում բազմից վերընտրվել է: ՀՕԱԽ-ի բաղադրական դիմագիծը մերք ընդ մերք զգայի փոփոխության է ենթարկվել նրա մեջ առաջնություն ստացած ուժերի (մենշևիկ, բոլշևիկ, էւլուարական կողմնորոշման հետևանքով):

Օս ժողովականները որոշեցին պահանջել իրենց ժողովրդի ազատ ինքնորոշման իրավունքն այն պարագայում, եթե կովկասյան այլ ազգությունները գումարեն իրենց սեփական ինքնավարությունները<sup>3</sup>: Օսական միջավայրում սկիզբ առավ նաև այդ ժողովրդի երկու հատվածների միասնության զաղափարը: Այդ նպատակով 1917 թ. նոյեմբերին Արդոն գուղաքաղաքում (Հյուսիսային Օսիա) գումարվեց օսերի ընդհանուր համագումարը<sup>4</sup>: Քաղաքական զարգացումները հարավային և հյուսիսային Կովկասում, սակայն, միանգամայն տարբեր քննույթ ու տրամարքանություն ունեին: Հյուսիսային Օսիայի տարածքին հավակնում էր Կովկասի համախմբված լեռնականների միության կառավարությունը<sup>5</sup>: Վրացական կողմն էլ իր սեփական շահերն էր հետապնդում հարավկովկասյան տարածքների ազգային սահմանագատման թեժ հարցում: Վրաց տղիալ-դեմոկրատների առաջնորդները, ի սկզբանե, աշխատում էին որոշակի ազդեցություն գործադրել իրենց օս կուսակիցների վրա՝ նպատակ հետապնդելով կանխել հարևան ժողովրդի միջավայրում սկիզբ առած ազգահավաքման գործնթացները: Օսերի համախմբման միտումը, թերևս, վտանգավոր էր դիտվում Վրաստանի ապագա ամբողջականության համար: Այսպիսով, օսերք հայտնվել էին մուրճի և սալի արանքում:

<sup>3</sup> Дзидзоев В. Д. Кавказ конца ХХ века: тенденции этнополитического развития (историко-политологическое исследование). Владикавказ, 2004, с. 95.

<sup>4</sup> Плиев Б. З. Նշանակած, էջ 128:

<sup>5</sup> Цуциев А. Атлас этнополитической истории Кавказа (1774-2004). М., 2006, карта № 17.

2-րդ ՀՕԱԽ-ը, որն ընտրվել էր 1917 թ. դեկտեմբերին, զեմստվային ինքնակառավարման կողմնակիցն էր<sup>6</sup>: Այս ՀՕԱԽ-ի վարչությունն իր նստավայրն ընտրել էր Թիֆլիսը, ինչը բացահայտեց նրա հարավկողկանայան կողմնորոշումը<sup>7</sup>: Նրա աշխատակազմը, մեծ մասամբ բաղկացած լինելով էսէռներից, 1918 թ. հունվարին հանդես եկավ հասուկ հայտարարությամբ պատկան մարմիններին տեղեկացնելով, որ իրքն «Հարավային Օսիայի բարձրագույն դեկավար մարմին» ցանկանում է տեսնել ՀՕԱԽ-ը<sup>8</sup>: Օս էսէռները, բոնելով չափավոր դիրքորոշում, փորձում էին Կովկասի ժողովուրդների սկիզբ առած ինքնորոշման գործընթացում իրենց ցեղակիցների համար ձեռք բերել առավել շահեկան կարգավիճակ: Օս մենշնիկների այն թևը, որը սերտածել էր Վրաց գործընկերների հետ և հետևում էր նրանց քաղաքական գծին, նպատակ ուներ էսէռների ձեռքից խլել ՀՕԱԽ-ի կառավարման դեկը<sup>9</sup>: Բայց դա հեշտ գործ չէր, քանզի օս մենշնիկների գործուն ազդեցությունը տարածվում էր միայն Արևելյան Վրաստանի զավառներով մեկ ցրված իրենց վրացախոս ցեղակիցների վրա: Իսկ ՀՕԱԽ-ն ընտրվում էր զիաւորապէս ազգային բուն դիմագիծը պահպանած «Հարավային Օսիայի» շրջանների լիազոր պատվիրակների ձայներով:

Հարավային օսերի 3-րդ համագումարի աշխատանքը մեկնարկել էր 1918 թ. մայիսի 28-ին, ինչը պայմանավորված էր ՎԴՀ-ի հոչակումով<sup>10</sup>: Համագումարում ծավալված բանավեճի հիմնական առանցքը վրաց նորաստեղծ կառավարության ճանաչման հարցն էր: Ժամանել էին նաև զիաւոր ուժերի ներկայացուցիչները՝ կարկառուն կոմունիստ Ֆ. Մախարաձեն և նրա ընդդիմախոսը՝ ճանաչված սոցիալ-դեմոկրատ Իս. Ռամիշվի-

<sup>6</sup> Плиев Б. З. Նշվ. աշխ., էջ 131:

<sup>7</sup> Очерки истории юго-осетинской автономной области, том 1-й. Тбилиси, 1985, с. 273

<sup>8</sup> Плиев Б. З. Նշվ. աշխ., էջ 132:

<sup>9</sup> «Երթուծա» («Էրթորբա»), 24. V. 1918.

<sup>10</sup> Плиев Б. З. Նշվ. աշխ., էջ 140:

լինութեան բոլշևիկներն առաջարկում էին մերժել Խորհրդային Ռուսաստանից առանձնանալու զաղափարը և նախանձելի եռանդով քարոզում էին ՎԴՀ-ի դեմք զինված պայքարի կարգախոսը<sup>12</sup>: Կողմերից և ոչ մեկը, սակայն, չհասավ իր նպատակներին: Ժողովականները որոշեցին առժամանակ ձեռնպահ մնալ «դեմոկրատական հանրապետության» ճանաչման հարցում: Նրանք նախ մերժեցին ապստամբության մասին բոլշևիկների բոցավար կոչը: Վրացամենս օս սոցիալ-դեմոկրատները, իրենց շահերից ենելով, լրեցին այս կարևոր միջոցառումը, ինչն էլ նրանց զրկեց Յ-րդ ՀՕՍԽ-ի կազմավորման գործընթացում մասնակցություն ունենալու հնարավորությունից: Նրանց այդ քայլն առավել շահեկան վիճակ ստեղծեց էսէռների ու բոլշևիկների համար: Կոմունիստներին ՀՕՍԽ-ն անհրաժեշտ էր իրքն քաղաքական ամրիոն, որի միջոցով նրանք փորձում էին օս զուղացիներին հանել վրաց կառավարության դեմ: Այդ ծրագիրը, սակայն, միայն մասամբ իրագործվեց: 1918 թ. ամռանը Շուշերիի և Շորոպանիի զավառներում օս երկրագործները իրենց վրաց հարևանների հետ գործուն մասնակցություն ունեցան զուղացիական զինված հուզումներում: Ապստամբները, գրավելով Մցխեթը, խաթարել էին անզամ մայրաքաղաքի անդորրը<sup>13</sup>: Այս լարված իրավիճակում վրաց կառավարությունը փորձում էր լեզու գտնել հարավային օսերի հետ:

Օսերի 4-րդ համագումարը, որը մեկնարկել էր 1918 թ. հունիսին Յունար զուղում, կրկին անդրադարձավ ինքնորոշման կենցուս հարցին: Զամագումարի աշխատանքներին մասնակցում էր նաև մենշևիկների կարկառուն դեմքը, նրանց «ոսկեբերանը»՝ Ի. Շերեբելին: Վերջինս համաժողովի մասնակիցներին կոչ էր անում ճանաչել պաշտոնական Թիֆլիսի իշխանությունը, որի անունից նա լիակատար ինքնակառավարում էր խոստանում Վրաստանում բնակվող օսերի համար: Ժողովականները, սա-

<sup>11</sup> Չխօրեբով Վ. Դ., Սանակօս Մ. Պ. *Южная Осетия в период трех революций*. Тб., 1981, с. 199.

<sup>12</sup> БОРЬБА, 7. VI. 1918.

<sup>13</sup> Գիւղացիական ապստամբության Վրաստանում // ԼՐԱԲԵՐ (լրագիր, Թիֆլիս), 24. VI. 1918:

կայն, անդրդվելի մևացին վրաց բանագնացի հորդորներին և որոշեցին «օս ժողովրդի ինքորոշման հարցի վերջնական լուծումը հետաձգել մինչև հաջորդ համագումարը <...> բանակցությունների մեջ մտնել Հյուսիսային Օսիայի հետ ինքորոշման հարցը [համատեղ] վճռելու համար <...> Խնդրել վրաց դեմոկրատական հանրապետության կառավարությանը, որ նա [իր երկրի] սահմանադրությունը մշակելիս բաց թողնի Հարավ-Օսիայի հարցը»<sup>14</sup>: Այս որոշումը չուներ հակավացական բացահայտ բովանդակություն։ Նրա հիմնական զաղափարը, թերևս, միացյալ Օսիայի ստեղծումն էր։ Օսերը համառորեն ձգում էին ունենալ պետականացական ավելի շահեկան կարգավիճակ, քան նրանց առաջարկում էր վրացական կողմը։

Իրենց նպատակին հասնելու համար օսերը 1918 թ. ամռանը հայցում էին Թիֆլիսում զոնվող կայզերական Գերմանիայի լիազոր բանագնացների օժանդակությունը։ «Հարաւային և հիսյսային Կովկասի օսերի ներկայացուցիչները, – ազդարարում էր մամուլը, – դիմել են կոմս Շուկենբուրգին և յայտնել, որ իրենք համաձայն են՝ մտնել վրաց հանրապետութեան մեջ ֆեդերատիւ հիմունքներով և խնդրում են համապատասխան միջնորդութիւն յարուցել վրաց կառավարութեան առջև։ Կոմս Շուկենբուրգը այդ առիթով անձամբ տեսնել է կառավարութեան նախագահի հետ»<sup>15</sup>։ Գործը, սակայն, հետագա զարգացում չստացավ։ 1920-ական թվականներին այս խնդրին անդրադարձավ Ի. Ստալինը և մի շարր օս բարձրաստիճան կոմունիստների հորդորեց բարձրացնել Օսիայի երկու մասերը ինքնավար հանրապետության կարգավիճակով Վրաստանի կազմում ընդգրկելու հարցը։ Ի. Ստալինի հետ համերաշխ էր նաև Անդրելիկոսի դեկանավար Ս. Օրջոնիկիձեն։ Բուն վրացական շրջանակները, սակայն, «ինչ-ինչ» պատճառներով, առանց խանդավառության ընդունեցին այդ լուրը։ Հարցը լուրջ առարկությունների հանդիպեց նաև ՀամԿ(բ)Կ Հյուսիսկովկասյան երկրամասային կոմիտեում։

<sup>14</sup> «Երթուղա» («Էրթորա»), 21. VI. 1918.

<sup>15</sup> Օսերը և վրաց հանրապետութիւնը // ՀՈՐԻԶՈՆ, 15. VI. 1918:

հանձինս նրա դեկավար Ա. Հ. Միկոյանի: Վերջինս առաջարկում էր միացյալ Օսման ընդգրկել ՌՍՖՌ-ի կազմում: ԽՍՀՄ-ի առաջնորդը, այդուհանդերձ, նախընտրեց իր քաղաքական օրակարգից հանել չափազանց նույր այս հարցը, թերևս, խուսափելով ժողովրդական լայն զանգվածների մեջ կուսակցական նեղ շրջանակներում առաջացած բանավեճի տարածումից<sup>16</sup>: Այսպիսով, օս ժողովրդի միասնականության գաղափարը մնաց չիրագործված:

Օսերը ձեռնամուխ չեղան սեփական ազգային կուսակցություն ստեղծելու գործին: *Սոցիալիստական կողմնորոշում* ունեցող հոսանքներից բացի՝ այլ կազմակերպություններ էական որևէ ազգեցություն չունեցան հարավային օսերի միջավայրում: Ուստի, հենց նրանց միջն էլ ծավալվեց առաջնության համար պայքարը: Քաղիոսանքներից յուրաքանչյուրն իրենց ազգի ինքնորոշման հարցում ուներ իր հեռանկարային ծրագիրը: Այդ հիմնախնդրի իրագործման առավել հետևողական եղան էւլոնները և սոցիալ-դեմոկրատների այն փոքրաթիվ հատվածը, որը չմիացավ ՎՍԴԲԿ-ին: Օս մենշևիկներից շատերն իրենց վրաց կուսակիցների հետ ամուր կապեր ունեին: Նրանց նշանավոր դեմքերից էր Ա. Ի. Ֆարնիեր (*Սանդրո*), որը բարձր դիրք էր զբաղեցնում ՎՍԴԲԿ-ի կենտրոնական կուսակցությունում: Նա և իր ցեղակից գործընկերները, հաշվի առնելով վրացիների դիրքորոշումը, խիստ բացասարար էին տրամադրված Վրաստանում օսական ինքնավարություն ստեղծելու գաղափարի նկատմամբ<sup>17</sup>:

<sup>16</sup> Чугаенко Ю. А. *Грузия – Южная Осетия: исторические первопричины противостояния*. Киев, 2013, с. 44-48. Тедеева У. Ш. *Национальный вопрос в Грузии и проблема самоопределения южных осетин в 20-е годы XX века // НАУЧНЫЕ ВЕДОМОСТИ* Белгородского государственного университета. Серия: История. Политология. Экономика. Информатика. 2012, выпуск № 19, том 24. Ст. и URL: <http://cyberleninka.ru/article/n/natsionalnyy-vopros-v-gruzii-i-problema-samoopredeleniya-yuzhnyh-osetin-v-20-e-gody-hh-veka> [28. 03. 2014]

<sup>17</sup> «Երթուղա» («Էրթորք»), 11. VII. 1918.

Օսիայի երկու մասերի միավորումը չիրականացավ: Ուստի, հարավային օսերի 5-րդ համագումարը (1918 թ., օգոստոս) որոշեց ճանաչել վրաց կառավարության իշխանությունը, սակայն, «Օսէրիան թողնել Վրաստանի հանրապետութեան կազմի մեջ տերրիսորիալ ինքնորոշման սկզբունքով»<sup>18</sup>: Դրա փոխարեն ժողովականները պաշտոնական Թիֆլիսից ակնկալում էին հարավային օսերի ինքնակառավարման իրավունքի իրավական հաստատում: Վրացական կողմը, սակայն, ըստ արդեն որդեգրած աշխատառի, ջանում էր տարբեր պատրվակներով խոսանավել հարավային օսերի պահանջներ կատարումից: Իշխանությունները նրանց առաջարկում էին բավարարվել արդեն եղածով: Պաշտոնական Թիֆլիսը համաձայն էր իբրև ինքնակառավարվող «թեմի» (զյուղախումբ) ճանաչել միայն օսերի ավանդական համայնքները<sup>19</sup>:

Հարավային օսերի 6-րդ համագումարը, որը կայացավ 1918 թ. դեկտեմբերին Յիխինվալում, վրացական կողմի առջև դարձյալ դրեց միասնական օսական վարչական միավորի ստեղծման հույժ կարևոր հարցը: Մինչ այդ հիմնախնդրի վերջնական կարգավորումը ժողովականները հրաժարվում էին «Հարավային Օսիայում» արտոնել զեմաստվների ստեղծումը<sup>20</sup>: Համագումարի որոշումները սուր քննարկումների առիթով դարձան: Թիֆլիսում գումարված օս բանվորների համաժողովում 6-րդ ՀՕԱԽ-ի փոխնախագահ Ն. Զ. Զինովը պնդում էր, թե «Օսիայի առանձնացումը ինքնուրույն շրջանի մեջ <...> պարտադիր պայման է օս ժողովրդի [ինտազայ] զարգացման համար»: Նրա ընդդիմախոս Ա. Ֆարնիկը այլ կերպ էր հարցին նայում: «Երբ հարավ-օսական վեցերորդ համագումարը, - ասում էր նա, - որոշում է կայացնում Օսիան ինքնուրույն շրջանի մեջ առանձնացնելու մասին և միաժամանակ ընտրում է բանագնացներ ՚իյուսիսային Օսիայի հետ

<sup>18</sup> Օսէրիայի ինքնուրոշումը // ՀՈՐԻԶՈՆ, 9. VIII. 1918:

<sup>19</sup> Плиев Б. З. Նշվ. աշխ., էջ 149:

<sup>20</sup> VI южно-осетинский съезд и национальные интересы осетинской демократии // БОРЬБА, 12. I. 1919.

միացյալ իշխանության կազմակերպման մասին” հարցի շուրջ բանակցություններ վարելու համար, այդ ժամանակ շրջանի առանձնացման պահանջը ստունում է մեկ այլ իմաստ, այդ ժամանակ շրջանը [օսկրին] բաժին հանելու [նպատակը] կերպարանափոխվում է Օսիայի առանձնացմանը<sup>21</sup>:

Վրաց իշխանություններին երկար ժամանակ չեղ հաջողվում «Լեռնային Օսիայում» (Զավայի զավառակ) հաստատել սեփական վարչակազմ: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ էր նախ և առաջ զինաթափել Կովկասյան լեռների փեշերին սփոված օսական զյուղերի բնակչությանը: Իր համար անշափկարևոր այդ գործում կառավարությունն ակնկալում էր ՀՇՈՒՆ-ի օժանդակությունը: Վերջինիս անդամները, սակայն, հեզնանքով պատասխանեցին վրաց իշխանությունների դիմումին: «Մինչև յեղափոխութիւնը, – գրված է ՀՇՈՒՆ-ի պատասխան ուղերձում, – գոյութիւն ունեցող [ցարական] կառավարութիւնը չկարողացավ օսկրին զինաթափելու գործն յաջողացնել, իսկ այժմ երբ ազգաբնակութիւնը զիլտվին զինաւած է, մեծ դժւարութեամբ կարելի կը լինի նրան զինաթափ անել»<sup>22</sup>: Մամուլը հաղորդում էր, որ վրաց կառավարության «կոմիսարները Օսիայում անգործության են մատնված, [բանզի] ժողովուրդը նրանց չի վստահում»<sup>23</sup>: Երդ ՀՇՈՒՆ-ը, բաղկացած լինելով զերազանցապես բոլշևիկներից, աշխատեց վարպետորեն օգտվել ստեղծված կացությունից: Նա, պատրիվակ բոնելով օսկրի ինքնորոշման կարգախուր, հայտային կարգով սկսեց Գորիի զավահի հյուսիսային շրջաններում տիրել իշխանական լծակներին, պաշտոնանկ արեց «Լեռնային Օսիայի» կառավարական հանձնակատարին և նշանակեց իր թեկնածուին<sup>24</sup>: Ավելին, ՀՇՈՒՆ-ը ստեղծեց օսական «արտակարգ ժողովրդական դաստիարան»: Երկիմաստ բովանդակություն ունեցող այդ քայլերը, թերևս, համբնկան ՎԴՀ-ի պատմության մեջ ամե-

<sup>21</sup> Голос осетинских рабочих г. Тифлиса // БОРЬБА, 18. III. 1919.

<sup>22</sup> Оуժողովրդի զինաթափման շուրջը // ЗОГФОН, 13. IX. 1918:

<sup>23</sup> БОРЬБА, 22. I. 1919.

<sup>24</sup> Հարաւային Օսկրիայում // АՇԽԱՏԱԽՈՐ, 24. IV. 1919:

նածանր և վտանգավոր դեպքերի հետ: Ցնցված լինելով Սոչիի շրջանում ուսւ մեծապետականների սրբնթաց հարձակումից, ինչպէս նաև Սամցխեում թուրք-մեսխեթցինների բռնկված ապրատամբությունից, վրաց կառավարությունը նախընտրեց առժամանակ խուսանավել «օսական հարցում»: Մամուլի միջոցով նա սկսեց տեղեկատվություն տարածել, թէ դեմ չէ «Հարավային Օսիան» տեսնել իբրև միասնական գեմստվային միավոր<sup>25</sup>: Բոլցնիկների և էսէռների դաշինքը ճ-րդ ՀՕԱԽ-ում, սակայն, շատ ավելի լայն, ընդարձակ իրավունքներ էր պահանջում իր ժողովրդի համար: Բանավեճ ծավալվեց երկրամասում լայն քաղաքական իրավունքներով օժոված օսական ինքնավարություն կազմավորելու հարցի շուրջ: Օսական բոլոր հոսանքները, «բացառությամբ սոցիալ-դեմոկրատների, - տազնապահար իրազեկում էր ՎՄԴԿ-ի լրազիրը, - կանգնած են ինքնավարության օգուին»<sup>26</sup>: Վրաց իշխող շրջանակները կտրականապէս դեմ էին այդ զաղափարին: «Օսերիայի ինքնորոշումը, - կարդում ենք «Էրթորք» թերթում, - պէտք է իրականացնել հենց Հյուսիսային Օսերիայում, որի բնակչության 90 տոկոսը օսեր են, այլ ոչ թէ Զավայում, որտեղ օսական միայն մի քանի գյուղ կա»<sup>27</sup>:

Օսական բնակավայրերը, որոնք զինարափած չեն և բոլցնիկների ազդեցության տակ էին, բացարձակապէս չեն ուզում ճանաչել և համար մերժում էին վրացական կառավարության գերակայությունը: «Զաւիի հովտում այլևս չեն գործում Վրաստանի կարգերը և Վրաստանի կառավարութիւնն այնտեղ չէ ընդունում, - մատնանշում էր «Սաքարթվելո» թերթի հոդվածագիրը: - Օսերի ազգային խորհուրդը յայտարարւած է այդ անկեան լիուլի տէր ու տնօրէն: Այնտեղ նոյնիսկ չեն թոյլ տալիս, որ Վրաստանի իշխանութեան ներկայացուցիչներն այդ տերիտո-

<sup>25</sup> БОРЬБА, 28. II. 1919.

<sup>26</sup> БОРЬБА, 15. IV. 1919.

<sup>27</sup> «Երտուծա» («Էրթորք»), 15. VI. 1920.

րիան մուտք գործեն»<sup>28</sup>: Ավելին, «Հարավային Օսիան իրականում մեկուսացել է Վրաստանից և չի ենթարկվում իր կառավարությանը: Ամբողջ հշխանությունն այդ երկրամասում կուտակված է օսական ազգային խորհրդի ձեռքերում, [որը] կարգադրություններ է անում ինչպես սեփական պետության մեջ»<sup>29</sup>, – հաղորդում էր Թիֆլիսի ոուսալեզու լրագիրը: Այսպիսով, «Հարավային Օսիա» կոչված տարածքը միայն անվանապես էր զոնվում Վրաստանի կազմում, ինչը չեր կարող չառաջացներ վրացական կողմի բուռն վրդովմունքը: Վրաց-օսական հարաբերությունները չափազանց լարված էին, ինչը վկայում էն «Էրթորա» թերթի հետևյալ տողերը. «Օս ազգայնականները կամենում են քշել վրացիներին Յիհինալի շրջանից, ինչպէս վրացի ազգայնականները տենչում են օսերին քշել Վրաստանի սահմաններից»<sup>30</sup>:

ՀՕԱԽ-ը գիտակցաբար խուսափում էր վրացերեն լեզվով զրագրություն մեջ մտնել վարչակազմի հետ և, պատրիակ բոնելով այդ հանգամանքը, օս լիազորները հրաժարվում էին կատարել վրաց կառավարության հանձնարարականները<sup>31</sup>: Վրացական կողմը զանգատվում էր, որ այս լեռնոտ շրջաններում «երկիշխանությունը և անիշխանությունը իրեն զգացնել է տալիս ամեն բայլափոխիս»<sup>32</sup>: 6-րդ ՀՕԱԽ-ը թույլ չտվեց օսերին մասնակցել Գորիի զավառական զեմստվոնների ընտրություններին<sup>33</sup>: Բացի այդ, նա իր «գործողություններով վնասեց Վրաստանի կառավարության հեղինակությանը և դրանով իսկ ձախողեց Օսիայում Վրաստանի Սահմանադիր ժողովի ընտրությունները»<sup>34</sup>: Մեր

<sup>28</sup> «Եավարտացյալու» («Սաքարբալու», 1919, № 68) օրաթերթից արտատպված հոդվածը տե՛ս Վրաց կեանք // ԱՇԽԱՏԱԽՈՐ, 30. III. 1919:

<sup>29</sup> КАВКАЗСКОЕ СЛОВО, 26. III. 1919.

<sup>30</sup> «Երտոնձ» («Էրթորա», 1918, № 69) օրաթերթից արտատպված հոդվածը տե՛ս Օսերի շարժումը // ՀՈՐԻԶՈՆ, 29. III. 1918:

<sup>31</sup> Хроника // КАВКАЗСКОЕ СЛОВО, 29. IV. 1919.

<sup>32</sup> БОРЬБА, 28. II. 1919.

<sup>33</sup> «Երտոնձ» («Էրթորա», 1919, № 79) օրաթերթից արտատպված հոդվածը տե՛ս Օսերի ազգային շարժումը // ԱՇԽԱՏԱԽՈՐ, 12. IV. 1919:

<sup>34</sup> «Երտոնձ» («Էրթորա»), 28. II. 1919.

կարծիքով, «մենշևիլյան» վարչակարգի բազմազան ու բազմաթիվ ընտրակեղծիքները ու չարաշահումները, թերևս, արդարացնում են օսերի նման պահվածքը:

Պաշտոնական Թիֆլիսի համաձայնությամբ Արխագիայում 1919-ին գումարվել էր ներկայացուցչական մարմին՝ ժողովրդական Խորհուրդ, որը զիսավորապես բաղկացած էր ՎՍԴԲԿ-ի անդամներից: Արխազներին հանդարտեցնելու համար այդ մարմնի «մենշևիլյան» մեծամասնությունը հայտարարել էր երկրամասը ինքնավար միավոր, սակայն, սուկ անվանական լիազորություններով: Այդ իրադարձությունը նախադեպ ծառայեց նաև ՀՕԱԽ-ի համար: 1919 թ. մարտի 30-ին նա միակողմանիորեն վճռեց համընդհանուր ընտրությունների միջոցով գումարել օսական «Ժողովրդական Խորհուրդ» կոչված կառույցը<sup>35</sup>: Արխագիայում, սակայն, վրաց իշխանություններն էին որոշում ինքնավարության լինել, չինելու հարցը, նաև սկզբից ներ վերահսկում էին ժողովրդական Խորհրդի ընտրության ողջ ընթացքը, ինչը, թերևս, դարձավ ՎՍԴԲԿ-ի հաղթանակի զիսավոր գրավականը:

«Հարավային Օսիայի» կառավարման բնազմավառում պաշտոնական Թիֆլիսը դեռ չէր կ ստեղծել հուսալի լծակներ իր համար: Ուստի, առանձին ընտրություններ կազմակերպելու մասին օսերի որոշումը լուրջ անհանգստություն և տագնապ պատճենեց վրացական բաղաքական վերնախավին: Զմասնակցելով երկրի ՍԺ-ի կազմավորման գործենքացին օսերը ցանկանում էին համանման գործառություն օժտել սեփական ենթադրյալ «Ժողովրդական խորհուրդը»: Հաստ ԱԴ-ի լրագրում հնչած տեսակետի, օսերի ցանկությունը «սեփական սահմանադիր ժողովն ունենալ, մի քան, որ ապստամբելուն է հաւասար և, որը Վրաստանի իրաւական գոյութեան հիմքն էր փորում»<sup>36</sup>: Օսերի այդ քայլը դիտվեց որպես անթաքուն անջատողականություն, որին

<sup>35</sup> Созыв народного совета Южной Осетии // КАВКАЗСКОЕ СЛОВО, 10. IV. 1919.

<sup>36</sup> «Տայարական» («Սարարավելո», 1919, № 114) օրաթերթից արտատպված հոդվածը տե՛ս Վրաց կեանք // ԱՇԽԱՏԱՒՈՐ, 10. VII. 1919:

հետևեցին խիստ պատժամիջոցները, մինչև անզամ ռազմական բնույթի: ՆԳ փոխնախարար Պ. Ճիճինաձեն, նախ և առաջ, կարգադրել էր Գորիի զավադի վարչությանն իսկույն խափանել օսական ընտրությունները<sup>37</sup>: Երդ ՀՕԱԽ-ի անդամների նկատմամբ սկսվել էր քրեական հետապնդում<sup>38</sup>: Թիֆլիսում ձերբակալվել էր այդ կառույցի փոխնախարար Ն. Զ. Ջիուեր<sup>39</sup>: Կառավարությունը կարգադրել էր ցրել ՀՕԱԽ-ի ամբողջ կազմը<sup>40</sup>: Գեներալ Ս. Գ. Կարալաշվիլուն հանձնարարվել էր ճնշել օսական շրջաններում ծագած խլրությունները: Կառավարական զորքերը մտան Յիսինվալ, որից հետո ՀՕԱԽ-ի առավել հեղափոխական զործիչները գերադասեցին հետանալ վրաց իշխանությունների տեսադաշտից<sup>41</sup>:

Կոշտ և կոպիտ վարչարարության արդյունքներն ավելի հաստատուն դարձնելու համար պաշտոնական Թիֆլիսը, թերևս, զիտակցում էր նաև քաղաքական քայլերի անհրաժեշտությունը: Գորիում շուտափույթ հրավիրվեց օս «մենշևիկների» համաժողովը: Նրա մասնակիցները որոշեցին կազմակերպել ՎՄԴԿ-ի «օսական կոմիտե»<sup>42</sup>: «Մենշևիկները» ՀՕԱԽ-ի ընտրությունների հարցում իրենց նախկին բոյկոտը ճանաչեցին վնասակար և ոչ արդյունավետ: Որոշվել էր մասնակցել ՀՕԱԽ-ի նոր կազմի ընտրությանը սոցիալ-դեմոկրատական առանձին ցուցակով<sup>43</sup>:

Հարավային օսերի 7-րդ համազումարի աշխատանքը մեկնարկել էր 1919 թ. մայիսի 18-ին Յիսինվալում: Նրա ընթացքը, թերևս, չարդարացըրեց վրացական կողմի հիմնական սպասելիքները: Պատվիրակները, թեև վերահաստատեցին «Հարավային Օսիայի» հնագանդությունը վրաց կառավարությանը, սակայն, միաժամանակ չհրաժարվեցին «Ժողովրդական Խորհրդի» գու-

<sup>37</sup> В Южной Осетии // КАВКАЗСКОЕ СЛОВО, 29. IV. 1919.

<sup>38</sup> В Южной Осетии // КАВКАЗСКОЕ СЛОВО, 21. V. 1919.

<sup>39</sup> Хроника // КАВКАЗСКОЕ СЛОВО, 17. V. 1919.

<sup>40</sup> Цховребов В. Д., Санакоев М. П. Նշանական պատմություններ. Երևան, 1999:

<sup>41</sup> Плиев Б. З. Նշանական պատմություններ. Երևան, 1999:

<sup>42</sup> Նույն տեղում, էջ 205:

<sup>43</sup> «Երանեա» («Երթորբա»), 7. V. 1919.

մարման մտրից<sup>44</sup>: Ժողովականների ընդունած բանաձև, որը հանձնարարում էր «ազգային խորհրդին Վրաստանի սահմանադրի ժողովի հետ համերաշխ իրագործել Հարաւային Օսկեֆիայի ազգային-տէրրիտորիալ աւտոնոմիան»<sup>45</sup>, արժանացավ վրաց ազգայնականների խիստ նախատանքին: «Օսերի ազգային խորհրդը՝ ինչ կազմ է ունենայ, – հետևություն էր անում ԱԴ-ի լրագրի մեկնաբանը, – կը շարունակէ իր աւանդութիւնները և մեր կառավարութիւնը փոխանակ սպասելու, որ լսէ օսերի ազգային խորհրդի մեջ հետ բարի հարեանական յարաբերութիւններ կապելու մասին անելիք դեկլարացիաները՝ աւելի լաւ կանէ, որ օսերի հետ լրագրային լեզուվ խօսելու փոխարէն գէնքի լեզուվ խօսէ և ստիպէ նրանց ձեռք բաշելու նորանոր աւանտիրաններից, բանի դեռևս ուշ չէ»<sup>46</sup>:

1919-ի հունիսին 7-րդ ՀՕԱԽ-ը իր ներկայացուցիչներին գործուղել էր Վրաստանի մայրաքաղաք կառավարության հետ բանակցություններ վարելու համար: Օսերը վրաց առաջնորդներից համառոքեն պահանջում էին քաղաքական ինքնավարության կարգավիճակ «Հարավային Օսիայի» ողջ տարածքի համար<sup>47</sup>: Կառավարության որոշմամբ արդարադասության նախարարությանը կից մի հանձնաժողով էր ստեղծվել, որի նպատակն էր «ուսումնասիրել» այս կենտրոն հարցը<sup>48</sup>: Գլխավոր փորձագետների դերում հանդես էին զայխ պատմաբաններ Է. Թաղահշվիլին և Ի. Զավախիշվիլին<sup>49</sup>: Նրանք ոչ միայն ճանաչված զիտնականներ էին, այլև աշքի էին ընկել որպես վրաց ազգայնա-

<sup>44</sup> В Грузии: в южной Осетии // БОРЬБА, 16. VI. 1919.

<sup>45</sup> Հարաւային Օսկեֆիայում // ԱՇԽԱՏԱՒՈՐ, 11. VI. 1919:

<sup>46</sup> «Եայօրտցըլո» («Սաքարբակելո», 1919, № 114) օրաթերթից արտատպված հոդվածը տես՝ Վրաց կեանք // ԱՇԽԱՏԱՒՈՐ, 10. VII. 1919:

<sup>47</sup> Օսկեֆիայի պատմիրակութիւնը կառավարութեան մօտ // ԱՇԽԱՏԱՒՈՐ, 2. VII. 1919:

<sup>48</sup> Хроника: Земство в Ю. Осетии // КАВКАЗСКОЕ СЛОВО, 17. VII. 1919.

<sup>49</sup> Тифлисская жизнь // БОРЬБА, 30. VII. 1919.

կանության կարկառուն գաղափարախոսներ: Քաջ հայտնի էր, որ վրացական ավանդապաշտ միջավայրը չէր ճանաչում օսերի ոչ պատմական, հետևաբար, ոչ էլ քաղաքական իրավունքները «Հարավային Օսիայում»: Եվ վիճահարույց այդ կարծիքի հետագա արմատավորման գործում իրենց ուրույն դերն էին ունեցել հիշյալ նշանավոր դեմքերը<sup>50</sup>: «Որևէ հարավային Օսերիա գոյություն չունի Վրաստանում, - «տեղեկացնում էր» ընթերցողին «Տրիրունա» լրագիրը, - կան միայն վրացիների միջավայրում բնակվող օսեր: [Ուստի] վրացական օսերի ինքնավարությունն անհեթերություն է»<sup>51</sup>: ՀՕԱԽ-ի հետ բանակցելիս պաշտոնական Թիֆլիսը դեմ չէր, որ Զավայի շրջանում մտցվի «զեմստվո»<sup>52</sup> և, հետևաբար, «Լեռնային Օսիան» ճանաչվի իրեն ինքնակառավարվող գավառ, ինչը, թերևս, չէր հակասում երկրի վարչական կառուցվածքին: Օսերին, սակայն, այդ տարրերակը չէր գոհացնում. դա իրենց հայցածից զգալիորեն քիչ էր: Իսկ հիշյալ առաջարկը իրականացնելու համար դեռ անհրաժեշտ էր կատարել մի շարք լրացույշ նախապայմաններ: Այդ հարկադիր պահանջը առաջ էին քաշել վրացական վարիչները<sup>53</sup>: Հետևաբար, կողմերը ընդհանուր հայտարարի չեկան:

Վրաստանում կոմկուսի բժիշները փորձում էին ի շահ իրենց հեղափոխական ծրագրերի ծառայեցնել իշխանություննե-

<sup>50</sup> Այսօր էլ վրաց մտավորականները շարունակում են պաշտպանել այդ տեսակետները: Ազգագրագետ Ռ. Թոփչյանի գրում է. «Осетинский национальный совет обратился к правительству Грузии с просьбой предоставить осетинам автономию, но в ответ получил отказ. Историческая справедливость была на стороне грузинских властей: с какой стати Грузия должна была предоставлять автономию народу, переселившемуся всего каких-то два-три века назад с Северного Кавказа и никогда не имевшему на территории грузинского государства административного образования» (տե՛ս Տոպчиշվիլի Բ. Օсетины в Грузии: миф и реальность. Тб., 2009, с. 232–233):

<sup>51</sup> Տե՛ս և Մենտեշավիլի Ա. Նշան. աշխ., էջ 198:

<sup>52</sup> Земство в Осетии // БОРЬБА, 12. IV. 1919.

<sup>53</sup> Դզիձօև Վ. Դ., Դզուգաև Կ. Գ. Южная Осетия в ретроспективе грузино-осетинских отношений. Цхинвал, 2007, с. 76.

րի քաղաքականությունից դժգոհ օսերին: Այդ չափազանց կարևոր հարցում նրանք ցանկանում էին գործակցել օս Էսէռների հետ: Վերջիններս, լինելով դեմոկրատական թերին պատկանող սոցիալիստներ, բնականարար, չէին ուզում նեցուկ կանգնել խորհրդային իշխանության հաստատման օգտին միտված քարոզին: Հետևաբար, Էսէռների ու բոլշևիկների համագործակցությունն ուներ իր պարզ և հստակ սահմանները: Կողմանակից լինելով լիարժեք ազգային ինքնավարության ստեղծմանը Էսէռները եղան նաև հարավային օսերի ինքնորոշման ամենանվիրյալ ու հետևողական ջատագովները: Բոլշևիկներից նրանք տարբերվում էին այն կարենոր հանգամանքով, որ դեմ չէին սեփական ժողովրդի ինքնորոշման զաղափարը իրականացնել ՎԴ-ի սահմաններում: Նրանց չափավոր առաջարկությունները չէին կարող վնասել ՎԴ-ի ինքնիշխանությանն օսական շրջաններում: Վրացական կառավարության ոչ կառուցդական կեցվածքը, թերևս, ձախողեց օս Էսէռների հետ փոխշահավետ համագործակցության հեռանկարը: Պաշտոնական Թիֆլիսի կոշտ դիրքորոշումը օս Էսէռներին ստիպեց հովանավոր վնտերել արտարին աշխարհում: Նրանց դիմումը Անտանտի երկրներին, սակայն, դրական արձագանք չգտավ<sup>54</sup>: Դա, ի վերջո, օս զանգվածներին նետեց բոլշևիկ-

<sup>54</sup> ՀՕԱԽ-ի ծավալուն հուշագրում մասնավորապես ասված եր «Осетия должна быть в политическом отношении неделимой. В случае, если русский вопрос будет разрешен на мирной конференции путем перестройки России по принципу федерации, Осетия, <...> вполне рассчитывая на независимое существование в форме федеральной единицы, желает войти как таковая в российское государственное образование. Если же Кавказ оставляется одной из стран-союзниц, Осетия желает без посредников войти, также <...> в сферу влияния этой союзной державы. В случае, если союзники найдут необходимым изменить контуры политического объединения народов Кавказа, единая Осетия в силу исторических и экономических условий должна быть включена в северокавказское образование. В ожидании решения мирной конференции о судьбе осетинского народа, Осетия, в особенности Южная, принимает во внимание свое исключительное политическое положение, считает необходимым в целях защиты своей самостоятельности от грузинских посягательств, просить союзные державы взять ее под свое покровительство. <...> В случае, если союзники

ների գիրկը: 1919 թ. հոկտեմբերին Ռուկայի գավառակում բոլ-շեիկները ապստամբություն հրահրեցին, սակայն կառավարական զորքերը շուտով ճնշեցին այդ խոռվությունը:

Վրացական կողմը շեշտում էր, թե «ոս ինտելիգենտները պէտք է հասկանան, որ վրացիներին ու օսերին իրար դէմ կանգնեցնելը ոչ միայն վտանգավոր կը լինի վրացիների համար, այլ նաև ուղղակի կործանիչ կը լինի օսերի համար»<sup>55</sup>: *Oս էսէռները չէին ողջունում զինված պայրարը, ուստի նրանց և բոլշևիկների դաշինքը կազմալուծվեց: Օս մտավորականությունը, որի միջավայրում զորեղ էր էսէռների ազդեցությունը, չմիացավ բոլշևիկների պայրարին»<sup>56</sup>:*

Բոլշևիկների առաջնորդները, ինչպես հայտնի է, առերես պաշտպանում էին ազգերի ինքնորոշման սկզբունքը: Վրաստանի անկախությունը, սակայն, Լենինի կառավարությունը երկար ժամանակ չէր ճանաչում: Կրեմլն աշխատում էր ներսից պայրցնել ՎՆՀ-ն և «Հարավային Օսիան» դիտում էր իրքն հարմար հենակետ, որի վրա հենվելով կարելի էր իրականացնել բուն Վրաստանի խորհրդայնացումը: Ուստի, կոմունիստական առաջնորդները կարևորեցին հարավային օսերի ինքնորոշման ինդիքը<sup>57</sup>: *Ակգրնապես օս սակավաթիվ բոլշևիկների համար, որոնք պարտադրված հետևում էին կոմկուսի վերադաս մարմինների կարգադրություններին, իրենց ժողովրդի ինքնորոշման հարցն ուներ զուտ կիրառական նշանակություն: Նրանք այդ միջոցին դիմեցին, թերևս, իրենց ցեղակիցներին մերձենալու և նրանց մի-*

---

не примут просьбу о протекторате, Южная Осетия считает необходимым войти в Северо-Кавказскую республику и просит в этом случае у союзных держав защитить ее от возможных посягательств Грузии» (տե՛ս Զахаров В. А. и др. *Абхазия и Южная Осетия после признания: исторический и современный контекст*. М., 2010, с. 128–129):

<sup>55</sup> «Երտողձա» («Երթոր», 1918, № 69) օրաթերթից արտադպված հոդվածը տե՛ս՝ *Օսերի շարժումը // ՀՈՒԶՈՒ*, 29. III. 1918:

<sup>56</sup> *Воспоминания участников гражданской войны в Юго-Осетии*. Сталинри, 1957, с. 84.

<sup>57</sup> Блиев М. М. Южная Осетия в коллизиях российско-грузинских отношений. М., 2006, с. 356.

զավայրում ժողովրդականություն ձեռք բերելու համար: Բոլշևիկները հետզհետէ վարպետորեն փոխադրկապեցին խորհրդային իշխանության զաղափարը հարավային օսերի ինքնորոշման հարցի հետ: Նրանք նման քայլի դիմեցին՝ ելնելով մարտավարական նապատակներից, քանզի այլ կերպ անհնար էր հարավային օսերի համար հոգեհարազատ դարձնել կոմունիստական իշխանության անհրաժեշտության մասին միտքը: Հետազայտման այս երկու զաղափարներն այն աստիճան սերտաձեցին, որ օսբոլշևիկները դարձան իրենց ազգության ինքնորոշման գործի զիսավոր ջատագովներից մեկը:

1920 թ. մայիսին բոնկվեց օս բնակչության հերթական, սակայն Վրաստանի համար առավելապես վտանգավոր խոռվությունը: Ցիխինվալում ստեղծվեց Հեղկոմ, որը խորհրդային իշխանություն հոչակեց «Հարավային Օսիայի» ողջ տարածքում, նաև այն կցված հայտարարեց ԽՍՖՍՀ-ին: Մաս, ինչպես հայտնի է, տիտուր հետևանք ունեցավ. 1920 թ. ամռանը հարավային օսերի մի զգալի հատված կոտորածի ենթարկվեց:

Օրհասական այդ օրերին վրաց զինվորականությունը հրկիզում, ավերում և ոչնչացնում էր Ցիխինվալից մինչև Ռոկա գտնվող բնակավայրերը, ինչը օս բնակչության սովոր զանգվածին (շուրջ 20 հազ. մարդ) ստիպեց խուճապահը լքել հարազատ վայրերն ու հեռանալ Հյուսիսային Օսիա: Վրաց կառավարությունը նաև վճռեց վերջնականապես ավարտին հասցնել զինվորականների ձեռքով սկսված էթնիկ զոտումը: Տեղում մնացած օսերին առաջարկվեց տեղափոխվել Ղարայազի տափաստան կամ՝ Բորչալու, իսկ նրանց փոխարեն որոշվեց վերաբնակեցնել սակավահող վրաց լեռնականներին (Յնասուրներ, թուշեր և այլն)<sup>58</sup>: Սակայն ՎԴՀ-ի լուծարման պատճառով այդ ծրագիրը չիրագործվեց: 1922 թ. ստեղծվեց Հարավ-Օսական ինքնավար մարզը, ինչը մինչև ԽՍՀՄ-ի կազմաքանդումը երկրի ներքաղաքական ասպարեզից հանեց հարավային օսերի ինքնորոշման հարցը:

<sup>58</sup> Амия М. Путь грузинской Жиронды. Тифлис, 1926, с. 15.

**Այսպիսով, հանրագումարի բերելով զիտում շարադրած նյութը, կարելի է արձանագրել.**

- ✓ Վրաց վերնախավի որդեգրած քաղաքական կոշտ զիծը հարավային օսերին թույլ չտվեց իրազործել սեփական ինքնուրոշման ծրագիրը ՎՇ-ի սահմաններում,
- ✓ բոլշևիկուրյունը հարավային օսերի համար դարձավ էթնիկ զորահավաքի զլիավոր ազդակներից մեկը, ինչը սուր բախման տարավ Վրաստանի կառավարության հետ:

## ՎՐԱՑ - ԱԲԽԱԶԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1917 թ. ապրիլի կեսին վրացական քաղաքական հոսանքները համաձայնության եկան ապագա Վրաստանի ենթադրյալ սահմանների շուրջ նրա հնարավոր տարածքը բաժանելով «անվիճելի» և «վիճարկվող» շրջանների<sup>1</sup>: Վերջիններիս ընդգրկումը պետք է որոշվեր տեղի բնակչության հանրաքվեի միջոցով: Այս առումով Արխագիան դասվեց «վիճարկվող» ծայրազավառների կարգում: Արխագ գործիչները պահանջում էին Վրաստանից անջատ ազգային ինքնորոշում<sup>2</sup>: Նոյեմբերի 8-ին գումարված աբխազական ժողովում համագումարը ստեղծեց Արխազական ժողովրդական խորհուրդ (այսուհետև՝ ԱԺԻՆ), որը, արտահայտելով համագումարի կամքը, շտապեց հանդես զալ կազակների և լեռնականների շարագ-Արևելյան Սիությանն անդամակցելու օգտին: Վրացական քաղաքական շրջանակները բողոքարկեցին այս Սիության կազմում Արխագիայի ներզրավման հնարավորությունը: 1918 թ. փետրվարի 9-ին ԱԺԻՆ-ն և վրաց ազգային խորհուրդը մի համաձայնագիր կնքեցին, ուր արձանագրված էր, որ Արխագիայի քաղաքական կառուցվածքի ապագա ձևը պետք է մշակվի նրա սահմանադիր ժողովում՝ ենելով ինքնորոշման սկզբունքից<sup>3</sup>: Արխագները ցանկանում էին քաղաքական ինքնուրույնության հասնել միաժամանակ Վրաստանի հետ ունենալով բարիդրացիական հարաբերություններ՝ որպես հավասար հարեանի:

Ավանդաբար աբխազական ազնվականությունը մեծ հեղինակություն և, հետևաբար, գործուն ազդեցություն ուներ աբխազ հասարակության մեջ: Նրա ներսում սոցիալական հակասու-

<sup>1</sup> Տայարատացած օնթորուած. XX Տայարատացած. Ձ. 46.

<sup>2</sup> Տե՛ս և Պօ Կավկազ: Աճխազա // ԵՕՐԵԲԱ, 21. V. 1917.

<sup>3</sup> Տե՛ս և Արխագիայի ինքնավարութեան շուրջը // ԱՇԽԱՏԱԻ-ՈՒ, 27. XI.

բյունները զրեթե բացակայում էին՝ աբխազների սակավության և նրանց պատկանող մշակելի հողի բավարար լինելու հետևանքով: Աբխազ գյուղացիության մեծամասնությունը երկրագործությամբ չէր էլ զբաղվում և զերազանցապէս անասնապահ էր: Ընդհակառակը, բայտում կար աբխազ կալվածատերերի և հողագուրկ մեզրել գյուղացիների միջև: Օգտվելով հեղափոխությունից վերջիններս հրաժարվում էին հողավարձր վճարելուց: Ազգամիջյան հարաբերություններն ավելի սրբեցին, երբ սկսվեց հողի վերաբաշխման մասին սոցիալիստական քարոզչությունը: Մի կողմից բոլշևիկները, մյուս կողմից՝ վրաց «մենշևիկ» սոցիալ-դեմոկրատները փորձում էին աբխազ ժողովրդի ներսում հակամարտություն սերմացնել: Աբխազ մուավորականության սակավաթիվ ներկայացուցիչներն էլ պայքարում էին ազգային զաղափարի շուրջ իրենց ցեղակիցների բոլոր խավերի միասնության համար: Սակայն դա հաջողվեց իրականացնել աբխազքնակ զավառներից միայն մեկում՝ Կոդորիում: Աբխազների քաղաքական զիտակցությունը պատրաստ չէր ազգի առաջ ծառացած խնդիրների լուծմանը: Զիրխուա գյուղում և Մշիշտա գետի ափին կայացած Գուղառուսայի զավառի աբխազ գյուղացիության հավաքները ողջունեցին բոլշևիկների կարգախոսները: Ի հակադրություն դրա աբխազ ազնվականությունը և մուավորականության մի մասն ընտրել էին հյուսիսկովկասյան լեռնականների հետ միության ծրագիրը: Լեռնականների առաջնորդները խոստանում էին չմիջամտել Աբխազիայի ներքին գործերին: Սակայն Ռուսաստանի հարավում քաղաքացիական պատերազմի թեժացման պատճառով Կովկասի համախմբված լեռնականների միության կառավարության իշխանության տարածումը Աբխազիայի վրա այլևս իրական չէր:

Մինչդեռ երկրամասի մեզրել ազգաբնակչությունն ընտրել էր վրացամետ ուղի. Վրաստանից հեղափոխական քարոզչություն էր ծավալվում, որը հող էր խոստանում: Հողագուրկ մեզրել կապալագործներին սիրաշահելու քաղաքականություն էին վարում նաև տեղի բոլշևիկները: Վերջիններիս հաջողվեց իրապուրիչ կարգախոսներով զայթակղել մեզրել գյուղացիության մի մա-

սին ոչ միայն *Սուխումի* շրջանում, այլ նաև հարևան Զուգդիդիի գավառում: *Առաջացավ* Օսմանյան կայսրության տարածքում ապաստան զուած վտարանդի արխագ-մուհաջիրների<sup>4</sup> հետնորդ-ների հայրենադարձության ծրագիրը որպես հակակշիռ մեղքել-ներին: Լուրեր էին տարածվել, թե նրանց վերաբնակեցման համար արխագներն անհրաժեշտ են զոնում վտարել մեղքելներին Արխագիայից: Այս հողի վրա էլ ավելի սրվեցին ազգամիջյան հարաբերությունները:

*Սուհաջիրների* վերադարձի գաղափարը թելադրում էր, որ արխագներն ամուր կապ հաստատեն Թուրքիայի հետ: Նրանց թուրքամետությունն ամրապնդվում էր նաև կովկասյան լեռնականների մեջ նոյն տրամադրությունների ծավալմանը համընթաց: Չեչնենները և այլն ավանդաբար սովորված էին համախւանական քարոզությամբ և անսիջական կապ էին հաստատել Օսմանյան Թուրքիայում զոնվող հյուսիսկովկասյան մեծ համայնքի՝ «չեռքեզների» հետ<sup>5</sup>:

1917 թ. վերջին – 1918 թ. սկզբին վրաց քաղաքական շրջանակները պայքար սկսեցին Կովկասի համախմբված լեռնականների միության կողմից ծրագրավորվող պետության մեջ Արխագիայի ընդգրկման դեմ: Նրանք նաև նպատակ ունեին զերծ պահել *Սուխումի* շրջանի մեղքելներին արխագների ու նրանց դաշնակից լեռնականների հնարավոր ունագություններից: Վրաց գործիչներն արխագներին առաջարկում էին լեռնական-

<sup>4</sup> Բազմաթիվ արխագներ, ոֆոր լինելով Արխագական ինքնավար իշխանապետության վերանալուց (1864 թ.), պատմական հայրենիքից արտագաղթեցին 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմի ընթացքում:

<sup>5</sup> Гатагова Л.С. *Революция 1917 г. и этнополитическая ситуация на Кавказе // История народов России в исследованиях и документах.* М., 2004, с. 156.

<sup>6</sup> Ավարտելով Կովկասյան պատերազմը՝ Ռուսաստանը վերջնականութեան ամրագրեց իր կազմում Չեռքեզիան և նրան հարակից Սև ծովի ափը: Էթնիկական զոման հետևանքը եղավ հազարավոր լեռնականների հեռանալը սուլթանական Թուրքիա:

ների փոխարեն դաշինք կնքել մեզրելների հետ: Նրանք հույս էին փայփայում, որ դրա շնորհիվ երկրասասում լուրջ ազդեցություն և դերակատարություն կունենան: Տեղի մեզրելներն ավելի հեռու էին գնում՝ հայտարարելով, որ ցանկանում են Արխագիան ընդգրկել Վրաստանի կազմի մեջ: Դա տեղիք տվեց արխագների հակավրացական տրամադրությունների խորացմանը: Հարկ է նկատել, որ բաղաքական պայքարը Արխագիայում ձեռք էր բերում նաև ազգային երանգավորում, ինչը հետագայում մեծ չարիքների պատճառ դարձավ:

Այսրկովկասն անկախ հոչակելու պահին Սույսումի շրջանի տարածքը չէր վերահսկվում Սեյմի նորաստեղծ կառավարության կողմից: 1918 թ. ապրիլի 8-ին Արխագիայում, բացառությամբ Կոռորդի գավառի, հաստատվեցին խորհրդային կարգեր, սակայն առանց պետականության վերականգնման: Սույսումի Զինհեենկում (այսուհետն՝ ԶՀԿ) իրեն շհոչակեց որպես ազգային-պետական մարմին: ՌՍՖՍՀ-ի կազմում Կուբանա-Սևծովյան հանրապետության առաջացումից հետո ԶՀԿ-ն դիմել էր Եկատերինոդարում (այժմ՝ Կրասնոդար) գտնվող խորհրդային իշխանություններին՝ առաջարկով նրանց կցել Սույսումի շրջանը: Ուստի, արխագների մեծամասնությունը հրաժարվեց բոլշևիկյան կուսակցությանն աջակցելուց: Արխազ ժողովուրդը, որը դարերով ապրում էր յուրահասուկ սովորույթներով և ղեկավարվում էր իր ուրույն ազգային ավանդույթներով, չզայթակղվեց բոլշևիկների հրապուրիչ կարգախոսներով: ԶՀԿ-ի կարգադրությամբ ԱԺԽ-ն ցըվել էր, իսկ նրա անդամների որոշ մասը ձերբակալվել:

Բոլշևիկյան վտանգը (որը դիտվում էր իբրև հողի վերաբաշխում՝ հօգուտ տեղի մեզրելների) կրկին խթանեց արխազ իշխանների թուրքամետ դիրքորոշումը: Կալվածատեր ազնվականությունը պատրանք էր տածում, թե օսմանների օժանդակությամբ կկարողանա պահպանել իր հողային սեփականությունը: Նրանցից բոլշևիկների դեմ զինուժ խնդրելու ծրագիր էր մշակում: Եվ դա իրեն սպասել չտվեց, քանզի լիովին համապատասխանում էր թուրքերի ծավալապաշտական նկրտումներին: Նրանք արդեն որոշել էին զորք ուղարկել՝ Արխագիան զավթելու նպա-

տակով: Այդ վտանգը վրացական կողմին ստիպեց թուրքերից մեկ քայլ առաջ ընկնել և շուտափույթ գրավել Սովորումը:

Մինչև կոմունիստական կարգերի վերացումը՝ 1918 թ. մայիսի 17-ը, Արխազիան համարվում էր Խորհրդային Ռուսաստանի մաս:

1918 թ. հունիս-օգոստոս ամիսներին Արխազիայի Կողորդի գավառում արդեն դիրքավորվել էր ասկյարների մի գորախումբ, ինչը մեծ վրդովմունք առաջացրեց Վրաստանի քաղաքական շրջանակներում և ակտիվ քննարկման առարկա դարձավ վրացգերմանական ու գերմանա-թուրքական բանակցություններում: Թուրքական կողմը կտրականապես մերժեց Արխազիայից իր գորամասի դուրս բերման մասին գերմանացի բանագնացների առաջարկը: Ի բարեբախտություն, դեսանտը, ի վերջո, պարսության մատնվեց վրաց ու գերման զինվորականների, նաև վրա հասած տեղի մեջքել և հույն աշխարհագործայինների միահամուր ջանքերի շնորհիվ<sup>7</sup>:

Վրաց հասարակական կարծիքը վաղուց հակված էր Արխազիան դիտել իբրև պատմական Վրաստանի մասնարաժին: Հետևաբար, ձգուում կար նորակազմ հանրապետության տարածքին կցել նաև Սովորումի վարչական շրջանը: Վրաստանի անկախության հոչակման պահին Արխազիան կառավարվում էր Թիֆլիսում գտնվող վրաց ազգային խորհրդին ենթակա ուագմական ուժի կողմից, հետևաբար, երկրամասի ապագա կարգավճակի որոշման հարցում ՎՇՀ-ի կառավարությունը փաստացի ձեռք բերեց լուրջ դերակատարություն: Ընդունելով Գերմանիայի հովանավորությունը՝ վրացական կառավարությունը նրա պաշտոնական ներկայացուցիչներից ստացավ Արխազիայի նկատմամբ իր իրավունքի ճանաչումը<sup>8</sup>: 1918 թ. հունիսի 8–11-ին Թիֆլիսում ձեռք բերված պայմանագրով վաճառապետությունների համաձայն ԱԺԻՆ-ն մեկ ազգության հասարակական-քաղաքական կազմա-

<sup>7</sup> Մակամասն տե՛ս Մաթյան Բ. Վ. Արխազիայի կարգավիճակի հիմնահարցը 1917-1921 թթ., Եր., 2008, էջ 67-78:

<sup>8</sup> Ավալով Յ. Դ. Նշվ. աշխ., էջ 68-69:

կերպությունից պետք է վերակազմավորվեր երկրամասի կառավարման գերազույն մարմնի, սակայն իրականում ստացավ ներկայացուցական-խորհրդակցական կառույցի գործառույթ: Վրաց կառավարությունը, փաստորեն, կոպտորեն խախտեց արխագրանագնացների հետ կնքված գրավոր համաձայնությունը և հունիսի 18-ին Սուխումի շրջանը վերածեց իրեն ենթակա զինվորական գեներալ-նահանգապետության: Այսպիսով՝ արխագներին չհաջողվեց ստեղծել ոչ ազգային կառավարություն, ոչ եւ սեփական վարչակազմ:

Աժնի-ի անդամների մի մասը հույս ուներ հրավիրելու երկրամասի Սահմանադիր (Ազգային) ժողով և վերանայելու 1918 թ. հունիսի 11-ի համաձայնազիրը: Վրաստանի կառավարական ներկայացուցչներն էլ վարում էին դա թույլ չտալու քաղաքականություն: Նրանք ցանկանում էին Աբխազիայում ստեղծել ներկայացուցական մի թույլ մարմին և ի լուր աշխարհի հանրագույն սույն երկրամասի ազգաքնակցության՝ Վրաստանի կազմում մնալու «ազատ կամքի» մասին: Այլ խոսքով՝ պաշտոնական Թիֆլիսը ցանկանում էր Աբխազիայում տեսնել, նրա լիիրավ խորհրդարանի փոխարեն, զեմստվոյի մակարդակի մի մարմին, որը պետք է գրադարձ բացառապես տեղական ինքնակառավարման խնդիրներով: Այսպիսով՝ վրաց կառավարությունը շուտով մոռացության մատնեց հույժ կարևոր արխագների համար 1918 թ. հունիսի 11-ի համաձայնազիրը:

Նման անկայուն պահերին աճում էր Սուխումի շրջանի ոչ արխագրնակցության նշանակությունը և կարևորվում նրա վրաց իշխանության կողմը գրավելու հեռանկարը: Մարտավարական նկատառումներով վրաց պաշտոնյաները երբեմն աջակցում էին տեղի հայերին և հույներին՝ ի հակակշիռ անջատամետ արխագների: Վրացական տիրապետության կայացման գործում մեծ դեր է ունեցել սոցիալական խնդիրը, հատկապես հողային բարեփոխման հարցը, որի նշանակությունը կարևորվում էր երկրամասի բնակչության ստվար մասի երկրագործ լինելու հանգամանքով: Արխազիայի հողագուրկ, առավելապես մեզրել, հայ և հույն զյու-

ηαցիության աջակցիությունը շահելու նպատակով՝ վրաց իշխանությունները նրանց սեփական հողամասեր էին խոստանում:

Այսպիսով՝ վրացական գերակայության հաստատմանն Աբխազիայում նպաստեցին քաղաքացիական պատերազմը Ռուսաստանի հարավում, թուրքական վտանգն ու արխագ ազգայնական թևի ուժնձգությունները ոչ արխագ տարրի իրավունքների և ունեցվածքի նկատմամբ: Վրաստանի հովանու ներքո ինքնուրույն Աբխազիայի ստեղծման ծրագրի ձախողման գործին ոչ պակաս չափով նպաստեց ԱԺԽ-ի թուրքությունը: Բանն այն է, որ աբխազների միջավայրում եղանակ ստեղծող ԱԺԽ-ն, ի վիճակի չեղավ (հանուն արդարության նշենք, որ նման դժվարին պայմաններում չէր էլ կարող) ճիշտ կողմնորոշվելու և ապահովելու իր երկրի համար ավելի նախընտրելի կարգավիճակ՝ հնարավորինս քիչ կախվածություն Վրաստանից: ԱԺԽ-ի պառակտվածությունը, առանձին անդամների ձեռնարկած անխոհեմ քայլերն ակամայից նպաստեցին Աբխազիան հետզհետե Վրաստանի վարչական ենթակայության տակ բերելու վրացական գործիչների եռանդուն ջանքերին:

Աբխազիայի կարգավիճակի շուրջ հակասությունների սրումը հանգեցրեց մի իրադարձության, որի վերաբերյալ տեղեկությունները հակասական են: Վրաց հետազոտողների շրջանում այն տեսակետն է իշխում, թէ 1918 թ. հոկտեմբերի 9-ին «հակավրացական» թևին պատկանող ԱԺԽ-ի մի շարք անդամներ Սուխումում հակապետական հեղաշրջման վորք են կատարել<sup>9</sup>: Դրա հետևանքով վրաց կառավարությունն իսկույն որոշում է կայացրել ԱԺԽ-ի լուծարման մասին<sup>10</sup>: Միաժամանակ վերացվել է Աբխազիայի գործերի պատասխանատու նախարարի պաշտոնը (ինչը դարձյալ հակասում էր 1918 թ. հունիսի 11-ի դաշնագրի պահանջներին) և այդ ինստիտուտի գործառությունները

<sup>9</sup> Гамахария Дж., Гогия Б. Абхазия – историческая область Грузии. Тб., 1997, с. 85–86.

<sup>10</sup> Տե՛ս Աբխազիայում՝ Կառավարության հաղորդագրութիւն // ՀՈՐԻ-ԶՈՒ, 13. X. 1918:

հանձնարարվել էր կատարել Վրաստանի ՆԳՆ-ին: Այլ խոսքով՝ երկրամասում հաստատվել էր պաշտոնական Թիֆլիսի գործակալների անթաքույց կառավարումը: Ի տարբերություն վրաց պատմաբանների՝ արխազ հետազոտողները ԱԺԽ-ի հետազա աշխատանքի կասեցումը մեկնարանում են իրքն Արխազիայի և Վրաստանի փոխարարերությունների հնարավոր վերանայումը արգելելու քայլ<sup>11</sup>:

Մենք, սակայն, հակված ենք կարծելու, որ ԱԺԽ-ի լուծարման բուն պատճառն ընտրական նոր օրենքի շուրջ ծայր առածքանավեճն էր: Վրացական կողմը պահանջում էր համընդհանուր, հավասար, ուղղակի ու զաղտնի քվեարկությամբ վերընտրել ԱԺԽ-ի կազմը և այդ կառույցը համալրել համամասնական ներկայացուցչությամբ: Առաջին հայացքից դա ժողովրդավարական էր ու արդարացի: Արխազական կողմը, սակայն, դեմ դուրս եկավ դրան, քանզի այդ պարագայում ընտրելու և ընտրվելու իրավունք էր ստանում Արխազիայի եկվոր ազգաբնակչությունը: Այսինքն «ժողովրդավարական» ընտրությունների պարագայում արխազները, կամա թե ակամա, ԱԺԽ-ում կորցնում էին իրենց ճնշող մեծամասնությունը:

Այս առումով կարևորվում է երկրամասում արխազների թվաքանակի հարցը, որի մասին 1910-ական թվականների համար ճշգրիտ տեղեկություններ, ցավոր, չկան: Գաղտնիք չէ, որ խնդրի կապակցությամբ արխազական և վրացական զիտական ու քաղաքական շրջանակների մոտեցումներն իրարամերժ են: Արխազները պնդում են, որ իրենց հայրենիքում ազգային այլ տարրերը (հատկապես վրացիները) խնդրու առարկա ժամանակաշրջանում կազմել են ազգաբնակչության ոչ էական հատվածը, և նրանց թվաքանակի զգալի աճը վերագրում են առանձնապես խորհրդային իշխանության տարիներին տեղի ունեցած նպատակալաց վերաբնակեցմանը: Սակայն փաստերը փոքր-ինչ այլ պատկեր են ներկայացնում. ուստիմնասիրկող ժամանակահատվածում արխազ բնակչությունը, թերևս, երկրամասի միայն հա-

<sup>11</sup>Տե՛ս Հայութ Աբխազիա. Գудայտա, 1993, ս. 305–306.

բարերական մեծամասնություն էր կազմում<sup>12</sup>: ԱԺԽ-ն համալրված էր գերազանցապես արխազներով՝ լիազորված ազգակից տղամարդկանց հավաքներում՝ բաց քվեարկությամբ, ինչը վրաց կառավարական շրջանակները «հակադեմոկրատական» էին համարում: Հիշյալ կառույցում հայկական, ուստական, վրացական և հունական ազգային տեղական խորհուրդների սակավաթիվ ներկայացուցիչները եղանակ չէին ստեղծում: Այս կապակցությամբ հայրէ է ուշադրությունը սևեղել ոչ պակաս կարևոր նս մի փաստի վրա: Ցանկանալով եկվոր բնակչությանը (առաջին հերթին մեզրել-վրացիներին) օժտել ընտրելու իրավունքով՝ պաշտոնական Թիֆլիսը հույս էր փայփայում, որ դրա միջոցով կարող է Արխազիայում ստեղծել վերահսկելի մի ներկայացուցչական մարմին, որն այլևս իր ձայնը չի բարձրացնի Երկրամասի ինքնորոշման օգույն: Ցնայած բուտն բննարկումներին՝ 1917-1918 թվականներին այդպես էլ չհաջողվեց գումարել որևէ լիազոր մարմին, որն իրավասու կլիներ խուելու Արխազիայի բազմազգ բնակչության անունից: Երկրամասի կարգավիճակը տակավին մնում էր անորոշ:

Բոլոր վայրիվերումները, որոնք տեղի էին ունենում Արխազիայի հիմնահարցի շուրջ, նրա կառավարման ասպարեզում ստեղծում էին խառնաշփ: Այս երևույթն ուներ և՛ օրյեկտիվ, և՛ սուրյեկտիվ պատճառներ: Երկրամասն արխազական ազգային ինքնավարության վերածելը դիմադրություն էր հանդիպում նրա բազմազգ լինելու պատճառով: Արխազիայի ինքնավարության ձևական բնույթը պայմանավորված էր նաև վրաց քաղաքական շրջանակներում տարածված կարծիքով, ըստ որի երկրամասին իրական ինքնավարության տրամադրումը կհանգեցնի դրա տարածատման: Արխազիայի ինքնավարության անքակտելիության մասին Վրաստանի կառավարության հավաստիացումները հեռու էին իրականությունից: Այսպիսով՝ 1918 թ հունիսի 11-ին ձեռք բերված վրաց-արխազական պայմանավորվածությունները չունեցան գործնական ու իրավական որևէ շարունակություն Վրաս-

<sup>12</sup>Տե՛ս Գյորկո-Կրյախին Վ.Ա. Աբխазիա. Մ., 1926, ս. 8-9.

տանի կազմում Աբխազիայի կարգավիճակի կարգավորման հարցում:

1919 թ. փետրվարին ընտրված ԱԺԻՆ-ն ենթադրվում էր որպես օրենսդիր մարմին, սակայն մինչև Աբխազիայի սահմանադրության հաստատումը նրա իրավունքների շրջանն ու պատասխանատվության ծավալը դեռ հստակ որոշված չէր: Այդ իսկ պատճառով ԱԺԻՆ-ն ուներ լրկ ներկայացուցչական գործառույթ: ԱԺԻՆ-ի և նրա կողմից այնուհետև ձեւավորված տարածքային գործադիր իշխանության «Կոմիսարիատ»-ի լիազորությունները, ժամանակակիցների վկայությամբ, ձեւական էին, քանի որ իշխանական իրական լծակները վրաց զինվորական հրամանադրության ձեռքում էին<sup>13</sup>: Հարկ է փաստել, որ երկրամասի կառավարման գործում զինվորականների շափազանց մեծ դերը ակամայից ընդունում են նաև վրաց պատմաբանները<sup>14</sup>:

Հատուկ պետք է նշել, որ, ըստ 1918 թ. հունիսին կնքված համաձայնագրի պահանջների, Աբխազիայի կառավարման մարմինները դիտվում էին իրեն «ինքնավար»: Նորընտիր ԱԺԻՆ-ի բացման նախօրյակին վրաց կառավարությունը, երկուդելով ուսական «սպիտակ» գորքերի վտանգից, շուապեց հայտարարել, թէ Աբխազիան իր ներքին բոլոր գործերում ինքնավար է: ԱԺԻՆ-ին իրավունք էր տրվում իր ձեռքը վերցնելու վարչական կառավարման դեկր, ներառյալ զեմստվոյի դեկավարման գործառույթը: Միաժամանակ շեշտվում էր, որ Աբխազիայի ինքնավար մարմինների լիազորություններն ավելի մանրամասն կհատակեցվեն ապագա սահմանադրությամբ<sup>15</sup>: Ընդսմին, մութ և անհականալի էր մնում՝ ո՞ր սահմանադրությամբ՝ Վրաստանի, թէ Աբխազիայի: Եվ պատահական չէ, որ դա շուտով լուրջ տարածայնությունների տեղիր տվեց: Պետք է փաստել, որ ինքնավար կառավարման մեխանիզմը կարգավորող օրենսդրության բացա-

<sup>13</sup> Тарнава М. Друзья и враги демократии Абхазии // СОЦИАЛ-ДЕМОКРАТ, 20. X. 1919.

<sup>14</sup> Гамахария Дж., Гогия Б. Նշանակությունների առաջնային գործառույթը // Աբխազիայի պատմությունը. 1917-1921 թթ. Խոշորագույն առաջնային գործառույթների մասին. Տարբերակ. 1921 թ. Երևան. էջ 82:

<sup>15</sup> Տե՛ս Մետնա յականի առաջնային գործառույթների մասին մասին պատմությունը // Աբխազիայի պատմությունը. 1917-1921 թթ. Խոշորագույն առաջնային գործառույթների մասին. Տարբերակ. 1921 թ. Երևան. էջ 82:

կայության պարագայում պաշտոնական Թիֆլիսի կողմից Արխագիայի ինքնավարության սկզբունքի վերահաստումը հանգեցրեց հակասական հետևանքների:

«Կոմիսարիատի»-ի վերահսկման ներքո պետք է գործեին տեղական ինքնակառավարման մարմինները: Այդ վերադաս ատյանը, սակայն, չուներ իրավունքների և պարտականությունների սահմանված չափ ոչ միայն կենտրոնական հիմնարկների, այլ նաև տեղական ստորադաս վարչակազմի նկատմամբ: Երկրամասում զավառական գեմստվոնների լիազորությունները սահմանափակ էին իրենց և կենտրոնական կառավարության միջն ևս մի լրացուցիչ օղակի՝ ԱԺԻՆ-ի և «Կոմիսարիատ»-ի առկայության պարագայում: Արխագիայի գեմստվոնները դժգոհ էին, քանի որ «Կոմիսարիատ»-ը իր վրա էր վերցրել երկրամասի բարձրագույն գեմստվոյական մարմնի գործառույթը աշխատելով շատ լայն մեկնաբանել իր լիազորությունները տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ: Գեմստվոնների բոլոր որոշումները պարտադիր վերաքննվում էին «Կոմիսարիատ»-ի կողմից<sup>16</sup>: Հստ էության, գեմստվոնների «ըմբուստությունը» անհիմն չէր: «Ինքնավար» ԱԺԻՆ-ի և «Կոմիսարիատ»-ի գոյության իրողությունն ակամայից խլում էր երկրամասի զավառական վարչակազմից նրա լիազորությունների նշանակալի մասը, որի հետևանքով այդ օղակների փաստացի կարգավիճակը, թերևս, նոյնական չէր Վրաստանի այլ զավառների գեմստվոններին: Հստ այդում մեզրելաքնակ Սամուրզականի զավարի առաջին իսկ գեմստվոյական ժողովը միաձայն որոշում ընդունեց՝ պահանջելով անսիջական կապ Թիֆլիսի հետ՝ առանց «սուխումյան իշխանությունների» միջնորդության<sup>17</sup>: Մինչ ԱԺ-ում քննարկվում էր «Գեմստվոնների միության մասին» համապատասխան օրինագիծը, Արխագիայի գեմստվոններն առաջ անցնելով շտապեցին ձևավորել իրենց միությունը: 1920 թվականից արդեն գոյություն ուներ Սուխումի շրջանի զավառական գեմստվոնների «կենտրո-

<sup>16</sup> Տե՛ս Համապատասխան օրինագիծը // ԲՈՐՅԱ, 28. XII. 1919.

<sup>17</sup> Տե՛ս Համապատասխան օրինագիծը // ԲՈՐՅԱ, 26.VI. 1919.

նական» վարչությունը<sup>18</sup>: Ենթադրվում էր, թե «Կոմիսարիատ»-ի բոլոր լիազորությունները կանցնեն այդ կառույցին: Հաստ էության, Աբխազիայում չկար և ոչ մի լիազոր մարմին, և ոչ էլ տեղական մի հիմնարկություն, որը առօրյա աշխատանք կատարելիս իր հայցը չհառեր դեպի Թիֆլիս<sup>19</sup>:

ԱԺԻՆ-ի շրջանակներում գործող աբխազական ընդդիմությունն իր երկրի համար պահանջում էր պետական բնույթ կրող ինքնավարություն: Այդ պահանջը ամբողջական դարձնելու համար հարկ էր ԱԺԻՆ-ն օժնել օրենսդիր, իսկ «Կոմիսարիատ»-ը՝ լիիրավ պետական իշխանությամբ: Սակայն պաշտոնական Թիֆլիսը հասմանայն չէր դրան գտնելով, որ դա լրջորեն կվնասի Վրաստանի «ամբողջականությանը» և «ինքնիշխանությանը»: Եվ ուժը նրա կողմն էր:

Այսպիսով՝ իրադարձությունների բերումով Աբխազիայի «ինքնավար» մարմինները հայտնվել էին միանգամայն ավելորդ օղակի դերում: Այս կարևոր իրողությունը, որն օրյեկտիվ հիմք ուներ, չեն նկատել և, հետևաբար, չեն լուսաբանել ոչ աբխազ, ոչ վրաց հետազոտողները: Վրաց պատմաբանները, այնուամենայնիվ, պնդում են, որ ՎԴՀ-ի շրջանակներում Աբխազիան օգտվում էր ինքնավարությունից: Սակայն նրանք լուր են մնում կամ նրանկատ շրջանցում են այդ ինքնավարության բնույթին որևէ որակ տալու հրամայական պահանջը: Ավելին՝ արտահայտում են այն թյուր կարծիքը, թե 1919 թ. մարտից Աբխազիան «հանրապետության» կարգավիճակ է ունեցել<sup>20</sup>, մի բան, որ չի համապատասխանում իրականությանը: Աբխազիան այդ իրավունքը, ինչպես հայտնի է, ձեռք բերեց ուղիղ երկու տարի անց՝ ՎԴՀ-ի լուծարումից հետո: Իսկ ինդըրը առարկա ժամանակաշրջանում նա օժտված էր միայն «զեմստվոյական ինքնավարությամբ»<sup>21</sup>:

<sup>18</sup> Տե՛ս Դաշնակցականները և Սուխումի Հայոց ազգային խորհուրդը // ԲԱԱՆՎՈՒՐԻ ԶԱՅՆ, 3. Խ. 1920:

<sup>19</sup> Տե՛ս Աճխատա // СЛОВО, 20. VIII. 1920.

<sup>20</sup> Silogava V. & Shengelia K. Նշվ. աշխ., էջ 214:

<sup>21</sup> Манляян Б.В. К вопросу о политическом статусе Абхазии (март 1917–февраль 1921 гг.) // ВЕСТНИК Российской–Армянского Университета

Հարկ է առանձնակի շեշտել, որ վրացական կողմը միտուս ուներ նաև սահմանափակելու արխազների իրավական կարգավիճակը ազգային-մշակութային ինքնավարության շրջանակներում<sup>22</sup>: Վրաստանի իշխող վերնախավը պատրանք ուներ, թէ այս կերպ կկարողանա ի չիր դարձնել քաղաքական լայն ինքնավարության մասին արխազների երազանքը:

Պատմությունը, սակայն, ընթացավ այլ ուղղով: Համբողիանուր սկզբունքով ընտրված Արխագիայի ժողովրդական խորհուրդը (այսուհետև՝ ԱԺԻՆ) 1919 թ. մարտի 20-ին ընդունեց «Խնքնավարության մասին ակտ»-ը, ըստ որի՝ երկրամասի վերջնական իրավական կարգավիճակը պետք է որոշեր նրա սահմանադրությունը: Արխագիայի «մենքնիկ» սոցիալ-դեմոկրատները, որոնք ԱԺԻՆ-ում մեծամասնություն էին կազմում, հանդես եկան մարզային խնքնակառավարման, իսկ ընդդիմությունը՝ քաղաքական լայն խնքնավարության պահանջով: ԱԺԻՆ-ի շրջանակներում գործող «անկախ սոցիալիստները», ինչպես նաև հետազյում առաջացած «միջազգայնականների» (ինտերնացիոնալիստների) խմբակցությունն արիազ հասարակության ներսում տարածում էին Խորհրդային Ռուսաստանի հետ մերձեցման գաղափարը: «Հակավրացական» պայքարի դրոշն անցավ արիազ սոցիալիստական տարրերի ձեռքը, ովքեր ակտիվ համագործակցում էին բոլշևիկյան ընդհատակի հետ: Ենթակա հայտնի նպատակներից վերջիններս ձգուում էին վարկաբեկել անկախ Վրաստանի կազմում Արխագիայի խնքնավարության գաղափարը: Ինչ վերաբերում է արիազ ազգային մտավորականությանը, ապա նա առաջ էր քաջում Արխագիայի ու Վրաստանի պետական հավասարության գաղափարը, որի դեպքում նրանց փոխհարաբերությունները պետք է լինեին համադաշնային<sup>23</sup>:

*Աբիսագիայի սահմանադրության մշակման ընթացքում*

(гуманитарные и общественные науки). Ер., 2009, № 2, с . 27-43.

<sup>22</sup> Съезд Учредительное собрание Грузии. Запрос националь-демократов о Сухумском округе // КАВКАЗСКОЕ СЛОВО, 5. VIII. 1919.

<sup>23</sup> Ст. II Абхазия // СЛОВО. 5. VIII. 1920.

պարզվեց, որ ընդդիմության նպատակն է Վրաստանի հետ ստեղծել թույլ և ժամանակավոր դաշինք, որպեսզի հետագայում՝ հարմար պահի, կարողանային խզել կապը նրա հետ և Արխագիան շրջել դեպի քաղաքական այլ կողմնորոշում։ Հստ վրաց պատմաբանների, իրազեկ լինելով այդ նպատակներին պաշտոնական Թիֆլիսը գրավել էր զգուշավոր դիրք և ամեն կերպ ջանում էր հետաձգել Արխագիայի սահմանադրության վավերացումը<sup>24</sup>։

Հիշեցնենք, որ Վրաստանի պետական կարգը՝ հաստատված ՍԺ-ի կողմից, ունիտար (միահեծան) հանրապետություն էր։

Արխագական երկրամասի սահմանադրության նախագիծը քննարկվել է արխագ երեք պատվիրակությունների մասնակցությամբ Թիֆլիսում 1919 թ. սեպտեմբերից մինչև 1920 թ. նոյեմբեր ամիսը։ Վրաց պետական և քաղաքական շրջանակները ձախողում էին համատեղ աշխատանքը, քանզի զոնում էին, որ Արխագիայի սահմանադրության մշակումը վաղաժամ քայլ է։ Հստ նրանց երկրամասի վերջնական իրավական կարգավիճակը պետք է որոշվի միմիայն Վրաստանի համապետական սահմանադրությունն ընդունելուց հետո։

Վրաստանի կազմում իր հայրենիքի իրական կացությամբ մտահոգ արխագ հասարակայնության կարծիքը, նրա տրամադրությունները արտահայտում էր Թիֆլիսում լույս տեսնող մամուլը, որի էջերում արձանագրված էր, թե «Արխագիայի ինքնավարությունը, որպես իրողություն, դեռևս գոյություն չունի և պետք է ստեղծվի»<sup>25</sup>։ ՍԺ-ի լիազոր պատվիրակության կարծիքով, որը 1920 թ. նոյեմբերին Թիֆլիսում կազմել էր Վրաստանի կառավարությանը հասցեազրված հայտարարություն, Վրաստանի և Արխագիայի փոխհարաբերությունները օրինական չձևակերպվեցին, հետևաբար, իրավաբանորեն պարտադիր չէին կողմերի համար<sup>26</sup>։

<sup>24</sup> Гамахария Дж., Гогия Б. Նշվ. աշխ., էջ 112:

<sup>25</sup> Տե՛ս Աբխазия // СЛОВО, 20. VIII. 1920.

<sup>26</sup> Արխագիայի ժողովրդական խորհրդի հուշագիրը Վրաստանի կա-

1921թ. փետրվարին Խորհրդային Ռուսաստանի քանակի ներխուժման պայմաններում Վրաստանի ՍԺ-ն հավանություն տվեց «Ինքնավար Արխագիայի կառավարման մասին ժամանակավոր կանոնադրության»-ը: Ենթակա և արխագ պատմաքանները միասնական են այն հարցում, որ չափազանց ուշացած այս որոշումն այլնս գործնական ոչ մի նշանակություն չուներ<sup>27</sup>:

Հանրապումարի բերելով զիսում շարադրված նյութը՝ կարելի է եղրակացնել.

- ✓ Արխագիայում ՎԴՀ-ի գերակայության հաստատմանը նպաստեցին քաղաքացիական պատերազմը, թուրքական վտանգը և արխագ ազգայնական թերի ոտնձգությունները ոչ արխագ տարրի իրավունքների նկատմամբ,
- ✓ Վրաստանի հովանու ներքո ինքնուրույն Արխագիայի ստեղծման ծրագիրը ձախողվեց՝ հիմնականում երկրամասի կառավարման գործում ԱԺԽ-ի անկարողության հետևանքով,
- ✓ ԱԺԽ-ի պառակտվածությունը, նրա առանձին անդամների ձեռնարկած անխոհեմ քայլերն ակամայից նպաստեցին Արխագիան Վրաստանի վարչական ենթակայության տակ բերելով վրաց գործիչների ջանքերին,
- ✓ Արխագիայի կարգավիճակի հիմնահարցը չգտավ իր փոխընդունելի լուծումը ՎԴՀ-ի գոյության շրջանում, հետևաբար արխագ ժողովրդի ինքնորոշման հարցը մնաց նրա քաղաքական օրակարգի մեջ:

ռավարութեան // ԱՇԽԱՏԱՒՐՈՐ, 26. XI. 1920:

<sup>27</sup>Տե՛ս Լակобա Ս. Յ. Очерки политической истории Абхазии. Сухуми, 1990, с. 78. Նաև՝ Գамахария Ջ.՝, Գогիա Բ.՝ Նշվ. աշխ., էջ 112:

## ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹՈԶԱԽԸ ԱԲԽԱԶԻԱՅՈՒՄ

Արխագիայի հայ բնակչության թվաքանակը 1910-ական թվականներին, ըստ տարրեր աղբյուրների, տատանվում էր 25000-ից մինչև 30000<sup>1</sup>: Արխազահայությունը ոչ միայն մեծարիկ էր, այլև որոշ շրջաններում էթնիկ խմբերի մեջ թվաքանակով առաջինն էր, բնակչում էր հոծ զանգվածով և լիովին տիրապետում էր իր ազգային լեզվին: Նրանց 1/6 բնակչում էր Սովորումում: Արխազահայության 87%-ը զբաղվում էր գյուղատնտեսությամբ, իսկ առևտում, արհեստավորական և արդյունաբերական արտադրություններում ընդգրկված հայազգի անձանց մասնաբաժնը չէր գերադասում 7%-ը<sup>2</sup>: Ռուսական տիրապետության շրջափուլում իշխանությունը երկրամասի հայ բնակչությանը, որի մեծ մասը զբաղվում էր ծխախոտագործությամբ, համարում էր ժամանակավոր վերաբնակիչ և ոռուսաստանյան հպատակություն չէր տրամադրում: Ցարական իշխանությունները, ունենալով հասուկ նպատակ՝ ոռուսներով բնակեցնել Արխազիայի առափնյա տարածքը, մեջքնդեզ հալածական միջոցներ էին ձեռք առնում վարձակալ հայ թուրքահպատակ զաղթականների դեմ՝ արհեստական միջոցներով նրանց դրւս հանելու համար: Եվ քանի որ դա վնասակար էր տեղի խոցոր կալվածատերերի շահերին, ապա օտարահպատակ հայերի դիմումները պաշտպանություն էին գտնում նրանց կողմից և արտաքսումն անորոշ ժամկետով հետաձգվում էր, իսկ տարիներն այդպես անցնում էին...

Հայերը մեծ դերակատարություն ունեցան երկրամասի տնտեսական զարգացման գործում: Նրանց եկամուտները հնա-

<sup>1</sup>Տե՛ս ՀԱՍ, ֆ. 200, ց. 1, գ. 409, թ. 11 և 60:

<sup>2</sup>Տե՛ս Չумалов Մ. Յ. Этнокультурное развитие армян в Абхазии // В сб.: Малые и дисперсные этнические группы в Европейской части СССР. М., 1985, с. 108–109.

րավորություն էին տալիս կանխիկ վճարել կապալավարձը։ Փոխահավետ հարաբերությունների հաստատումը նպաստում էր արխագ հողատերերի և հայերի միջև բարիդրացիական կապերի ամրապնդմանը։ Եվ ոչ միայն այդ պատճառով։ Այսպես՝ արխագ ազգագրագետ և լուսավորիչ Միմոն Բասարիան ՀՀ դարի սկզբին գրում էր, որ «հայերը <...> շատ զգույշ են արխազների նկատմամբ, ընդունում են արխազների պատմական, իրավական և բնիկության իրավունքները տարածքի նկատմամբ, իրենց Արխագիայում համարում են հյուր, հաճույքով բացում են իրենց դուները արխազների առջև և ամեն կերպ փորձում են ընդօրինակել նրանց հյուրասիրությունը։ Հայերի մեծ պատվին պետք է վերագրել նաև այն, որ այն միակ ազգն էր Արխազիայում, որը խնամքով էր վերաբերվում հնագույն արխազական տեղանուններին։ Նրանց բոլոր գյուղերը կրում են հնագույն արխազական տեղանուններ»<sup>3</sup>։

Արխազների և մեզրեների շահերը, սակայն, բախվում էին, քանի որ վերջիններս, մշակելով զյսավորապես եզիպտացորեն, չկարողացան շահավետ հարաբերություններ հաստատել արխագ հողատերերի հետ։ Մեզրել գյուղացիների միջավայրում նպաստավոր պայմաններ էր ստեղծվել հեղափոխական և սոցիալիստական քարոզության համար, ինչը ևս անընդունելի էր արխագ ազնվականությանը։

Հեղափոխական ցնցումները Ոռուսաստանում արմատապես շրջեցին քաղաքական իրադրությունը նաև Արխազիայում։ Հայտնի է Սուլիստի քաղաքազուխ Վ. Զիմիկվիշվիլու 1918 թ. փետրվարին արած հավաստումն այն մասին, թե արխազներն հաշտ դիրքորոշում ունեն երկրամասի բոլոր ազգությունների նկատմամբ<sup>4</sup>։ Ուշադիր ժամանակակցի վկայությամբ, «իրենց [իմա՝ արխազների – Բ. Ս.] յարաբերությինը դէպի շրջապատի ազգերը առերես լաւ է – բարեկամական, բայց ներքուստ վատ են

<sup>3</sup> Ականվ Ա. Արխազիայի հայերը անցեալում եւ ներկայում // Համշէն եւ համշէնահայութին, Երևան-Պերութ, 2007, էջ 82:

<sup>4</sup> Պո Կավказу: Ծyxum // КАВКАЗСКОЕ СЛОВО, 27. II. 1918.

տրամադրւած դեպի հայերը, մանաւանդ դեպի մինզրելները: Վերջիններիս հետ յարաբերութիւնը աւելի սրւած է նրա համար, որ մինզրելները ուստահպատակ լինելով՝ կարող են հողային խնդրում մեծ դեր խաղալ ի վնաս արխագ իշխանների և կալւածատէրերի՝ իսկ հայերը որպէս տաճկահպատակ զաղթականներ՝ այդ չեն կարող անել: Նրանց թվում է, թէ մինչև իսկ պետական օրէնքի ոյժով հայերին կարող են հեռացնել իրենց երկրից և այդպիսով ազատած կը լինեն իրենց հողերի սոցիալիզացիայից<sup>5</sup>: Ըստ այդմ, արխագ ազնվականություննը սկսել էր մշակել էրնիկական գուման ծրագրեր, որի նպատակն էր փրկել իր ժառանգական հողային տիրույթները համայնացումից: Արխազների հակահայկական տրամադրությունները, անջուշ, սնուցվում էին նաև Թուրքիայից եկած գործակալների միջոցով: Իրականում, սակայն, հողային վերափոխման զինավոր ջառագովները մեզրելներն էին, որի հետևանքով «ափինազների ու վրացիների յարաբերութիւնը [ևս] սրված է»<sup>6</sup>: Ըստ Սուլյուսի քաղաքային դումայի իրավասու իշխան Նիկո Թավդզիրիձեի, արխագ գյուղացիները երազում էին երկրամասից վտարել վրացիներին, ընդհանրապէս բոլոր վարձակալներին և ինքնուրույն վերաբաշխել նրանց կողմից մշակվող հողամասերը<sup>7</sup>: Ուստական կայսրության տապալումից հետո արխազական ազգային շարժման մի շարք գործիչներ առաջ քաշեցին Թուրքիայից մուհաջիրների հայրենադարձության զաղափարը և Արխազիայի հայերին դիտելով ժամանակավոր վերաբնակիչներ՝ պահանջում էին նրանց հեռացնել<sup>8</sup>: Լայն տարածում ուներ «Արխազիան՝ արխազների համար» կարգախոսը: Եվ իրոք, այդ ուղղությամբ արխազների կատարած առաջին քայլերից մեկը եղավ Սուլյուսի շրջանի թուրքերին տեղի հայերի դեմ ոտքի հանելն էր: Հաղորդվում էր

<sup>5</sup> Արշալոյս Գ. Թիֆլիսից – Ճիւսիսային Կովկաս // ՀՈՐԻԶՈՆ, 24. IV. 1918:

<sup>6</sup> Սուլյուսի դէպքերը // ՀՈՐԻԶՈՆ, 8. III. 1918:

<sup>7</sup> «Աճարական» («Արքարթվելո»), 4. VII. 1919.

<sup>8</sup> ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 409, թ. 61:

նաև, որ «ավխազները հետզհետէ զօրանալով իրենց վերաբեր-  
մունքը փոխում են ինյերի հանդեպ և եկվորը թիւրքերին ու  
պարսիկներին գէնք են բաժանում: Գիւղերում սպառնում են հա-  
յերին եւ պահանջում, որ հեռանան այդ հողերից: Տեղական հայոց  
կոմիտէն միջոցներ է ձեռք առնում այդ բանն արգելելու համար»<sup>9</sup>:

Ինչպես ողջ հայ ժողովուրդը, արխազահայ հասարակու-  
թյունը բազմակուտակ հարցերի լուծումը, նախ և առաջ, ևս տես-  
նում էր առկա ուժերի միավորման միջոցով շարունակելու գոյա-  
պայրարք՝ դիմակայելու թուրք նվաճողների ծրագրերին:

1918 թ. հունվարի 7-ին Սուլիսումում տեղի ունեցավ բազմա-  
մարդ հավաք, որի մասնակիցները, լսելով Թիֆլիսի Արևելահա-  
յոց ազգային խորհրդի ներկայացուցիչ Արտաշես Արենյանի գե-  
կուցումը, միաձայն որոշեցին պաշտպան կանգնել Վտանգված  
Հայրենիքին, ջերմ ցանկություն և պատրաստակամություն հայտ-  
նեցին իսկույն հավաքագրվել հայկական ազգային գնդերի շար-  
քերը: Հավաքում կազմվեցին Սուլիսումի հայ բնակչության ազգա-  
յին (նախազահ՝ Հակոբ Տերտերյան) և զինվորական (նախազահ  
սպա Մելյան) խորհուրդները<sup>10</sup>: Շուտով Սուլիսումից ուղամաճա-  
կատ մեկնեց հայ կամավորների առաջին խումբը<sup>11</sup>: Շունվարի 28-  
ին կայացավ նաև Գուղառուտայի զավարի հայ ազգաբնակչության  
ժողովը, որը նույնպես ձևավորեց ազգային (նախազահ՝ Համա-  
զասպ Եղիսերյան) և զինվորական (նախազահ՝ բժիշկ Օհանջան-  
յան) խորհուրդները<sup>12</sup>: Հետևելով Սուլիսումի և Գուղառուտայի օրի-  
նակին՝ Գագրայի հայերի ազգային խորհուրդը 1918 թ. փետրվա-  
րի 25-ին ևս հայտարարեց զինակոյ, որը, սակայն, չիրականա-  
ցավ, որովհետև «սկսվել էին բոլշևիկյան յարձակումները...»<sup>13</sup>:

1918 թ. փետրվարին Արխազիայի բոլշևիկների կողմից երկ-  
րամատում խորհրդային կարգերի հաստատման փորձը ձախող-

<sup>9</sup> Սուլիսումի դէպքերը // ՀՈՐԻԶՈՆ, 8. III. 1918:

<sup>10</sup> Սուլիսում // ՀՈՐԻԶՈՆ, 10. I. 1918:

<sup>11</sup> Хроника: армяне и фронт // КАВКАЗСКОЕ СЛОВО, 10. I. 1918:

<sup>12</sup> Գուղառուտ // ՀՈՐԻԶՈՆ, 30. I. 1918:

<sup>13</sup> Արշալոյս Գ. Թիֆլիսից - Հիւսիսային Կովկաս // ՀՈՐԻԶՈՆ, 26. IV.

վեց: Կոմունիստների հանդես գալը դիտարկվեց որպես եկվոր ազգույթունների օգտին հողի վերաբաշխման ուղղված քայլ, ինչն էլ ավելի խթանեց արխագ ազնվականության թուրքամետ դիրքորոշումը: Նա մտադրվել էր բոլշևիկների դեմ օսման թուրքերից դեսանտ խնդրել<sup>14</sup>: Թուրք-արխազական դաշինքի վտանգը լարված իրադրություն ստեղծեց, «Թուրքությունը հայերի գինակոչը»<sup>15</sup>, ուստի և արխազահայ կամավորների ռազմաճակատ ուղարկելու որոշումը կասեցվեց:

Արխազահայության լիազորների ընդհանուր համաժողովը, ընդորինակելով Սոչիի և առափնյա այլ շրջանների ՀՅԴ կոմիտեների դիրքորոշումը, որոշեց չեզոք մնալ, չմասնակցել որևէ հակամարտության և գործել միմիայն թուրքերի ներխուժելու դեպքում<sup>16</sup>:

1918 թ. ապրիլին Արխազիայում հաստատվեցին խորհրդային կարգեր՝ առանց պետականության հոչակման, ուստի արխազների մեծամասնությունը իրաժարվեց նեցուկ կանգնել բոլշևիկների իշխանությանը: Երկրամասի կոմունիստական դեկավարները, սակայն, փորձում էին ձեռք բերել նաև Արխազիայի ազգային այլ համայնքների աջակցությունը:

Երկրամասի հայերի համակրանքը շահելու նպատակով՝ բոլշևիկները խոստանում էին, թե նրանք, ովքեր տարիներ շարունակ գտնվում էին իրավագործք գաղթականների կարգավիճակում, խորհրդային իշխանության օգնությամբ կարող են տիրել կապալավարձով իրենց կողմից մշակվող հողաբաժիններին: 1918 թ. գարնանը բոլշևիկներին օժանդակում էր Ծերելդա ավանում Ղազար Կերսեյյանի և Տակոր Զեյյունյանի շանքերով կազմավորված 200 հոգանոց հայկական ջոկատը: Միաժամանակ, Գուղառուսայի զավարի հայարնակ Կավարլուր (խորհրդային տարիներին Ազարակի, այժմ՝ Ամժիկուլստա) զյուղի բնակչու-

<sup>14</sup> По Кавказу: Сухум // КАВКАЗСКОЕ СЛОВО, 27. II. 1918.

<sup>15</sup> Սովորումի դէպքերը // ՀՈՐԻԶՈՆ, 8. III. 1918:

<sup>16</sup> ՀՅԴ-ի Վրաստանի 2-րդ ուսումնական ժողով // ԱՇԽԱՏԱՒՐ, 1. IV. 1919:

թյան ելույթը բոլշևիկների դեմ վկայում է քաղաքական տարրեր ճամփարներում հայերի բնեոացման մասին<sup>17</sup>:

Արխագիայի խորհրդային մարմինների բարձրաստիճան անդամ էին՝ Գնորդ Աթարբեկովը (Հեղկոմի նախագահի տեղակալ), Ղ. Կերսելյանը (բոլշևիլյան «կարմիր զվարդիայի» ղեկավար), Թոփչյան եղբայրները: Հստ Ա. Հակոբյանի վկայության, «թէս տեղայն հայերի ճնշող մեծամասնութեամբ չէզոր են, բայց կարգ մը հայեր գործի վրայ են, մանաւանդ վերոյիշեալ Թոփչյանները, որոնք անձնական հակառակութիւններ ունենալով յոյնի մը հետ (Կարծեմ Լամբո անուն<sup>18</sup>) կ'ուզեն զինաքափ ընել անոր բնակած յոյն (Միխայլովկա) զիւղը, կը պաշարեն զայն, նեղութիւն կու տան յոյններուն: <...> Թոփչյաններրէն վնասուած յոյններն ալ, իրենց ղեկավար Լամբոյի առաջնորդութեամբ, 150-200 հոգի կամաւոր մոտած են վրաց զօրքի մէջ և ամէն բայլափոխին կը վնասեն հայերուն: <...> Սուխումի Լամբոյի յոյն կամաւորները Սոյի կուզան: Ախորժակ ունին հայ թաղանելու, բայց տեղացի յոյնները, որոնց հետ միշտ սիրալիր եղած են մեր յարաբերութիւնները, կը սահման զանոնք և համոզելով յետ կը ճամբեն»<sup>19</sup>: Այսպիսով, ումանց քաղաքական կարճատեսությունը, փառափրությունը, եսապաշտությունը և շահամոլությունն «արջի ծառայություն» մատուցեց երկրամասի հայությանը և մեծ շարիբների պատճառ դարձավ նրանց համար: Սուխումի Հեղկուլի արտաքուստ «ինտերնացիոնալ», իրականում արկածախնդիր քաղաքականությունը՝ սրեց ոչ միայն հայ-արխազական փոխհարաբերությունները, այլև լարվածություն առաջ բերեց տեղի հայ-հունական շփումներուն:

Սուխումի ՀԱԽ-ի նախագահ Խաչատրու Ավդալբեյյանի վկայությամբ, «Վրաստանը բոլշևիկների դեմ կոհիր վարում էր

<sup>17</sup> Դզնձարիա Գ. Ա. Կոպր. Սუխում, 1981, ս. 39.

<sup>18</sup> Իման Համբո Պապանողապուլու: Արխագոններին ճնշելու և թալանելու համար նրան նախատում է նաև ժամանակի կարկառուն գործիչ Սիմոն Բասարիան (տե՛ս և Բասարիա Ս. Աբխазիա: в географическом, этнографическом и экономическом отношении. Сухум-Кале, 1923, с. 95):

<sup>19</sup> ՀԱՅՐԵՆԻՔ, 1931, ապրիլ, էջ 166 և հունիս, էջ 146:

Արխագիայի գրեթէ բոլոր ժողովուրդների ցանկութեամբ ու աջակցութեամբ: Պատմական փաստաթղթերով կարելի է հաստատել, որ այդ շրջանում արխազ ժողովրդի ներկայացուցիչներն ամեն օր բաղխում էին վրաց կառավարութեան դուռը և խնդրում էին ազատել Արխագիան բօլշեիկներից: Այս գործում երկրի բոլոր ազգութիւններին պատկանող զիտակից ու առողջ ոյժերի բացարձակ համակրանքը վրաց կառավարութեան կողմն էր<sup>20</sup>: 1918 թ. մայիսին Արխագիա ժամանած վրացական զինված զոկատների հրամանատարները (Վ. Զուղելի և այլք), գրավելով Սուխումը, իրենց ձեռքը վերցրեցին շրջանի կառավարման գործը: Արխագահայ համայնքի լիազորները դիմելով ծնունդով սուխումցի Վ. Զուղելիին, նոր իշխանության ներկայացուցին տեղեկացնում էին, որ հայերը կամենում են լրել շրջանը և իրենց համար գտնել առավել հուսալի ապաստան: Զուղելին ամեն կերպ փորձում էր հայերին հետ պահել այդ մտադրությունից՝ ասելով, որ նրանց մեկնումը մեծ վնաս կհասցնի ողջ շրջանին<sup>21</sup>: «Սուխումի հայերը արդէն երկիրի մատնաւած էին, – կարդում ենք Ա. Հակոբյանի հուշերում: – Արխագիները մեծ մասամբ մահմետական, թրքական օրէնտասիոն ունէին <...> այնպէս որ թրքական փոքրիկ ուժ մը կրնար յաջողութիւն գտնել և տիրապետել շրջանին ու կոտորել հայերը: Ուստի, կը մտածէին դէպի Սոյի քաշուիլ և անկէ անցնել Կուրան»<sup>22</sup>: Այդ օրերին թիֆլիսահայ մամուլում հրապարակվեց մի տեղեկություն, որտեղ ասված էր. «Հայերի դրութիւնը Սուխումի շրջանում ծանր է: Հարեւանները դէպի մեզ թշնամական վերաբերմունք են ցոյց տալիս, [քանզի] մի քանի արխազ իշխաններ գնացել են Բաթում՝ խնդրելու թիւրքերին, որ նրանք գրաւեն Արխագիան: [Հետևաբար] հայերը մտածում են զաղթել [դէպի] Սոյի, Աղեր և այլ [հյուսիսային] ծովափնեայ քաղաքներ»<sup>23</sup>: Նախկին տրապիզոնահայերը, քաջ զի-

<sup>20</sup> ՄՇԱԿ, 28. III. 1919:

<sup>21</sup> Ջյուլի Վ. Տյայուլի քրուս (Записки народогвардееца) // БОРЬБА, 22. XII. 1918.

<sup>22</sup> ՀԱՅՐԵՆԻՔ, 1931, մարտ, էջ 162:

<sup>23</sup> Հայերի դրութիւնը Սուխումի շրջանում // ՀՈՐԻԶՈՆ, 26. V. 1918:

տէնալով թուրք-օսմանների բարբարու բարբերը, բնականաբար, համոզված էին, որ նրանց հնարավոր մուտքը Արխազիա դառնալու է մեծամեծ շարիբների պատճառ...

Հայերի մի մասը, ինչպես ասելոց, աջակցում էր բոլշևիկներին, քանի որ սարսափում էր թուրքական վտանգից<sup>24</sup>: Բավական էր մի կեղծ լուր տարածվեր Սուխումի ծովափում թուրքական դեսանտի ցամաք իջնելու մասին, որ «հայ ազգարնակութիւնը գրավեր մեծամասնականների խոստումներով և տաճիկից ազատւելու գրաւիչ հեռապատկերը նրան ձգէր մեծամասնականութեան զիրկը...»<sup>25</sup>: Երբ 1918 թ. հունիսին Հեղկումի անդամները փորձեցին վերագրավել Սուխումը, «ճանապարհին իրենց կը միանան արիսազ և հայ զիւղացիները: Յաղթական զնացը կը հասնի մինչև Նովի-Աֆոն և աւելի հեռուն: Վրացիները լաւ պատրաստուած կը դիմաւորեն յարձակողները: Առաջին լուրջ ընդհարման արիսազները խոյս կուտան: Կը կոռիին հայ զիւղացիները և մաս մը ոռւսներ, որոնք չկրնալով դիմանալ վրացիներու ճնշումին՝ կը լրէն ճակատը և կը սկսին խուճապահար նահանջէլ»<sup>26</sup>:

«Բոլշևիկներու պարտութենէն յետոյ վրացիները հայահայած քաղաքականութեան հետեւիլ սկսած են, - շարունակում է Ա.

<sup>24</sup> Հայերը պարտադրված են եղել պաշտպանելու խորհրդային կարգերը, քանի որ 1918 թ. ընտրություն էին կատարում ոչ յէ սոցիալիզմի ու կապիտալիզմի, այլ՝ Թուրքիայի և Ռուսաստանի միջև: Այս միտքը հնչում է Բարքի Ռուսական ազգային խորհրդի նախագահության անդամ Բ. Բայկովի հուշերում: Նա գրում է. «Армяне в течение всего процесса русской революции не скрывали своей приверженности к России, видя в ней естественную и единственную защитницу от полного их физического истребления, и в этом их инстинкте самосохранения лежит и объяснение непротивленчества армян русскому большевизму и порою даже фактического их сотрудничества с большевиками. Армяне откровенно и многократно заявляли: <...> «лучше большевики, они все же русские, чем турки» [Байков Б. Воспоминания о революции в Закавказье (1917–1920 гг.) // В сб.: Архив Российской Революции, т. IX. Берлин, 1923, с. 191].

<sup>25</sup> Սուխումի ապստամբութեան առջիվ // ԲԱՆՎՈՐԻ ԶԱՅՆ, 26. X. 1919:

<sup>26</sup> ՀԱՅՐԵՆԻՔ, 1931, հունիս, էջ 138:

Հակոբյանը: – Հանդիպող հային կը խուզարկէին, կը ծեծէին», «Նովի-Աֆոնի մօտ 22 հայ տուն այրած են: Բազմաթիւ ձերբակալուրիւններ կատարել են Սուխումի մէջ: Ճանապարհին պատահած հայ տունները կը թալանեն», «հայ ժողովուրդը, այդ հալածանքներէն ազդուած, հակավրացական զգացումներով տարուած է»<sup>27</sup>: «Վրացական շովինիստները, զիսաւորապէս զինորականները, ամեն տեսակ պրովակացիաններով լարում են հայերի և վրացինների յարաբերութիւնները. նրանք հայերին հակապետական քայլերի մէջ են կասկածում, որ իբր թէ նրանք խմբեր են պատրաստում վրացի գորքին հարιածելու թիկունքից»<sup>28</sup>, – հադորդում էր դեպքերի մէկ այլ ականատեսը:

Հիշյալ անախորժությունները չէին կարող շրողնել իրենց մոայլ հետքը հայ-վրացական հարաբերությունների քաղաքական ոլորտում: ՀՅԴ-ի Սուխումի ճյուղի անդամները մերժել էին հակարովզելիյան դաշինք կնքելու վրաց «մենշևիկների» առաջարկը<sup>29</sup>: Արտաքուստ դա պատճառ հանդիսացավ բոլշևիլյան տրամադրություններ վերագրելու տեղի հայերին, որից օգտվելով՝ վրաց զինվորականությունն էլ ավելի հալածում և ահաբե-

<sup>27</sup> ՀԱՅՐԵՆԻՔ, 1931, ապրիլ, էջ 166.

<sup>28</sup> Դրույինը Սոյիում// ԱՇԽԱՏԱՒՈՐ, 5. X. 1918:

<sup>29</sup> Հիշյալ հանգամանքը պատճառ դարձավ, որ դաշնակցականների նկատմամբ հայածական քաղաքականություն ծավալվի: ԿՍԴԲԿ-ի «հայկական սեկցիան», բնականաբար, չէր կարող մնալ դիտորդի դերում: Նրա Սուխումի ճյուղը ևս իր ուրույն լրման ունեցավ այս գործում, ինչը բացէիքաց խոստովանում էր նրանց կուսակցական մամուլը: «Սուխումի շրջանում մեր ընկերներին. – տեղեկացնում է ընթերցողին «մենշևիլյան» լրագրի մեկնաբանը, – յաջողուել է հասարակական գործունեութեան հրապարակից չեղորացնել զանազան <...> խմբակներին և ամենից առաջ դաշնակցականներին, որոնք այլևս ոչ մի կապ և ազդեցութիւն չունեն [շրջանի] ժողովրդական մասսաների լայն հասերում: Այստեղ այժմ գոյութիւն ունեն [ՀՅԴ անդամակցող] միայն մի քանի անհատներ, որոնք իրենց գործունեութիւնը տեղափոխել են կաֆէները <...> Բայց նրանք միանգամայն անվտանգ տարր էին [մեզ] համար» (տե՛ս ԲԱՆՎՈՐԻ ԶԱՅՆ, 28. III. 1920):

կում էր հայ ազգարնակշությանը: Ճնշումները «արդարացնելու համար դուրս էին բերում հայութիւնը բոլշևիզմի գիրկը նետված»<sup>30</sup>: Այդ շիկացած մթնոլորտում, ըստ ՀՅԴ-ի Սուխումի կոմիտեի անդամ Գրիգոր Հովսեփյանի, «թաղանք ու սպանութիւնները ևս շատացան, նոյնիսկ բռնազրաւեցին հայերի սեփական արտերը»<sup>31</sup>: «Վրաց զինուորները, մասնաւրապէս արխազ ձիաւոր հարիւրեակի մարդիկը անխնայ կը ծեծեն հայ գիտացիները իբրև բոլշեիկ», ինչպես նաև հայտնի եղավ որ արխազներին «ծառայութեան կոչեր են, արտօնելով թալանել հայերը»<sup>32</sup>: Պսիրցիա և Անուիւղա զյուղերում բնակվող հայերը (Գուղաւուտայի զավադ) նոյնպէս կողոպտվեցին «արխազական հարյուրյակ» կոչված զորամասի ոազմիկների ձեռքով<sup>33</sup>: Տեղահան արվեց շուրջ 400 հայ ընտանիք, որոնք պարտադրված եղան հեռանալ Կուրանի մարզ<sup>34</sup>: Սուխումի ՀԱԽ-ը «ծանր հոգերու մէջ է: [Վրաց վարչակազմի հետ] նորմալ յարաբերութիւններ հաստատելու ձգուումը դժուարութիւններու կը հանդիպի»<sup>35</sup>: 1918 թ. ողբերգական օրերին արխազահայերի լիազորները դիմել էին Թիֆլիսի Արևելահայոց ազգային խորհրդին և ՀՀ կառավարությանը՝ հայրենադարձության խնդրանքով, սակայն մերժվել էին միջոցների և բնակելի հարմար տարածքների բացակայության պատճառով<sup>36</sup>:

Այսպիսով, ՀԱԽ-ի դաշնակցական աշխատակազմը գտնը-վում էր խորը հիասթափության մէջ, քանզի չկարողացավ լեզու

<sup>30</sup> Սույիի վերջին անցրերը // ԱՇԽԱՏԱԻՈՐ, 23. V. 1919:

<sup>31</sup> ՀՅԴ-ի Վրաստանի 2-րդ ույոնական ժողով // ԱՇԽԱՏԱԻՈՐ, 1. IV. 1919:

<sup>32</sup> Տե՛ս ՀԱՅՐԵՆԻՔ, 1931, հունիս, էջ 143–144:

<sup>33</sup> Գամահարիա Դ., Գոգիա Բ. Նշվ.աշխ., էջ 90:

<sup>34</sup> ՀԱՍ, ֆ. 200, գ. 1, գ. 409, թ. 61: 1926 թ. մարդահամարը հաստատում է հայաթափումը մեծ մասամբ արխազ բնակչություն ունեցող Կողորի և Գուղաւուտայի զավաներում (տե՛ս Լեյվա Գ. Պ. Անձնագիր և հայության առաջնային տրամադրությունները Հայաստանում, 1989, թ. 1, համար 1):

<sup>35</sup> ՀԱՅՐԵՆԻՔ, 1931, ապրիլ, էջ 166:

<sup>36</sup> ՀԱՍ, ֆ. 200, գ. 1, գ. 409, թ. 12:

զոնել վրացական կողմի հետ: Ծայրաստիճան լարված այս կացությունը ՀՅԴ-ին պարտադրեց, մեր կարծիքով, զիշել ՀԱԽ-ի կառավարման դեկը: Այն անցավ հայ «մենշևիկների» ձեռքը: 1918 թ. հունիսին ձևավորվեց Սուխումի ՀԱԽ-ի նոր կազմը, որն իր վրա վերցրեց տեղի հայերի «ֆիզիկական և քաղաքական պաշտպանությունը»<sup>37</sup>: Ավելին ասել, ցավոր, հնարավոր չէ, քանզի մեզ հայտնի սկզբնադրյուրներն էական ոչինչ չեն պարունակում: Ուստի, մնում է ապավինել միայն պատմական իրադարձությունների ընդհանուր տրամաբանությանը, իսկ դրանք գալիս են հաստատելու վերն արված ենթադրությունը<sup>38</sup>:

Հայկական համայնքի մեծամասնությունը, ինչպես ասվեց, 1918 թ. դեմ չէր վրացական գերակայության հաստատմանը Սուխումի շրջանում, հատկապես թուրքական վտանգից խոսափելու նպատակով: Արխազների մի զգալի հատվածը, թուրքամետ դիրքորոշում ունենալով, ձգում էր թուրքերի միջոցով Սուխումի առափնյա շրջանից վտարել հայերին, այդ իսկ պատճառով էլ ՀԱԽ-ն, հանձինս նրա սոցիալ-դեմոկրատական նոր դեկավարության (Խ. Ավդալբեցյան, Տ. Սողոմոնյան, Վ. Աղելյան, Ե. Մինասյան, Ե. Մյուսելիսյան, Վ. Ռշտոնի և այլք), աջակցում էր Վրաստանի կառավարությանն Արխազիայում, հանգամենք, որը, ի դեպ, առանձնապես շեշտում են նաև արդի վրաց պատմաբանները<sup>39</sup>: ՀԱԽ-ի սոցիալ-դեմոկրատական նախագահու-

<sup>37</sup> Սույն տեղում, թ. 61:

<sup>38</sup> Արխազահայության պատմության որոշ «մութ» էջերը կարող էր բացահայտել Արխազիայի պետական կենտրոնական արխիվում ժամանակին գտնվող և Սուխումի ՀԱԽ-ի վավերագրերը պահպանող № 338 ֆոնդը, որը, սակայն, դժբախտաբար, ոչնչացվել էր վրաց-արխազական շարաբաստիկ պատերազմի մոայլ օրերին [տե՛ս և Տվերինով Ի.Ա. Շիբել Աբխазского госархива // ОТЕЧЕСТВЕННЫЕ АРХИВЫ (հանդես, Սոսկվա), 1994, № 4, с. 124-125. Նաև՝ Շվիջբա Լ.Ի. Շիբել документальных источников Республики Абхазия (1992 г.) // ВЕСТНИК АРХИВИСТА (հանդես, Սոսկվա), 2001, № 1, с. 256-263]:

<sup>39</sup> Գամախարիա Դ., Գогիա Բ. Նշվ. աշխ., էջ 91: «Սուխումի մեջ կան բանի մը հայ սոց. դեմոկրատներ՝ ուսուցիչ Ասդալբեցեանի զիսաւորու-

թյունը հույս էր տածում, որ կուսակից վրաց «Ընկերներից» կազմված իշխանությունն այն ուժն է, որը, կամա թե ակամա, կաղաշտպանի տեղի հայերին թուրքական վտանգից և արխագների ոտնձգություններից<sup>40</sup>:

Խ. Ավղալքյանը և սոցիալ-դեմոկրատ «մենշևիկ» նրա հայազգի ընկերների «համագործակցությունը» վրաց վարչակազմի հետ, մասսամբ մեղմեց բազմաթիվ շարդիքների և վտանգների այն հետևանքները, որոնք, անկասկած, «դամոկյան սրի» պես կախվել էին արխազահայության անպաշտպան զլիին:

1919 թ. փետրվարին, սակայն, երբ «սպիտակ» բանակը, խլելով վրացիներից առափնյա գավառները, ուզմակալեց *Սոչին*, *Աղջերը* և *Գագրան*, արխազահայությունը դարձյալ ենթարկվեց դաժան ու սարսափելի ճնշումների: Վրաց զինվորականների նպատակը տանուլ տված գործի համար հայերին քավության նոխազ դարձնելն էր: «Վրացական կանոնավոր գորամասերի դաժանության ամեննեին չիմնավորված դրսեռումներն առաջացրել են խորը վիրավորանքի զգացմունք հայ բնակչության միջավայրում: Սպանությունները, թալանները, զուլացիներից *միերի ապօքինի առգրավումները* և կանանց բոնաբարումները

---

թեամբ: Անոնց դերն է գորատրին առջև սողալ եւ հաճելի ըլլալ տիրողին: Անոնք արգելք կը յարուցանեն հոն հայկական հիւաստոսարան հաստատուելուն, բայց կը պարտուին: Ընդզրկած են վրացական օրիենտացիա և հակահայաստանեան քաղաքականությին», – գրում է Արամ Հակոբյանը (տե՛ս ՀԱՅՐԵՆԻՔ, 1931, դեկտեմբեր, էջ 153–154):

<sup>40</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 409, թ. 61: Պետք է խոստովանել, որ Հայաստանում ևս մի խումբ սոցիալ-դեմոկրատներ ինչ-ինչ պատճառներով տողորված էր վրացամետությամբ: Երևանում 1918–1919 թթ. լոյս տեսնող սոցիալ-դեմոկրատական «Կայծ» եռօրյայի (Խմբագիր՝ Հայաստանի Խորհրդի անդամ, տնտեսագետ և հրապարակախոս Թաղևոս Ավղալքեցյան) էջերում լոյս տեսնող կյուրերի հեղինակները «ավելի հակված էին պաշտպանել իրենց կուսակից վրաց մենշևիկների կառավարությունը», գրում է արդի հետազոտողը (տե՛ս Հակոբյան Ա. Հայաստանի Հանրապետության պարբերական մամուլի պատմություն 1918–1920 թթ. Եր., 2005, էջ 48):

ուղեկցում էին զորամասերը ողջ ճանապարհին»<sup>41</sup>, – Վրաստանի վարչապետին բողոքում էր Խ. Ավդալբեզյանը: Մեծապես տուժել էին Աթարա Արմյանսկայա, Լեճկոպ, Գումիստա, Էշերա գյուղերի հայ բնակիչները: Կավարլուք և Կալդախսվարա բնակավայրերի երկրագործները միջոցներ չունեին կատարելու իրենց առջև դրված ուղմատուզանքի պահանջները: Վրացական զորքերը, շրջապատելով այս գյուղերը, սկսեցին գնդակոծել խաղաղ բնակչությանը<sup>42</sup>:

Սովորական պատմական համար ուներ հսկայական նշանակություն՝ որպէս զոտի, որն առանձնազնում էր որուս մեծապե-  
նակություն

<sup>41</sup> Борьба за Октябрь в Абхазии (1917–1921). Сб. док. и мат. Сухуми, 1967, с. 98.

<sup>42</sup> Лукомский А. С. Деникин и Антанта // Деникин-Юденич-Врангель: Мемуары. М.-Л., 1931, с. 100.

<sup>43</sup> Ст. «Зоряне»-ї вправи були єрба // УСІВОІ. 4. X. 1918:

տականների հսկողության տակ գտնվող տարածքները Սոլիխումի շրջանից: Ուստի, Ն. Ժորդանիայի կառավարությունը մտավախություն ուներ, որ «սպահտակների» անմիջական հարեանությունը կհանգեցնի Աբխազիայի տարանջատմանը Վրաստանից: Կովկասում բրիտանական զինվորական առաքելության պահանջով, սակայն, «սպահտակների» հարձակումը Սոլիխումի ուղղությամբ կանխվեց:

Հստ գեներալ Ա. Լուկոսմակու. «Սոչիի շրջանում վրացական իշխանության թոթափումից հետո թյուրիմացությունները շարունակվում էին հարեան Սոլիխումի շրջանում՝ հայերի և աբխազների նկատմամբ վրացական իշխանությունների վերաբերմունքի պատճառով»<sup>44</sup>: Վրացական վարչակազմը, որ երկրամասում հաստատվել էր «բոլշևիկյան անարխիայի» դեմ պայքարելու պատրվակով, չկարողացավ ստանձնել անիշխանությանը վերջ տալու առաքելություն: Եվ որպես այս վայրիվերումների տրամաբանական եզրահանգում՝ Սոչիի ՀԱԽ-ի «հուշագրում» շեշտվում էր, որ հենց վարչակազմն էր շրջանում «անարխիա» տարածում, քանի որ չկատարեց խոստումը՝ դատել բռնություններ գործադրողներին: Ենելով ստեղծված իրավիճակից ՀԱԽ-ը շահագրգիռ բոլոր կողմերին կոչ էր անում Սոչիի շրջանն այլևս չենթարկել Վրաստանին և միջոցներ ձեռնարկել Աբխազիայի հայ բնակչության տարրական իրավունքների պահպանման համար<sup>45</sup>: 1919 թ. մարտ ամսին Ա. Ի. Դենիկինը նամակ էր հղել Եկատերինոդարում բրիտանական ռազմական առաքելության պետ գեներալ Զ. Զ. Բրիզուխին, որտեղ մասնավորապես ասված էր. «Ինձ էին դիմել Սոչիի շրջանի հայկական ազգային միության պաշտոնական ներկայացուցիչները խնդրանքով՝ պաշտպանել Սոլիխումի շրջանի հայ բնակչությանը <...> վրացական զորքերի բռնություններից»<sup>46</sup>: Վրաց արդի հեղինակները Դենիկինի կողմից հայերի և աբխազների պաշտպանության մասին ակնարկը հա-

<sup>44</sup> Деникин-Юденич-Врангель: Мемуары, с. 100.

<sup>45</sup> ՀԱԽ, ֆ. 441, գ. 1, զ. 56, թ. 10:

<sup>46</sup> Деникин-Юденич-Врангель: Мемуары, с. 100.

մարում են և՝ կեղծարարություն, և՝ սադրանք, որի նպատակն էր, ի վերջո, արդարացնել Վրաստանի նկատմամբ իր զավթողական քաղաքականությունը: Նրանք նաև գրում են, թե «պատահաբար չէ, որ Դենիկինն ապավինել էր նվաճած Սոչիի շրջանի հայկական ազգային խորհրդի “ծառայությանը”, քանի որ նա որևէ կերպ չէր էլ կարող ստանալ համանման կեղծաթուղթ Արխազիայի հայ բնակչության “պաշտոնական ներկայացուցիչներից”»<sup>47</sup>: Վրաց հեղինակները, թերևս, հեզնում են: Հայոնի է, որ վրացական վարչակազմի կատարյալ վերահսկման տակ գտնվող Սուխումի ՀԱՆ-ը չէր էլ կարող բավարար համարձակություն ունենալ նման դիմումի համար:

«Սպիտակ» բանակի հրամանատարությունը գտնում էր, որ Վրաստանը որևէ իրավունք չուներ տիրելու Սուխումի շրջանին: Ուստի, հորդորում էր անզիհացի զորավարներին միջամտել և այդ տարածքը հայտարարել չեղոք գրուի: Վրացական կողմը, սակայն, ուներ «Մեծ Վրաստան» ստեղծելու պատրանք: 1919 թ. մարտի 14-ին Փարիզի վեհաժողովում վրացական պատվիրակությունը տարածել էր մի «հուշազիր», որը պահանջում էր Վրաստանի սահման ճանաչել Տուապսեից 14 կմ հարավ գտնվող Մակոպսե գետակը<sup>48</sup>: Մինչ այդ, սակայն, Վրաստանի վարչապետը կտրուկ հայտարարեց՝ եթե Դենիկինը չզիշի Գագրան, ապա այն կիլեն ուժով: Ն. Ն. Ժորդանիան այդ պահանջը բացատրում էր ուազմավարական անհրաժեշտությամբ, քանի որ Բզիր գետի վրայով անցնող սահմանը հուսալի չէր համարում, անհրաժեշտ էր գտնում Վրաստանի կազմում ընդգրկել «Գագրայի Դրունք» կոչված լեռնանցքը, որը դեռ հնուց հայոնի էր իբրև «Կովկասյան Թերմոպիլներ»: Վրաց կառավարությունը Սոչիի ուազմաձակատում կուտակել էր ժողովարդիայի ութ գումարտակ, զանազան այլ գորամասեր և միայն հարմար պահի էր սպասում՝ հարձակման հրամանն արձակելու համար: Կառահելով անգ-

<sup>47</sup> Гамахария Д., Гогия Б. Նշվ. աշխ., էջ 91:

<sup>48</sup> Меморандум, представленный мирной конференции делегатами Грузинской республики и карта Грузии // СВОБОДНАЯ ГРУЗИЯ, 13. IV. 1991.

լիացիների տված երաշխիքներին՝ Դենիկինը Սոչիի շրջանում գտնվող իր զորքերի մեծ մասը տեղափոխեց բոլշևիկյան ճակատ: 1919 թ. ապրիլի 17-ին վրացական բանակը հակահարձակման անցավ և վերազրապեց Գագրան: Վրաց զորքերը մեկ օրում կտրեցին շուրջ 45 կմ, սակայն Մզիմբա գետը չհատեցին և շուրջ նահանջեցին՝ տեղի տալով թէ՝ Թիֆլիսում բրիտանական զինվորական առաքելության ճնշումներին, թէ իուսափելով բախման մեջ մտնելու դրի ելած տեղի հայության հետ:

Գագրայի և մանավանդ նրա Պիլենկովայի (այժմ՝ Ցանդրիկի) զավառակի հայությունն իրենից ուազմական զզայի ուժ էր ներկայացնում: Հստ որոշ տեղեկությունների՝ այն կազմում էր զավառի ողջ բնակչության 75%-ը<sup>49</sup>: Վրացական բանակի հարձակումը, աներկրա, հետաձգվել էր մինչև այն պահը, երբ Սուխումի ՀԱԽ-ի անդամների միջոցով հաջողվել էր ստանալ Գագրայի զավառի հայ բնակչության չեզորության մասին ստույգ երաշխիքներ: Գագրայի պարագայում վրացիների մտածած հնարքը հաջողությամբ պատճեց: Վրացական կողմը նպատակ ուներ նույնանման միջնորդության շնորհիվ հասնել նաև Սոչիի ու Աղլերի հայության զինաթափման: «Աւդալբէզեան կուզայ Փիլենքով» եւ կը խմբագրէ կոչ մը ուղղուած Սոչիի գործիքներուն ու հայ զիւղացիներուն, որ վերջ տան “արկածախնդրութեան” եւ ոուսներու ձեռքը գործիք ըլլալուն<sup>50</sup>, – կարդում ենք Ա. Հակոբյանի հուշերում: Խ. Ավդալբէկյանը և իր հայ գործընկերները դիմել էին Սոչիի ՀԱԽ-ին տարաբնույթ բովանդակությամբ ուղերձով, որտեղ մասնավորապես ասված էր. «Պիլենկովայի ենթաշրջանի զիւղերը զինաթափ են լինում, եթէ նոր դէպքեր առաջ չգան, [ապա] ազգաբնակութիւնը ֆիզիկապէս զոնէ տուժած չի լինի: <...> Բայց շատ վատ կը լինի, եթէ <...> Սոչիի և Աղլերի շրջանների հայերը նորից Կամաւորական բանակի շարքերում լինեն: Այս դէպքում Պիլենկովայի և Սուխումի շրջանի հայերի

<sup>49</sup>Տէ՛ս ԱՇԽԱՏԱԽՈՐ, 21. V. 1919:

<sup>50</sup>ՀԱՅՐԵՆԻՔ, 1931, դէկտեմբեր, էջ 154:

վիճակը շատ ու շատ կը ծանրանայ և այս հանգամանքը պէտք է որ աչքի առաջ ունենան Սոյիի և Աղլէրի շրջանի հայերը»<sup>51:</sup>

Այսպիսով, թեպէտ Գազրայի շրջանի բնակչությունը կամովին զինաթափվեց, սակայն վրաց զինվորականները դրժեցին հայերի անվտանգության մասին իրենց տված խոստումը: Թիֆլիսից եկած հանձնակատարները հասել էին սեփական հնարամության «զագարթնակետին»: Անհրեկելով և արխազահայերին դարձնելով իրենց անզոր պատանդը՝ վրացական կառավարության գործակալները փորձում էին անվայել, ստոր միջոցներով շանտաժի ենթարկել ու զինաթափել նաև Գազրայից հյուսիս ընկած շրջանների հայությանը: Սոյիի ՀԱԽ-ի անդամների պատասխանը, սակայն, իրեն երկար սպասել չուվեց: «Դուք, որ չկարողացաք արգելել Կաւարլիք մի քանի միլիոնների հասնող վնասները և ձեր աչքի առօս կողոպսել տվիք Պիլենկովօն ու ձեր բերանով խոստովանում էք, որ ձեր կառավարութիւնը կարող է այդ կողմի հայերի ֆիզիկական գոյութիւնը վտանգել, – ասկած է Սովորում հղած պատասխան ուղերձում, – բարոյական իրաւունք չունիք <...> հասարակութեան կարծիքը մոլորեցնելու: <...> Եթէ դուք ուզում էք, որ մենք հրաժարւենք անհրաժեշտ ինքնապաշտպանությունից, [ապա] համոզեք ձեր ընկեր վրացիներին՝ թող ձեռք քաշեն հայահալած քաղաքականութիւնից...»<sup>52:</sup> Եվ այսպէս, Աղլէրից հյուսիս ընկած տարածքներում բնակվող հայությունը, որը «ամրող 7 ամիս համբերութեամբ տարել է վրացական բաշխութությունները», աչքի առաջ օրինակ ունենալով Պիլենկովայի հայերի աննախանձելի ճակատագիրը, պատրաստ էր ինքնապաշտպանության դիմել՝ վրացական գորքերի հետազա առաջնադաշտում կանխելու համար:

<sup>51</sup> Տե՛ս Դրությիւնը Սոյիի շրջանում // ԱՇԽԱՏԱԲՈՐ, 10. VI. 1919: Հրապարակումը ստորագրված է «Ա. Պոնտացի», որը, ըստ գրականագետ Ս. Վարդանյանի բացահայտման, Սոյիի ՀԱԽ-ի նախագահ Ա. Բ. Հակոբյանի կեղծանուններից էր (տե՛ս ԶԱՅՆ ՀԱՄԵՆԱԿԱՆ [ամսաթերթ, Երևան], 2008, հունվար-մարտ, № 1-2):

<sup>52</sup> Տե՛ս նույն տեղում:

Վրացիները, անկարող լինելով կրկին տիրել Սոչիի շրջանին, դիրքավորվել էին Մեխադիր գետակի ափին՝ Գագրայից հյուսիս: Զինաթափ արված Գագրայի և Պիլենկովայի հայ բնակիչներին, այնուհետև, վրաց զինվորները սկսում են անխնան թալանել: 1919 թ. ապրիլի 24-ին այս բնակավայրերի հայկական խորհուրդները նամակով դիմել եին Վրաստանի ՀԱԽ-ին, որտեղ մասնավորապես ասված է: «Այդ շրջանների անպաշտպան ու խաղաղակեաց հայութիւնը ենթակայ է վրաց զօրքերի անլուր ու անխիդական հայածանքներին: Վրացիների կողմից թալանվում են անխսիր բոլոր հայերի ունեցածքը, տանում են անասունները, ձիերը, կողոպսում են հայերի խանութները, ահազին թուզ հայեր են ձերբակալւած, մեղադրելով նրանց, որ իբր թէ նրանք օգնել են Կամատրական զօրքերին: Վրաց զինվորների կողմից արատատրում է շրջաններիս հայերի դարերով սրբազործած օջախը՝ բռնաբարելով հայ իզական սեոր <...> Վրացիների հայածանքները <...> անցան իրենց չափ ու սահմանը, մանաւանդ Պիլենկովայի շրջանի հայութեան վերաբերմամբ, որտեղ եղան նաև սպանութեան դէպքեր», նաև՝ «հայերը հիշեալ շրջանում ստիպւած լինելով իրենց կեանքը, գոյրը, պատիւր պաշտպանելու համար քաշւել են լեռները և ինքնապաշտպանութեան դիմել զերազանց ոյժերի դէմ: Ներկայում Պիլենկովայի շրջանի Քրիստաֆորովո (Խիշխարիպշ – Բ. Ս.), Օվա (Աշմարդա – Բ. Ս.), Չորագիւլ <...> շրջապատուած են վրացական զօրքերով, հայերի տները իրդեհի են մատնած վրացիների կողմից <...> վերջիններիս ու հայերի միջև տեղի ունի անհաւասար կոիւ<sup>53</sup>: Օգնություն չստանալով «սպիտակ» բանակից և անկարող լինելով սեփական խիստ անրավարար ուժերով պահել 15 կմ երկարությամբ պաշտպանական զիծը՝ մայիսի 4-ին հայ զուղացիները ստիպված են լինում այն զիջել<sup>54</sup>: Հրաժարվելով զինաթափվել՝ տեղի հայերի

<sup>53</sup> Մենշեւիկեան տուրիզմը // ԱՇԽԱՏԱԲՈՐ, 21.V.1919:

<sup>54</sup> 1919 թ. մայիսի 3-ին վրացական ժողովարդիայի հրամանատար Վ. Զուլեկին իր օրագրում գրանցել էր. «В час дня наша колонна выступила из Гагра для обезоруживания армянских горных поселков. Не хотелось новых насилий и новой борьбы, но все средства иссякли и терпение исто-

ինքնապաշտպանական ջոկատները, անցել էին Արբար և ժայռու լեռների վրայով դեպի Աղլեր՝ իրենց հետ տանելով բնակչության մի մասին<sup>55</sup>: Պիլենկովայի գավառակում հայկական զյուղերի գինված դիմադրությունը, թերևս, սթափեցրեց վրացական կողմին և սահմանափակեց նրա ախորժակը դեպի հյուսիս ընկած առափնյա շրջանների նկատմամբ<sup>56</sup>:

Գագրայի գավառում, որը կովախնձոր էր դարձել վրաց ազգայնականների և ոուս մեծապետականների համար, բրիտանական զորավարների միջնորդությամբ կողմերի միջև 1919 թ. ամունք զինադադար էր հաստատվել: Հայաբնակ Պիլենկովոյի գավառամասը, որը հայտնվել էր առավակատման կիզակետում, կիսվեց երկու՝ «Եզզոր» և «Վրացական» մասերի<sup>57</sup>: Գագրայի գավառոյի հայ բնակչությունը վրաց զինվորների ձեռորով ենթարկվել էր կատարյալ սնանկացման: Ըստ Սոլիսումում ՀՀ հյուպատոս Վաղարշակ Սահակյանի՝ հայերի վիճակն աննկարազելի ծանր էր<sup>58</sup>: Դնչան միշտ, վրաց զինվորականները տեղի հայերին վերագրում էին «սպասակ» բանակի հետ համագրծակցելու «մեղքը» և այդ պատրվակով, իբր, վրեժ էին լուծում նրանցից<sup>59</sup>: Վրացական

---

шилось; даже славный Хачатур [Авдалбекян] не помог. Армянские авантюристы чуть не убили его <...> Эти армяне все время идут против нас: тогда с большевиками, теперь с Деникиным! И мы их должны проучить...» (տե՛ս և Ջյուգելի Վ. Տյայսելի քառակույտ. Թիֆլիս, 1920, с. 146): Ինչպես տեսնում ենք, իդշալ տողերի հեղինակը լցված էր հայատյաց գագամունքներով և, նույնիսկ, չըր թարցնում շարդարարական իր տրամադրությունը:

<sup>55</sup> Պոլտացի Ա. Սոցիի վերջին դէպքերը // ԱՇԽԱՏԱԿՈՂ, 5. VI. 1919:

<sup>56</sup> Այդ մտադրության մասին է վկայում հարձակման օրը խորհրդարանի բարձր ամբիոնից Վրաստանի արտգործնախարար Ե. Գեգեճկորու հնչեցրած հայուարարությունը, թե Վրաստանը չի հրաժարվում Սոչիի շրջանի նկատմամբ իր հավակնություններից (տե՛ս և Սպասակ կազմակերպության գլուխական գործադրությունների մասին պատրաստությունը):

<sup>57</sup> Փավուցի Վ. Զеленая армия в Черноморье // ПРОЛЕТАРСКАЯ РЕВОЛЮЦИЯ, 1924, № 8–9, с. 52, схема № 2.

<sup>58</sup> ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 409, թ. 3, 4:

<sup>59</sup> Նույն տեղում, թ. 5: Գագրայում «սպասակների» տիրապետության օրերին ումն Դ. Դերենիկյան՝ ՀԺԿ-ի ներկայացուցիչը Աղլերում,

բանակը հրով ու սրով անցավ Գագրայի շրջանի հայկական բնակավայրերի վրայով։ Վ. Սահակյանի կողմից կազմված արժեքավոր վավերագրում, սակայն, չեն թվարկվել կոնկրետ դեպքերը։ Նա սահմանափակվել է միայն այն տխուր փաստի արձանագրությամբ, որ վրացական զինվորական իշխանությունների անօրինականությունների ծավալը Պիենկովոյի ենթաշրջանում հնարավոր չենկարագրել<sup>60</sup>։

Հիշյալ դեպքերը լուսաբանելու գործում անմասն չմնաց նաև մամուլը, նրա էջերում տպագրվեցին տեղեկատվական մի շարք նյութեր։ ՎՄԴԲԿ-ի պաշտոնաթերթ «Էրթորա»-ն, ավաղ, շարունակում էր պնդել, թե Թիֆլիսում լուս տեսնող ՀՅԴ-ի լրագիրը «փաստեր է յօրինում հայաբնակ վայրերի աւերելու մասին <...> Սոչիի շրջանում<sup>61</sup> աւերածությունն սարքելու պատմութիւնը նա դիտմամբ հնարել է։ Այսպիսի աւերածությին տեղի

դաշինք էր կնքել հակավրացական թիվն պատկանող աբխազ գործիչների հետ, նրա ասելով՝ «հայ և աբխազ ազգությունների փոխհարաբերությունները կանոնավորելու համար»։ Տվյալ փաստին ՀՀ ԱԳՆ-ում վերաբերվել էին խիստ բացասական, և Դերենիկյանի նախաձեռնությունը որակել էին իբրև «ինքնազլուխ»։ Երևանում կարծում էին, թե «շնորհիվ նրա ակտիվ գործունեության, որը միշտ պարզ կերպով ուղղված է եղել վրացիների դեմ, հայ-վրացական հարաբերությունները այս շրջանում դարձել են սոսկալի թշնամական և ստեղծվել է մի շատ պարարտ հող պյունկացիայի համար»։ Այսպիսով՝ Դերենիկյանը համարվեց «ինքնակոչ անձնավորություն, որի վեսասակար ազդեցությունը հայ զաղութի վրա անհրաժեշտ է չեղորացնել» (տե՛ս նույն տեղում, գ. 551, թ. 15)։ ՀՀ կառավարական շրջանակները խիստ բացասարար էին տրամադրված հակավրացական դրսնորումներում հայերի որևէ մասնակցությանը։ Վրաստակի հայության վիճակի բարելավումը ՀՀ իշխանությունները տեսնում էին բացառապես բանակցությունների և բարի-դրացիական հարաբերությունների հաստատման ճանապարհով։

<sup>60</sup> ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 409, թ. 11-12:

<sup>61</sup> Խոսքը բացառապես Պիենկովայի և նրան հարակից գյուղախմբի մասին է, որը գտնվելով երկու վարչական շրջանների՝ Սոչիի և Սուխումի մեջտեղում, 1904-1929 թթ. Վերագրվում էր մերժ մեկին, մերժ մյուսին։

չէ ունեցել և եթէ լրազիրը, յամենայն դէպս, հնարում է այդ աւերածութիւնը, [ապա] դա անում է Սովոր դաշնակցականների գործողութիւնները արդարացնելու համար...»<sup>62</sup>: Նույն կուսակցության հայտառ պարբերականը, սակայն, ակամայից «բացահայտեց», թե ո՞վ է իրականում մեղավորը և, հետևաբար, կեղծ տեղեկություններ տարածողը. «Եթէ լիներ ավելի աշալուրջ և անաշառ վերաբերմունք կառավարութեան կողմից <...> [ապա] մենք չէինք ունենայ աւերված Պելենկովօ <...> [այդ] շրջանում բնակվում էր վեց հարիւրից աւելի հայութեան տուն, որը ունէր իւր հարուստ տնտեսութիւնը... Պելենկովօ հայերի փախուստից յետոյ, այդ շրջանը աւարի մատնեց և պարզ ու ակնյայտնի կերպով կողոպտեց, տարւեց շարժական կայրից այն բոլորը, ինչ-որ հնարաւոր էր տանել՝ սկսած անասուններից մինչև տնային ամանները, և այդ բոլորը եղաւ մեր զորքի ձեռորվ։ <...> Պելենկովօ տուն վերադարձող բնակչութիւնը այստեղ համարեա ոչինչ չի գտել և այսօր սովահարութեան շէմքում է կանգնած։ <...> Հաւատացած ենք, որ մեր կառավարութիւնը ցոյց կը տայ առողջ պետական հասկացողութիւն և անմիջական օգնութիւն ցոյց տալով Պելենկովօ ազգաբնակութեանը կենդանիներով ու սերմացուով։ Այդ մի անհրաժեշտ միջոց է [որպեսզի] մասսաներին ամուր կապերով կապելու կառավարութեան հետ»<sup>63</sup>:

Վրաստանի կառավարությունը, սակայն, Գագրայի սահմանամերձ շրջանը ճանաչել էր իբրև իր ծավալապաշտական քաղաքականության զլիավոր թիրախներից մեկը՝ նրա ամբողջ տարածքը առանձնացնելով, նախ և առաջ, վրացիների վերաբնակեցման համար<sup>64</sup>: Տեղի հայկական տարրը, ինչպես և ողջ երկրում, նրա կողմից օտար էր դիտվում և չէր փայելում պաշտոնական Թիֆլիսի վստահությունը: «Կուզանը այն եզրակացութեան, – վկայում է Ա. Հակոբյանը, – որ հայ գիւղացիները հան-

<sup>62</sup> «Երտոնձա» («Երթորբա») օրաթերթից արտատպված հոդվածը տե՛ս Մամուլ. Պազրումային ազիտացիա // ԱՇԽԱՏԱԻՈՐ, 11.VI.1919:

<sup>63</sup> Ուղիղ ճանապարհ // ԲԱՆՎՈՐԻ ԶԱՅՆ, 12. X. 1919:

<sup>64</sup> Գամահարիա Դ., Գոգիա Բ. Նշվ. աշխ., էջ 464, վավ. № 254:

զիստ չպիտի ունենան հողային հարցին մէջ ու եթէ վրացիները ամրանան, զանազան օրինական պատճառաբանութիւններով պիտի աշխատին հետզհետև տեղահան ընել հայերը և անոնց պատրաստ տուներն ու արտերը յանձնել վրացի գաղթական-ներին<sup>65</sup>: Ուստի որոշ շրջանակներ հիմքեր էին վիճուրում հայ և ուս բնակչությանը Արխազիայից վտարելու համար: Վրացատառ «Սաքարթվելո»-ն պնդում էր, թէ Սույսումի «Շրջանում բնակտող ուստաներն ու հայերը վատացնում են ափիսազների ու վրացիների փոխ-յարաբերութիւնն և միասին ղեկավարում Վրաստանի դէմ ուղղած թշնամական գործողութիւնները: <...> Մեր պետական անձարակութեան ու քաղաքական կարձատեսութեան մեջն է, որ տեղական ուստաներն ու հայերը կրակի վրայ նաւթ են ածում, մեր անոնք կոտրում և մենք նրանց դէմ ամենին միջոցներ ձեռք չենք առնում»<sup>66</sup>:

Հայատյաց տրամադրություններով էին սոզորված նաև վարչակազմի որոշ ներկայացուցիչներ: Սույսումի մաքսային վարչությունից հեռազրել էին Վրաստանի ՆԳ նախարարին՝ պահանջելով հեռացնել Արխազիայում կուտակված գաղթական-ներին, քանի որ նրանք տեղի բնակչությանը «ներություն են պատճառում»<sup>67</sup>: Քանի որ արխազահայության 95%-ը չուներ քաղաքացիություն, ապա նրան շարունակում էին դիտել զաղթական եկվորի կարգավիճակում: Սույն հանգամանքը պարարտ հող էր ստեղծում նրանց նկատմամբ տարբեր տեսակի շարաշահումներ ու սաղրանքներ կազմակերպելու համար: «Սաքարթվելո»-ի էջերում մշտապես շեշտվում էր, որ վրաց «պետության համար վտանգավոր է ունենալ ծայրագավառներում խայտերանց բնակչություն: Մեր Բորչալուի հայերի խոռվությունը հաստատում է այդ փաստը: Շուշավերի, Դադեթ-Խաչենի և Բոլնիս-

<sup>65</sup> ՀԱՅՐԵՆԻՔ, 1931, օգոստոս, էջ 152:

<sup>66</sup> «Եայժարություն» («Սաքարթվելո», 1919, № 172) օրաթերթից արտատպված հոդվածը տե՛ս Արխազիան և Վրաստանը // ՆՈՐ ԱՇԽԱՏԱ-ԱՌՈՒ, 19. VIII. 1919:

<sup>67</sup> Լրատու // ԱՇԽԱՏԱ-ԱՌՈՒ, 22. III. 1919:

Խաչենի (այժմ՝ Զեմո Բոլնիսի – Բ. Ս.) դեպքերից հետո կասկած ձկա, որ սահմանամերձ [շրջաններում բնակվող] ոչ մի հայ չի կարող վատահության արժանանալ: Այնուհետև Վրաստանի տարածքում կարելի է թողնել միմիայն այն հայերին, որոնք բնակվում են սահմանից բավականին հեռու»<sup>68</sup>:

Հետևաբար, տեղի հայերի կացությունը հետազայում է մնում եր խիստ ծանր: Հայաբնակ զյուղերի իրական դրությունը նկարագրվում էր Գագրայի զավարի երկրագործների նամակում, որը 1920 թ. հունվարին նրանք հղել էին Արխազիայի ժողովրդական խորհրդին: «Ստիպված ենք դժգոհություն հայտնել մեր ներկա կա կյանքից, - գրում էին նրանք, - որի սկզբնապատճառ են եղել մեծ մասամբ ստորին ծառայողները՝ զինվորները, որոնք զտնվելով ուզմաճակատում մշտապես անհանգստացնում են մեզ՝ զյուղացիներիս <...> այլևս չի մնացել ոչ ընտանի թռչուն, ոչ փեթակ, ոչ էլ կեր. զինվորները դրանք մասամբ զողացել են, մասամբ էլ՝ ոչնչացրել: Նրանք հափշտակել են մեր շորք, եզիստացորներ, ծխախոտը <...> այնպես որ ներկա պահին մենք շատ վատ ենք հազնված և վատ էլ սնվում ենք: Մնացել է շատ քիչ կով և գոմեց: Մենք ամեն կերպ փորձում ենք ոտքի կանգնեցնել սնանկացած տնտեսությունները <...> սակայն զինվորները խանգարում են: Այդ մասին մենք բազմից բողոքել ենք գումարտակների հրամանատարներին, սակայն նրանք որևէ ուշադրություն չեն դարձնում և կարծես քաջալերում են ենթականերին (բացառությունները հազվադեպ են լինում), հետևաբար, զինվորները շարունակում են իրենց կործանարար գործունեությունը՝ վերջնականորեն սնանկացնելով մեզ: Գիշերները վրաց զինվորականները հարձակվում են խաղաղ բնակիչների վրա և, սպառնալով զնդակահարել նրանց, դրամ են պահանջում: Սուանալով մի քանի հազար ռուբլի, հեռանում են, հակառակ դեպքում՝ սպանում են <...> Շարքայինների և սպաների վերաբերմունքը հայերի

<sup>68</sup> «Տայարական արտադրություն» («Սաքարթվելո») օրաթերթից արտատպած հոդվածը տես՝ Կոլոնիզացուունի կատալ // ЗАКАВКАЗСКОЕ СЛОВО, 23. I. 1919.

նկատմամբ վերին աստիճանի արհամարհական է ու սպառնացող: <...> Հայտնելով մեր ծգնաժամային դրության մասին՝ խընդրում ենք իրավիճակի բարելավման համար ցուցաբերել Ձեր շուտափույթ և արդարացի աջակցությունը կամ էլ վերաբնակեցրեք մեզ որևէ այլ տեղ, քանի որ մեր հուսահատ դրությունը հասել է իր զագաթնակետին: Վճռականորեն հայտարարում ենք, որ այդպէս այլևս չի կարող շարունակվել»<sup>69</sup>:

Արխազահայության սովոր մասի մեջ արմատավորվել էր արտազադիրի և հայրենադարձության զաղափարը: Ումանք գտնում էին, թե Արխազիայում այլևս հնարավոր չէ ապրել և պահանջում էին իրենց անհապաղ տեղափոխել Հայաստան: Այս տագնապալից տրամադրություններն արտացոլվել էին նաև Թթվիսի հայալեզու մամուլի էջերում: «Անտանելի է մանաւանդ Սուխում-Սոչիի հայութեան վիճակը, – հաղորդում էր ՀՅԴ-ի պարբերականը, – որը մնացել է երկու կրակների մէջ: <...> Ամեն մի հրապարակ եկողը իր տիրապետութիւնն է առաջարկում, իւրատեսակ տուրքեր զանձում, իր անցագրերը տայիս, որին չի ընդունում սրան յաջորդողը <...> Որքան էլ որ Հայաստանի հանրապետութեան կառավարութիւնը ծանրաբեռնած լինի զանազան կարևոր գործերով, ժամանակ է անշուշտ ուշադրութիւն դարձնել Սև ծովի շրջանում սփուռած հայ ժողովրդի վրայ: Հայաստանի խնամատարութեան մինիստրութիւնը պէտք է անյապաղ իր ներկայացուցիչները նշանակի Սուխումում և Սոչիում, այդ ժողովրդին առնի իր հովանաւորութեան տակ և Հայաստանի հանրապետութեան կողմից անցագրեր տայ նրանց, իբրև Հայաստանի քաղաքացիների, ազատէ ունաձութիւններից, զանազան պաշտօնական ու անպաշտօն բռնութիւններից ու կեղեցումներից, և միջոցներ պատրաստի՝ այդ աշխատաւորութեանն առաջին յարմար առթիւ դէպի հայրենի երկիր տեղափոխելու, որին նա սպասում է անհամբերութեամբ»<sup>70</sup>: Հակառակ պարագայում

<sup>69</sup> Հզидзария Г. А. Очерки истории Абхазии, Тб., 1963, с. 231–232.

<sup>70</sup> ՀԱՍ, ֆ. 200, գ. 1, գ. 409, թ. 16:

<sup>71</sup> Անհրաժեշտ է հոգածութիւն // ԱՇԽԱՏԱԲՈՐ, 7. V. 1919:

արխազահայերից շատերը պատրաստ էին մեկնել նույնիսկ ցանկացած այլ երկիր՝<sup>72</sup>:

Եվ ահա Սուխումի շրջանում հայության իրավունքները պաշտպանելու նպատակով 1919 թ. նոյեմբերի 1-ին բացված Հայաստանի Հանրապետության հյուպատոսարանը նախապատրաստական աշխատանքներ էր իրականացնում արխազահայերի հայրենադարձության համար՝<sup>73</sup>: Մինչև 1920 թ. մարտ ամիսը շուրջ 700 ընտանիք արդեն ձևակերպել էր իր ՀՀ քաղաքացիությունը՝<sup>74</sup>: Այդ հենքի վրա լուրջ տարածայնություն էր առաջացել հյուպատոս Վ. Սահակյանի և Սուխումի ՀԱԽ-ի նախագահության միջև, որը մինչ այդ էլ ընդդիմանում էր ՀՀ հյուպատոսարանի բացմանը՝<sup>75</sup>: Նրանց հարաբերություններն ավելի սրվեցին, երբ վրաց իշխանությունները հայերին խոստացան ճանաչել որպես իրենց երկրի լիիրավ քաղաքացիների՝<sup>76</sup>: Նրանք այդ խորամանկ քայլին դիմեցին, թերևս, ի հակակշիռ անջատամետ արխազների:

<sup>72</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 409, թ. 16:

<sup>73</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 350, թ. 6, նաև՝ ֆ. 276, գ. 1, գ. 33, թ. 199, 200, նաև՝ գ. 155, թ. 2, 7: Նաև՝ ՎԿՊԴԱ, ֆ. 1861, գ. 2, գ. 95, թ. 2: Այս իրադարձությունը չէր վրիպել մամուլի տեսադաշտից, որը անմիջապես արձագանքել էր դրան (տե՛ս Հայաստանի հիւպատոսարանը Սուխումում // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 14. VIII. 1919: Նաև՝ Լրատու՝ Սուխումի հիւպատոս // ԱՇԽԱՏԱԽՈՐ, 1. XI. 1919, նաև՝ Խրոնիկա: Назначение армянского консула в Сухум // БОРЬБА, 1. XI. 1919):

<sup>74</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 409, թ. 3-4:

<sup>75</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 350, թ. 8:

<sup>76</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 409, թ. 11-12: 1919 թ. սեպտեմբերին Թիֆլիսում գումարված հայ-վրացական խորհրդաժողովի ժամանակ ՀՀ-ի պատվիրակությունը բարձրածայնեց, որ «Վրաստանի հողի վրայ շատ հայեր կան, որոնք <...> մինչև հիմա էլ չեն որոշել, թէ ինչ հապատակութիւն պետք է ընդունին: Հայկական պատվիրակությունը այս հարցին արտակարգ կարեւորութիւն է տալիս եւ կարծում է, որ նա չի կարող լուծուել անջատ եւ միակողմանի օրենսդրութեամբ հանաձ վճռով, այլ պետք է լուծուի երկու հանրապետութիւնների փոխադարձ համաձայնութեամբ» (տե՛ս ՀԱՅՐԵՆԻՔ, 1928, հոկտեմբեր, էջ 135):

Չպարզելով իր սահմանադրական հարաբերությունները Արխազիայի հետ պաշտոնական Թիֆլիսը փորձեց հանրաքվեի իմաստ և բովանդակություն տալ երկրամասում նշանակված Վրաստանի ՍԺ-ի պատգամավորների լրացուցիչ ընտրություններին: Զայն տալու իրավունքը ունեին միմիայն մեզրելներն ու արխազները: Իրականությունը, սակայն, բացահայտեց, որ արխազները չեն ցանկանում լինել Վրաստանի հպատակներ: Հետևաբար, ի ցույց իրենց բողոքի՝ 1920 թ. մարտին նրանք զանգվածաբար բոյկոտեցին այդ կարևոր միջոցառումը: Դրանից հետո վրաց կառավարիչները գուցադրաբար աշխատում էին բարեկավել իրենց փոխհարաբերությունները արխազահայերի հետ: 1920 թ. ամռանը դա նկատել էր նաև Ա. Հակոբյանը: «Երբ առիթ ունեայ անցնելու Սուխումի շրջանը, - գրում է նա, - մեծ փոփոխութիւն և յառաջդիմութիւն նկատեցի վարչութեան մէջ: Հակահայ հալածանք չկար և աւազակներն ու անկարգ զինուրները անխնայ կը պատժուէին»<sup>77</sup>: Վարչակարգը, որ ամեն հարմար պահին երկրի այլ շրջաններում և հալածում էր հայերին, աչքի առաջ ունենալով մարտավարական նպատակներ, խոստացավ դրական ընթացք տալ Վրաստանի քաղաքացիությունը հայցող արխազահայերի դիմումներին:

Ուստի, Սուխումի ՀԱԽ-ը Վ. Սահակյանից պահանջեց դադարեցնել ՀՀ քաղաքացիությունը հաստատող վկայականների բաշխումը: ՀԱԽ-ի դեկավարությունը կամենում էր հայությանն ամրացնել Արխազիայում<sup>78</sup>: Դեռ 1918 թվականին «Սուխումի հա-

<sup>77</sup> ՀԱՅՐԵՆԻՔ, 1931, հոկտեմբեր, էջ 137:

<sup>78</sup> Սուխումի ՀԱԽ-ի անդամները, 1920 թ. վետրվարին դիմելով Վրաստակի Հայոց ազգային խորհրդին, գրում էին՝ «Շնորհին ընտրովի Ազգային Խորհրդի գործունեութեան և վարած քաղաքականութեան, [շրջանի հայությունը] Վերջին երեք փորորդկոտ տարիների ընթացքում ապրել է անհամեսատ ապահով վիճակում, թէ՝ նիւթական, թէ՝ կուտուրական տեսակետից և շատ կողմերով նախանձելի օրինակ կարող է համարւել Անդրկովկասի այս կամ այն անկինում ապաստանած հայութեան բեկորների համար: Սուխումի [Հայոց] Ազգ. Խորհրդի գլխաւոր խնդիրն է եղել, որ շրջանի հայութիւնը այնքան ժամանակ, ինչքան որ

նա ապրում է այդ շրջանում, իր բախտը կապի տեղական միս ազգերի հետ և նրանց [իետ համա]գործակցելով ու բարի դրացիական հարեւանութեամբ ստեղծի ինչպէս շրջանի, այդպէս էլ իր համար ապահով դրութիւն՝ [ապրել] շրջանում իբրեւ իրաւատեր և պարտաճանաշ քաղաքացի, օգտւել իբրեւ լիազօր քաղաքացի դեմոկրատական հասարակարգի պարզեւած բոլոր իրաւունքներով, կատարել իբրեւ պարտաճանաշ քաղաքացի պետութեան հանդեպ ունեցած բոլոր պարտականութիւնները: Ահա սա է եղել [Սույնումի ՀԱՆ-ի] վարած քաղաքականութեան ընդհանուր ոգին: <...> Դրութիւնը հասկանալու համար պետք է ի նկատի ունենալ, որ հայ գիւղացիութիւնը նախ քան յեղափոխութիւն ապրում էր տեղական [արքազ] իշխանների հողերի վրայ եւ [նրանց] մշակելու համար կապալավարձ էր վճարում, իսկ յեղափոխութիւնից յետոյ նա տէր է դարձել իր ձեռքում գտնող հողաբաժիններին և արդէն երեք տարի է, որ կապալավարձ չի վճարում: Բացի այս, հայ գիւղացինների ձեռքում գտնում են շրջանի լաւագոյն հողաբաժինները: Որպէս զի հայ գիւղացիութիւնը կարողանայ պահպանել իր հողերը եւ տնտեսութիւնը, նա պետք է [Վրաստանի] քաղաքացի լինի: Ճենց այս նպատակով է, որ Սույնումի Շրջանի [Հայոց] Ազգ Խորհրդի կողմից հրաւիրած, [տեղի] հայութեան երեք համագումարները անհրաժշտ են համարել դրական մտքով լուծել [Վրաստանին] հպատակութեան ինսդիրը: <...> Միայն այդ ճանապարհով կարելի է պաշտպանել ժողովրդի [քարեկեցիկ] տնտեսական դրութիւնը: Իսկ եթէ հայ գիւղացին իրեն օտարահպատակ յայտարարի, [Վրաստանի հանրապետության նկատմամբ] իր քաղաքացիական պարտականութիւնները չը կատարի, [ապա] նա թշատ դրութեան մեջ կը ձգի իրեն եւ իրաւագուրկ էակ կը դառնայ, [իետեւարար] նրա հողաբաժինները գրավման կենթարկեն հարեւանների կողմից, որոնք իբրեւ պետութեան հպատակներ եւ իրավագօր քաղաքացիներ չեն թողնի լաւ հողաբաժինները օտարահպատակների ձեռքին: Բացի այս շովէն տարրերն ել գործի կանցնեն եւ հայերը շատ պատահարների եւ վտանգների կենթարկեն: <...> Այս բոլոր դատողութիւնները միայն տեսական հետաքրքրութիւն չեն ներկայացնում, այլ իրոք հայ գիւղացիների հողերը սկսել են նրանց մեզրել հարեւանները բոլագրաւել» (տե՛ս «Վահան» Ռեշուումի). *Սույնումի Շրջանի Հայոց ազգային խորհրդի հրաժարականի առթիվ* // ԲԱՆԿՈՒԲ ԶԱՅՆ, 28. III. 1920): Քանի որ հողագուրկ մեզրել զյուղացիները 1918 թ. դարձել էին բոլշևիզմի կողմնակիցները վրաց իշխանությունները

*ing* ազգային կոմիտեի հարցումին ներքին գործերի նախարարը պատասխանել է, որ այդ՝ *Սև ծովի շրջանում տասնեակ տարիներ բնակութիւն հաստատած Տաճկաստանից եկած հայերը ենթարկուում են վրաց կառավարութեան հպատակութեան օրէնքին, հետևապէս գօրակոչին»<sup>79</sup>: Վրաց կառավարությունն այն աստիճան զինապարտների կարիքը ուներ, որ նույնիսկ հպատակություն սահմանող իր օրէնքին հակառակ էր գնում: Ուստի, արխազահայերի լիազոր համագումարը որոշեց հայցել Վրաստանի հպատակությունը: *Ա. Զամայանը իրավացիորեն նկատել էր, որ «Վրաստանի այն հայերին, որոնք տարիներից ի վեր հաստատուն բնակութիւն ունեն՝ այստեղ էլ վրաց կառավարութիւնը իրահասուկ վերաբերմունք ուներ: Եթե նա <...> մուադրվում էր նրանց ևս զինուորակոչութեան ենթարկել՝ նա ամէնքին էլ դիտում էր իրքը Վրաստանի քաղաքացիներ: Խսկ երք Վրաստանի շովինիստական տարրերին բաւարարութիւն տալով հարկ էր համարում բացառիկ հալածանքներ սկսել հայերի դէմ <...> այն ժամանակ խիստ մէծ սահմանափակումների էր ենթարկում իր իսկ հրատարակած քաղաքացիութեան օրէնքը՝ դժուարացնելով նրա նպաստավոր տրամադրութիւններից օգնուելու հնարաւորութիւնը հայերի համար»<sup>80</sup>:**

*Վրաստանի ՀԱՆ-ը «քննութեան է առել Սուխումի հայերի համագումարի վրացական հպատակութիւն ընդունելու որոշու-*

---

Նրանց մէջ ազգայնական տրամադրություններ էին տարածում՝ սոցիալական պահանջներից գերծ պահելու նպատակով: Այդ քարոզչության հետևանքով մեզրելները, իրենց համարելով արտոնյալ տարր, սկսել էին մրցել հայերի հողաբաժիններին և կարողությանը տիրելու համար (տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 409, թ. 61–61 շրջ.): Եվ ոչ միայն հայերի. Աբխազիայի ոռու բնակչությունը բողոքում էր Թիֆլիսի իր ազգային խորհրդին, որ մեզրելները խլում են իրենց պատկանող հողերը (տե՛ս Յանձնութեան ինքնուրության վեցական համար, 1919):

<sup>79</sup> Հպատակութեան խնդրի շուրջը // ՀՈՐԻԶՈՆ, 8. VIII. 1918:

<sup>80</sup> ՀԱՅՐԵՆԻՔ, 1928, հոկտեմբեր, էջ 133:

մը և այն գտնելով տեղին, դրական վճիռ է կայացրել ու համագումարի որոշումը հաստատել<sup>81</sup>:

Հարցի նման դրվածքը, սակայն, չէր համընկնում ՀՀ կառավարության հեռանկարային ծրագրի հետ, որն առաջնային էր համարում հայրենադարձության գործընթացի կազմակերպումը: Հստ նախարար Ռ. Տեր-Մինասյանի արժեքավոր վկայության, «Սուխումի շրջանից տրապիզոնցի հմուտ ծխախոտ արդինաբերողներ Հայաստան կանչուեցին՝ ազնուացնելու Հայաստանի ծխախոտը»<sup>82</sup>: Այս նախաձեռնությունը գտավ իր արժանի արձագանքը<sup>83</sup>: 1919 թ. հուլիսի 21-ին Բարումում մեկնարկել էր տրապիզոնահայերի հայրենակցական միությունների Սուխումի ճուղի նախաձեռնությամբ հրավիրված համագումարը, որի օրակարգում էր դրված հայրենադարձության հոլյժ կարևոր խնդիրը<sup>84</sup>:

Վրաց հասարակական կարծիքը, այնուամենայնիվ, գտնում էր, որ հայերը պետք է հեռանան Վրաստանից: Այսպէս, «Սախալիս սարմե» օրաթերթը մատնանշում էր, որ պաշտոնական Երևանը «պիտի աշխատի տանել հայերին ոչ միայն Աղոքչանից, այլև Վրաստանից, քանի որ մեզ մօտ հողի պակասութիւն կա, իսկ Հայաստանում՝ բնակութեան: Դա կառողացնի Հայաստանի պետութիւնը և այսպիսի քաղաքականութեանը մեծ աջակցութիւն կը ցուցաբերի Վրաստանի կառավարությիւնը: Կայ ժամանակ, երբ հարկավոր էր հայերին հրատիրել Վրաստան, բայց իմաս դրութիւնը փոխվեց և Վրաստանն այսօր պիտի աշխատի հայերին դուրս հանել»<sup>85</sup>: Այս առթիվ Ա. Զամայյանը թողել է եղակի բնույթ ունեցող վկայություն: «Սկսած 1919-ի կէսերից, – գրում է նա, – [Հայաստան] ամեն օր խումբ-խումբ հայեր էին զա-

<sup>81</sup> Լրատու // ՀՈՐԻԶՈՆ, 25. 09. 1918:

<sup>82</sup> Տե՛ս Ռուբեն Հայ յեղափոխականի մը յիշատակները, Է հատոր, Լու Անջելես, 1952, էջ 298:

<sup>83</sup> Տե՛ս ԱՇԽԱՏԱԽՈՐ, 8. VI. 1919:

<sup>84</sup> Տե՛ս ՆՈՐ ԱՇԽԱՏԱԽՈՐ, 25. VII. 1919:

<sup>85</sup> «Եածալու եածմեց» («Սախալիս սարմե», 1918, № 433) օրաթերթից արտատպած հողվածը տե՛ս Վրաց թերթերից // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 22. I. 1919:

լիս Վրաստանի այլևայլ կողմերից հաստատուելու համար, որովհետև, ինչպէս նրանք էին ասում, Վրաստանում ապրելն այլևս անկարելի էր դարձել: Արդար լինելու համար պէտք է ասենք, որ Հայաստանի դեկավար շրջանակները շատ էլ դժգոհ չեին վիրահայ ժողովրդի համար ստեղծած այս կացութիւնից և ոչ էլ շահազրոված, որ վրաց կառավարութիւնը աւելի բարեացակամ վերաբերմունք ունենայ դէպի այդ ժողովուրդը: Հայաստանն այդ ժամանակ՝ իր սահմանների ընդարձակման հեռանկարի առաջ կանգնած՝ ազգահաւաքման քաղաքականութիւն էր հետապնդում, և նրա համար ձեռնատու էր, որ ինչպէս դրսի հայութեան միւս հասուածները, նոյնպէս և վիրահայկական հասուածը վերադառնայն դէպի մայր երկրի ծոցը: Դրա համար էլ, վրաց կառավարութեան բատ ինքեան անհանդուրժելի ընթացքը, որ այլ պարագաներում անպատճառ դիտողութեան կ'ենթարկուէր Հայաստանի կառավարութեան կողմից, այս ժամանակաշրջանում անտես էր առնուում, որովհետև նա նպաստում էր յիշեալ ազգահավաքման գործին»<sup>86</sup>.

ՀՅԴ-ի Սուխումի ճյուղը, հասկանալի պատճառներով, կարևորում էր Միացյալ Հայաստանի, հետեարար ազգահավաքման զաղափարները: Ուստի, ՀՅԴ-ի տեղական կոմիտեն Աբխազիան հայության համար դիտում էր իբրև ժամանակավոր կացարան և միանշանակ կողմ էր հայրենադարձությանը: Քաղաքական խորը բնեուացումը ՀՅԴ-ի և ՎՄԴԿ-ի հայ «մենշևիկների» միջն առավելապես ցայտուն արտահայտվեց հենց այս հարցում: Սուխումի ՀԱԽ-ի սոցիալ-դեմոկրատական կազմի կարծիքով հայրենադարձության համար նպաստավոր պայմաններ դեռևս չեին ստեղծվել<sup>87</sup>: Գործը հասել էր այն աստիճանի, որ 1920 թ. փետրվարին Սուխումի ՀԱԽ-ի նախագահությունը, «զուգենալով պատասխանատու լինել մի քաղաքականութեան համար, որի հետ ինքը համաձայն չի և, որի բացասական արդիւնքները կարծ ժամանակի ընթացքում առաջ են եկել», Վրաստանի ՀԱԽ-ի առջև

<sup>86</sup> ՀԱՅՐԵՆԻՔ, 1929, ապրիլ, էջ 148:

<sup>87</sup> Տե՛ս ՀԱՍ, ֆ. 200, գ. 1, գ. 409, թ. 61-61 շրջ.:

հանդես եկավ իր հրաժարականով: «Սուխումի Շրջանային [Հայոց] Ազգային Խորհուրդը, քննության առնելով ստեղծված դրութիւնը, - ասված է նրա անդամների «հուշագրում», - եկել է այն եղրակացութեան, որ ինքն այդ հանգամանքներում չի կարող շարունակել իր գոյութիւնը և գործունեութիւնը, որովհետև հակառակ իր կամքի <...> գործերին այնպիսի ընթացք է տրւել, որ միանգամայն վտանգում է շրջանի հայ ազգաբնակչութեան շահերը և նրա համար ստեղծում հողային խնդրի [իանգուցալուծման] տեսակէտից սպառնալի դրութիւն»<sup>88</sup>: Սուխումի ՀԱԽ-ի այս վճռական դեմարշը, թերևս, ազդեցություն գործեց Վրաստանի ՀԱԽ-ի վրա և փոխըմբռնում գտավ նրա սոցիալիստական բլոկի կողմից: Անտեսելով դաշնակցական խմբակցության առարկությունները՝ 1920 թ. մարտի 19-ին Վրաստանի ՀԱԽ-ը արտահերթ նիստում մի բանաձև ընդունեց, որը Սուխումի ՀԱԽ-ի գործունեությունը համարեց ճիշտ և արխազահայության տնտեսական ու մշակութային շահերին համապատասխանող: «Այսպիսվ, - շեշտում էր «մենշեկիլյան» պարբերականի մեկնաբանը, - Վրաստանի Հայոց] Խորհուրդը հակառակ դաշնակցականների կանգնեց միանգամայն ճիշտ տեսակէտի վրայ և ըստ արժանատրին գնահատեց Սուխումի Շրջանային Հայոց] Ազգային] Խորհրդի մեր ընկերների տեսակէտը ու աշխատանքը, որը այնքան օգտակար է եղել ժողովրդի համար և այնքան դրական արդինքեր տուել <...> [Խորհուրդը գնաց հակառակ ՀՅԴ-ի այն առաջարկների], որոնք այժմեան պայմաններում միանգամայն կորուստաբեր ու վաղաժամ են, քայլայում են ժողովրդի տնտեսութիւնը և զաղրականութեան դուռը զցում»<sup>89</sup>: Համանման կարծիք ուներ նաև Վրաստանում ՀՀ-ի դեսպանորդ Լ. Գ. Եվլանգուլյանը: Երեանում (1919 թ., հունիս) նա պատկան մարմիններին հայտնում էր, որ արխազահայերի կողմից Հայաստանի քաղաքացիության ընդունման փաստը, համենայնդեպս, կարող է հարմար

<sup>88</sup> Տե՛ս Վլահան] Ուշունիք]. Սուխումի շրջանի Հայոց ազգային խորհրդի հրաժարականի առթիվ// ԲԱՆՎՈՐԻ ԶԱՅՆ, 28. III.1920:

<sup>89</sup> ԲԱՆՎՈՐԻ ԶԱՅՆ, 28. III. 1920:

պատրվակ ծառայել նրանց, իբրև օստարների, ինչքից զրկելու համար<sup>90</sup>: Դեռևս քաց է մտում, սակայն, այն հարցը, թե ՎԴՀ-ում արխազահայության կողմից քաղաքացիության ձեռքբերման հիմնախնդիրը իրականում ինչպես վճռվեց: Մեզ հայտնի վավերագրերն այնքան կցկուուր են, որ դժվար է որոշակի կարծիք կազմել այդ մասին:

Զկարողանալով տեղում պարզել իր փոխհարաբերությունները հյուպատոս Վ. Սահակյանի հետ Սուխումի ՀԱԽ-ը 1920 թ. ամռանը Հայաստանի մայրաքաղաք էր ճամփել իր լիազորներ Եղիա Մյուսելիսյանին և Երվանդ Սինասյանին: Ժամանելով Երևան նրանք ՀՀ վարչապետին ներկայացրեցին ծավալուն «Զեկուցագիր»<sup>91</sup>: Սուխումի ՀԱԽ-ի բանագնացները պահանջում էին կասեցնել արխազահայության զանգվածներում ՀՀ-ի քաղաքացիությունը հաստատող վկայականների բաժանման գործընթացը:

«Վրաստանի և Հայաստանի վարիչները, – գրում է Ա. Զամայանը, – երկուսն էլ ցանկանում էին, որ Վրաստանի հայութիւնը վերադառնայ Հայաստան <...> Տարբերութիւնը մեր և վրացիների մէջ այն էր, որ մենք ցանկանում էինք, որ Վրաստանի հայութիւնը վերադառնայ հայրենիք ոչ թէ իբրև ընչազորկ զայթականութիւն, այլ իբրև մի բարեկեցիկ տարր, որ կարող էր իր երկրի տնտեսութեանը և բարգաւաճմանը զարկ տալ: Ամէն տեղից դէպի Հայաստան էին դիմում նպաստի և օգնութեան կարօւ բազմութիւններ. մենք ցանկանում էինք, որ Վրաստանից գոնէ հայութիւնը այլ վիճակում մեզ հասնէր: Ուրիշ կերպ էին մտածում վրաց դեկավարները, նրանք ձգուում էին, բոլոր երևոյթները պահելով հանդերձ, այնպէս անել, որ Վրաստանի հայութիւնը չնշին փոխհասուցումով թողնի իր ինչքը ու ստացուածքը վրացիներին և մերկանդամ տուն դառնայ: Այս միտքը նրանք հրապարակօրէն չէին արտայայտում, ի հարկէ, սակայն նրանց

<sup>90</sup> Տե՛ս ՀԱԱ, Փ. 276, գ. 1, գ. 33, թ. 136–136 շրջ.:

<sup>91</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 409, թ. 60–64:

ամբողջ քաղաքականութիւնը Վրաստանի հայութեան հանդէպ սրա ն էր հետապնդում<sup>92</sup>:

ՀՀ գործադիրը որոշել էր պաշտպանել արխազահայության շահերը: Ելնելով դրանից՝ նպատակահարմար էր համարվել Վրաստանի կառավարությանն առաջարկել որպեսզի ճանաչի Սույսումի վարչական շրջանի բոլոր հայերին՝ բացառությամբ առանձին հրաժարվողների, Հայաստանի Հանրապետության քաղաքացի, նաև պահպանի նրանց կապալավարձի իրավունքը ևս 2-3 տարի, որից հետո թույլատրի հայրենադարձությունը շարժական ամբողջ գույքով, որը հնարավորություն կտար արխաց այայերին Սայր Հայրենիքում հիմնել նոր օջախներ<sup>93</sup>:

Վրաստանի խորհրդայնացումից հետո այս ծրագիրը, սակայն, մոռացության մատնվեց, իսկ Արխազիայի հայության կյանքում սկսվեց մի նոր դարաշրջան:

Հանրագումարի բերելով զիմում շարադրված նյութը՝ կարելի է եզրակացնել.

- ✓ հայկական գաղթօջախը, նախ և առաջ, սուստել էր սոցիալական կովից, որը ծայրաստիճան լարել էր ազգամիջան փոխհարաբերություններն Արխազիայում,
- ✓ արխազական հասարակայնության թրքասեր հատվածը՝ սեփական պետականության վերածնունդը կապում էր էթնիկ զուման հետ, որի զիմավոր թիրախը, թերևս, պետք է լիներ արխազահայությունը,
- ✓ Օսմանյան Թուրքիայի ծավալապաշտական ձգուումները լրջորեն վտանգել էին արխազահայության ֆիզիկական գոյությունը, ինչը ստիպել էր նրան ապավինել կոմունիստական ուժերին,

<sup>92</sup> ՀԱՅՐԵՆԻՔ, 1928, հոկտեմբեր, էջ 135:

<sup>93</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, զ. 409, թ. 56:

- ✓ պաշտոնական թիֆլիսի գերակայության հաստատումը չազատեց աբխազահայությանն ազգային հալածանքի շարիքից, որի ուրվականը մերժընդմերթ առաջ էր գալիս ՎԴՀ-ի գոյության ողջ շրջանում,
- ✓ աբխազահայության նկատելի մասը հայրենադարձվել էր ցանկանում, ինչը համապատասխանում էր Հայաստանի Հանրապետության ազգահավաքման քաղաքականությանը:

ՎՐԱՍՏԱՆԻ ԳԵՐԻՇԽԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՉԻՈՒՄ  
ԵՎ ՏԵՂԻ ՀԱՅ ՀԱՍՏԱՔԻ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Խնդրու առարկա տարիներին Սոչիի շրջանը մի քանի անգամ ձեռքից ձեռք անցավ և քաղաքական տարրեր ուժերի տիրապետության տակ էր գտնվում, որոնք էլ տեղի հայ համայնքին ենթարկում էին տարաբնույթ հալածանքների, բռնությունների ու փորձում էին նրանց ծառայեցնել իրենց ուզմաքաղաքական շահերին: Սոչիում և նրա վարչական շրջանում բնակվում էր շուրջ 25000 հայ<sup>1</sup>, որը կազմում էր տեղի բնակչության գրեթե 30%-ը:

Օգտվելով Կուրանա-Սևծովյան Հանրապետության կոմունիստական իշխանությունների ծանր դրությունից և ափամերձ շրջաններում բռնկված քաղաքացիական կոյփներից՝ 1918 թ. հուլիսին վրացական զորագնդերը մուտք գործեցին Սոչի: Վրաստանի կառավարությունն այդ քայլը բացատրում և հիմնավորում էր «բոլշևիկյան անարխիային» վերջ տալու իր առաքելությամբ<sup>2</sup>: Քանի որ արխազահայերի մի մասն ակտիվորեն համագործակցել էր խորհրդային իշխանությունների հետ, իսկ ՀՅԴ-ի տեղի ճյուղը մերժել էր հակակրմունխստական դաշինք կապելու վրաց «մենշևիկների» առաջարկը՝ նրանց «ազենտները <...> [Սոչիի Հայոց] Ազգ. Խորհրդի վրայ դրկում էին կողակներ, մեղադրելով հայերին բոլշևիզմի մէջ, անվերջ բարբասանքներ էին անում կողակների հրամատարութեան մօտ հայերի բօլշևիկութեան մասին...»<sup>3</sup>: 1918 թ. սեպտեմբերին վրացիներին դաշնակից «սպիտակ» կազակների մի զորախումբ ավիրեց ՀԱԽ-ի գրասենյակի գույրը<sup>4</sup> և բռնություն գործադրեց շենքում գտնվող անձանց նկատմամբ<sup>5</sup>:

<sup>1</sup> Տե՛ս ՀԱՍ, ֆ. 200, ց. 1, գ. 409, թ. 60:

<sup>2</sup> «Демократическое» правительство Грузии и английское командование // КРАСНЫЙ АРХИВ, 1927, № 21, с. 151.

<sup>3</sup>Պոնտացի Ա. Սոչիի վերջին անցքերը // ԱՇԽԱՏԱՒՈՐ, 23. V. 1919:

<sup>4</sup> Տե՛ս ՀԱՍ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 8:

<sup>5</sup> ՀԱՅՐԵՆԻՔ, 1931, օգոստոս, էջ 149-150:

Այս տիած դեպքը մեծ աղմուկ հանեց, քանզի դրա մասին ՀԱԽ-ի նախագահությունն անմիջապես հեռազրել էր Թիֆլիս՝ Հայաստանի ներկայացուցիչ Ա. Զամայանին<sup>6</sup>: Սիշաղեպը շուապեց հարթել իսկովյն Սոյի ժամանած [«վարծես պատրաստ կը սպասէր»] կառավարական հանձնակառար Գ. Ն. Անջափարիձեն: Հայերը պահանջեցին պաշտոնից ազտել «զիւղական աւագակ կոմիսարներու»<sup>7</sup>: Այդ հարցում հանձնակառարը տվել էր իր համաձայնությունը և ՀԱԽ-ին իրավունք էր վերապահել նոր թեկնածուներ առաջարկել այդ տեղերի համար<sup>8</sup>:

Դրվատանքի արժանի սույն խոսումը չիրագործվեց, սակայն, թույլ տվեց, թերևս, ձեռք բերել նաև հայազգի ժողովական-ների համաձայնությունը՝ շրջանը Վրաստանին վարչական առումով ենթարկելու պաշտոնական Թիֆլիսի համար չափազանց կարևոր հարցում: Դա տեղի ունեցավ զյուղացիական համագումարում, որը մեկնարկել էր 1918 թ. դեկտեմբերի 5-ին Սոյիում:

Գ. Ն. Անջափարիձեն, որը «ընդհանրապէս մեղմ և ինտելիգենտ մարդու տպաւորութիւն կ'ընէր», շրջանային հանձնակառար նշանակեց Աշոտ Նաջարյանին: Նա «կարևոր գործիչ մըն էր և լաւ ծանօթութիւններ ունէր ժորդանիայի և այլ պետական անձերու հետ»<sup>9</sup>: «Խոստումնալից» այս քայլը, սակայն, եղավ լոկ դատարկ մի խայծ և, ինչպէս ցույց տվեց ժամանակը, չէր էլ կարող որևէ լուրջ բեկում մտցնել տեղի հայերի հետազա կյանքի մեջ: Հայազգի պաշտոնյան «իր ուղամասութեամբ անհաճոյ կ'ըլլայ կողոպսից կոմիսարներուն և ճակատի սպաներու մէկ մասին».

<sup>6</sup> Հայկական ազգային խորհրդի թալանը Սոյիում // ՄՇԱԿ, 5. X. 1918: Նաև՝ Դրութիւններ Սոյիում // ԱՇԽԱՏԱԲՈՐ, 5. X. 1918: Նաև՝ «Հռիգոն»-ի թոթակիցներից // ՀՈՐԻԶՈՆ, 4. X. 1918:

<sup>7</sup> Հայկական միսսիայում // ՀՈՐԻԶՈՆ, 7. IX. 1918:

<sup>8</sup> ՀԱՅՐԵՆԻՔ, 1931, օգոստոս, էջ 152:

<sup>9</sup> Սոյիում // ՀՈՐԻԶՈՆ, 4. X. 1918:

<sup>10</sup> ՀԱՅՐԵՆԻՔ, 1931, օգոստոս, էջ 152:

տոնից: Նրան փոխարինեց ուն մութ անձնավորություն, որը «ցորեկը կոմիսարութիւն կ'ընէր և զիշերը՝ աւագակութիւն»<sup>11</sup>: ՎՍԴԲԿ-ի մամուլը հայտնում էր, որ «այլանդակությունների դեմք բողոքները եղան անարդյունք: Կազակների ջոկատի գործերը մեծ զայրույթ էին առաջացրել բնակչության մեջ: Այդ բարկությունը հետագայում ևս չէր վերանում մեր հանրապետության զինվորական հրամատարության անտակտ քայլերի շնորհիվ»<sup>12</sup>:

Վավերագրերը վկայում են, որ Սոյիի գրավումից հետո վրացական իշխանությունները հայ բնակչությանը ենթարկում էին բռնությունների և կողոպուտի: Շրջանային վարչակազմը մեծ մասսամբ կազմված էր վրացիներից, ինչը տեղացիները բացասարար էին ընդունում<sup>13</sup>: Շրջանի հայկական գյուղերում նշանակված վրացի հանձնակատարները վարպետորեն տարատեսակ պատրիվակներ էին մոգունում բնակիչներից կաշառք ստանալու նպատակով: Ումանք էլ անգամ դրանով չէին սահմանափակվում: Այսպես, Ներքին Հոռ գյուղի հանձնակատար Կվերկվիլիան կեղծ մեղադրանք էր ներկայացրել հայերին, իբր, ապստամբություն նախապատրաստելու համար: Այնուհետև, նա կալանավորված խեղճուկրակ երկրագործներից փրկազին էր պահանջել՝ ուզմական դատարանի առաջ կանգնելուց նրանց ազատելու համար<sup>14</sup>: Նման «հնարքներ» գործադրելուց ետ չեր մնում նաև Վերին (Գոռնոյն) Հոռ գյուղի հանձնակատար Զիշիրայան: Անպարկեշտ և զագրելի այս երևոյթները համատարած և արդարացի դժգոհության ու ցասման ալիք էին առաջացնում: Անտարբեր շմաց նաև Թիֆլիսի հայալեզու մամուլը, որը բարձրաձայնեց ու նախատեց վարչակազմի նման չարաշահումները: «Իւրաքանչիւր վրացի կոմիսար, – հայտնում է ՀՅԴ-ի լրագիրը, – լինելով “վերելից” նշանակված հայ զիւղի համար, իրեն զգում է կայսերական զահի վրայ և իր բռնութիւններով ու զազանութիւններով գերազանցում

<sup>11</sup> ՀԱՅՐԵՆԻՔ, 1931, հոկտեմբեր, էջ 135:

<sup>12</sup> В Грузии: В Сочинском округе // БОРЬБА, 21. XII. 1918.

<sup>13</sup> Чернович Н. Грузины, добровольцы и Сочинский округ // НАРОДНОЕ ЗНАМЯ, 26. III. 1919.

<sup>14</sup>Տե՛ս ՀԱԱ, ֆ. 441, գ. 1, գ. 56, թ. 11:

է անզամ ցարական քեռիսվաներին»<sup>15</sup>: Անկարգապահ զինվորականության կողմից գույրի, սննդի և ընտանի կենդանիների ապօռինի բռնազրավումները՝ շուտով փչացրին փոխհարաբերությունները նաև նրանց և տեղի ոռու զյուղացիության հետ<sup>16</sup>:

1918 թ. սեպտեմբերին Սոյի ժամանած ՎԱԽ-ի անդամ Ե. Պ. Գեղեձկորին երկրի վարչապետին իրազեկում էր, որ իրենց «դեմոկրատական հանրապետության» հանդեպ շրջանում մինչ այդ եղած համակրանքը և բարյացակամ վերաբերմունքը փոխվել է<sup>17</sup>: Սակայն պաշտոնական Թիֆլիսը խուսանավոր մի շարք քայլերով և մեքենայություններով դեռ կարողանում էր Սոյին պահել իր ազգեցության տակ: «Վրացիների անկարգութիւնները, – մեկնարանում էր ժամանակակիցը, – ատելութիւն [ստեղծեցին] առաջին 4-5 ամիսներում, նաև ոռու զիւղացիների մէջ, քայլ Ի. Ռասմիշվիլին, Գ. Անջափարիձեն Ե. Գեղեձկորին իրենց ստեպայցելութիւններով, ճառերով և զանազան խոեղի սոցիալիստական գործիչների աջակցութեամբ, որոնք մտել էին վրացական ծառայութեան մէջ <...> և սարսափում էին Կամաւորական բանակից՝ մեղմացրին այդ ատելութիւնը, հասկացնելով, որ երկու չարիքներից փոքրացոյնը վրացական կարգերն են, քանի որ վրացիները զինուր չեն վերցնում, իսկ Կամաւորական բանակը իիստ մորիլիզացիա է անում»<sup>18</sup>:

Սոյիում զունվող ոռու սոցիալիստները սարսափահար էին լինում ակնկալելով հակահեղափոխական «սպիտակ» բանակի առաջինադաշման դեպքում իրենց սպառնացող վտանգը: Հայտ Ա. Հակոբյանի մեկ այլ արժեքավոր վկայության, նրանց «վախը այնքան մեծ է, որ ալ թունդ պաշտպան են վրացական քէժիմին, կը նուիրուին անոր հաստատման: Գիւղերը կ'երթան, քարոզութիւններ կ'ընեն, կը վախցնեն ոռու զիւղացիները, թէ Տէնիքինցիները որ զան, զինուր պիտի առնեն, իսկ վրացիները այդ տեսակ

<sup>15</sup> Անկախութեալին, թէ «զուլում» // ԱՇԽԱՏԱՒՈՐ, 23. V. 1919:

<sup>16</sup> Воронович Н. В. Меж двух огней (Записки зеленого) // Архив русской революции, т. VII. Берлин, 1922, с. 93.

<sup>17</sup> ՎԿՊԴԱ, ֆ. 1861, գ. 2, գ. 26, թ. 38-40:

<sup>18</sup> Պոնտացի Ա. Սոյիի վերջին դէպքերը // ԱՇԽԱՏԱՒՈՐ, 13. V. 1919:

մտադրութիւն չունեն: Այդ միակ տարրերութիւնը բաւական է ուս զիւղացիութիւնը թեքելու դեպի վրաց տիրապետութիւնը»<sup>19</sup>: Այսինքն, ցանկանալով հեռու մնալ և չներքաշվել Ռուսաստանում մոլեզնող պատերազմի մեջ՝ ուս զիւղացիությունը որոշել էր համակերպվել վրացական տիրապետության հետ: Առավել ևս, որ պաշտոնական Թիֆլիսը խոստանում էր շրջանին տրամադրել լիիրավ ինքնակառավարում: Այսպիսով, տեղի տցիալիստների նշանաբանն էր՝ բնակչությունը վրաց «դեմոկրատական հանրապետության» ազատական վարկը պետք է գերադասի «սպիտակ» գեներալների բոնատիրական վարչակարգից<sup>20</sup>:

Սակայն Ռուսաստանի հարավում հետզիեսէ հզորացող «Սպիտակ շարժման» առաջնորդները չեին կարող անտարբեր մնալ Սովիի շրջանի ճակատազրի հանդեպ: Նրանք համառոքեն հանդես էին զայխ «Միացյալ և անբաժան» Ռուսաստանի կարգախոսով և ոչ մի պարագայում չեին ցանկանում ճանաչել Վրաստանի պատահաբար ձեռք բերած գերիշխանությունը՝ Ռումանովների կազմալուծված կայսրության այս գողտրիկ անկյունում: «Սպիտակ» զորքերի (Կամավորական բանակ) զիսավոր հրամանատար Ա. Ի. Դենիկինը պահանջում էր շրջանը մաքրել վրացական կայազորներից և այնտեղ դարձյալ մոցնել ռուսական կառավարում: Երբ Վրաստանի և Հայաստանի միջև 1918 թ. դեկտեմբերին պայթեց կարճատև պատերազմը՝ վրաց հրամանատարությունը Սովիի իր ուգամական ստորաբաժանումների նշանակալի մասը շտապ տեղափոխեց Բորչալուի զավառ: Օգտվելով այդ հանգամանքից՝ սպիտակներն առանց կովի առաջացան ու զրավեցին ուգամակարական մեծ նշանակություն ունեցող երկարուղային Լոռ կայարանը<sup>21</sup>: «Սպիտակ» զորքերին ևս մեկ հարված էր մնում՝ Սովիին վերջնականապես տիրելու համար:

<sup>19</sup> ՀԱՅՐԵՆԻՔ, 1931, օգոստոս, էջ 151–152:

<sup>20</sup> Редакционная колонка // НАРОДНОЕ ЗНАМЯ, 11. II. 1919.

<sup>21</sup> «Меморандум», Добровольческой армии английскому командованию по поводу взаимоотношений с Грузией // КАВКАЗСКОЕ СЛОВО, 5. IV. 1919.

Քանի որ վրաց իշխանությունների կողմից սահմանված ծանր հարկերը բարդացրին առևտուրը և հացահատիկի հայթայթումը, նաև մանավանդ, որ «Սպիտակ շարժումը» Վրաստանին մաքսային պատերազմ էր հայտարարել, ուստի Սովոր քաղաքի ոռու ունենոր բնակչությունը պատգամավորական ու փաստաթղթային մի շարք որոշումներով դիմում էր «Սպիտակ» բանակի հրամանատարությանը՝ վերջինիս խնդրելով անհապաղ գրավել շրջանը<sup>22</sup>: Մեծապետական «Սպիտակ շարժմանը» համակրող տեղացի ոռուները ջանք չեն խնայում հայերին վրացիների դեմ հրահրելու համար: Ա. Հակոբյանի արժեքավոր վկայությամբ, «ոռու միապետական և ազատական տարրերն ալ կը խլրտին, շարունակ մեզ կը դիմեն լեզու զոնելու և ընդհանուր գործողութեան դիմելու: Բայց մենք բացարձակապէս կը մերժենք»<sup>23</sup>:

Լոռի-Տաշիրում վրացիների ու հայերի զինաբախումը կտրուկ բարդացրեց Վրաստանում բնակվող մեր ցեղակիցների կացությունը: Հստ ՀԱԽ-ի անդամների վկայության, երկրի հայերի «ազգային զգացումների վիրատրանքներն <...> սովորական երևոյթներ դարձան»<sup>24</sup>: Վրացական վարչակազմի հալածանքները, չարաշահումները և բռնությունները գնալով շատ ավելի դաժան բնույթ էին կրում: Դրա համար ազդանշան է հանդիսացել ՆԳ նախարար Ն. Ռամիշվիլու գաղտնի հրահանգը: Ոստիկանության հատուկ ջոկատները հայերի բնակարաններում սկսում են զիշերային ստուգումներ, որը վերածվում է իսկական թալանի և օր օրի վրա այն հասնում է աննախադեպ չափերի: Փակվում են հայերի խանութներն ու կրպակները, կերպում են ոչ վրացական պարբերականների գրասենյակները: Վրաց թերթերում բացահայտ շովինիստական բովանդակություն ունեցող և հերյուրանքներով լեցուն նյութեր էին գետեղվում, որոնք միաբերան կոչ էին անում դաժան պայքար ծավալել երկրի ողջ հայ ազգարնակ-

<sup>22</sup> Чернович Н. Грузины, добровольцы и Сочинский округ // НАРОДНОЕ ЗНАМЯ, 27. III. 1919.

<sup>23</sup> ՀԱՅՐԵՆԻՔ, 1931, հոկտեմբեր, էջ 135:

<sup>24</sup> Սովոր շրջանի Հայոց ազգային խորհրդի դիմումը // ԱՇԽԱՏԱ-ԻՈՒ, 25. III. 1919:

յության դեմ, բռնագրավել նրա ունեցվածքն և քշել նրանց Վրաստանից: Զառանցանքը հասել էր այն աստիճանի, որ ազգային դեմոկրատների ազդեցիկ կուսակցության պարբերականը պնդում էր, թե «այժմ հայերի դեմ մենք մղում ենք իրական ռասայական պայքար: Այս պատերազմը պետք է որոշի, թե ո՞վ կգերիշիի Կովկասում»<sup>25</sup>: Այսպիսով, այդ չարաքաստիկ օրերին հայ ազգաբնակչությունը զրկվեց ամեն տեսակի իրավունքներից, նրա պատիվը, ազատությունը, ունեցվածքն ու գույքը դարձան ոստիկանների ազատ քմահաճույքի առարկա: «Եւ եթէ այս տեղի է ունեցել այստեղ՝ Թիֆլիսում, – արձանագրում էին ՀԱԽ-ի անդամները, – դժվար չէ պատկերացնել հայերի դրութիւնը Վրաստանի գաւառներում, որոնք թողնված են սեփական բաղդին և ողորմածութեանը տեղական ադմինիստրացիայի, որ սեւում և դաստիարակուում է վրաց մամուլի հայերի դեմ ուղղված բացարձակ պրօպագանդայով»<sup>26</sup>:

Էթնիկ գտման «օրինական հիմունքները» նախապատրաստելու համար վրաց մամուլի և հանրային կարծիքի կողմից հայերին սկսեցին վերագրվել «բոլշիկեան յեղաշրջման» ծրագրեր, «Վրաստանը ներսից պայթեցնելու դաւեր»<sup>27</sup>: Քանի որ հայերի վիճակը Սովի շրջանում օրեցօր ծանրանում էր՝ տեղի ՀԱԽ-ը մի զաղսնի դիմում էր պատրաստել ուղղված Եկատերինոդարում գտնվող անզիւդական զինվորական առաքելությանը՝ «ինդրելով որ միջոցներ ձեռք առնուին այս անիշխանութեան վերջ մը տալու և չէզոք գօտի յայտարարելու Սովի շրջանը»<sup>28</sup>: Ա. Ի. Դենիկինը, սակայն, խիստ բացասարար էր տրամադրված բրիտանացիների միջնորդության, նաև Սովիում վերջիններիս զինված «խաղաղաբարների» հայտնվելու հեռանկարի հանդեպ: «Սպիտակ» զորա-

<sup>25</sup> «Եօյա՛րտօյցլու» («Սաքարբավելու»), 29. XII. 1918.

<sup>26</sup> Դիմում վրաց դեմոկրատական հանրապետութեան կառավարութեան նախագահին // ՄԱՅԱԿ, 12. I. 1919:

<sup>27</sup> ՀԱՅՐԵՆԻՔ, 1929, մարտ, էջ 118:

<sup>28</sup> ՀԱՅՐԵՆԻՔ, 1931, հոկտեմբեր, էջ 137:

վարները անհամբեր սպասում էին այն երանելի օրվան, երբ հենց իրենք կզրավեն վիճակարույց այդ շրջանը:

Հակահայկական հիստերիան, որը ողողել էր վրացալեզու մամուլի էջերը, չէր կարող իր անմիջական հետքը չթողել նաև զինծառայողների զիտակցության վրա: «Վրաց զինվորական-ները, – վկայում է դեպքերի ժամանակակիցը, – դէպի հայերը վերաբերում են բաւական կոպիտ ու կասկածով. հայերին համարում են թշնամի վրաց հանրապետութեան»<sup>29</sup>: Սոյնում և նրա հարակից բնակավայրերում հաճախ տեղի էին ունենում գողություններ և ավազակություններ: Կառավարության լիազոր Մ. Խոչլական երկրի վարչապետին հասցեազրկած իր զեկուցազրում ընդունում էր հիշյալ երեսությունների առկայությունը<sup>30</sup>: «Ես անձամբ տեսել եմ, – զրում է նա, – հետևանքները մի շարք անթույլատորելի գործերի, հափշտակումների և կոպիտ վերաբերմունքի բնակչության նկատմամբ զինվորների կողմից»<sup>31</sup>:

1919 թ. հունվարի 31-ին Վերին Լոռ և Կուբանսկոյե գյուղերի հայ բնակիչների ու թալանով գրադպու վրաց մի խումբ զինվորների միջն տեղի ունեցավ ընդհարում, ընդ որում վերջիններից մեկը թեթև վիրավորվեց և գերի ընկափ: «Գիտացիները ազատ կ'արձակեն սարսափած զինուորք իր զէնքով, միայն կը խրատեն, որ այլևս ոտք չկոխէ զիւղի սահմանները»<sup>32</sup>: Կարգազանց զինվորները սեփական մեղքը թաքցնելու համար միջադեպի իրական պատճառների մասին իրենց հրամանատարությանն ասել էին, թէ «զիւղացիները յանկարծակի կը յարձակին իրենց վրայ»: Լուրը իմանալուն պես ավագ սպան կարգադրել էր

<sup>29</sup> «Հորիզոն»-ի թօթակիցներից// ՀՈՐԻԶՈՆ, 4. Խ. 1918:

<sup>30</sup> Ըստ Ա. Հակոբյանի վկայության, «Խաչալավա բարի մարդ է, բայց անիրազեկ իր կառավարած շրջանին և դեպքերուն, կամ գուցէ անկարող մութ ուժերու դէմ: <...> Կատաղի յարձակումներու գործած է զիուրականներու և վարչութեան շարաշահութիւններու դէմ, յատարաբելով որ այսպիսով ոչ միայն Սոյնին կը կորսնցունեն, այլ և Վրաստանը կը կործանուի» (տե՛ս ՀԱՅՐԵՆԻՔ, 1931, հոկտեմբեր, էջ 139):

<sup>31</sup> ՎԿՊԴԱ, ֆ. 1861, գ. 2, գ. 116, թ. 22-27:

<sup>32</sup> ՀԱՅՐԵՆԻՔ, 1931, հոկտեմբեր, էջ 138:

պատժիչ մի զորախումբ ուղարկել հայ խաղաղ երկրագործների դեմ, իբր, նրանց ապստամբությունը ճնշելու համար: Դեռ տեղ չհասած՝ կատաղած զինվորները համազարկով սպանել էին մի տարեց հովվի<sup>33</sup>:

Հայ զյուղացիներն այդ պատժիչ ջոկատին թույլ չտվեցին մուտք գործել իրենց բնակավայրերը: Դրանց մատուցների մոտ խւկական ճակատամարտ տվեցին: Զենք վերցրած երկրագործներին զինվորում էր Գաբրիել Մատիյանը: Նա դեռ պատմական հայրենիքում թուրքերի դեմ «կոհիներու մէջ եփած» մի քաջ անձնավորությունն էր<sup>34</sup>: Վրաց ջոկատի և հայերի միջն ընդհարումը տեսեց մի քանի օր: Այդ ողբերգական օրերին հայերը ևս զոհեր տվեցին. զինվորների ձեռքը պատանդ ընկած Ուշ-Դերե ազարակի երկու անմեղ բնակիչ ուղեկալի կողմից անողոքարար սլինահարվել էին<sup>35</sup>:

Սոյիի ՀԱԽ-ը և հայ հասարակայնությունն իրենց բողոքի ձայնը դիմումով կարողացան հասցնել Թիֆլիս՝ բրիտանական զինվորական առաքելությանը: Դրա բովանդակությունն անզիացիները խսկոյն հայտնել էին Վրաստանի կառավարությանը<sup>36</sup>: Ազգակիցների պահանջատիրությանն առաջինը շտապեց նեցուկ կանգնել Վրաստանի ՀԱԽ-ը: Նրա արտահերթ նիստում որոշվել էր դիմել «կառավարութեանը խառը կօմիսիա կազմելու ու ուղարկելու տեղ, գործերը քննելու ու հարթելու համար»<sup>37</sup>:

Սոյիի ՀԱԽ-ի ելույթին սատար կանգնեց նաև էւռների տեղական կոմիտեն: Նա նախասում էր վարչակազմին, որ բռնությունների դեմ ըմբոստացած զյուղացիներին «Ճնշում է դաժանությամբ հիշեցնող ցարական ժամանակների պատժիչ արշավանքները»<sup>38</sup>: Փորձելով քավել այդ մեղքերը վրաց ազգային տեղի

<sup>33</sup> ՀԱՍ, ֆ. 441, գ. 1, զ. 56, թ. 9 շրջ.:

<sup>34</sup> ՀԱՅՐԵՆԻՔ, 1931, հոկտեմբեր, էջ138:

<sup>35</sup> ՀԱՍ, ֆ. 441, գ. 1, զ. 56, թ. 14:

<sup>36</sup> ՎԿՊԴԱ, ֆ. 1861, գ. 2, զ. 38, թ. 17-21:

<sup>37</sup> Վրաստանի Հայոց ազգային խորհուրդ // ՄԾԱԿ, 9. Ա. 1919:

<sup>38</sup> ՀԱՍ, ֆ. 441, գ. 1, զ. 56, թ. 7:

խորհուրդը (Ս. Խոփերիա և այլք) դիմել էր ՀԱԽ-ին հատուկ ուղերձով: «Վրաց հասարակությունը, – մասնավորապես ասված է սույն վավերագրում, – արտահայտում է իր ափսոսանքը որոշ վրաց զինվորների կողմից կատարած էքսեների վերաբերյալ: Միաժամանակ, վրաց հասարակությունը պատվիրակների միջոցով բարեխոսել է բարձրագույն ուսամական և քաղաքական իշխանությունների առջև հայ բնակչության և զորքերի միջև հակամարտությունն անհապաղ վերացնելու մասին: Վրաց հասարակությունը հույսով է, որ բարեկամությունը հայ և վրաց եղբայր ժողովուրդների միջև չի խախտվի և առաջացած թյուրիմացություններն ու առանձին մութ անձանց սադրանքները հետագայում կկանխվեն ոգով բարեկամ երկու ժողովուրդների միացյալ ուժերով»<sup>39</sup>: Շրջանում զործող կուսակցական և ազգային կազմակերպությունների արտահերթ համաժողովը ևս դատապարտել էր հաճախակի դարձած բռնությունների պրակտիկան խաղաղ բնակչության նկատմամբ և առաջ էր քաշել ուսամական զործողությունները անհապաղ դադարեցնելու մասին պահանջ<sup>40</sup>: Այսպիսով, հայատյաց տրամադրություններով տողորված տարրերի սադրանքը տապալվեց, ինչը ակամա տարավ նաև Սոչիում վրաց տիրապետության անկմանը:

«Սպիտակ» զինահրամանատարները ուշիուշով հետևում էին առափելյա այս շրջանում տիրող կացությանը: Ա. Ի. Դենիկինը գրում է. «Սահմանը հատած ուսւները և առավելապես հայերը՝ հարակից զյուղերի բնակչները, մեր առաջնային պահակակետերն էին հասցնում տեղեկություններ՝ իրենց հետ այնտեղ կատարվող խոշտանգումների մասին և օգնություն էին հայցում»<sup>41</sup>: Լսելով Վերին Լոռ և Կուրանսկոյե զյուղերի շուրջ ծավալված ընդհարման մասին, Դենիկինը ցանկանալով, իբր, դադարեցնել արյունահեղությունը, 1919 թ. փետրվարի 5-ին իրեն են-

<sup>39</sup> Նոյն տեղում, թ. 6–6 շրջ.:

<sup>40</sup> Նոյն տեղում, թ. 4–5:

<sup>41</sup> Деникин А. И. Очерки русской смуты. В 3-х книгах. Книга третья – Вооруженные силы Юга России. М., 2005, с. 222.

թակա զորքերին հրամայեց զրավել վիճակարույց շրջանի ողջ տարածքը<sup>42</sup>: Հայերի նկատմամբ «սպիտակ» գեներալների «սրբառագին» վերաբերմունքը պայմանավորված էր, թերևս, քաղաքական շահով: Նրանք նպատակ ունեին հայերի օգնությամբ զրավել Սոչին: Վրաց զինվորականության ձեռքով վնաս կրած հայկական սահմանամերձ զյուղերի հարյուրավոր բնակչներ շտապեցին միանալ հարձակման անցած Կամավորական բանակի զորագնդին: «Սպիտակները», իրենց հերթին, աշխատեցին զինել Սոչիի, Աղլերի և Գագրայի հայերին՝ նրանց հրահրելով վրաց իշխանության դեմ: Առավել խոշոր ընդհարում եղավ Մացեստայի մոտ, որտեղ հայերը ետ մղեցին հակազրոնի անցած հակառակորդին<sup>43</sup>: Ամեն կողմից օդակված վրացական կայազորները պարտադրված էին անձնատուր լինել: Դեպքերը, այնուհետև, զարգացան կայծակային արագությամբ. 1919 թ. փետրվարի 6-ին և հաջորդ երեք օրում սպիտակները ռազմակալեցին Լոռ և Բզիք գետերի արանքում գտնվող տարածքը:

Այսպիսով՝ «սպիտակ» զորավարները հմտորեն օգտագործեցին վրացական կամայականությունների հանդեպ Սոչիի շրջանի հայության ունեցած ցասումը: Զորավար «Զերէպով, որ հանդիսաւոր կերպով մուտք կը գործէ քաղաք և Հայոց Ազգ. Խորհրդի շենքին առջևեն անցած ատեն բարձրածայն շնորհակալություն կը յայտնէ եղայր և քաջ հայերուն»<sup>44</sup>: Ի դեպ, այսպէս, ի հայու եկավ, աճեց և ծաղկեց ՀՅԴ տեղի ճյուղի և սպիտակ մեծապետականների հակավրացական «գաղտնի դաշինքի» մասին առասպելը: Այդ մասին իր հուշերում վկայում է վրացիների մոտ ծառայության անցած մի ոռու սպա: «Կամավորականների գործակալները, – զրում է նա, – օգտվելով հայերի և վրացիների միջև եղած ազգային թշնամանքից, կապ էին հաստատել դաշնակցականների տեղի կոմիտեի հետ, որոնց միջոցով նախապատրաս-

<sup>42</sup> «Меморандум», Добровольческой армии английскому командованию по поводу взаимоотношений с Грузией // КАВКАЗСКОЕ СЛОВО, 5. IV. 1919.

<sup>43</sup> ՀԱՅՐԵՆԻՔ, 1931, նոյեմբեր, էջ 143:

<sup>44</sup> Նոյն տեղում, էջ 144:

տում էին հայերի ելույթն ընդդեմ վրացական տիրապետության: Թեպես կամավորականները հարձակվեցին ավելի վաղ, քան բռնկվեց ապստամբությունը, հայերի զոկատներն աջակցելով նրանց՝ հարվածեցին վրացական զորքերի թիկունքին»<sup>45</sup>:

Վրաց մամուլը, բնականարար, շտապեց յուրովի մեկնաբանել սույն դեպքերը: «Մենք գիտենք, — զրում է ժամանակակիցը, — հայ տարրը օգնութեան զնաց Կամաւորական զօրքերին <...> Դա դաշնակցականների ազիտացիայի չար հետևանքն է, որը նրանք մղում էին շրջանում դէպքերից առաջ և, որը ուշակցիայի ցեխը զցեց հայ գիտացուն»<sup>46</sup>: Վրաց պետական այրերն իրենց ելույթներում արդեն սովորական էին դարձել Վրաստանի դեմ ՀՅԴ-ի «չար» քարոզության մասին հերիաքը: Նրանք այդ սուտը հորինեցին, թերևս, հայ ժողովրդի նկատմամբ սեփական քարքարությունների իրական դրդապատճառները քողարկելու և քարցնելու համար: Պարզ է, որ վրաց ազգայնականները, իրենց ձախողման պատճառը «կը վերագրէն հայերուն և կը սպառնային վրէժ լուծեր»<sup>47</sup>: Նախարար Ն. Ռամիշվիլին Վրաստանի խորհրդարանի ամբիոնից պաշտոնապես Սոյիուն զործող ՀՅԴ-ի ճյուղին վերագրեց Դենիկինին աջակցելու մեղքը<sup>48</sup>: Այսպիսով, Սոյիի դեպքերը Վրաստանում առաջացրին հակահայկական քարոզության մի նոր և խոշոր ալիք<sup>49</sup>, որը կարող էր ունենալ շատ ավելի

<sup>45</sup> Воронович Н. В. «Зелёные» повстанцы на Черноморском побережье // Деникин-Юденич-Брангель: Мемуары, М. – Л., 1931, с. 162.

<sup>46</sup> «Էրթորբա»-ն հայերի մասնակցութեան մասին Սոյիի դէպքերին // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 15. Ի. 1919:

<sup>47</sup> ՀԱՅՐԵՆԻՔ, 1931, նոյեմբեր, էջ 145:

<sup>48</sup> ЗАКАВКАЗСКОЕ СЛОВО, 25. Ի. 1919.

<sup>49</sup> «Սահմալսոն սաքմե» պարբերականը «Վրաստանի թշնամիներ» խորագրի տակ իր խմբագրական առաջնորդում նախատում էր հայերին: «Դաշնակցականները և ուսւ նախները <...> իրենց ուրախութինը չեն ել կարողանում ծածկել, արդարացնում են Դենիկինի դաւադրական յարձակումը և Սոյիի շրջանում հայերի համար աւանդական դարձած և սովորական դաւաճանութիւնը: Մի խօսքով, ամեն կողմից թշնամիներ: Թշնամիներ դուրսը և թշնամիներ ներսը, մեր

հեռուն գնացող հետևանքներ<sup>50</sup>: Դարձյալ վտանգվում էր վիրահայության անդորրը, որը չէր էր բուժել հայ-վրացական պատերազմի օրերին իրեն հասցված վերքերը: Հետևաբար, Ա. Հակոբյանը պարտադրված էր անմիջապես հերքել վրացական կողմի կեղծ մեղադրանքը: «Վրացական կառավարութիւնը և մամուլը, – գրում է նա, – էլի “զագովոր” տեսնի այս գործերի մէջ: Բայց պնդում ենք, որ Սոցիի Ազգ Խորհուրդը ոչ մի կապ չունի այս պատմութեան մէջ և միայն վրաց վարչական մէրենայի ապիկարութիւնը և զինտրների ու պաշտօնեաների ծայրայեղ անկարգութիւնները առաջ բերին հրդեհ և անկում վրաց կառավարութեան՝ Սոցիի շրջանում»<sup>51</sup>:

Հանրագումարի բերելով վերը շարադրած նյութը՝ կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների:

- ✓ Սոցիի շրջանում ՎԿՀ-ի բանակի և «կարմիր» գործերի միջև տեղի ունեցած ընդհարման ժամանակ հայերի բոնած չեղոր դիրքը եղավ բոլշևիկյան տրամադրություններ նրանց վերագրելու պատճառը, որից օգտվելով էր վրաց զինվորականությունը հալածում էր հայ ազգաբնակչությանը,
- ✓ Կարգազանց զինվորականության ձեռքով հայերի ահաբեկումը պայմանավորված էր ոչ միայն հայատյաց տրամադրությունների տարերային արտահայտումով, այլ նաև

սեփական օջախում» (տե՛ս «Եսեացեա Եսյմյ» (1919, № 458) օրաթերթից արտատպված հոդվածը տե՛ս Վրաց թերթերից // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 18. II. 1919):

<sup>50</sup> Այսպես, հայերը դարձյալ հալածվեցին Կախեթիայում: «Սղնախի հայ ազգաբնակչութիւնը, – կարդում ենք լրագրում, – կատարելապես տերրորի է ենթարկված: Զանազան սուս-սուս լուրեր տարածելով Դենիկինի շուրջը և այդ կոնֆլիկտը կապելով հայ ազգաբնակութեան լինել շինելու հարցի հետ, վրացի շովինխատներն ուղղակի սպառնում են և այս խուլիզանական քայլերը անում են միլիցիայի պետը և գլարդիայի մեջը, ասելով, որ Դենիկինի գալը և “կարմիր տերրորը” հայերի դեմ միաժամանակ կը լինի» (տե՛ս Վրաստան տեղեկութիւններ Կախեթիայից // ԱՇԽԱՏԱԽՈՐ, 18. VI. 1919):

<sup>51</sup> ԱՇԽԱՏԱԽՈՐ, 25. III. 1919:

վարչակազմի դիրքորոշմամբ, որը դիտավորյալ աշքաթող էր անում այդ երևոյթները՝ նպատակ ունենալով դուրս հանել հայ երկրագործներին և նրանց փոխարեն *Սոցիի շրջանում վերաբնակեցնել սակավահող վրաց գյուղացիներին*, ինչը, թերևս, պետք է մեղմացներ սոցիալական հակառակությունները Վրաստանի ներսում,

- ✓ Վրաստանի և Հայաստանի միջն ծագած կարճատև զինարքիումը չէր կարող շանդրադառնալ նաև *Սոցիի հայերի կացության վրա*, որը էլ ավելի ծանրացավ,
- ✓ *հայ-վրացական հարաբերությունների սրումը խիստ բացասական հետևանքներ ունեցավ նաև և առաջ հենց Վրաստանի բուն շահերի տեսանկյունից, քանզի իրախուսեց ոուս մեծապետականներին և առիթ ընձեռեց նրանց տիրել *Սոցիի վիճելի շրջանին*:*

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՃՈՒՄՆ  
ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վրացական հանրապետության հոչակման օրը նրա հիմնադիր այրերից ամենակարկառուն դեմքը՝ Ն. Ն. Ժորդանիան, խոստանում էր, որ «մեր ազգային փոքրամասնությունները կլինեն նույնքան իրավագոր, ինչպես մեր պետության ազգային մեծամասնությունը՝ վրաց ժողովուրդը»<sup>1</sup>: Շոայլորեն տարածվող այս խոստումները, սակայն, հայալեզու մամուլի էջերում արժանացան աչալուրց վերաբերմունքի և խոհեմաքար պնդվեց, որ մինչև Վրաստանի հայությունը «չկազմակերպի և կանոնաւոր ու իրաւասու մարմինների միջոցով իրաւունքների պաշտպանելու և իրագործելու խնդիրն առաջ չտանի, այդ իրաւունքները լոկ դատարկ խօսքեր կը լինեն»<sup>2</sup>:

1918 թ. հունիսի 15-ին Թիֆլիսում գումարված ՀՅԴ-ի անդրանիկ «ուսունական ժողովի» մասնակիցներն առաջ էին քաշում Վրաստանի հայ համայնքի մշակութային և դպրոցական կարիքները ինքնավար հոգալու անհրաժեշտության գաղափարը: Քննության առնելով վրաց պետության սահմաններում ասրող հայության ստվար զանգվածի իրավիճակը՝ ժողովը անհրաժեշտ գուազ ամենակարծ ժամանակամիջոցում ստեղծել Հայոց ազգային խորհուրդ: Նա «իր վրայ այսի վերցնի հիմնաւորելու և կեանքի մէջ իրականացնելու Հայոց Ազգային կուլտուրական աւտոնոմիան Վրաստանի սահմաններում»<sup>3</sup>, – ամրագրված էր ժողովի բանաձևում:

Ինչպես հայտնի է, մինչ այդ Թիֆլիսում գործող Հայոց ազ-

<sup>1</sup> Տե՛ս «Եաեացնեո Նայթյ» («Սախալիս սարմեն»), 28. V. 1918.

<sup>2</sup> Տե՛ս Վրաստանի հայութեան կազմակերպումը // ՀՈՐԻԶՈՆ, 9. VI. 1918:

<sup>3</sup> Տե՛ս Ներքին տեսություն. Հայ թեղ. Դաշնակցություն // ՀՈՐԻԶՈՆ, 30. VI. 1918:

գային խորհուրդը (որի նախագահն Ավ. Ահարոնյանն էր) 1918 թ.  
հուլիսի 17-ին փոխադրվեց նորակազմ Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք: Առաջ եկած քաղաքական անբարենպատ պայմաններում անհետաձեկի պահանջ և խնդիր դարձավ անհապաղ ձևավորել ազգային մեկ այլ ղեկավար օղակ, որի բացակայությունը գրեթե անմիջապես զգացնել տվյալ Վրաստանի ողջ հայության համար: «Վրաստանի Հայոց ազգային խորհուրդ»<sup>4</sup> կոչված նոր կառույցը կազմակերպվեց հայկական երկու կուսակցությունների և քաղաքական այլ հոսանքների փոխադարձ համաձայնությամբ: Նրա ակունքների մոտ կանգնած էին և հիմնադիր անդամներ դարձան քաղաքական և հասարակական անվանի ու ականավոր այնպիսի գործիչներ ինչպիսիք էին՝ Մ. Շ. Դապաշանյանը<sup>5</sup>, Մ. Մ. Մարությունյանը<sup>6</sup>, Գ. Պ. Մելիք-Ղարազյանը<sup>7</sup>, Ա. Քարիսուդարյանը<sup>8</sup>, Հայ Շողովրդական կուսակցությունից, Ն. Պ. Աղբայանը<sup>9</sup>, Հ. Գ. Արդությանը (Խանասորի Իշխան)<sup>10</sup>, Գ. Ա. Տեր-Ստեփանյան, Դ. Գ. Դավիթյանյանը<sup>11</sup>, Հ. Յ. Դաշնակցությունից, Լ. Գ. Թումանյանը<sup>12</sup>, Ա. Ստամբուլյանը<sup>13</sup>, Վ. Թու-

<sup>4</sup> Ժամանակի մամուլում և վավերագրերում կարելի է հանդիպել նաև «Վիրահայ ազգային խորհուրդ» տարբերակը:

<sup>5</sup> ՀԺԿ-ի հիմնադիր առաջնորդ, նրա ԿԿ-ի նախագահ:

<sup>6</sup> ՀԺԿ-ի կենտկոմի փոխնախագահ, Հ. Քաջազնունու ղեկավարած կառավարության երկրորդ կազմում արդարադատության նախարար:

<sup>7</sup> Հ. Քաջազնունու ղեկավարած կառավարության երկրորդ կազմում լրացրության նախարար:

<sup>8</sup> ՀՅԴ-ի ականավոր գործիչ, գրականագետ, մանկավարժ, ՀՀ-ի լրացրության նախարար (1919-1920 թթ.):

<sup>9</sup> Ազգային-ազատագրական շարժման ականավոր գործիչ: Հ. Գ. Արդությանի կենսագրության մեջ (տե՛ս Ով ով է Հայեր. Կենսագրական հանրագիտարան, հ. 1, Երևան, 2005, էջ 166) նա սխալմամբ հիշատակվում է նաև որպես Վիրահայ ազգային խորհրդի նախագահ: Բրականում, լինելով նրա գործադիր մարմնի անդամ, երբեմն վարում էր այդ կառույցի նիստերը:

<sup>10</sup> Անդրկովկասյան Սեյմի (1918), Վրաստանի Պառլամենտի (1918-1919) և Հայաստանի խորհրդարանի անդամ (1919-1920):

բազանք՝ սոցիալիստ հեղափոխականներից, Ա. Հ. Երգնկյանը<sup>11</sup>, Գ. Հ. Ղարաջանը (Ս. Տ. Արկումեղ), Ս. Դանդուրյանը, Մ. Ղարաբեկյանը՝ սոցիալ-դեմոկրատներից: Նրանք համաձայնության եկան, որ ՀԱԽ-ի սույն աշխատակազմը կգործի օգոստոսից սեպտեմբեր, երբ նախատեսվում էր գումարել Վրաստանի ողջ հայության համագումարը<sup>12</sup>: Հստ երևույթին, սա էր այն հիմնական փաստարկը, որ ՀԱԽ-ը որոշեց մերժել հեչակյանների և Հայրենակցական միությունների միության առաջարկը՝ իրենց ևս խորհրդում տեղեր հատկացնելու մասին<sup>13</sup>: Բացասական վերաբերմունքի արժանացավ նաև հայ «կադետների» հայցը, ինչը կասկած է հարուցում, թե սոցիալիստական գործիչները, շահարկելով ՀԱԽ-ի վերընտրության սկզբունքը, փորձում էին փորձիշատե երկարաձգել իրենց գերակայությունն այդ կառույցում<sup>14</sup>:

ՀԱԽ-ի առաջին կազմը կայուն քննոյթ չէր կրում և շուտով հիմնովին վերափոխվեց: Նրան մաս կազմող կուսակցությունները շատ հաճախ փոխում էին իրենց ներկայացուցիչներին: Հետևաբար, ՀԱԽ-ը մի քանի անգամ փոփոխություններ կրեց և՝ անհատական, և՝ քանակական առումներով: ՀԱԽ-ի գոյության տարրեր փուլերում նրա գործունեությանը մասնակից եղան նաև հայ ականավոր զիտնականներ Ե. Գ. Տեր-Մինասյանը, Ս. Ս. Մալխասյանցը, Ա. Գ. Բաբախանյանը (Լեռ), Ա. Գ. Աբեղյանը, Ղ. Գ. Տեր-Ղազարյանը<sup>15</sup>:

Ինչպես նախօրոք որոշել էին ՀԱԽ-ը գումարած կուսակցությունները, նրա «գործունեութեան սահմանները տարածում են միայն և զիտաւորապէս ազգային կուլտուրական աւտոնո-

<sup>11</sup> Անդրկովկասյան Սեյմի և կառավարության անդամ (1918):

<sup>12</sup> Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ // ՍՇԱԿ, 3. VIII. 1918:

<sup>13</sup> Տե՛ս Վիրահայ Ազգային Խորհուրդի եիստոք // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ,

17. IX. 1918:

<sup>14</sup> Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 19. X. 1918:

<sup>15</sup> Անդրկովկասյան կոմիսարիատի անդամ (1917–1918): Կանգնած է եղել սոցիալ-դեմոկրատ հայ «սպեցիֆիկների» հոսանքի առաջացման ակունքներում:

միային վերաբերեալ հարցերի շուրջը, որոնց թւում ամենազդիստր տեղն է բռնում ի հարկէ մեր դպրոցական խնդիրների բարեյաջող լուծումը»<sup>16</sup>:

Վրաստանի ՀԱԽ-ի առաջին նիստը կայացավ 1918 թ. օգոստոսի 2-ին և նվիրված էր պետական դպրոցներում հայազգի աշակերտների ուսուցումը կարգավորելու նպատակին<sup>17</sup>: Հաջորդ՝ օգոստոսի 6-ի նիստում որոշվեց ՀԱԽ-ի անդամների թիվը կրկնապատկել «պարհստեսի» հիման վրա: Յուրաքանչյուր կուսակցությունից նրա մեջ մտան 8-ական հոգի<sup>18</sup>: Այսպիսով, խորհուրդը պետք է կազմված լիներ 32 անդամից: ՀԱԽ-ի գործկումի ընտրության ժամանակ ՀՅԴ-ի և սոցիալիստների (Էսդեկներ և Էւլոններ) հակասությունները այնպիսի կերպարանք ստացան, որ կարող էին խորհրդի տարածամ արձակման առիթ դառնալ<sup>19</sup>: Կուսակցությունները անհրաժեշտ չափով համախմբված չէին և գրեթե առաջին իսկ օրից սկսեցին նիզակներ ճոճել միմյանց դեմ, ինչը մեծապես խանգարում և խոշընդուռում էր հետագա ստեղծարար աշխատանքին: Այս առթիվ մի խելամիտ կոչ էր հրատարակված մամուլում: «Կարծում ենք, – գրված է ՀԾԿ-ի պարբերականում, – որ Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդը իսկապէս կրմրոնի իր առաջ դրուած խնդիրների կարևորութիւնը և մի կողմ թողնելով կուսակցական ներշահերի պաշտպանումը, առանց աւելորդ բանակոինների և ձգձգումների կանցնի իրական և գործնական այն աշխատանքներին, որոնց վաղուց արդէն սպասում է Վրաստանի սահմաններում պատսպարուած հայ ժողովրդի մի խոշոր հատուածը»<sup>20</sup>:

<sup>16</sup> Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդը // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 10. IX. 1918:

<sup>17</sup> Վրաստանի Հայոց Ազգ. Խորհրդում // ՀՈՐԻԶՈՆ, 4.VII. 1918:

<sup>18</sup> Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ // ՄՇԱԿ, 8. VIII. 1918:

<sup>19</sup> Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 1. IX. 1918:

<sup>20</sup> Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդը // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 10. IX. 1918:

ՀԱԽ-ի գոյության փաստը դեռ չէր նշանակում նրա իրավական ճանաչումը: Դա պատճառաբանվում էր հանրապետական սահմանադրության բացակայությամբ, որը և պետք է որոշեր վրաց պետության ու ազգային փորրամասնությունների ներկայացուցական մարմինների փոխադարձ լիազորությունները: Հետեարար, վրացի պաշտոնյաների քմահաճույքին էր մնում՝ վոլոշիարաբերություններ ունենալ ՀԱԽ-ի հետ, թե անպատախան թողնել նրա դիմումները: Իրավիճակը մի փոքր շտկվեց, եթե 1918 թ. սեպտեմբերի 16-ին վարչապետ Ն. Ն. Ժորդանիան ոչ պաշտոնապես ճանաչեց ՀԱԽ-ը: Ողջունելով իր մոտ այցելած հայ համայնքի լիազորներին՝ նա, մասնավորապես, վստահեցրեց, որ իր «կառավարութիւնը համահաւասար և արդարացի կերպով է վերաբերուելու իր տերրիտորիայի վրայ ապրող ազգաբնակութեան, առանց ազգային խորականութեան» և որ վարչական մարմիններն այլևս չեն անտեսի ՀԱԽ-ը<sup>21</sup>: Հետազոյւմ, սակայն, վերջինիս անդամներն արձանագրեցին, որ «Հայոց Ազգային Խորհուրդը հանդուրժելի է լոկ տարբեր տեսակի մասնավոր հարցերի վերաբերյալ բարեխոսություններ կատարելու համար, միջնորդություններ, որոնք ոչ մեկի վրա ոչ մի պարտավորություն չեն դնում»<sup>22</sup>:

ՎԱԽ-ը որոշում կայացրեց իր կազմում ընդգրկել նաև Վրաստանի ազգային փորրամասնությունների լիազորներին: Խորհրդարանում հայ համայնքի ներկայացուցության կարևոր հարցին, անշուշտ, անդրադարձ եղավ ՀՅԴ-ի կուսակցական մամուլում: Այսպէս, կարծիք հնչեց, որ «մեր ներկայացուցիչները միշտ պիտի <...> հեռու լինելով անպատասխանառու օպպոզիցիայի դերից, պիտի գործակցեն բոլոր այն տարրերի հետ, որոնք իրենց հերթին հեռու լինելով նեղ ազգայնական քաղաքականությունից, անվերապահ կերպով պաշտպանում են Վրաստանի

<sup>21</sup>Տե՛ս Քրոնիկոն // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 17. IX. 1918:

<sup>22</sup>MEMORANDUM, Учредительному Собранию о Национальном Самоуправлении армян в Грузии [Тифлис, 1921], с. 25–26.

դեմոկրատիայի շահերը...»<sup>23</sup>: Այս գաղափարը, մեր կարծիքով, լրացնում է մեկ այլ միտք, որը խնդրու առարկա հարցն ավելի ընդգծված է բացահայտում. «Մենք մեր պատզամավորներին ուղարկելով Վրաստանի պաղամենս՝ հրահանգում ենք <...> գործոն մասնակցությամբ շինարար աշխատանք կատարել իբրև հավասար, ազատ ու հարազատ քաղաքացիներ ուժեղ վրացական դեմոկրատական հանրապետություն ստեղծելու համար...»<sup>24</sup>:

Գրեթե մեկ ամիս պահանջվեց, որ ՀԱԽ-ը կազմող կուսակցությունների միջև որոշակի փոխհամաձայնություն ձևավորվեր վրաց խորհրդարան գործուղվող անձանց մասին: ՎԱԽ-ում աշխատանքի համար լիազորվեցին ՀԱԽ-ի անդամները՝ սոցիալ-դեմոկրատներ՝ Ա. Երզնկյան, Ս. Փիրումյան, Ա. Բիանյան, դաշնակցականներ՝ Զ. Զորյան, Դ. Դավիթիսանյան, Տ. Ավետիսյան, սոցիալիստ հեղափոխականներ՝ Լ. Թումանյան, Ն. Թարխանյան և ՀԺԿ-ի ներկայացուցիչներ՝ Պ. Դոլոխանյանն ու Ա. Բարխուդարյանը<sup>25</sup>: 1918 թ. հոկտեմբերի 1-ին նրանք ներկայացան խորհրդարան և ճանաչվեցին որպես նրա իրավագոր անդամներ: Գործնկերների անունից ՎԱԽ-ի պատզամավորներին ողջունեց Դ. Գ. Դավիթիսանյանը, որն ի միջի այլոց ասաց. «Մենք Հայոց Ազգային Խորհրդի ներկայացուցիչներն ենք, բայց եկել ենք այսուեղու թե միայն մեր ազգային-կուլտուրական շահերը պաշտպանելու, այլև Զեզ հետ միասին լծվելու և մեր փոքրիկ ազատ հայրենիքի – Վրաստանի բարօրության համար աշխատելու»<sup>26</sup>: Խորհրդարանի բարձր ամբիոնից հեշտած այս խոսքերը դահլիճի կողմից դիմավորվեց որոտալից ծափահարություններով: Վրաց կուսակցական մամուլը նույնապես ջերմորեն ողջունեց հայ պատ-

<sup>23</sup> Տե՛ս ԱՇԽԱՏԱՒՈՐ, 24. IX. 1918:

<sup>24</sup> Տե՛ս ԱՇԽԱՏԱՒՈՐ, 29. IX. 1918:

<sup>25</sup> Տե՛ս ՀՈՐԻԶՈՆ, 27. IX. 1918:

<sup>26</sup> Տե՛ս Վրաց Ազգային Խորհրդ // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 5. X. 1918:

զամավորներին<sup>27</sup>: «Երջիններիս առջև, սակայն, դրվել էին մի շարք սահմանափակումներ: Այսպես, օրինակ, արգելվել էր նրանց մասնակցությունը օրենսդիր մարմնի տարրեր տեսակի հանձնաժողովներում<sup>28</sup>: Խորհրդարանում հայ համայնքի լիազորները չպահպանեցին կազմակերպչական միասնականությունը. ՀՅԴ-ի ներկայացուցիչները հանդես եկան պատգամավորական առանձին խմբի ստեղծման նախաձեռնությամբ<sup>29</sup>:

Վրաց խորհրդարանում հայ համայնքի ներկայացուցությունից պահանջվում էր գործի դնել իր ողջ ներուժը, որպեսզի բեկում մտցնի մտահոգիչ և անքարենպաստ այն խնդիրների խմորումների մեջ, որոնք արդեն թանձրացել էին Վրաստանի սահմաններում մշտապես բնակվող կամ իրադարձությունների բերումով այնտեղ հայտնված հայերի զիւին: Առաջին հերթին դա վերաբերում էր զաղթականությանն օգնելու հարցին: 1918 թ. հունիսի սկզբին Զավախիքի հայ բնակչությունը՝ շուրջ 80-90 հազ. մարդ, փրկություն փնտրելով թուրքական յաթաղանից, զաղթեց դեպի Բակուրիան և Ծալկա<sup>30</sup>: Վրացական կառավարությունը,

<sup>27</sup>Տե՛ս «Տայարական» («Սաքարբավելո»), 4. X. 1918. Նաև՝ «Ցըռմա» («Ցըռմա»), 4. X. 1918.

<sup>28</sup>Տե՛ս ՀԱԱ, ֆ. 441, գ. 1, գ. 26, թ. 19:

<sup>29</sup>Տե՛ս ԱՇԽԱՏԱԲՈՐ, 18. X. 1918:

<sup>30</sup>1917-ի դեկտեմբերից 1918-ի հունիսն ընկած ժամանակահատվածում Զավախիքի հայությունն ինքնապաշտպանական կոիվներ էր մղում ինչպես Օսմանյան Թուրքիայի, այնպես էլ նրա վորք եղբայրների՝ տեղական թուրք-թաթարների դեմ (մանրամասն տե՛ս Սանսոյան Ա. Ս. Այսայցիսայի և Այսալբալարի զավառների 1918-ի ինքնապաշտպանությունը, Երևան, 1992): Վրաց քաղաքական վերնախսավը, որը Զավախիքի նկատմամբ մեծ հավակնություններ ուներ և այն վերածնված Վրաստանի անքածանելի մասն էր համարում, գործնական ոչ մի օգնություն ցուց չտվեց զավախիք պաշտպաններին և, կարծես, ընդուազ էր զնում օսման նվաճողների ծրագրերին: Վրաց գործիչները փորձում էին իրենց «ազգային գործերը» կարգավորել հայերի հաշվին: 1918 թ. հունիսի 4-ին Բաթումում կնքված վրաց-թուրքական պայմանագրի համաձայն Ախալքալաքի զավառը անցավ Թուրքիայի ձեռքը: Գերմանական

սակայն, թույլ չտվեց ջաղախքահայ զաղթականությանը տարածվելու դեպի իր երկրի խորքերը. նրանց տեղաշարժը սահմանափակվեց հատուկ արգելագծով<sup>31</sup>:

կողմը, սակայն, չէր ճանաչում Բաթումի տիբրահոչակ «հաշտությունը», քանզի Օսմանյան կայսրությունը նվաճեց Բրեստ-Լիտովսկի պայմանագրով չնախատեսված մարզեր: Ենթադրվում էր, որ մինչև նոր խորհրդաժողովը, վիճելի տարածքների հարցը առկախ էր մնալու: Այսիսով, վրաց առաջնորդները, որոնք վայելում էին Գերմանիայի բազմակողմանի հովանավորությունը, Զավախիքի հարցի լուծումն ապագայում ևս տեսնում էին հօգուտ Վրաստանի: Իսկ մինչ այդ, կարծես, կրանց շահերից էր բխում Ախալքալաքի զավաոի հայքափումը, քանզի վրաց գործիչները առաջացած գրեթե բոլոր հարցերը դիտում էին տարածքային վեճի տեսակետից: «Մի պարզ ու որոշակի բաղաքականություն է վարում վրաց կառավարությունը դեպի հայկական տարրը Ախալքալաքի, Ախալցխայի շրջաններում: Նա ձգտում է սահմանների վեճի լուծումը այս կամ այն միջոցով՝ ամեն տեսակի խոշընդուներ ու արգելառիթներ ստեղծելով զարթականությանը այնպիսի վիճակի մեջ դնել, որ ոչ մի զաղթական կենդանի չմնա, ու այդպիսով իննիրը լուծված կլինի...», – եղրակացնում էր ժամանակի մամուլը (տե՛ս Վրաստանի Սիհազետը // ԱՇԽԱՏԱԲՈՐ, 2. XI. 1918):

<sup>31</sup> Վրաց արմատական ազգայնականների շարքաթքերը, ել ավելի սաստկացնելով հասարակայնության մեջ օր օրի բանձրացող տագնապայից տրամադրությունները, պնդում էր՝ «Եթե մեր կառավարությունը թույլ տա փախատականներին իրանց համակենտրոնացման բանակատեղերը թողնել ու տեղափորվել գյուղերում – Վրաստանն այսօր կամ վաղը Հայաստան կիայտարարվի» [«Յլույց» («Կլրէ»), 4. X. 1918, № 5) պարբերականից արտատպված հոդվածը տե՛ս Վրաց կեանք // ՀՈՒԲ-ՋՈՆ, 25. X. 1918]: «Թերևս ավելի մեծ պատուհաս են դառել, – գրում էր ժամանակի մամուլը, – ինեղ զաղթականների զիմին տեղումս եղած քաղաքացիական և զինվորական պաշտոնյանները և մանավանդ դրանց ստորադրյալ հասարակ ծառայողները: Հանրապետության կառավարությունը որոշ նպատակով արգելել է զաղթականներին Վրաստանի ներսն անցնելը: Առանց քրոպուշտ-ի ոչ որի թույլ չի տրվում երկաթուղի նատելու: Այդ քանն սկսեց ծառայել որոշ մարդկանց համար որպես հեշտ հարստանալու միջոց և եկամտի խոշոր աղբյուր: Հայտնի է, որ զաղթականության տեսչանքն է Թիֆլիս և Հյուսիսային Կովկաս անց-

Ինչպես հայոնի է, վրացական կառավարության հայության համաձայն Թիֆլիսի ամբողջ նահանգը և, բնականարար, Ախալքալաքի զավաոր Վրաստանի անրաժան մասն էր: Հետևարար, այդ զավաորի բնակիչները պիտի համարվեին Վրաստանի Հանրապետության քաղաքացիներ: Վրաստանում Հայաստանի գործերի հավատարմատար Արշակ Զամայյանն արդարացիորեն նշում էր, որ «Ախալքալաքի և Հայկական Բորչալուի հայ բնակիչներին վրաց հանրապետության քաղաքացի չէին նկատում, այլ անցանկայի եկվորներ, որոնց մասին հոգալը իրենց պարտականությունը չէին համարում»<sup>32</sup>: Դրանով իսկ, վրաց կառավարությունը հրաժարվեց որևէ աջակցություն ցույց տալ հայ զաղթականներին<sup>33</sup>:

Նելք: Եվ ով միջոց է ունեցել՝ արդեն գնացել է: Քաղաքի [իմա՝ Ախալքալաք – Բ. Ա.] 6 հազար բնակիչներից մնացել են մոտ 300 հոգի, իհարկե բոլորն էլ աղքատ և թշվառ: Գնացել, հեռացել են այստեղից և հարուստ զյուղացիներից շատերը» (տե՛ս Գյուղայան Խ. Գաղթականության վիճակը // ՀՈՐԻԶՈՆ, 10. VII. 1918): Այսպիսով՝ զաղթականության այս ուննոր և ճարպիկ մասը կաշառ բաժանելով կարողացավ Թիֆլիս անցնել: Զանազան արգելվներ հաղթահարած հայ փախստականներին, որոնք հասել էին Վրաստանի մայրաքաղաք, Նավթարար կայարանում, սակայն, ձերքակալում էին և բռնությամբ վերադարձնում Բակուրիանի անտառներում գտնվող մյուս զաղթականների մոտ: Վարչապետ Ն. Ժորդանիայի կարգադրությամբ թույլատրվեց արգելափակող զծից դուրս փոխադրել միայն 305 որբ երեխա (տե՛ս Նամակներ խմբագրութեան // ՀՈՐԻԶՈՆ, 25. VII. 1918): Այդուհանդերձ, պետք է նկատել նաև, որ Զավախիքի հայ զաղթականության գերակշիռ մասը սահմանազիսին պահում էր ոչ այսքան վրաց իշխանությունների անկատար ու անկանոն վարչական վերահսկումը, որքան հարազատ օջախներն օր առաջ վերադառնալու հույսը և տենչանքը (տե՛ս Մայլян Բ. Վ. Կраткий очерк изгнания армян из Доксавака в 1918 году // Седьмая годичная научная конференция Российско-Армянского Университета. Сборник научных статей. Ер., 2013, с. 77-83):

<sup>32</sup> ՀԱՅՐԵՆԻՔ, 1928, ապրիլ, էջ 90:

<sup>33</sup> 1918 թ. հուլիսի 2-ին Վրաստանի ՆԳՆ-ին կից ստեղծվել էր Սամցիւե-Մեսիսեթիայից և Զավախիքից եկած փախստականների գործերով

*Երկար մտորումներից հետո ՀԱԽ-ի անդամները, ի վերջո, համաձայնեցին իրենց ուսերի վրա վերցնել հայ զաղթականների*

գրադադար «կոմիտե»: Այդ կառույցին հատկացնելով 185 հազ. ոուրի նպաստ վրաց կառավարությունն այդպիսով իր մարդասիրական առարկությունն ավարտված համարեց և մի կողմ քաշվեց [տե՛ս **Վաճառքություն** III. *Вопросы грузино-армянского взаимоотношений в политической мысли Грузии (1918-1920)*. Թբիլիսի, 1999, с. 87, 90]: Ըստ այդմ, որոշվեց «հայտարարել [Թիֆլիսի] քաղաքային ինքնավարությանը և հայոց ազգային խորհրդին, որ կառավարությունն այլևս ի գործ չէ միջոցներ հատկացնել քաղաքային ինքնավարությանը զաղթականների ֆինանսական օգնության համար և առաջարկում է դիմել քարեգործական տարրեր տեսակի հիմնարկներին և ունենոր մարդկանց» (տե՛ս «յշտուծ» [«Երթորբա»], 11. VII. 1918): 1918 թ. օգոստոսին Վրաստանում զաղթականների ընդհանուր թվաքանակը կազմեց 150 հազ. մարդ (տե՛ս ՀՈՐԻԶՈՆ, 11. X. 1918): Այդ թվում՝ 120 հազ. հայ, 15 հազ. հույն և 11 հազ. վրացի: Ինչ վերաբերում է Աղբեջանից զաղթած 7-8 հազ. հայ փախստականներին, ապա վրաց իշխանությունները նրանց մեծ մասին բոնի դուրս եր հանել սահմանամերձ Ալազան գետի մյուս ափը՝ հազարավոր անմեղ ու անօգնական մարդկանց դարձնելով թուրք արյունաբրու խուժակի կոտորածի առարկա (տե՛ս Նույտու և *Արեշի զաղթականների վիճակը* // *ԱՇԽԱՏԱԲՈՂ*, 11. IX. 1918): Վրացական կողմը չեր կարող չզիտակցել, որ իր երկրի վարչակազմի որոշ ներկայացուցիչների արարքները անմարդկային բնույթ են կրում: «Ենք կարող ծածկել, – գրված է կառավարական լրազրի էջերում, – որ այժմեան ընդհանուր դժբաղդութեան ժամանակ վերջերս մեր և հայերի միջև բարի յարաբերութիւնները զգալի կերպով խախտւեցին» [«Տայարական հայեան արքայի արտատպված հոդվածը տե՛ս *Վրաց կեանք* // ՀՈՐԻԶՈՆ, 9. X. 1918]: Իսկ իշխող կուսակցության պաշտոնաթերքը կառավարությունից պահանջում էր անդրդպիկի մնալ: «Վրաստանի հանրապետութիւնը մի քարեգործական ընկերութիւն չէ», – գրում էր ևս և կոչ էր անում անտեսել հարեւանի դժբախտությունը («յշտուծ» [«Երթորբա», 1918, № 217] թերթից արտատպված հոդվածը տե՛ս *Վրաց կեանք* // ՀՈՐԻԶՈՆ, 13. X. 1918):

օգնության և խնամատարության հոգսը<sup>34</sup>: 1918 թ. սեպտեմբերին, Ա. Զամայյանի զիտուրժամբ, ՀԱԽ-ը որոշեց իրեն ենթարկել մինչ այդ Թիֆլիսում գործող Հայ գաղթականական կազմակերպությունների զիսավոր խորհուրդը: Սույն կառույցը ստացավ ՀԱԽ-ի գործկոմին ենթակա բաժանմունքի կարգավիճակ<sup>35</sup>: Շուտով, սակայն այդ հաստատության ղեկավարը՝ Հ. Գ. Արդությանը, ստիպված էր խոստովանել, որ հատկացված «միջոցները խիստ սահմանափակ են և սպառվելու վրա»<sup>36</sup>: Հստ նրա գեկուցազրի, «գաղթականների միայն 50 տոկոսին օրական մեկ ու կես ֆ[ունտ] հացով օգնելու համար հարկավոր է ամսական 4 միջին ոուրիշ»<sup>37</sup>: ՀԱԽ-ը վրաց կառավարությանը դիմումներ է հղել հայ գաղթականների կացությունը թերևնացնելու խնդրանքով<sup>38</sup>: Այդ հայցերը, սակայն, գործնական որևէ նշանակություն և հետևանքներ չունեցան:

ՀԱԽ-ը չկարողացավ (ստեղծված պայմաններում չէր էլ կարող) հանդես գալ գաղթականական գործի համակարգողի դերում: Բարեգործական այն մեթոդները, որոնք կիրառում էին ՀԱԽ-ը, Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը և գաղթականներին նպաստ հատկացնող սակավաթիվ այլ կազմակերպությունները, խիստ անբավարար և տկար գտնվեցին. վրկվեց գաղթականների միայն մի որոշ մասը: Այսպիսով, պետք է փաստել, որ ՀԱԽ-ի համար տասնյակ հազարավոր գաղթականների մասին հոգալու գործը եղավ իր համեստ ուժերից և հնարավորություններից վեր: Հստ ախալքալաքցիների հայրենակցական

<sup>34</sup> Տե՛ս Վիրահայ Ազգային Խորհուրդի նիստը // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 17. IX. 1918:

<sup>35</sup> Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 25.IX.1918: Նաև՝ Գաղթականական բաժնում // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 27. XI. 1918:

<sup>36</sup> Տե՛ս Խորհրդակցություն հայ որբերի պահպանության հարցի մասին // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 5. X. 1918:

<sup>37</sup> Տե՛ս Թիֆլիսի հասարակության ներկայացուցիչների ժողովը // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 8. XI. 1918:

<sup>38</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, գ. 1, զ. 8, թ. 76-77 2րշ.:

միության վարչության փոխնախագահ Գր. Պապոյանի կարծիքի, «այն օգնութիւնը, որ ցոյց է տալիս Վիրահայ Ազգային Խորհրդի գաղթականական բաժինը <...> աննշմարելի է և ունի ձևական բնոյթ, իրականորեն ոչ մի օգուտ չի տալիս գաղթականութեան, որովհետև այնուեղ, ուր պահանջում է տասնեակ միջիններ, Ազգային Խորհրդության հնարաւորութիւն ունի ծախսելու միայն մի քանի հարիւր հազար ռուբլի»<sup>40</sup>: Գաղթականների հսկայական ալիքը, որը ողողել էր Բակուրիանի անտառները, Ծալկայի բարձունքները և նույնիսկ Թիֆլիսի փողոցները<sup>41</sup>, պահանջում էր պետական հոգածություն<sup>42</sup>: Վերջինիս բացակայության պարա-

<sup>40</sup>Տե՛ս Ախալքալաքի գաւառի հայ գաղթականութեան համար // ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ, 18. XII. 1918:

<sup>41</sup> Ըստ «Թիֆլիսի քաղաքային գաղթականական բաժանմունքի կառավարիչ [Օ.Ս.] Բուկշտենի՝ քաղաքային վարչությանը տված գեկուցումից երեսում է, որ անցյալ տարվա մինչև հունիսի 10-ը Թիֆլիս են եկել մոտ 40000 գաղթական, որոնցից 30 հազարը հովանավորվել են քաղաքային ինքնավարության կողմից, իսկ մնացած 10000-ը որևէ կերպ տեղավորվել է քաղաքում ու ապրել իրենց միջոցներով: Իսկ այն օրվանից (հունիսի 17-ին), երբ կառավարությունը դադարեցրեց գաղթականներին նպաստ տալ, նրանցից 6 հազար հոգի տեղավորվեցին 300-րդ Վերստում, 1500 հոգի քաղաքային հանրակացարանում, իսկ մնացածը ինքնազլուխ որևէ կերպ տեղավորվեց քաղաքում: Ներկայում թեն քաղաքից հեռացողներ չեն եղել, բայց գաղթականների թիվը պակասել է հունիս ամսվա համեմատությամբ: Գաղթականների պակասելը եղել է նրանց մահացության հետևանքով, որի պատճառն եղել են վարակիչ հիվանդությունները և սովոր: Այսպես, հունիսի 1-ից մինչև հունվարի 1-ը, այսինքն 7 ամսվա ընթացքում, Թիֆլիսում մերել են 7-8 հազար գաղթական: Մնացած գաղթականներին ներկայումս օգնություն են ցույց տալիս քաղաքային, հայկական, ամերիկական և հունական գաղթականական [անական] մարմինները» (տե՛ս Գաղթականների վիճակը Թիֆլիսում // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 14. I. 1919): ՀԱԽ-ը իր համեստ միջոցներից հացով էր պահանջում օրական 21 հազ. կարիքավոր գաղթական (տե՛ս Քրոնիկոն // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 27. III. 1919):

<sup>42</sup> Վրաց եսունների պարբերականը նախատում էր կառավարությանն անսասան անտարբերության համար՝ հատկապես հայ գաղթա-

գայում այլ տեսակի միջոցառումները, մեղմ ասած, իրական չէին: Այդպես էլ չհաջողվեց հիմնովին և լիակատար կարգավորել զաղթականության սննդի մատակարարման ու բժշկասանիտարական սպասարկման խնդիրները, ինչը նրանց միջավայրում գանգվածային մահացության պատճառը դարձավ: 1918 թ. հունիսից նոյեմբեր Բակուրիհանի անտառներում տուից ու համաճարակներից մահացավ ավելի քան 18 հազար մարդ: Գրեթե նույնքան զոհ տվեցին Ծակայի շրջանում ապաստանած հայ զաղթականները<sup>43</sup>:

Այս աղետը, անշուշտ, ոչ միայն ձախորդ բաղաքական պայմանների հետևանքն էր, այլ նաև ուներ որոշակի հեղինակ ու հասցեատեր: ՀՅԴ-ի թիֆլիսյան մամուլն ամբողջ մեղքը բարդեց վրաց իշխանությունների վրա: Վերջիններս վերին աստիճանի վիրավորական համարեցին այդ մեղադրանքները և, հետևաբար, Ժմտողական դիրք բռնեցին<sup>44</sup>: 1918 թ. նոյեմբերի 8-ին խորհրդա-

---

կաններին չօգնելու հարցում: «Փախստականներին աջակցութիւն տալը չէ վերաբերում միայն մի որևէ ազգին, – գրում է վրաց մեկնաբանը, – այլ ամենից առաջ դա պետութեան գործն է: Ճիշտ է, փախստականների ահազին մեծամասնութիւնը հայեր են, սակայն դրանից չպետք է ամեննին այն եզրակացութիւնը հասնել, թէ իբր մենք իրաւունք ունենք ասելու. “հասա հատ և կրաօ” <...> Մարդկային պարտատրութիւնները պահանջում են, որ մեր կառավարութիւնը անյապաղ խառնի այդ գործում: Հանրապետութիւնը պարտատր է իր փոքր միջոցների մի մասը փախստականների դրութեան թերևացնելու յատկացնել, բայց այդ բաւական չէ. անհրաժեշտ է հասարակական լայն աջակցութիւնը (ընդգծ. «Երումա»-ի) և այդ գործը պետք է յանձնն առնել մեր կառավարութիւնը («Ֆարմա» [«Երումա», 1918, № 4] թերթից արտատպված հոդվածը տե՛ս Հայ փախստականներին պէտք է օգնելլ/ ՀՈՐԻԶՈՆ, 10. VIII. 1918): Մարդասիրական և խելամիտ այդ կոչը, սակայն, մնաց միայն «ձայն բարբառոյ յանապատի»:

<sup>43</sup> Մելքոնյան Ա. Ա. Զավախյրը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, էջ 294:

<sup>44</sup> Վրացական կողմը սադրիչ համարեց նման ելույթները հայալեզու մամուլում. «Հորիզոն» պարբերականի լուս ընծայումն՝ արգելվեց (տե՛ս ՍՇԱԿ, 12. XI. 1918): Այս միջադեպին վրաց ազգայնականների օրաթեր-

րանում այս հարցին նվիրված բուռն քննարկում տեղի ունեցավ<sup>45</sup>: Վրաց պատգամավորները, անկախ կուսակցական պատկանելությունից, միասնականություն դրսողքեցին և նախահարձակ եղան, ինչը չի կարելի ասել հայ համայնքի ներկայացուցիչների մասին: Ախալքալաքցիների հայրենակցական միության վարչության քարտուղար Պ. Գ. Աբեղյանն ահա այսպէս էր մեկնաբանել խորհրդարանում հարցի քննարկումը: «Շատ ցավալի է, – զրում է նա, – որ վրաց պաղամենուի հայ անդամների ոչ մի արդարացում չգտնող անպատճաստ լինելն այդ հարցում, արգելք եղավ ճշմարտության երևան չգալուն»<sup>46</sup>:

---

Քը շտապեց Նվիրել մի զավեշտալի մեկնաբանություն. «Օտարների ձեռովկ հրատարակված լրագիրները մերավոր են նաև այն ժամանակ, երբ լավ բաներ են զրում մեր կառավարության մասին: Նրանք ոչ մի իրավունք չունեն մեր ներքին գործերի մեջ խաղնվելու» (տե՛ս «Եօյաշաբարձություն» («Սաքարթվելո», 19. XI. 1918):

<sup>45</sup> Տե՛ս ՄՇԱԿ, 12. XI. 1918, նաև՝ 13. XI. 1918, նաև՝ 14. XI. 1918:

<sup>46</sup> Նա արդարացի ցատումով հավելում է, որ «Ախալքալաքի Հայրենակցության Վարչությունը պաղամենուի այդ նիստից մոտ 10 օր առաջ դիմել էր Վիրահայ Ազգային Խորհրդին և առաջարկել, որ [զարդարականների տեղաշարժվելու] սահմանափակումների հարցը պաղամենուի հայ անդամների միջոցով հարցապեղման առարկա դառնա: Վիրահայ Ազգային Խորհրդը ոչնչ չարեց» (տե՛ս Ներքին տեսություն՝ Փայստական հարցի առթիվ // ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ, 4. XII. 1918): Կարծում ենք, այս տողերին կարելի է նաև հավելել, որ հիշյալ պահին ՀԱԽ-ն ամբողջությամբ դեռ չէր հաղթահարել իր ձևավորման գործնքացը: Նրա կուսակցական խմբակցությունների միջև գոյություն ունեին քաղաքական տարամերժ լուրջ տեսակետներ և հայացքներ: Ինչպես հայտնի է, 1918 թ. հոկտեմբերին առանձնակի սուր կերպարանք ստացավ Հայաստան – Վրաստան տարածքային վեճը, որի շուրջ արդեն տեղի էր ունեցել վրաց խորհրդարանի բուռն նիստ: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ հայ պատգամավորները խուսափում էին լրացուցիչ լարվածություն հաղորդել հայ-վրացական հարաբերություններին, քանզի վրացական կողմը նրանց ցանկացած ելույթին պատասխանում էր կտրուկ և ծայրահեղ բովանդակություն ունեցող ճառերով: 1918 թ. Դեկտեմբերի 17-ին էլ տեղի ունեցավ միջադեպ, երբ Հայաստանի կառա-

Այս մեկնաբանությունը կարելի է վերագրել նաև 1919 թ. փետրվարի 21-ին ՀԱԽ-ում տեղի ունեցած քննարկմանը: Այդ օրը պարզվեց, որ «վերջին 4 ամսուայ ընթացքում Ծալկայի 25000 զաղթականների համար ուղարկուել է ընդամենը 200 փ[ութ] ալիր, 50 փ. շաքար և 200 հազար ռ[ուբլի] դրամ, որից 150 հազար ռ. ծախսուել է ծառայողների ոռճիկների վրայ»<sup>47</sup>: Բակուրիանում ՀԱԽ-ի լիազոր նշանակված Ա. Թորոսյանը, Ծալկայում՝ Ա. Տեր-Գրիգորյանն ապաշնորհ զոնվեցին, նաև զրադվեցին զաղթականների համար նախատեսված օգնության յուրացումով<sup>48</sup>: Դրանից զատ բացահայտվել էին խոշոր այլ չարաշահումներ, որոնց մեջ մեղադրվող անձանց նկատմամբ ՀԱԽ-ը իր գործկումին հանձնարարեց քննություն կատարել<sup>49</sup>: Սակայն որևէ հետևողյուն այդպիս է չարվեց, և, բայց Պ. Գ. Աբելյանի, չարագործները «Վիրահայ Ազգային խորհրդում նստած քրիստոնյանների կողմից նույնիսկ հանդիմանության խոսքի չարժանացան...»<sup>50</sup>: Այս մտահոգիչ իրողությունը, բնականաբար, չէր կարող նպաստել ՀԱԽ-ի հեղինակության ամրապնդմանը:

վարության դեմ վարչապետ Ն. Ժորդանիայի ճառը ողջունող դահլիճի բուռն ծափահարություններին չմիացան հայազգի պատզամավորները: Նրանց հասցեին վիրավորանքներ հնչեցին, ոմանք էլ բոռնցքներով հարձակվեցին ՀՅԴ-ի խմբակցության անդամների վրա (տե՛ս Վրաստակի պաղամենուում դաշնակցական պատզամատրների բողոքը // ՆՈՐ ՀՈՐԻՇՉԱՆ, 18. XII. 1918):

<sup>47</sup> Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 23. II. 1919:

<sup>48</sup> Տե՛ս ՄԵԼՐՈՒՅԱՆ Ա. Ա. Զավախյըռ XIX դարում և XX դարի առաջին քառորդին, էջ 294:

<sup>49</sup> Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 23. II. 1919:

<sup>50</sup> Տե՛ս ՄԵԼՐՈՒՅԱՆ Ա. Ա. Զավախյըռ XIX դարում և XX դարի առաջին քառորդին, էջ 482:

ՀԱԽ-ի զանձարկղը մշտապես հիմնովին դատարկ էր լինում: ՀԱԽ-ի ՀՅԴ-ի խմբակցությունը ֆինանսական կարիքները հոգալու համար առաջարկեց վիրահայ հասարակության վրա պարտադիր տուրք դնել, «իհարկե համապատասխան օրինազիծ մոցնելով վրացական պառլամենտ: Իսկ մինչև այն՝ անհրաժեշտ է միանվագ տուրք ժողովներ հայ հարուստներից»<sup>51</sup>: *Սոցիալիստական խմբակցությունները կողմ արտահայտվեցին այդ առաջարկին: ՀԺԿ-ի ներկայացուցիչները, սակայն, առարկեցին:* Նրանք կտրուկ հայտարարեցին, որ «կողմնակից լինելով պառլամենտով անցկացրած ստիպողական թե՛ միանվագ և թե՛ մշտական տուրքին <...> ոչ մի ձևով և ոչ մի նկատառումով, չէ կարող համաձայնել այլ կերպ բռնություն գործ դնելու քաղաքցիների վրա»<sup>52</sup>: ՀԺԿ-ի մտահոգությունը, սակայն, անտեղի էր, քանզի վրաց իշխանությունները պատրաստ չէին գործնականում ամրապնդել և ուժեղացնել երկրի հայ համայնքի միասնականությունն անձնափորող կառույցը: Ուստի, Վրաստանի խորհրդարանում չէր քննարկվել ՀԱԽ-ի ֆինանսավորման եղանակը<sup>53</sup>:

Վրաստանում հայ զաղթականության կարիքները հոգալու համար Հայաստանի կառավարությունից դրամ ստանալու նպատակով ՀԱԽ-ը Երևան գործուեց երկու լիազոր<sup>54</sup>: Հայոց կառավարությունը, սակայն, նախընտրեց Թիֆլիսում ստեղծել իր Խնամատարության նախարարությանը ստորադաս հատուկ ներկայացուցություն, որին և հանձնարարեց «դեմոկրատական հանրապետությունում» գտնվող բոլոր հայ զաղթականների և որք երեխաների հետ կապված գործերի տնօրինումը: 1919 թ. մարտի

<sup>51</sup> Վիրահայ Ազգ. Խորհրդի ֆինանսական կացութիւնը // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 28. III. 1919:

<sup>52</sup> Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 10. XII. 1918:

<sup>53</sup> Լույն տեղում:

<sup>54</sup> ՀԱԱ, ֆ. 441, ց.1, գ. 144, թ. 14 2թԶ:

<sup>55</sup> Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 21. III. 1919:

27-ին այդ կառույցի զլուխ կարգվեց Վրաստանի ՀԱԽ-ի անդամ  
Դ. Գ. Դավիթիսակյանը<sup>56</sup>:

1918 թ. դեկտեմբերի 20-ին, Վրաստանի և Հայաստանի միջև գինված բախման օրերին, ՀԱԽ-ի գործունեությունը կասեցվեց: Վրաց կառավարության ձեռնարկած քայլերի պատճառով զաղթականական գործերով զբաղվող մարմինները գրկվեցին նրանց օգնելու իրական հնարավորությունից: Կնքեց ՀԱԽ-ի համապատասխան բաժինը, առգրավվեց նրա ողջ գույքը, ձերբակալվեցին զավառներում աշխատող լիազորները: Բոնագրավման ենթարկվեցին Բորժոսի, Բակուրիանիի և այլ շրջաններում գտնվող հացի, շորեղենի ու դեղորայքի պահեստները<sup>57</sup>: Մինչ օրս վրաց պատմաբաններից ուսմանք շարունակում են կրկնել ազգայնականների ժամանակի բարբաջանները, թե, իբր, ՀԱԽ-ը վրաց հանրապետության դեմ դավադիր ծրագրեր է մշակել<sup>58</sup>: Այնինչ, Վրաստանի ՆԳ նախարարը խորհրդարանում խոստովանել էր, որ վրաց պետության հանդեպ ՀԱԽ-ը լոյալ է եղել և մասնակցություն չի ունեցել որևէ դավադրության մեջ<sup>59</sup>:

Վրաց-հայկական այս հակամարտության առաջին իսկ օրերին, կողմերին հաշտեցնելու նպատակով, ՀԱԽ-ը դեպքերին միջամտելու փորձ կատարեց, որի համար լիազորվեցին Ա. Հ. Երզնկյանը, Լ. Գ. Թումանյանը և Պ. Մ. Դոլոխանյանը: Նրանց միացավ նաև Հայաստանի Խորհրդի անդամ Գ. Տեր-Օհանյանը: Թեպետ պատվիրակությունը նախապես ստացել էր Վրաստանի կառավարության համաձայնությունը՝ Լոռի-Տաշիրում բախման դեպքերի վայրը մեկնելու համար, սակայն, Եկատերինենքելդ (այժմ՝ Բոլնիս) բնակավայրի մոտ վրաց «զվարդիականները» նրանց ճանապարհը կտրեցին և պահանջեցին ետ դատնալու<sup>60</sup>:

<sup>56</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 139, թ. 144:

<sup>57</sup> Տե՛ս Գողթականությունը // ՅԱՌԱԶ, 18. I. 1919:

<sup>58</sup> Տե՛ս Վաճակօրիա III. Նշվ. աշխ., 107–108.

<sup>59</sup> Տե՛ս Վրացական պաղամենտ // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 5. I. 1919:

<sup>60</sup> Տե՛ս «Զնամա Տրудա» (Թիֆլիս, 1918, № 68) թերթից արտատպված հոդվածը տե՛ս Ճշմարտությունը Սանահնի դեպքերի մասին // ԺՈ-

Զինված բախման շրջանում և դրա ավարտից անմիջապես հետո ՀԱԽ-ի անդամները մի շարք դիմումներ էին գրել վրաց կառավարության՝ իրենց աշխատանքները բնականոն դարձնելու համար, որի համար պահանջվում էր հասուկ թույլտվություն։ Նաև երկրի հայ ազգաբնակչության հոգար և տագնապը թեթևացնելու համար որոշակի քայլեր կատարեցին։ Այդ նպատակն էր հետապնդում վարչապետի հետ 1918 թ. դեկտեմբերի 30-ի նրանց տեսակցությունը։ Թիֆլիսում հայերի «ձերքակալությունների ժամանակ կատարվող անկարգությունների առթիվ Ն.Ն. Ժորդանիան, որպես կառավարության զլուս հայունել է իր զայրույթը և հաստատ համոզունքը, որ այդպիսի անկարգությունների դեմ կառավարությունը ձեռք կառնի բոլոր միջոցները և բոլոր մեղավորներին ու հանցավորներին կպատճի ամենախիստ կերպով<sup>61</sup>։ Հակառակ այս խոստումներին՝ 1919 թ. հունվարի 5-ին Թիֆլիսում դարձյալ տեղի էին ունեցել հայերի զանգվածային ապօրինի ձերքակալություններ<sup>62</sup>։

1919 թ. հունվարի 6-ին ՀԱԽ-ի ներկայացուցիչները կրկին այցելեցին վարչապետին և «մատնանշեցին այն բոլոր ապօրինություններն ու խժեժությունները, խոշոր ու մանր կաշտակե-

ՀՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 20. XII. 1918: Նման միջնորդությամբ ՀԱԽ-ը հանդես էր եկել նաև 1918 թ. հոկտեմբերին (տե՛ս ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 3. XI. 1918), սակայն ՀՅԴ-ի խմբակցությունը երկու դեպքում էլ ձեռնպահ մնաց և շմասնակցեց այդ առաքելությանը։ Ավելին, այս ասպարեզում գործընկերների դրսնորած ջանասիրությունը հանդիմանության արժանացավ ՀՅԴ-ի Թիֆլիսի ճյուղի անդամների կողմից։ Հատուկ մատնանշվեց, որ ՀԱԽ-ը «առջի ծառայություն» մատուցեց Հայաստանի կառավարությանը՝ անտեղի խառնվելով այդ գուտ միջապետական բնույթ կրող գործի մեջ (տե՛ս Հ. Յ. Դաշնակցությին՝ ներկայացուցական ժողով // ՅԱ-ՌԱԶ, 22. II. 1919)։

<sup>61</sup> Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի պատգամաւորությունը կառավարության նախագահի Ն. Ն. Ժորդանիայի մոտ // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 1. I. 1919։

<sup>62</sup> Սալիսասեանց Ս. Յունվարի 5-ը Թիֆլիսում // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 9. I. 1919։

բությունն ու կազմակերպված թալանը, որ տեղի է ունեցել հայերի վերաբերությամբ այս ձերքակալությունների առթիվ և խնդրեցին կտրուկ միջոցներ ձեռք առնել մեղավորներին գտնելու և պատժելու համար»<sup>63</sup>: Մեկուկես ժամ տևած գրույցի ընթացքու Ն. Ն. Ժորդանիան դարձյալ խոստացավ բավարարել հիմնավորված բոլոր պահանջները: Դրանց շարքում զիսավորը ՀԱԽ-ի լիազորների մասնակցությամբ քննիչ հաճնածողովի ստեղծման առաջարկն էր, որը միանգամայն ընդունելի համարվեց:

Հայտնի է, որ 1919 թ. առաջին օրերին մի իրավիճակ էր ստեղծվել, երբ Վրաստանի ու նրա կառավարության հետազա ճակատագիրը մնում էր անորոշ: Թիֆլիս ժամանած բրիտանական բանակի զորավարները (զեներալ Ու. Գ. Ռայկրոֆտ և ուրիշներ) անբարյացակամ վերաբերմունք դրսերեցին Ն. Ն. Ժորդանիայի վարչակարգի նկատմամբ՝ որպես զերմանական «դրածոների»<sup>64</sup>: Հայ հասարակայնությունը, ընդհակառակը, հույսեր էր փայլիքայում, որ Անտանտի հաղթանակի զոհասեղանին մատուցված արյունաքամ հայ ժողովուրդը, իրավամբ, պետք է վայելի Միացյալ Թագավորության զինվորականության երախտագիտությունը, բարեհաճությունը և հովանավորությունը: Մեծ Բրիտանիայի թվացյալ հայամետ դիրքորոշումը շատ հաճախ ձևական քննույթ էր կրում, քանի որ բրիտանացիները, ինչպես նաև Անտանտի ազդեցիկ մյուս երկրները էրեւ թեքեցին հայ ժողովուրդից՝ վերանայելով իրենց նախկին խոստումները: Քանի դեռ չէր պատռվել անզիացիների «հայասեր» դիմակը և մերկացվել նրանց ուխտադրուժ քաղաքականությունը, առժամանակ, ինչպես հայտնի է, հայերի միջավայրում մոլորություն էր տարածված, թե նրանք եկել են նաև մեր ժողովրդին օգնելու: Այդ օրերին թիֆլիսահայ մամուլը, ողջունելով «դաշնակիցների» մուտքը Այսրկովկաս, հրճվանքով գրում էր, որ «հայ փոքրիկ հերոսական

<sup>63</sup>Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի նախագահությունն ու գործադիր մարմինը կառավարության նախագահի մոտ // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 9. I. 1919:

<sup>64</sup>Жорданян Н.Н. Моя жизнь. Стэнфорд, 1968, с. 89.

ժողովուրդը հսկայական զոհաբերութիւններից յետոյ, վերջապէս, պաշտոնապէս ճանաչւել է որպէս զինակից և իրաւագօր ժողովուրդ դաշնակից պէտութիւնների կողմից<sup>65</sup>:

Ուստի, հսկանալի է, վրաց վարչապէտը տրամադրված էր արագործն քողարկել այն բոլոր հանցագործությունների հետևանքները, որոնք կատարվել էին իր կառավարության կողմից խաղաղ հայ բնակչության նկատմամբ: ՀԱԽ-ի լիազորների հետ հանդիպման ժամանակ նրա բերանով շոայլորեն տարածվող խոստումները, ինչպէս պարզվեց, ձեական բնույթ ունեին և, ակներնաբար, ժամանակ շահելու նպատակ էին հետապնդում: Խոստացած քննիչ հանձնաժողովը, որի անդամ էր նաև ՀԱԽ-ի լիազոր Դ. Գ. Դավիթիսանյանը<sup>66</sup>, այդպէս էլ վճռական որևէ դեր չունեցավ հայերին հալածողների ապօրինությունները բացահայտելու գործում: Եվ դա, իսկապէս, զարմանալի չէ, քանզի զլիսավոր հանցագործները հենց վրաց կառավարության անդամներն էին: Ավելին, շարքային ոճրագործներին անպատիժ թողնելը որպէս անմիջական հետևանք ունեցավ 1919 թ. ապրիլ ամսին Գագրայի զավառում հայերի տների և ունեցվածքի զանգվածային թալանն ու ավերը:

ՀՅԴ-ն, որը ՀԱԽ-ի ստեղծման հիմնական ու հետևողական նախաձեռնողն էր, առանձնակի սրտացավությամբ էր նկատում նրա բոլոր թերությունները: Ինչպէս ասվեց, «պարիստելի» սկզբունքով գումարված ՀԱԽ-ի առաջին կազմը պէտք է գործեր առժամանակ, մինչև ընտրությունները: Ենթադրվում էր, որ համաժողովրդական քվե ստացած Վրաստանի Հայոց ազգային ժողովը կձևավորի ՀԱԽ-ի նոր կազմը, բայց դա նախապէս որոշված ժամկետներում տեղի չունեցավ: Այդ հանգամանքը որոշակի դժգոհություն առաջացրեց, որը դրսնորվեց ՀՅԴ-ի լրագրում արտահայտված հետևյալ կարծիքի մեջ. «Վրաստանի Հայոց Ազգային խորհուրդը ունեցել է 4-5 նիստ և այդ նիստերը եկել են

<sup>65</sup> Խմբագրական՝ դաշնակից պէտութիւնները և հայ ժողովուրդը // ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ, 17. XII. 1918:

<sup>66</sup> Տե՛ս ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 22. I. 1919:

ապացուցելու, որ այդ մարմինն իր գործունէութեամբ բնաւ չի արդարացնում իր վրայ դրած յոյսերը <...> Ազգային խորհուրդ կոչվածք դարձել է մի մարմին, ուր կուսակցութիւնները մարզում են հոկտորական և "դիւանագիտական" պարապմունքների մէջ: <...> Պէտք է օր առաջ նշանակել Վրաստանի հայութեան Սահմանադիրը ժողովի ընտրութիւնները և հնարաւորութիւն տալ, որ դեմոկրատիայի իսկական ընտրելիններն իրենց ձեռքը վերցնեն հայ աշխատաւորութեան կրթական-կուլտուրական կեանքի դեկր»<sup>67</sup>:

1919 թ. փետրվարի 18-ին ՀՅԴ-ի Թիֆլիսի «ներկայացուցական ժողովում» լսվեց ՀԱԽ-ում նրա լիազորների հաշվետվորյունը: Ելույթ ունեցողները (Ա. Գ. Արեդյան, Հ. Գ. Արդության և այլք) միակարծիք եղան, որ գործող ՀԱԽ-ը պետք է լուծարվի և նրա փոխարեն ստեղծվի նորը: ՀԱԽ-ը մեղադրվեց, որ ձախողել է զաղթականությանը խնամելու առաքելությունը, ինչպես նաև վիրահայության մշակութային գործերը հասցրել է անմիտիքար վիճակի: Ժողովի մասնակիցները դարձյալ «պարիստի» սկզբունքով կազմված ՀԱԽ-ը բնութագրեցին որպես «քառանկյունի անիվ»: Այս պիտակավորումը բխում էր նրանից, որ ՀԱԽ-ը «չորս ձևով էր խօսում վրաց կառավարութեան հետ, չորս պրիզմայով էր նայում հարցին ու ինքը վրաց կառավարութիւնն անգամ մնացել էր շարած, զիտէր, որին լսէր, որի կարծիքը ընդունէր իբր վիրահայութեան ներկայացուցչի կարծիք»<sup>68</sup>: Հասուկ նշվեց, որ ՀՅԴ-ի խմբակցությունն իր գործընկերներին բազմիցս առաջարկություններ է արել ՀԱԽ-ի վերընտրության մասին, սակայն գործը կանգ էր առել կանոնակարգ մշակող հանձնաժողովում<sup>69</sup>: Դաշնակցականները քննադատում էին մյուս կուսակցությունների գործելակերպը, շեշտելով, թէ նրանց համար

<sup>67</sup>Տե՛ս Քառանկյունի անիվը // ԱՇԽԱՏԱԲՈՐ, 27. IX. 1918:

<sup>68</sup>Տե՛ս Հ. Յ. Դաշնակցութեան Վրաստանի ույոնական ժողով, Գ. Ախտա // ԱՇԽԱՏԱԲՈՐ, 2. IV. 1919:

<sup>69</sup>Տե՛ս Հ. Յ. Դաշնակցություն՝ ներկայացուցական ժողով // ՅԱ-ԸՆ.Զ, 22. II. 1919:

«ընտրութիւններ անել՝ նշանակում է աթոռներից գրկւել»: Վերջիններիս կարծիքով էլ, ՀՅԴ-ի ներկայացուցիչները շահարկում էին ՀԱԽ-ի վերընտրության հարցը, քանի որ նրա կազմում «մեծամասնութիւն չեն և իրենց կամքը թելադրել չեն կարողանում»<sup>70</sup>: 1919 թ. մարտի 14-ին, ձայների ճնշող մեծամասնությամբ, ՀԱԽ-ը մերժեց ՀՅԴ-ի խմբակցության առաջարկը իր լուծարման մասին<sup>71</sup>: Այսպիսով, հարցի կարգավորումն առժամանակ հետաձգվեց, մանավանդ, իիշյալ դեպքից երկու օր առաջ գումարվել էր Վրաստանի ՍԺ-ն: Վերջինիս անդամակցեցին միայն վրաց ազգային կուսակցությունները: Փասորքեն, ստեղծված քաղաքական ծանր պայմաններում ՀԱԽ-ը մնաց վիրահայերի, ջավախայերի և աբխազահայերի միակ ներկայացուցչական ամբիոնը:

Երկրի ազգային փոքրամասնություններին պատկանող բնակչության իրավունքների սահմանման հոլուծ կարևոր հարցին թիֆլիսահայ կուսակցական մամուլն անդրադարձել է բազմից: «Վրաստանի հանրապետութեան կազմնելու առաջին խև օրից՝ պետութեան, թէ՝ օրէնսդիր և թէ՝ վարչական բարձր մարմինների մի շարք դեկարացիանների մէջ խօսում էր հանրապետութեան սահմաններում բնակուղ ազգային փոքրամասնութիւնների իրաւունքների մասին, – գրում է ականատեսը: – Սակայն խոսուունների սահմանից այդ խնդիրը դուրս չի եկել և գործնական լուծում չի ստացել մինչև օրս: Ընդ հակառակը, առօրեայ քաղաքական կեանքի ընթացքում ոչ միայն չի նկատւել ազգային փոքրամասնութիւնների պաշտպանութիւնն ու հիմնաւորումը, այլ և ամեն կերպ հաղածել են փոքրամասնութեան պատկանող քաղաքցիները իբրև այդպիսիք: Աւելորդ աշխատանք կը լինի թւել մի առ մի այն ողիսականները, որոնց ենթարկւեցին ոուս, օս, աջար, հայ բնակիչները հանրապետութեան սահմաններում: Ազ-

<sup>70</sup>Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 18. XII. 1918:

<sup>71</sup>Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 19. III. 1919:

զային կուլտուրական մարմինները ոչ միայն օրէնսդրութեամբ չհաստատւեցին ու չամրապնդվեցին, այլ և ամեն ջանք գործադրուեց նրանց նսեմացնել ու չէղոքացնել: Հալածանքները ազգային խորհուրդների դէմ սովորական երևոյթ դարձան մեր իրականութեան մէջ<sup>72</sup>:

Վրաց քաղաքական միտքը, անկախ կուսակցական պատկանելությունից, առանձնակի եռանդով քարոզում էր ազգային փոքրամասնությունների ներկայացուցական մարմինների գոյության դէմ: «Այս բոլոր ազգային խորհուրդները հակավրացական քաղաքականություն վարող հաստատություններ են, – պնդում էին ազգային դեմոկրատները: – Եթե ազգային փոքրամասնություններն աշքի առաջ ունեն լոկ մշակութային նպատակներ, ապա, կտէսնեն, որ նրանց ազգային զարգացումն անձեռնմխելի է և ապահովված: Այս պատճառով ազգային խորհուրդներն ավելորդ են»<sup>73</sup>: Արմատական ազգայնականներից ետ չէին մնում նաև սոցիալիստական, հետևարքար, «միջազգայնականության» պատմուճան հազած վրաց սոցիալ-դեմոկրատները: Նրանց մամուլն աներեսարքար համոզում էր հասարակությանը, թե «Սահմանադիր ժողովը առանց ազգային խորականության հանդիսանում է Վրաստանի բոլոր քաղաքացիների ներկայացուցիչը: Ուստի, ազգային որևէ խորհրդների գոյությունն անթույլատրելի է...»<sup>74</sup>:

Ինչպէս տեսանք, ՍԺ-ի ընտրություններն իրականացվում էին լուրջ խախոսումներով, երբ ազգային փոքրամասնությունների շուրջը, մասնավորապէս հայերի, ստեղծվել էր ահարեկման մթնոլորտ: Քողարկելով այս խորականության քաղաքականու-

<sup>72</sup> Սահմանադիր ժողովը և ազգային փոքրամասնությունների իրաւունքը // ԱՇԽԱՏԱԽՈՐ, 21. IX. 1919:

<sup>73</sup> «Խայմանական» («Սաքարթվելո», 1919, № 68) պարբերականից արտատպված հոդվածը տե՛ս Վրաց քէրթերից // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 29. III. 1919:

<sup>74</sup> «Երտունձ» («Էրթորա», 1919, № 92) պարբերականից արտատպված հոդվածը տե՛ս և Հանուալինի սույն կազմը // КАВКАЗСКОЕ СЛОВО, 1. V. 1919.

բյունը՝ ՎՀՀ-ի առաջնորդները ՎՄԴԲԿ-ի համամասնական ցուցակով խորհրդարան էին մտցրել նաև հայազգի չորս պատգամավոր, որոնց ներկայությունը ՍԺ-ում հեղնանք էր առաջացնում նույնիսկ վրացական կողմի մոտ: «Խոր չկա, ոչ մի հայ ձայն չէ տվել Վրաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության ցուցակին և եթե այնտեղ [ՍԺ-ում – Բ. Ս. Հ] նստած են մենշևիկների անվան տակ մի երկու հայ «մանեկեն»՝ այդ միմիայն մենշեվիկյան մի սիմուլյացիա է և ուրիշ ոչինչ»<sup>75</sup>, – «պարզաբանում էր» վրաց ազգայնականների պարբերականը: Սույն սրամիտ դարձվածքը չվրիպեց ուշադիր ընթերցողի աշքից: «Նոքա եղել են այն մանեկենները, որոնցով կառավարութիւնը հայորատութեան օրերին քողարկել է իր ամօթալի քաղաքականութիւնը»<sup>76</sup>, – հավելեց դաշնակցական լրազիրը: Բոլորի համար միանգամայն պարզ էր, որ այս «մանեկենները» չին կարող փոխարինել 400 հազ. թվաքանակ ունեցող Վրաստանի հայ համայնքի լիակատար ներկայցուցությունը:

Վրաստանում գործող հայ քաղաքական մեծ ու փոքր բոլոր հոսանքների համաձայնությամբ, ի վերջո, որոշվեց ՀԱԽ-ի վերընտրություններն իրականացնել 1919 թ. հուլիսին: Այս կարևոր իրադարձությունը պետք է հնարավորինս ավելի կատարյալ կապ հաստատեր Վրաստանի տարրեր քաղաքներում ու գավառներում բնակվող հայ համայնքի առանձին մասերի միջև: Համամասնական վեց ընտրացուցակներն ընդգրկում էին ՀՅԴ-ի, ՀԺԿ-ի, ԸՄԴԲԿ-ի, ՎՄԴԲԿ-ի, ՍՀԿ-ի և Հնչակյան կուսակցության թեկնածուներին, նաև առանձին խմբով հանդես եկած Աբխազիայի հայազգի սոցիալ-դեմոկրատներին<sup>77</sup>: Շրջանային ընտրական հանձնաժողովներ էին կազմակերպվել թելավում, Սղնախում, Գորիում, Սուխումում, Քութայիսում, Ախալցխայում և

<sup>75</sup> «Ձեացո Տաճարություն» («Ախալի Սաքարթվելո», 1919, № 3) թերթից արտատպված հոդվածը տես ս Վրաց կեանք // ՆՈՐ ԱՇԽԱՏԱՒՈՐ, 18. VII. 1919:

<sup>76</sup> ԱՇԽԱՏԱՒՈՐ, 13. VII. 1919:

<sup>77</sup> ՆՈՐ ԱՇԽԱՏԱՒՈՐ, 10. VII. 1919:

Թիֆլիսի շրջանում<sup>78</sup>: ՀԱԽ-ի կենտրոնական ընտրական հանձնաժողովի խնդրանքով Վրաստանի ՆԳ նախարար Ն. Ռամիշվիլին «փոստացաւ մի շրջաբերականով յայտնել կոմիսարներին և զեմստային վարչութիւններին, որ Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի ընտրութիւնները տեղի են ունենում կառավարութեան զիտութեամբ և ընտրութիւնների դեմ խոշընդուներ չպիտի յարուցուեն»<sup>79</sup>: Ծուտով, սակայն, հայտնի դարձավ, որ ՎՍԴԲԿ հայազգի անդամները, մասնավորապես, Կախեթիայի շրջաններից, դիմել են վրաց կառավարությանը, խնդրանքով՝ «ընտրութիւնները յետաձգել մինչև աշուն, որովուն դաշտային եռուն աշխատանքների պատճառով այդ շրջանների ազգարնակութիւնը հնարաւորութիւն չունի պէտք եղած չափով մասնակցել ընտրական աշխատանքներին»<sup>80</sup>: Ակներևաբար մողոնված այս պատճառաբարանությունը ՀԱԽ-ի կողմից համոզիչ հերքվեց<sup>81</sup>: Սակայն նշանակված ժամկետից երկու օր առաջ՝ հուլիսի 18-ին, ՀԱԽ-ի ընտրությունները կառավարության որոշմամբ կասեցվեցին<sup>82</sup>: Գյուսավոր պատրվակներից մեկն այն էր, որ Զավախիք (որպես վիճահարույց տարածքի) հայության մասնակցությունը ՀԱԽ-ի ընտրությանը նախատեսված չէր: Տնշակյան կուսակցության մասունի էջերում ևս մի կարևոր դրդապատճառ էր նշվում: «Խնկական պատճառը, - պնդում է հոդվածագիրը, - № 3 [իմա՝ ՎՍԴԲԿ-ի - Բ. Մ.] շարաբաստիկ ցուցակի հավանական անհաջողությունն էր, որ եկավ քար ձգելու Վրաստանի հայ ժողովի գեր այս անգամ իրազործվելիք ընտրական գործին, և

<sup>78</sup> Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովը // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 12. VI. 1919:

<sup>79</sup> Տե՛ս Տեղական կեանը // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 10. VII. 1919:

<sup>80</sup> Տե՛ս Տեղական կեանը // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 19. VII. 1919:

<sup>81</sup> Տե՛ս Վիրահայ Ազգային Խորհրդի 1919 թ. հուլիսի 18-ի որոշումը // ԳՈՐԾԱՎՈՐ, 28. VII. 1919:

<sup>82</sup> Տե՛ս Վրաստանի Կառավարության գրությունը Վիրահայ Ազգային Խորհրդին // ԳՈՐԾԱՎՈՐ, 28. VII. 1919:

մենք համոզված ու հավատացած ենք, քար զցեց ընդմիշտու<sup>83</sup>:

Մեր կարծիքով, իրականում այս արգելքի բուն պատճառը թարնվում է, նախ և առաջ, արտաքին քաղաքականության ասպարեզում: Հայաստանի կառավարությունը հրաժարվեց միանալ 1919 թ. հունիսին կնքված վրաց-ադրբեջանական հակառուսական դաշինքին: Հետևաբար, ձևումների թիրախ դարձավ ՀՅԴ-ի Վրաստանի մյուլը, փորձ եղավ արգելելու նրա օրգան «Աշխատավոր» պարբերականի հրատարակությունը<sup>84</sup>: Ենթադրելով ՀՅԴ-ի հաջողությունը ՀԱԽ-ի համընդիանուր ընտրությունների պարագայում՝ վրաց իշխանություններն այս հարցում ևս նախընտրեցին արգելքներ դնելու ճանապարհը: Վրաստանում ՀՅԴ-ի «կուսակցական ժողովները փաստորէն արգելած են և դաշնակցական լինելը խոշոր յանցանք է համարում»<sup>85</sup>: Սակայն սահմանափակումների քաղաքականության շինծու, արհեստական լինելն ապացուցեցին նաև 1919 թ. օգոստոսին կայացած Վրաստանի ՍԺ-ի նոր անդամների ընտրությունները. Ախալցալարի, Ախալցխայի և Բորչալուի գավառներում դրանց արդյունքներն սպասելի հաղթանակ բերեցին ՀՅԴ-ի համամասնական ցուցակին:

<sup>83</sup>Տե՛ս Վիրահայ Ազգային Խորհրդի ընտրությունների «հետաձգումը» // ԳՈՐԾԱԿՈՐ, 28. VII. 1919: Նման տեսակետ է արտահայտված նաև ՀՅԴ-ի մամուլի էջերում. «Կառավարութիւնը ուզում էր խորհրդադր իր արքանեակների ձեռքը ձգել, - պնդում էր հոդվածագիրը, - որպէսզի նա դառնայ իր քմահաճոյքներին ենթարկող մի խորտիլակ: Ըստ երևոյթին զաւարի դրութիւնը, որի վրայ այնքան յոյսեր էին դնում վրաց մենաշնիկները, այսքան էլ նրանց համար նպաստաւոր չի եղել: Հայ աշխատաւորութիւնը, թեպէսն ահաբեկած, լաւ ճանաչելով հայորսութեան հեղինակներին՝ երես է դարձրել նրանցից» (տե՛ս Կամայականութիւնը // ՆՈՐ ԱՇԽԱՏԱԻՈՐ, 20. VII. 1919):

<sup>84</sup>Վրաստանի ներքին գործերի նախարարի հայտարարությունը «Աշխատավոր» թերթի փակման առթիվ // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 12. VII. 1919:

<sup>85</sup>Տե՛ս Ազգային Խորհրդի ընտրութիւնները արգելած // ՆՈՐ ԱՇԽԱՏԱԻՈՐ, 22. VII. 1919:

Հայտնվելով արհեստածին արգելքների ճիշրաններում՝ ՀԱԽ-ի մաս կազմող կուսակցությունները հայ համայնքի վստահությունը վերականգնելու և ամրապնդելու համար փորձում էին գտնել այլ ուղի: Զկարողանալով ձեռք բերել Վրաստանի ողջ հայության քվեն՝ նրանք վերադարձան միջկուսակցական անդրկուլյան համաձայնությունների պրակտիկային: ՀԱԽ-ի կազմավորման այդ եղանակը, ի սկզբանե, ցույց էր տվել իր բացասական, արատավոր և մութ կողմերը: Սակայն այլքնտրանք, վրաց իշխանությունների բռնած չար դիրքի հետևանքով, չէր էլ մնում: Ուշագրավ է, որ ՀԱԽ-ի ընտրությունները ձախողած հայ սոցիալ-դեմոկրատների խումբը, որը ներկայանում էր իրքն ՎՍԴԲԿ-ի «հայկական սեկցիա»<sup>86</sup>, անմիջապես առաջ քաշեց ՀԱԽ-ում իրեն ևս տեղեր հատկացնելու պահանջ<sup>87</sup>: Այդ հարցը լուրջ քննարկման առարկա դարձավ: Ոմանք կարծում էին, որ «հայկական սեկցիայի» մասնակցությունը ՀԱԽ-ի աշխատանքներին լրացուցիչ լժակներ կտա նրան՝ գործերը ներսից վերահսկելու և հարկ եղած դեպքում, ի շահ վրաց կառավարության, «անվտանգ» ուղղությամբ տանելու համար<sup>88</sup>: «Սեկցիայի» հանդեպ արտահայտված անվստահության նշանները, ինչպես հաստատվեց հետագայում, անհիմն չէին: Այսպես, Վրաստանում հայկական մշակութային ինքնավարության մասին վճռորոշ հարցի քննարկման

<sup>86</sup> ՎՍԴԲԿ-ի առանձին հայ անդամներ իրենց դրսնորեցին որպես վրաց իշխանությունների քաղաքականության հլու կամակատարներ, քանզի «դաշտային եռուն աշխատանքների» մասին մողոնած պատրվակն արդեն չէր ել կարող բողարկել այս պարզ իրողությունը: Նման երևոյթ արձանագրվեց նաև Լոռվա ճակատագրի վճռման հարցում: «Սեկցիայի» դեկավար Ս. Կ. Վարդոյանը զավարի հայ ազգաքննակցությանը հորդորում էր կոյմ արտահայտվել «չեզոք զոտին» Վրաստանի սահմանների մեջ ընդգրկելու օգտին (տե՛ս և *Документы об армяно-грузинском пограничном споре в Лори (декабрь 1920г.-январь 1921г.)* // ИФЖ, 2010, № 1, док. № 2, с. 259):

<sup>87</sup> ՀԱԱ, ֆ. 441, գ. 1, գ. 61, թ. 20:

<sup>88</sup> Տե՛ս և նույն տեղում, գ. 84, թ. 12 շրջ.:

ժամանակ նրա խմբակցությունը բացեիքաց հայտարարեց, որ «հակառակ քվե է տալու»<sup>89</sup>:

ՀԱԽ-ի կազմում ընդգրկված կուսակցություններից յուրաքանչյուրն ուզում էր կառույցում բացադիկ դիրք շահել, ուստի ձգուում էր այնտեղ շատ ներկայացուցիչներ ունենալ: ՀԱԽ-ի կազմավորման պարիստետային սկզբունքը, ի վերջո, չընդունվեց և դրա փոխարեն առաջ եկավ ոչ պակաս վիճակարույց ու խճճված կառուցվածք: Երբ վերջապես պետք է որոշվեր ՀԱԽ-ի նոր կազմը, տեղերի վերաբաշխման հարցում, ծավալվեցին թեժ վիճաբանությունները: Դրանք կարվածահար էին արել առանց այն էլ ՀԱԽ-ի ոչ արդյունավետ և անկատար աշխատանքը: 1919 թ. սեպտեմբերին ձեռք բերվեց որոշակի համաձայնություն, որով աթոռները վերաբաշխվեցին ի շահ ՀՅԴ-ի լիազորների<sup>90</sup>: Դա նպաստավոր եղավ նաև ազգային այլ հոսանքների համար, որոնք հանդես եկան իրենց ուժերի միավորման օգտին: ՀՅԴ-ն, ՀԺԿ-ն, հնչալյանները և հայ արդյունաբերողների ներկայացուցիչները միահամուռ կամք դրսնորելով կազմեցին ՀԱԽ-ի նոր գործկում, որին առաջնորդելու գործը ստանձնեցին հայտնի ձեռներեց և բարերար Մ. Արամյանցը, զիտնական-հայագետ Ե. Տեր-Սինասյանը, ՍԺ-ի անդամ Գ. Տեր-Ստեփանյանը: Էսդեկների և էսէռների լիազորները գործկում մեջ տեղ չզտան, քանզի ակնկալելով ուժերի ոչ նպաստավոր հարաբերակցություն՝ ՌՍԴԲԿ-ի, ՎՍԴԲԿ-ի և էսէռների խմբակցությունները ի սկզբանե հրաժարվեցին թեկնածուներ առաջադրել<sup>91</sup>: ՀԱԽ-ին նոր շունչ հաղորդող քայլերից մեկը եղավ նաև նախազահության վերընտրությունը, որը համալրեցին Բ. Թոփշյանը (ՀՅԴ), Ա. Մինիթարյանը (ՀԺԿ) և հնչալյան Հ. Ղազարյանը (Լազոն)<sup>92</sup>: Կարծես, ի վերջո, ստեղծվել էր ՀԱԽ-ի այն միջուկը, որը պետք է առաջ մղեր կուտակված մեծ

<sup>89</sup> Տե՛ս ԲԱՆՎՈՐԻ ԶԱՅՆ, 11. VII. 1920:

<sup>90</sup> Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային] Խորհուրդ // ԲԱՆՎՈՐԻ ԶԱՅՆ, 21. IX. 1919:

<sup>91</sup> Խроника: В армянском национальном совете Грузии // БОРЬБА, 2. X. 1919.

<sup>92</sup> БОРЬБА, 1. X. 1919.

ու փորք բոլոր խնդիրները: Դեպքերը, սակայն, այլ կերպ զարգացան. ՎՄԴԲԿ-ի, ՌՄԴԲԿ-ի և էտոների խմբակցությունները հայտարարեցին, թե ՀԱԽ-ի նախագահության և գործկոմի ընտրությունները անվավեր են համարում ու ցեսազայ բայլերի համար իրենց ազատ են զգում<sup>93</sup>: «Եւ եթէ այժմ Խորհրդում ստեղծում է “օպպոզիցիա”, – պարզաբանում էր ՀՅԴ-ի լրազրի մեկնաբանը, – դա արդիւնք է ոչ թէ սկզբունքային կամ գործնական խնդիրների շուրջը առաջացած տարակարծիքութեան՝ այլ աթոռակուի: <...> Եւ մենք համոզած ենք, որ այդ օպպոզիցիայի ամբողջ աշխատանքի նպատակը կը լիմի խանգարել խորհրդի նորմալ պարապմունքներին, սարուտաժի ենթարկել կարևոր խնդիրները, որպէսզի վաղը խորհրդի անյաջող գործունեութիւնը իր՝ աշխատանքներին չմասնակցելով բացատրի»<sup>94</sup>: Այսպիսով, կրկնենք, կուսակցություններից յուրաքանչյուրն ուզում էր ՀԱԽ-ի կազմում բացառիկ տեղ ունենալ: ՎՄԴԲԿ-ի դրդմամբ ՀԱԽ-ի սոցիալիստական թեր կազմող հոսանքները ոչ կառուցողական դիրք բռնեցին: ՀԱԽ-ի նորակազմ դեկավար մարմինները, միջկուսակցական խորհրդակցության որոշմամբ, զրեթէ անմիջապէս լուծարվեցին: Պաշտոններում վերահաստատվեց նախկին աշխատակազմը<sup>95</sup>:

Նկատենք, որ ՀԱԽ-ը զիսավորող մարմինների մեջ, առանձնապէս ֆինանսական բաժնի կազմում, հայ գործարար խավի նշանավոր ներկայացուցիչների (Մ. Հ. Արամյանց, Ե. Ղ. Մայիսյան և այլք) ներգրավելու ձախողված փորձն առաջ բերեց և այնուհետև ամրապնդեց կառույցի նկատմամբ ուներ դասի կասկածամությունը, ինչը, փաստորեն, մեծապէս նպաստեց ՀԱԽ-ի ֆինանսական ծանր վիճակի էլ ավելի խորացմանը:

Այս փարիվերումների զիսավոր պատճառը սոցիալիստական թերի դիմադրության և նրա կողմից կառուցողական հետազո

<sup>93</sup> Տե՛ս Ազգային Խորհրդի 4-րդ նիստը // ՔԱՆՎՈՐԻ ԶԱՅՆ, 5. Խ. 1919:

<sup>94</sup> Օպպոզիցիան // ԱԽԱՏԱՒՈՐ, 2. Խ. 1919:

<sup>95</sup> ԲՈՐԵԲԱ, 4. Խ. 1919.

աշխատանքի սարուտածն էր, քանզի «ձախ» հոսանքների ներկայացուցիչները՝ Ա. Հ. Երզնկյան և այլը, ներկայացված չէին գործկումի նոր աշխատակազմում: Աներկրա է ևս մի հանգամանք, վրաց կառավարությունն անհետևանք չէր թողնի իր կուսակիցների՝ ՎՍԴԲԿ «հայկական սեկցիայի» ներկայացուցիչներին որևէ պաշտոն չտալը: Իշխանությունները ցանկանում էին ՀԱԽ-ի գլուխ կարգել լոյալ սոցիալիստներին՝ պաշտոնական որոշումների լուս կամակատարներին: Այդ հարցում, սակայն, զիսավոր արգելք էր դիտվում ՀՅԴ-ի խմբակցությունը: Վերջինիս մեկուսացնելու համար «հայկական սեկցիայի» լիազորները դիմեցին գործնական քայլերի: Այսպես, «սեկցիայի» ժողովը որոշեց՝ «ոչ մի դէպրում դաշնակցութեան հետ համաձայնութեան չըգալ նախազահութեան կազմելու իննորում, այլ ուրիշ խմբակցութիւնների հետ ժամանակաւոր համաձայնութեամբ լուծել այդ խնդիրը և սոցիալիստական մեծամասնութիւն ստեղծել թէ նախազահութեան և թէ՝ գործադիր մարմնի մէջ»<sup>96</sup>: Ասենք ավելին, ՎՍԴԲԿ-ի «ներկայացուցիչները միշտ այն միտքն են պաշտպանել, որ կոնսորի տեղը [ՀԱԽ-ում] պիտի վերապահի իրենց»<sup>97</sup>:

Փաստորեն, ինչպես տեսնում ենք, ՀԱԽ-ի ներսում քաղաքական պայրարը թեժացվում էր այն պարագայում, երբ, առաջին հերթին անհրաժեշտ էր ազգային միասնականության կամք դրսենորել՝ ստեղծարար և կառուցղական աշխատանք կազմակերպելու համար: Մամուլն իրազեկում էր, որ «այնուամենայնիւ դաշնակցականներն որոշ աշխատանք կատարել էին, թէ ինչ ձևով այդ իրենց գործն է, միայն փաստն այն է, որ երբ քէարկութեան դրւեցին Ազգային Խորհրդի նախազահութեան համար երկու թեկնածուները՝ Ա. Երզնկեանը<sup>98</sup> սոցիալիստական երեք

<sup>96</sup> Տե՛ս ԲԱՆՎՈՐԻ ԶԱՅՆ, 28. IX. 1919:

<sup>97</sup> Տե՛ս Նորակազմ Վիրահայ Ազգային Խորհրդի Բ. նիստը // ԲԱՆՎՈՐԻ ԶԱՅՆ, 29. II. 1920:

<sup>98</sup> Արդի հայ պատմագիտության մեջ կարծիք է ձևավորվել, որ հայ սոցիալ-դեմոկրատները, հանձին Ա. Երզնկյանի, «հետևում էին իրենց

ֆրակցիաների, իսկ Բ. Թողիչեանը դաշնակցականների կողմից, վերջինն ստացաւ 26 ձայն, այսինքն երկու ձայն աւելի սոցիալիստների թեկնածուից և ընտրւեց Ազգային Խորհրդի նախագահ: Հեռնպահ էին ուստական կադետների երկու հայ ներկայացուցիչները»<sup>99</sup>: ՀՅԴ-ի թեկնածուի օգտին ձայն էին տվել նաև ՀԺԿ-ն, հնչակյաններն ու հայ գործարարների խմբի անդամները: Հատկանշական է, որ ազգային այս հոսանքների հակառակորդն էին և՝ հայ սոցիալիստները, և՝ հայ լիբերալները, որոնք հանդես էին գալիս ոուս կամ վրաց կուսակցությունների դրոշի ներքո:

1920 թ. փետրվարին Վրաստանում գործող հայ քաղաքական հոսանքները կրկին համաձայնության եկան ՀԱԽ-ի վերակազմավորման հարցում, որի անդամների համար հատկացվում էր 30 աթոռ: Հստ այդմ՝ ՀՅԴ-ն ունեցավ 10-ը, մյուս կուսակցություններից (ՎՄԴԲԿ, ՌՍԴԲԿ, հնչակյաններ, Էսլոններ) յուրաքանչյուրը 5-ական տեղ<sup>100</sup>: Ինչպես մատնանշվում էր, «Չնորհիւ պարիտետի սկզբունքին Ազգային Խորհրդում ստեղծած է հաւասարակշուրիւն մի կողմից սոցիալիստական հատւածի և

---

ավագ գործիչներ վրաց մենշևիկներին» (տե՛ս Հայաստան Ա. Հայաստանի Հանրապետության անկախության ուղին // ՊԲՀ, 2008, № 1, էջ 30): Այս կարևոր պատմական դիտարկումը բացահայտում է ժամանակի քաղաքական իրողությունը, որն ունի նաև մեկ այլ աստղա: ՀԱԽ-ի գործկոմի դեկավար Ա. Երզնկյանի «լավ» հարաբերություններն իր նախկին կուսակից վրաց գործիչների հետ հնարավորություն էին ընձեռում եթե ո՛չ լիակատար լուծել, ապա գոնեւ մերժընդմերը մեղմացնել այս կնճոտ խնդիրները, որոնք օր օրի առաջանում և թանձրանում էին Վրաստանի հայ համայնքի կյանքում: Հետևաբար, սխալված չենք լինի, եթե մեջբերենք Ե. Տեր-Մինասյանի վկայությունը: Անվանի հայագետն ականատեսի իրավուրով գրում է, որ «ազգային խորհրդի մեջ ամենաազդեցիկ և կարևորուն անձնավորությունը սոցիալ-դեմոկրատիայի ներկայացուցիչ Արամայիս Երգնակյանն էր» (տե՛ս Տեր-Մինասյան Ե. Հուշերից, Եր., 2005, էջ 90):

<sup>99</sup>Տե՛ս Ազգային Խորհրդի 3-րդ նիստը // ԲԱՆՎՈՐԻ ԶԱՅՆ, 5. X. 1919:

<sup>100</sup>Хроника // БОРЬБА, 10. II. 1920.

միւս կողմից Դաշնակցութեան և Հայ ժողովրդական Կուսակցութեան միջև»<sup>101</sup>:

Վրաստանի ՀԱԽ-ը գոյատեց մինչև 1921 թ. փետրվարի 28-ը, երբ խորհրդային իշխանությունների կողմից ազգային այլ կազմակերպությունների հետ կասեցվեց նաև նրա գործունեությունը:

ՀԱԽ-ը ստեղծվել էր Վրաստանի հայության բոլոր հաստվածները մեկտեղելու, իրար կապելու, նրաց կարիքները ժամանակին հոգալու նպատակով: Նա եղել է այն հայելին, որն արտացոլում էր վիրահայ, ջավախիքահայ և արխազահայ համայնքների հույսերը, իղձերը, ցանկությունները, ինչպես նաև նրանց հասցված վերքերն ու վիրավորանքները: Վրացական կողմը համառորեն պնդում էր, որ ՀԱԽ-ը նախ և առաջ պետք է լինի մշակութալուսավորչական հաստատությունն<sup>102</sup>, այլ ոչ թե Վրաստանում հայերի ազգային ինքնակառավարման ներկայացուցական մարմին: ՎԴՀ-ում դեռ ձևավորվող պետականական դաշտի անկատարության հետևանքով ՀԱԽ-ի դերը, առանձնապես հեռանկարում, բոլորի համար մնում էր աղոտ և մշուշապատ: Փաստացի զրկված լինելով հասարակական, իրավական, քաղաքական լիազորություններից, ՀԱԽ-ը, ի վերջո, պահպանեց լոկ մի գործառույթ, այն է՝ Վրաստանում հայկական ժողովրդական դպրոցների համակարգն ուղավարելու գործը:

Պատմական իրողությունները բացահայտելիս և լուսաբանելիս, պետք է խոստովանել ու արձանագրել նաև մի շարք լուրջ սխալներ ու թերություններ, որոնք եղել են ՀԱԽ-ի գործունեության մեջ, ինչպես

<sup>101</sup>Տե՛ս «Վիրահայ Ազգային Խորհրդում // ԲԱՆՎՈՐԻ ԶԱՅՆ, 7. III. 1920:

<sup>102</sup>Տե՛ս «ԵՐԹՈՒԾԱ» («Էրթորբա»), 29. IV. 1919.

- ✓ ներքին կազմակերպչական խնդիրներին չափազանց մեծ տեղ հատկացնելը, ինչն առաջ էր բերում ոչ էական հարցերին նվիրված երկարատև քննարկումներ և վիճարանություններ,
- ✓ վարչակազմի անկազմակերպ ու անկանոն աշխատանքը,
- ✓ ֆինանսական սակավաթիվ միջոցների ոչ նպատակահարմար օգտագործումը և փոշիացումը,
- ✓ առանձին անհատների եսապաշտ ձգտումները և այլն:

ՎԻՐԱՀԱՅԵՐԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԽՆՔԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՀԻՄՆԵԼՈՒ ԾՐԱԳԻՐԸ

Ինչպես ասվեց, վրաց առաջնորդները այլազգիներին շոայլ խոստումներ էին տալիս նորաթուլի հանրապետության կազմում նրանց լուսավոր և բարզավաճ հեռանկարների մասին: «Մեր հանրապետութեան ապագան ապահովուած է, - հրձվանքով տեղեկացնում էր ընթերցողին ՎՄԴԿ-ի պաշտոնաթերթը, - որովհետև նա միայն վրաց ժողովրդի հանրապետութիւն չէ, այլն այն բոլոր ազգերի, որ բնակութիւն ունեն նրա տերրիտորիայի վրայ»:  
Սակայն պաշտոնական Թիֆլիսը ամեն քայլի էր դիմում «ազգայնացումը» (իմա՝ վրացականացումը) «օրինական» հիմքերի վրա դնելու համար<sup>2</sup>: Այդ տիրահոչակ քաղաքականության հետեանքները մեծ մասամբ մեկուսացրին և օսմարեցին ազգային փոքրամասնությունները Վրաստանի կառավարական, օրենսդրական, վարչական և այլ մարմինների գործունեությունից: Որոշումների կայացման լժակներն ամբողջությամբ հայտնվեցին ազգությամբ վրաց վերնախավի ձեռքերում: Այս պարագայում ազգային փոքրամասնություններին այլ ելք չէր էլ մնում, քան պահանջել հատուկ կարգի երաշխիքներ իրենց բուն իրավունքները պաշտպանելու համար:

ՎԴՀ-ի կազմավորումով նրա սահմանների ներսում հայտնվել էր շուրջ 400 000 ազգաբնակչություն ունեցող հայ համայնքը: Երկրում առկա էր հայկական ավանդական միջավայր: Ենթադրվում էր, որ Վրաստանի հայության առջև ծառացած բազմակուտակ և բազմաշերտ խնդիրների կարգավորմանը պիտի նպաստեր մշակութային ազգային ինքնավարության մասին գաղափարի իրականացումը: Այդ համակարգի ստեղծումը «նշանա-

<sup>1</sup> «յշտուծա» («Էրբորա», 1919, № 39) պարբերականից արտատպված հոդվածը տե՛ս Վրաց թերթերից// ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 21. II. 1919:

<sup>2</sup>Տե՛ս Քրոնիկոն՝ Ազգայնացում// ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 24. I. 1919:

կում է, – զրում էր ճանաչված գիտնական-արևելագետ և հասարակական գործիչ Արտաշես Աբեղյանը, – ոչ միայն որոշ տարիների ընթացքում դպրոցական ցանցի շնորհիւ զրածանաչ դարձնել հարիւր հազարաւոր հայերի, այդ նշանակում է ոչ միայն հայ զիրքն ու հայ թերթը – Հայաստանից ևս յդելով – տասնեակ հազարաւոր օրինակներով տարածել մեր ցեղակիցների մէջ <...> այդ նշանակում է միևնույն ժամանակ՝ բարձրացնել նրանց ազգային գիտակցութիւնը, ինքնավար մարմինների շնորհիւ և միջոցով սերտորեն շաղկապել նրանց իրար հետ, բայց նաև Հայաստանի հետ, հայ մշակոյթի կենդրունի հետ: Այդ նշանակում է՝ այժմու կենդրոնախույս ուժերը փոխարինել կենդրոնաձիգ ուժերով և ազգակներով: Կարծ՝ ազգային-մշակութային ինքնավարութեան պահանջը մեր ազգային բաղաքականութեան հիմնարքերից մէկը պիտի կազմէ: Հրաժարուիլ նրանից՝ նշանակում է հաշուիլ այն մտքի հետ, որ Հայաստանից դուրս գտնուող հարիւր հազարաւոր ազգակիցներ վաղ թէ ուշ ուժանան իրենց հայրենի մարմինց, փոշիանան մեզ համար և պարարտանյութը դառնան ուրիշների համար: Նման մտքի հետ հաշուել չի կարող հայութիւնը<sup>3</sup>:

Վրաստանի կառավարությանը հղած դիվանագիտական նոտայում արտօրծնախարար Ս. Տիգրանյանը շեշտում էր, որ Հայաստանը հրաժարվել էր Բորչալուի հյուսիսային և Թիֆլիսի զավադի հարավային հայաբնակ մասերի նկատմամբ իր տարածքային պահանջներից՝ նախապայմանով, որ վիրահայությունը կօգտվի մշակութային ինքնավարությունից<sup>4</sup>: ՀԱԽ-ը ևս աշխատում էր Վրաստանի հայազգի բաղաքացիների համար ձեռք բերել ապատարածքային (էքստերիտորիալ) ինքնակառավարում, որի զիսավոր բաղադրիչը մշակութային ինքնավարության մասին գաղափարն էր: Այն պետք է կարևոր դերակատա-

<sup>3</sup> Աբեղեան Ա. Ազգային փորքամասնութիւնները Անդրկովկասում // ՀԱՅՐԵՆԻՔ, 1929, ապրիլ, էջ 77–78:

<sup>4</sup> Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (բաղաքական պատմություն), Փաստաթերթի ժողովածու, Եր., 2000, էջ 73–74:

րում ունենար վիրահայ համայնքի, այդ թվում՝ վրացախոս հայերի ազգային ինքնության պահպանման գործում:

Մշակութային ինքնավարության կարգավորման ուղիները որոնում, քննարկում և առաջարկում էին հասարակայնության տարբեր շրջանակները: Հայ համայնքում իշխող տեսակետների մասին պատկերացում կազմելու համար բավական է դիմել ժամանակի մամուլին: «Եթե մենք ասում ենք կուլտուրական աւտոնուիհա, – կարդում ենք դաշնակցական պարբերականում, – հասկանում ենք մի այնպիսի դրութիւն, որ ամեն մի ազգ իրաւունք պիտի ունենայ պետութեան հաշտով կառուցելու և պահպանելու իր ազգային կուլտուրական կենքը: Օրինակ՝ հայերը Վրաստանում (կամ՝ արխազները, թուրքերը, ոռուները, յոյները և այլն) պիտի ունենան իրենց ընտրովի մարմինը, ասենք Ազգային Խորհուրդ: Պետութիւնը հարկ է հաւաքում անխստիր բոլոր քաղաքացիներից և այդ դրամով պահում զանազան հաստատութիւններ: Պետութեան պարտքն է՝ կրթական-կուլտուրական նպատակների համար յատկացած ամբողջ գումարը համեմատական չափով բաժանել – նայած ամեն մի ազգի թիւն – ազգութիւնների ընտրովի մարմինների մէջ, որոնք և պիտի պահեն կուլտուրական հաստատութիւնները (դպրոց, թատրոն, գրականութիւն և այլն): Ապա, նոյն ազգային մարմիններին միայն պիտի վերապահի այդ կրթական-կուլտուրական հաստատութիւնների ղեկավարութիւնը, ողի և ուղղութիւն, բովանդակութիւն տալը»<sup>5</sup>:

Հատկանշական է նաև, որ հայ սոցիալիստամետ քաղաքական հոսանքները մշակութային ինքնավարության պահանջը դիտում էին որպես ազգային ինքնորոշման իրավունքի իրականացման ընդունելի ձև<sup>6</sup>:

XX դարասկզբին եվրոպական սոցիալիստական գաղափարախոսությունը համարում էր, թէ միայն մշակութային ինքնավարության իրականացման միջոցով է հնարավոր լուծել ազ-

<sup>5</sup> Լեզվի խնդիրը // ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ, 29. XI. 1918:

<sup>6</sup> Հակոբյան Վ. Ա. Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության ձևավորումը և առաջին քայլերը, Երևան, 2015, էջ 84–85:

զային փորքամասնությունների հիմնախնդիրները: Այդ զաղափարի ջատագովների թիվը թիվը չէր միջազգային ազգեցիկ կազմակերպությունների շարքերում: 1920 թ. սեպտեմբերին Թիֆլիս ժամանեց II Բնտերնացիոնալի կարկառուն դեմքերի պատվիրակությունը, որի հետ Վրաստանի անկախության «de jure» կարգավիճակի ճանաչման խնդիրը պաշտոնական Թիֆլիսը ժամանաց լրտեղու հույսեր էր կապում: Տոնական այն մժնողորոտը, որը ջանասիրությամբ ստեղծվել էր թանկացին «գրոսաշրջիկների» համար, վերջիններին մազաշափ մոտածելու տեղիք չէր տալիս, թե Վրաստանում գոյություն ունի, ասենք, ազգային հայածանք և խորականություն: Քաղաքակիրո աշխարհի աշքերին թող փշելով՝ ժամանակի վրաց վերնախավը մշտապես շեշտում էր հայրենի պետությունում բնակվող այլ ազգությունների իրավունքները հարգելու իր «օքրմ» պատրաստակամությունը: Վրաստանի սոցիալ-դեմոկրատ «մենշևիկ» ղեկավարներն արժանացել էին II Բնտերնացիոնալի առաջնորդներ՝ Էմիլ Վանդերվելքի և Կառլ Կառլսուկու գովասանքներին, որպես միակ կառավարություն, որն իրականացնում էր միջազգային սոցիալիստական այդ կառույցի ծրագիրը<sup>7</sup>: Այն ուրույն տեղ էր հատկացնում նաև ազգային ցանկացած փորքամասնության իրավունքների պաշտպանությանը: Եվրոպացի բարձրաստիճան հյուրերն այցելեցին նաև ՀԱԽ՝ և նրա ղեկավարների կողմից արժանացան ջերմ ընդունելությանք: ՀԱԽ-ի և նույն բովանդակությունն ունեցող Վրաստանի մնացյալ կառույցների հետ II Բնտերնացիոնալի ղեկավարների հանդիպումը լիովին արդարացրեց իրենց գոյության փասոր վրաց ղեկավար անձանց քաղաքական հաշվարկների համատերսում:

ՀԱԽ-ը, ի սկզբանե, այն թյուր համոզմունքն ուներ, թէ նորակազմ հանրապետության ղեկավարները հետևողական կյինեն

<sup>7</sup> ჯავახიშვილი ლელა, მეორე ინტერნაციონალის დელეგაციის ვიზიტი საქართველოში და ქართული პრესა 1920 წელს // ქართული დიპლომატია, წელი წელი 7. თბილისი, 2000, გვ. 483–486.

<sup>8</sup> ԲԱՆԿՈՐԻ ԶԱՅՆ, 29. IX. 1920:

ազգային վիորամասնությունների մշակութային ինքնավարության հարցում և ՎԴՀ-ում կիրականացնեն այն նույն կերպով ու ծավալով, ինչպէս դա նախկինում իրենք էին պահանջում Ռուսաստանի ցարական իշխանություններից Կովկասի ժողովուրդների համար: Դեռևս 1912 թ. վրաց գործիչների տեսակետներն արտահայտող մամուլում գրված է, որ «մշակութային բոլոր գործերի ղեկավարումը պիտի տրամադրվի հենց շահագրգոված ազգերի տնօրինմանը: Մենք հոչակում ենք Կովկասի ազգությունների մշակութային ինքնավարության զաղափարը»<sup>9</sup>: Այդ սկզբունքը IV Պետրումայի ամբիոնից պաշտպանում էին վրաց պատգամավորներ Ա. Չիենկելին, Վ. Գելովանին և Ն. Չիեխաննու<sup>10</sup>: Որպէս օրինակ էին ծառայում ավստրիացի հայոնի սոցիալ-դեմոկրատներ Օստոտ Բառուերի և Կառլ Ռենների կողմից մշակված սկզբունքները: Դրանք հանգում էին հետևյալին. յուրաքանչյուր քաղաքացի պարտադիր պետք է կցագրված լինի այս կամ այն ազգությանը, յուրաքանչյուր ազգություն իրավական ամբողջականություն է կազմում, որին արտոնվում է իր կազմը մտնող անհատներից պարտադիր տուրք գանձելու իրավունքը, դպրոցի և մշակութային այլ օջախների տնօրինումը ազգային ինքնավարության մենաշնորհն է, յուրաքանչյուր ազգություն ընտրում է իր խորհրդարանը, կառավարության ներսում մշակութային ինքնավարության իրավունքից օգտվող ազգության շահերը ներկայացնում և պաշտպանում է նրա գործերով գրադիվոր հասուկ նախարարը»<sup>11</sup>:

Մշակութային ինքնավարության սկզբունքի այս պահանջներին լիովին համապատասխանում էին Վրաստանի ՀԱԽ-ի մշակած «Թեզեր»-ը: Ըստ այդ փաստաթղթի՝

<sup>9</sup> Сե'ս Стalin И. Марксизм и национальный вопрос. Ленинград. 1950, с. 47.

<sup>10</sup> յշխաճաճյ ծռնքու. Տայարուցյալու ազթօնեամուս Տայութեա Շայեց-տու և IV Տաեցմթուցյ Տատատօնքուն // Ժարտշու գումարմաճյա, Վյալովթցյալու 6. տօնուու, 1999, զը. 230–232.

<sup>11</sup> Советская историческая энциклопедия, том 8. М., 1965, с. 287.

1. «Հայերը Վրաստանի սահմաններում կազմում են Հայկական Ազգային Ինքնավարութիւն:
2. Ազգային ինքնավարութիւնը իրականացնում է Ազգային ժողովի և երազործադիր մարմնի՝ Ազգային Խորհրդի միջոցով:
3. Ազգային ժողովն ընտրում է ընդհանուր, հասարակ, զաղունի, ուղղակի ու համեմատական ընտրական սկզբունքով և գումարում է իր իսկ որոշած ժամանակաշրջաններում, իսկ Ազգային Խորհրդը գործում է Ազգային Ժողովի կողմից տրամադրության մեջ:
4. Ազգային Ժողովն ու Խորհրդն հասարակական իրաւական օրգաններ են, օժուած իրաւական անձի (юридическое лицо) բոլոր իրաւունքներով, որոնց մէջ նաև շարժական և անշարժ կայքեր ձեռք բերելու ու սեփականացնելու իրաւունքով, օրինական բոլոր միջոցներով:
5. Հայոց Ազգային Ինքնավարութեան գոյքերը համարում են Վրաստանի հայոց ազգային սեփականութիւն:
6. Ազգային Ժողովի ընդհանուր ժողովներում անդամները օգտագործում են խօսքի ազատութիւնից և անդամների ազգային անդամները: Թերացումների և ընդհանուր յանցանքների համար Ազգային Ժողովի և Խորհրդի անդամները, կարող են հետապնդել և գրկւել ազատութիւնից միայն դատական կարգով:
7. Այն շրջաններում, որտեղ հայ ազգաբնակութիւնը կազմում է տւեալ ուայոնի (քաղաք, գաւառ, թեմի, գիղ) բնակչների 15-ից ոչ պակաս տոկոս, հայոց լեզուն ճանաչվում է իրաւահասար պետական լեզուին վարչական տեղերում, ինքնավարութեան օրգաններում, դատական հաստատութիւններում, հրապարակական ժողովներում և պոստ-հեռագրական հաղորդակցութեան մէջ, այդ տեղերը, հիմնարկութիւնները, հաստատութիւնները և պաշտօնական անձինք, հայերի հետ յարաբերութիւններ ունենալիս, պարտաւոր են ընդունել բանասր և գրաւոր յայտարարութիւններ, բացատրութիւններ ու բոլոր գործավարական թղթերը հայերէն լեզուվ, այլ և պատասխանել ու թղթեր տալ նոյն հայերէն լեզուվ:

8. Կենսորոնական կառավարութեան համապետական օրէնքներն ու կարգադրությունները հրատարակուում են բացի վրացերենից նաև հայերէն լեզուվ: Հայերէն են հրատարակուում նմանապէս սոյն թէզիսների 7-րդ կէտում յիշած վայրերում, վարչական տեղերի և անձանց, տեղական ինքնավարութիւնների և դատական մարմինների բոլոր որոշումներն ու կարգադրութիւնները:

9. Հայոց լեզվի իրաւունքները, որոնք յիշած են սոյն թէզիսների 6 և 7 կէտերում, ապահովուում են յասուկ օրէնքով:

10. Ազգային Ինքնավարութեան իրաւասութեանը ենթակայ են.  
ա/ Ներկայացուցութիւն ու պաշտպանութիւն շահերի և իրաւունքների հայկական հիմնարկութիւնների և հայերի՝ ինչպէս անհատական, նոյնպէս և խմբական, որոնք բխում են նրանց հայ ազգին պատկանելուց:

թ/ Վարումն ժողովրդական կրթութեան և ազգային կուլտուրայի զարգացման գործերի, ինչպէս և օգնութիւն հայ ազգաբնակութեան պարենաւորման, զիւղատնտեսական, առողջապահական և խնամատարական ասպարեզներում:

11. Հայ ժողովրդական կրթութեան գործը ամբողջութեամբ յանձնուում է Հայոց Ազգային Ինքնավարութեան, դպրոցներում դասաւանդութիւնը տարրում է հայերէն լեզուվ: Ստորին, միջնակարգ և բարձրագոյն թէ հանրակրթական և մասնագիտական դպրոցներում դասաւանդելիք ծրագիրների որոշման և հաստատման, ինչպէս և նրանց կառավարելու գործը ամբողջութեամբ անցնում է Ազգային Ինքնավարութեան: Բարձր տարրական և միջնակարգ դպրոցներում վրաց լեզվի դասաւանդութիւնը պարտաւորեցուցիչ է:

12. Ժողովրդական կրթութեան, ազգային կուլտուրայի զարգացման համար Հայոց Ազգային Ինքնավարութեանն է տրամադրուում միջոցներ ազգաբնակութեան համեմատական չափով – պետական և տեղական ինքնավարութիւնների համապատասխան բիւջէներից:

13. Հայոց Ազգային Ինքնավարութիւնը իրաւունք ունի նշանակել և յասուկ տուրքեր հայերի վրայ, իր իրաւասութեան մէջ եղող գործերի համար:

14. Նախարարական Խորհրդի նիստերում մասնակցում է Հայոց Ազգային Խորհրդի ներկայացուցիչը, որպէս հայկական ինքնավարութեան գործերի վարիչ, մինիստրական իրաւունքներով»<sup>12</sup>:

Ըստ եվրոպական սոցիալիստների, հնարավոր էր ձևավորել երկու տեսակի մշակութային ինքնավարություն՝ ապատարածքային (լայն) և տարածքային (տեղական): ՀԱԽ-ը պնդում էր առաջին՝ մաքսիմալ տարրերակը, հայտարարելով. «Ազգային խորհուրդը այս թէզերը համարում է այն նուզագոյն իրաւունքները, որոնք պիտի ապահովեն Սահմանադիր ժողովի կողմից հայութեան Վրաստանի հասուածում՝ նրա ազգային կուլտուրական գործերը անարգել կերպով վարելու համար: <...> Ազգային խորհուրդը պիտի պահանջի, որ հայ դպրոցը և ազգային այլ գործերի ինքնավարութիւնը ապահոված լինի հիմնական օրենքներում, Սահմանադրութեան մէջ»<sup>14</sup>:

Մշակութային ինքնավարության ձեռքբերման հարցում ՀԱԽ-ը շհամազործակցեց Վրաստանի այլ ազգությունների շահերը ներկայացնող կառույցների հետ: Բանն այն էր, որ «միւս ազգային փորքամասնութեանց հետ միանալ մեզ ձեռնատու չէ, քանի որ մենք Վրաստանում կազմում ենք ամենամեծ փորքամասնութիւն և մեր իրաւունքներն ու պահանջները անհամենատակելի լայն պէտք է լինեն, քան միւսներինք»<sup>15</sup>: Խոսքը, անշուշտ, տարածքային ինքնավարության մասին չէ:

Սպասելիքները, սակայն, չարդարացան, քանի որ Վրաստանի նորակազմ կառավարությունը հրաժարվում էր համապետական հատուկ օրենքով սահմանել մշակութային ինքնավարու-

<sup>12</sup> Տե՛ս «Թէզեր», Վրաստանի Հայոց Ազգային Ինքնավարութեան, մշակւած Հայոց Ազգային Խորհրդի կողմից // ԱՇԽԱՏԱԲՈՐ, 25. III. 1920: «Թէզեր»-ը մշակել էին ՀԱԽ-ի օրենսդրական հանձնաժողովի անդամներ Կորյուն Ղազարյանի և Ալեքսանդր Պապովյանի ջանքերով (տե՛ս ՀԱՍ, ֆ. 441, գ. 1, թ. 61, թ. 21):

<sup>13</sup> Шаумян С. О национально-культурной автономии. М., 1959, с. 40.

<sup>14</sup> Տե՛ս Վրաստանի Հայ քաղաքացիներին // ԲԱՆՎՈՐԻ ԶԱՅՆ, 4. VII. 1920:

<sup>15</sup> ՀԱՍ, ֆ. 441, գ. 1, թ. 84, թ. 6-8:

թյան սկզբունքը: Հարցի լուծումը հետաձգվել էր մինչև Վրաստանի Սահմանադրության վավերացումը, որով էլ կսահմանագծվեին երկրի ազգությունների մշակութային իրավունքները: Լուսավորության «նախարարութիւնը յայտնեց, որ ազգային կուլտուրական աւտոնոմիայի մասին առաջմ խօսք լինել չի կարող, ոչ թէ այն պատճառով, որ նրանք ընդդէմ են այդ գաղափարին. ոչ երբէք, նրանք միշտ ջերմ կողմնակից են ազգային կուլտուրական աւտոնոմիայի, այլ որովհետև այդ չի կարող իրականանալ, միշտ որ չպարզեն սահմանադրական օրէնքները, որոնք շուտով կորոշեն փոքրամասնութիւնների իրաւունքները»<sup>16</sup>: Հետեաբար, ակնկալելով այս խոստման իրականացումը, հայերը պատրանք էին տածում, թէ «երբ օրէնսդրական եղանակով ընդունած և հաստատւած կը լինի ազգային աւտոնոմիան, այդ ժամանակից արդէն Վրաստանի հայութեան կեանքը իր նորմալ հունի մէջ կը մտնի»<sup>17</sup>:

Մեփական ազգայնական ծրագրերն առաջ տանելու և իրագործելու համար ՎՄԴԿ-ի առաջնորդներն աշխատում էին թմրեցնել ոչ վրաց ազգությունների գգոնությունը և երկրում ազգային հարցի կարգավորման խնդրում նրանց հարկադրաբար. պարտադրում էին սպասողական կեցվածք ընդունել: Պաշտոնական Թիֆլիսը այս թէժ հարցի լուծումն առաջարկում էր թողնել հետազայի համար: Դրա վիճակը նաև խոստանում էր օրինաց երկիր կառուցել նրանց համար, ովքեր կլինեն հնազանդ և «չափավոր» իրենց պահանջների մէջ: «Հայերի ներկայացուցիչները մի րոպէտ անզամ չպէտք է մոռանան, որ Վրաստանի անաջողութիւնը միաժամանակ նաև հայ դեմոկրատիայի անաջողութիւնը կը լինի, -հայազգի ընթերցողին հորդորում էր կառավարական պաշտոնաթերթը, - և, ընդհակառակ, մեր հանրապետութեան ամրապնդելն ու խոր արմատներ արձակելը հայ ժողովրդի փայ-

<sup>16</sup> Դպրոցների ազգայնացումը Վրաստանում // ԱՇԽԱՏԱԲՈՐ, 28. XI. 1918:

<sup>17</sup> Տե՛ս Աբեղեան Ա. Վ. Հ. Ազգային Խորհրդի ընտրութիւնները // ԱՇԽԱՏԱԲՈՐ, 23. V. 1919:

լուն ապագայի ու աջողութեան դրդապատճառը կը լինի»<sup>18</sup>: Դրանով իսկ վրացական կողմը համարում էր, որ երկրի այլ ազգությունների զիափոր պարտականությունն է հավասար մասնակցություն ունենալ Վրաստանի անկախ պետականության ամրապնդման գործում: Ումանք, սակայն, իրավացիորեն նկատել էին, որ «այդ գործակցութիւնը հնարաւոր և արդիւնաւոր կը լինի միայն այն ժամանակ, երբ ազգային փոքրամասնութիւնները կը դադարեն “օտարներ”, “պետութեան թշնամիներ” յորջորջւելուց և պետական-վարչական աշխատանքներին ժամանակից կը լինեն, երբ նրանք կը զգան, որ իրենք էլ այս երկրի ազատ քաղաքացիներն են և պարտականութիւններից դուրս՝ ունեն նաև իրաւունքներ»<sup>19</sup>:

Վրաստանի պատկան մարմինները մի կողմ դնելով ազգային հարցի լուծումը, համենայնդեպս, իրենց երկրում չկարողացան ապահովել համահավասար պայմաններ նրա բոլոր մշտական բնակչների համար: «Եթէ մի յետադարձ հայացք ձգենք, – գրում է դաշնակցական լրազրի մեկնաբանը, – Վրաստանի հանրապետութեան մէջ յարուցած խնդիրների, հաստատած օրենքների ու առհասարակ կառավարութեան քաղաքականութեան վրայ՝ հանդէպ մանր ազգերի և մասնաւրապէս հայ ժողովրդի, մենք պէտք է վկայենք, որ այդ ուղղութեամբ ոչ միայն դրական և նշանաւոր ոչինչ չէ արւած, այլ ընդհակառակը՝ վարւել է մի քաղաքականութիւն, որը միանգամայն տարամերժ ու ժխտող է եղել մանր ազգերի ու նրանց իրաւունքների վերաբերմամբ: <...> Եւ եթէ մենք ուզենանք բացէ ի բաց բնորոշել մանր ազգերի իրաւական դրութիւնը Վրաստանում <...> մենք պէտք է հաստատենք, որ նրանք միանգամայն իրաւագուրք վիճակի մէջ են: Ոչ քաղաքական, ոչ գոյրի ու պատի ապահովութեան, ոչ իրական քաղա-

<sup>18</sup> «Եավառություն հյենց ծառայությա» («Սարարթվելու Ռեսպուբլիկա», 1918, № 59) թերթից արտատպված հոդվածը տե՛ս Վրաց կեանք // ՀՈՐԻ ԶՈՒ, 9. X. 1918:

<sup>19</sup> Ազգային կուլտուրական աւտոնոմիան և Սահմանադիր ժողովը // ԱՇԽԱՏԱՆՈՐ, 2. IV. 1919:

բացիական ազատութիւն մանր ազգերի համար Վրաստանի սահմաններում գոյութիւն չի ունեցել»<sup>20</sup>:

Մշակելով ինքնավարության մասին իր ծրագիրը՝ ՀԱԽ-ը, վերը նշվեց, առաջնորդվում էր եվրոպական չափանիշներով, որոնք, ինչպես վկայում է փորձը, իրականում անիրազործելի չէին: Ուկրաինական ժողովրդական Հանրապետության հոչակումից անմիջապես հետո նրա Կենտրոնական Ռադան (խորհրդարան) 1918 թ. հունվարին հաստատեց համանման սկզբունքներով կազմված մշակութային ինքնավարության մասին օրենքը, որի հիման վրա լիների ու հրեաների շահերը ներկայացնող նախարարներն ընդդրկվել էին կառավարության կազմում<sup>21</sup>: Նորանկախ Էստոնիայում նույնպես ձևավորվել էին ապատարածքային մշակութային ինքնավարություններ գերմանացիների ու հրեաների համար: Ողջունելով մերձքայլյան այս երկրի նման փորձը Ազգերի Լիգան այն գնահատեց որպես օրինակելի<sup>22</sup>: Այսպիսով, Շոմանովների ինքնակալության լծից ազատված այս երկրներն առաջինը եղան, որ աշխատեցին պարզ և ուղղամիտ լուծել ազգային թեժ հարցը: ՎԿՀ-ում, սակայն, դա տեղի չունեցավ: Եվ սա եղավ այն պարագայում, երբ վրաց «մենշևիկ» առաջնորդները շարունակ դասեր էին տալիս ժողովրդավարության ու ազգերի համերաշխության մասին և այդ արվեստում, թերևս, ոչ մեկին չէին զիջում:

Վրաց սոցիալ-դեմոկրատները ազգային հարցի կարգավորման գործում իրականում այլ ձանապարհ էին ընտրել, քան դա քարոզում էին մինչև Վրաստանի անկախության ձեռքբերումը: Վրաստանի Սահմանադրության նախագծի այն հատվածը, որը նվիրված էր ազգային փոքրամասնությունների իրավունքների

<sup>20</sup> Անկախ Վրաստանն ու փոքրամասնութեան իրաւունքը // ԱՇԽԱՏԱԻՒՐ, 25. V. 1919:

<sup>21</sup> Симоненко Р.Г. Национально-культурная автономия на Украине 1917–1918 годах // ВОПРОСЫ ИСТОРИИ, 1997, № 1, с. 60–63.

<sup>22</sup> Осипов А., Никифоров И. Национально – культурная автономия: идея и реализация – эстонский опыт. Таллин, 2008, с. 18–20, 44–47.

կարգավորման նպատակին, բուռն դժգոհության առիթ տվեց: Ըստ ՀԱԽ-ի անդամների հաստատուն կարծիքի՝ «Փոխարքն դրույթների, որոնք իրենց պարզ իմաստով կերաշխավորեն մեր դեմոկրատական հանրապետության ազգային փորրամասնությունների ինքնակառավարման տարրական հիմքերը, այս նախագիծը պարունակում է հողվածներ, որոնցից յուրաքանչյուրը կարծես թե ունի նպատակ շրջանցելու ազգային ինքնակառության սկզբունքի պարզ հողակումը և նրա հաստատումը: Հողվածների որոշ մասը նույնիսկ արտահայտում է բացահայտ միտում՝ ամեն կերպ խոչընդոտել ոչ վրացի ազգության քաղաքացիներին դասելու այն ազգին, որին նրանք իրականում պատկանում են <...> պարզ է, որպես պատրվակ բռնած այս բոլոր խոսքերը չեն պատասխանում մեր կողմից առաջ քաշած հարցերին և անարդյունավետ փորձում են կոծկել նախազիծը կերտողների հիմնական միտքը ոչ մի [մշակութային] ինքնակարություն ազգային փորրամասնություններին: Ինչ վերաբերում է Վրաստանի հայ բնակչությանը, ապա [ՀԱԽ-ի] ներկայացուցիչները բազմից հավաստիացումներ էին ստանում վրացական կառավարող կուսակցության տարբեր պատասխանատու դեկավարներից այն մասին, որ ի նկատի ունենալով Վրաստանի կյանքում հայ բնակչության խոշոր տնտեսական և մշակութային նշանակությունն ու նրա թվաքանակը, որը զգալիորեն գերազանցում է ազգային այլ փորրամասնություններին, ապա հայ բնակչությունն անկասկած կտտանա ինքնակարություն այն ծավալով, որի չափի մասին Ազգային խոհուրդը բազմիցս բանավոր և գրավոր հայտնել էր Վրաստանի կառավարության ներկայացուցիչներին: Զայց ազգային խորհրդի 14 թեզերից բաղկացած գրությունը չունի որևէ նմանություն Սահմանադիր ժողովում մշակած նախազօծի 12 հողվածների հետ և, նույնիսկ, ցարական վարչակարգի համեմատությամբ, երբ հայերն օգտվում էին զգալի դպրոցական ինքնակարությունից, Վրաստանի հայերի իրավիճակի բարելավման փոխարեն այն թերվում է դեպի վատթարացում»<sup>23</sup>:

<sup>23</sup> К вопросу о правах национальных меньшинств // СЛОВО, 19. VI. 1920.

ՀԱԽ-ի այս դեմարշը չառաջացրեց ուշադրության որևէ նշույլ ՍԺ-ի պատգամավորների մոտ և հետազայում նրանք դարձալ անտեսում էին վիրահայ լիազորների նման ելույթները: ՀԱԽ-ը, սակայն, չդիմեց քաղաքական պայքարի միջոցին: Դրա բացառ-րությունը գտնում էնք, թերևս, Ա. Ս. Շիրվանզադեի (Մովսիսյան) մտորումներում: Նա համարում էր «անժամանակ և անտակտ» վրաց կառավարության առջև պահանջներ քաշելու մարտավա-րությունը, քանի որ «մենք ոչ միայն կովելու, այլև վիճելու ու սակարկելու անգամ ուժ ու կարողություն չունենք <...> հետևա-բար ամենաթույլ բարեկամությունն ու ամենափոքր պաշտպա-նությունն անգամ պիտի ընդունենք գրկարաց: Իսկ դրա համար պետք է լինենք չափավոր ու զիջողությունը...»<sup>24</sup>: Բնավ, կարելի է դատել, որ հայ գրականության դասականի վշտով լցված նման խոսքերը իրականում հայ ժողովրդի միանգամայն հյուծված, քայրայված, ուժասպառ լինելու դառը պտուղներն էին:

Վրաց պաշտոնական շրջանակները բազմից իրենց «զար-մանքն են» հայտնել մշակութային ինքնավարություն ունենալու ազգային փորրամասնությունների ցանկության վերաբերյալ: ՍԺ-ում ՎՍԴԲԿ իշխող ֆրակցիայի առաջնորդ Ռ. Արսենիձեն համարում էր, որ հայերն արդեն մշակութային օջախ ունեն Հայաստանի Հանրապետությունում և որ հարկ չկա համանման պայմաններ ստեղծել նաև Վրաստանի հայ համայնքի համար<sup>25</sup>: ՎՍԴԲԿ-ի երկրորդ համագումարը, որը կայացել էր 1920 թ. ամռանը, մերժեց Վրաստանում ազգային ինքնավարության ցան-կացած զաղափարի իրականացումը: Համաժողովի վրաց պատ-վիրակները այն եզրահանգման եկան, որ քաղաքացիների ազ-գային կարիքները պիտի յուրացվեն միմիայն տեղական ինքնա-կառավարման համակարգի «զեմստվոյի» շրջանակներում, քանի որ իրենց երկրում հոչակված դեմոկրատական կարգերը երաշ-

<sup>24</sup> Զարարյան Ա. Հ. Շիրվանզադեի հրապարակախոսական ժառան-գությունից (1914–1919 թթ.), Եր., 2006, էջ 209:

<sup>25</sup> СЛОВО, 23. VI. 1920.

իսկ են ստեղծում ամեն մի հալածանքի դեմ<sup>26</sup>: Այս առումով Ա. Զամայյանն իրավացիորեն նկատում էր, որ «Վրաստանի ազգային փոքրամասնութիւնների վիճակի մասին զաղափար կազմելու համար մենք օրէնքներին չեն որ պէտք է դիմենք, այլ այն գործնական քաղաքականութեանը, որին հետևում էր վրաց կառավարութիւնն այս հարցում: Եւ բաւական է թէկուզ հարեանցի ակնարկ նետել այդ քաղաքականութեան վրայ համոզուելու համար, որ ժորդանիան և իր կառավարութիւնը շատ քիչ բան ունին պարծենալու գոնէ հայկական փոքրամասնութեան իրաւունքների հարցում...»<sup>27</sup>:

Վրաց քարոզական մեքենան մշակութային ինքնակարության զաղափարներին «անջատողականության» պիտակ էր կացրել: «Սահմալիս Սարմե» լրագրում տպագրվեց մի ուշագրավ հոդված, որի հեղինակը գրում էր. «Հայերի մշակած նախազիծը, ազգային փոքրամասնութեանց իրաւունքների նախազիծ չէ, այլ նման է դաշնակցութեան, որ կնքում է երկու անկախ պետութիւնների միջև: Նա ստեղծում է տէրութիւն տէրութեան մէջ:

Կամ ի՞նչ է նշանակում “Հայոց ազգը” Վրաստանում, - վրդովկում և իսկույն պարզաբանում է հոդվածագիրը, - մեզ մօտ ապրում են հայեր, բայց Հայոց ազգ ուրիշ տեղ է, իր տէրութիւնն էլ ունի: Եվ նա, ով այսուեղ է ապրում, պիտի հնազանդուի ընդհանուր կանոններին, որոնց հնազանդում են մնացած քաղաքացիները:

«...> Ինչ վերաբերում է նրան, որ հայոց լեզում [ՀԱԽ-ի թէզերում] ամենայնիւ հաւասարում է պետական լեզուին, - գրում է վրաց մեկնաբանը, - այս արդեն աբսուրդ է: <...> Սահմանադիր ժողովը այս [հարցը] լաւ է որոշում. այն վայրերում, որտեղ 20 տոկոսից աւելի որևէ ազգային փոքրամասնութիւն է ապրում, կարելի է գործածել այդ փոքրամասնութեան լեզուն:

«...> Հայ քաղաքագետները ամեն մի լուսաւորչական հայ են համարում: Այդ պատճառով Վրաստանում ապրող հայերի

<sup>26</sup> ԲԱՆՎՈՐԻ ԶԱՅՆ, 11. VII. 1920:

<sup>27</sup> ՀԱՅՐԵՆԻՔ, 1929, մարտ, էջ 116:

թիւր աւելի շատ է դուրս գալիս, քան իրօք կայ: Այս ցնորքով միայն կարելի է բացատրել այն պահանջը, որ պարունակում է իր մեջ հայկական [մշակութային ինքնակառավարման] նախազծի վերջին յօդուածը՝ այն է ունենալ մինհստրական խորհրդում հայկական ինքնավարութեան ներկայացուցիչը մինհստրի իրաւունքներով:

«...» Մեր երկրի ամեն մի անկիւնում մի որևէ ազգային փորրամասնութիւն է ապրում, և եթէ ամենքի համար մի-մի մինհստր պահենք – այն ժամանակ մեր երկիրը Բաբելոնեան աշտարակին կը նմանուի: Այս կը լինի ազգութիւնների խորհուրդ, որ Վրաստանի պաղամենուում ոչ մի արդարացում չի ունեցել և ոչ էլ կունենայ:

«...» Ուշագրաւ է [Վրաստանի Սահմանադրության] մի յօդուածն էլ, որ մենք իրաւացի ենք համարում, – ակնարկում է իրապարակման հեղինակը: – Այս յօդուածի մեջ ասւած է՝ ազգային փորրամասնութիւնների ուսումնարաններում ուսումն լինում է մանուկների մայրենի լեզուով, այսինքն այն լեզուով, որ խօսում են իրանք մանուկները: Այս են պահանջում «...» մանկավարժական շահերը «...»

«...» Աւելին պահանջիր, գուցե աւելին ստանաս – ահա՛, թէ ինչ է բնորոշում հայկական նախազիծը: Կարծում ենք այսպիսի բան [մեզ] բոլորովին պէտք չէ: Վրաստանի դեմոկրատիան ամեն քաղաքացուն հաւասարապէս հաշուի է առնում, բայց եթէ նա մինենյն ժամանակ հաւատարիմ պահապան է կանգնած նոյնպէս մեր երկրի պետական շահերին<sup>28</sup>:

Հիշյալ ելույթը տեղ էր տալիս մտածելու, որ վիրահայերի մշակութային ինքնավարության մասին ՀԱՆ-ի արդարացի պահանջը չի բավարարվի: Այդ կառույցի նիստերից մեկում կարծիք հնչեց, որ «կառավարութիւնը վարում է շատ պարզ և մտածված քաղաքականութիւն – իրաւագուրք դարձնել հայ տարրը և <...>

<sup>28</sup> «Եաեացնեո Եայթյ» («Սախալին սաքմե», 1920, № 858) թերթից արտատպված հոդվածը տե՛ս Վրաց թերթերից. Հայերի նախազիծը // ՍՇԱԿ, 25. VI. 1920:

այդ պատճառով էլ կուլտուրական աւտոնոմիայի ծրագիրը ոչ մի դեպքում չի հաստատուի<sup>29</sup>: ՀԱԽ-ի անդամների մտորումները, հիրավի, իրականությունից շատ հեռու չէին:

1921 թ. փետրվարի 21-ին Վրաստանի ՍԺ-ն վավերացրեց երկրի պատմության մեջ անդրանիկ Սահմանադրությունը: Ազգային փոքրամասնությունների իրավունքներին նվիրված նրա XIV բաժինը (հոդված թիվ 129 – 137) վերջնականացես ջրի երես հանեց և դիմակագերծեց ՎԱԴԲԿ-ի առաջնորդների իրական նպատակները: Առաջինը՝ Սահմանադրության տերսում լիովին բացակայում է «մշակութային ինքնավարություն» սահմանող եզրույթը: Երկրորդը՝ Վրաստանի զյասվոր օրենքի հեղինակները չափազանց անորոշ և լողոված էին շարադրել հիշյալ հասկացության համար կարևոր ու բնորոշ մի շարք հատկանիշներ: Ավելին, 130-րդ հոդվածը սահմանում էր քաղաքացու ազգությունն ըստ նրա խոսակցական լեզվի<sup>30</sup>: Հետևաբար, երկրի հազարավոր վրացալեզու, ոուսալեզու ու թյուրքալեզու հայերը պետք է օստարվեին հարազատ ազգությունից, քանի որ նրանց վզին ցանկանում էին հարկադրաբար փաթաթել միանգամայն ուրիշ էթնիկ ինքնությունն<sup>31</sup>: Աներկբար է, որ այդ խորամանկ իրավական հնարքը լուրջ նախապայման էր ստեղծում վիրահայերին նախ ջլատելու և, այդուհանդերձ, ձուլելու համար:

<sup>29</sup> ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 84, թ. 6–8:

<sup>30</sup> Տայքարտացքությունը քյուրօնացիությունում 1921 վլուս յոնեցնությունում (90 վլուս ցագասաեցություն), II ցամունքա, ծառայմո, 2013, գ. 57.

<sup>31</sup> Վրաց լրագրում այդ խնդրին նվիրված ևս մի ուշագրավ ակնարկ է հնչում: «Ճայ գործիչները բոլոր նրանց, որոնք լուսաւորչական դաւանութեան են պատկանում, – նշում է հոդվածագիրը, – հայ են համարում: Քսաններորդ դարում ազգութեան որոշումն կրօնական տեսակետով – անախրոնիզմ է: Եթէ այս տրամարանութեամբ գնալու լինենք, անպատճառ թուրք պիտի համարենք մեր երկրի մի մեծ մասը – մահմեդական Վրաստանը» [«Եսաեացեա Եայթյ» («Սախալիս սարմե», 1920, № 858) թերթից արտատպված հոդվածը տե՛ս Վրաց թերթերից. Հայերի նախազիծը // ՄՇԱԿ, 25. VI. 1920]:

Հանրագումարի բերելով վերը շարադրած նյութը՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ.

- ✓ Վրաց «մենշևիկ» սոցիալ-դեմոկրատները, հենվելով ի միջի այլոց բոլոր ազգակից շովինիստական տարրերի վրա, աշխատում էին թուլացնել վիրահայությունը, դիմագուրք անել նրան որպես քաղաքական և տնտեսական գործոնի,
- ✓ Մտածելով ընդմիշտ զրկել ոչ վրաց ազգություններին մշակութային իրական ինքնավարությունից, խորհրդարանի վրաց պատգամավորների ճնշող մեծամասնությունը հանրապետական այնպիսի սահմանադրություն էր մշակել, որ ազգային փորքամասնությունների իրավունքների մասով այն չէր կարող արդարացնել ու լիովին բավարարել վիրահայ, ջավախքահայ և աբխազահայ համայնքների սպասելիքներից և ոչ մեկը:

ՀԱՅԵՐԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ՀԻՄԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Ռուսական կայսրության անկումից հետո տեղի ունեցած նշանակալից բոլոր իրադարձություններն ազդեցին նաև Այրկովկասում դպրոցական կյանքի վրա ու իրենց յուրովի հետքը թողեցին ուսումնական գործընթացների հետագա կազմակերպման գործում: *ՕԶԱԿՈՍ-ի* կրթության կոմիսարիատին կից ձևավորվեց հատուկ խորհուրդ, որի կազմի մեջ մտան այսրկովկասյան առավելապես մեծաթիվ երեք ազգությունների և ուսուական բաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները: Այդ խորհրդի ուղաղրության կենտրոնում էր գտնվում հատկապես դպրոցների ազգայնացման խնդիրը, որն այն օրերին չափազանց մեծ կարևորություն ստացավ երկրամասի կյանքում, առավելապես ազգային վերածննդի սպասելիքներով լցված հայ ու վրաց հասարակայնության շրջանակներում: Թեև 1917 թ. վերջերին Այրկովկասում արդեն սկսվել էր տարրական դպրոցների ազգայնացումը, սակայն բաղաքական հետագա բարդ իրադրության հետևանքով միջնակարգ (զիմնազիա)<sup>1</sup> կրթարանների պարագայում գործընթացը կանգ էր առել. հայ, վրացի և այսրկովկասյան թուրքերի լիազոր ներկայացուցիչները, այդուհանդերձ, որոշեցին 1918–1919 ուսուարում պետական բոլոր դպրոցների ազգայնացումն անշեղորեն հասցնել իր ավարտին<sup>2</sup>:

Այս ուղին հեշտ ու դյուրին լուծումներ չեր խոստանում, բանի որ կապված էր հասարակության մի մասի հոգեբանության արմատական փոփոխման հետ, և կտրուկ քայլերի դեպքում

<sup>1</sup> Գիմնազիաներում ուսուցումն ութամյա էր: Իրենց սաներին նաև ուսուցչուհու վկայական էին շնորհում իգական զիմնազիաները:

<sup>2</sup> Տե՛ս *Տեր-Միքայելան Յ. Վրաստանի հայոց դպրոցները* // ԱՇԽԱՏԱԲՈՐ, 3. VII. 1919: Վարդանյան Գ.Վ. *Մշակույթը Հայաստանի առաջին Հանրապետությունում*, Երևան, 2003, էջ 21:

դժգոհությունների մեծ ալիք կառաջացներ: Մանկավարժական հասարակայնության մի մասն այն տեսակետն էր հայտնում, թե պետք չէ շտապել և անհրաժեշտ է աստիճանաբար անցնել ազգային դպրոցների կազմակերպմանը: Կովկասի ուսուցչական միության Թիֆլիսի ճյուղն էլ գտնում էր, որ ազգայնացման մասին հարցը վճռվել է առանց մանկավարժների լայն շրջանակների մասնակցության: Բացի այդ, ուսուցչական զանգվածում այն թյուր կարծիքն էր տարածվել, թե բոնած ուղին կարող է հիվանդագին կերպով սրել դպրոցականների ազգային զգացումները<sup>3</sup>: Միջնակարգ դպրոցների ազգայնացումը, սակայն, ընթանում էր բավականաշափ դանդաղ, քանզի, նախ և առաջ, չկային անհրաժեշտ թվով մայրենի լեզուն իմացող բանիմաց ու որակյալ մանկավարժներ, նաև բնագիտական և այլ կարևոր առարկաների դասազրբերի մեծ մասը ուսուերեն էր:

Վրաստանի նորակազմ Հանրապետության կառավարության որոշմամբ 1918-1919 ուստարվա սկզբին իրականացվելու էր զյուսպորապես միջնակարգ պետական դպրոցների ազգայնացումը, որոնք, ըստ ուսուցման լեզվի, բաժանվեցին վրացական, հայկական և ուստական դպրոցների: 1918թ. օգոստոսին Վրաստանի փոխվարչապետ Նոյ Ռամիշվիլին ՀԱԽ-ի գործկոմի անդամներ Ա. Երզեկյանին և Հ. Արդությանին առաջարկել էր որոշել, թե որքան դպրոց է անհրաժեշտ Թիֆլիսի հայ բնակչության կրթական կարիքներն ապահովելու համար: Այս շոայլ տրված առաջարկը սրափ մտածող մարդկանց մոտ իսկույն կասկածի տեղիք տվեց, և նրանք զգուշացրին, որ «մեծ չէ այս խօսքերի արժեքը»<sup>4</sup>: Այնուամենայնիվ, ՀԱԽ-ի դպրոցական բաժինը հապաղեց և համապատասխան հայով լուսավորության նախարարությանը դիմեց միայն 1918թ. հոկտեմբերի 4-ին, երբ կրթարանների բաժանման գործընթացն արդեն իր ավարտին էր հասել<sup>5</sup>: Թիֆ-

<sup>3</sup> Դպրոցների ազգայնացման խնդրի շուրջը // ՀՈՐԻԶՈՆ, 4. VIII. 1918:

<sup>4</sup> Տե՛ս Խմբագրական առաջարան // ՀՈՐԻԶՈՆ, 8. VIII. 1918:

<sup>5</sup> Թիֆլիսի և զավառների դպրոցներում 1918-1919 ուստարվա դասընթացները պաշտոնապես պետք է սկսվեին սեպտեմբերի 21-ից.

լիսում գործում էր 6 արական<sup>6</sup>, նոյնքան էլ՝ իզական զիմնազիա<sup>7</sup>: Առաջինում ուսանում էր 1600 ուսու, 1500 հայ և 900 վրաց դպրոցական<sup>8</sup>: Լուսավորության նախարարության որոշմամբ թիվ I, թիվ II, թիվ V զիմնազիաները դարձան վրացական, իսկ թիվ IV և թիվ VI մնացին նախկին ուսական դպրոցների կարգավիճակում: Նոյն կերպ բաշխվեցին նաև մայրաքաղաքի իզական զիմնազիաները: Վերաբաշխման արդյունքում երկու միջնակարգ հաստատություններում՝ II արական և III իզական զիմնազիաներում<sup>9</sup>, ինչպես նաև թիվ IV ու թիվ V զիմնազիաների համապատասխան բաժիններում 2868 հայազգի աշակերտ-աշակերտուհի էր ընդգրկված<sup>10</sup>: Հայերին հաստկացված դպրոցների բանակը, սակայն, կրկնակի պակաս էր ՀԱԽ-ի խնդրած թվից<sup>11</sup>: Ի

---

«քայլ իրապէս կանոնաւոր պարապմունքները հոկտեմբերի 1-ից առաջ չեն եղել» (տե՛ս Դպրոցական կեանքը 1918-ին // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 5. I. 1919):

<sup>6</sup>Տե՛ս Թիֆլիսի արական զիմնազիաները // ՄԾԱԿ, 28. VIII. 1918:

<sup>7</sup>Խզմալեան Թ. Դպրոցների ազգայնացումը // ՀՈՐԴՔՈՆ, 6. X. 1918:

<sup>8</sup>Տե՛ս Տեր-Մինասեան Ե. Դպրոցական գործի ներկայ դրությունը // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 14. IX. 1918:

<sup>9</sup>Տե՛ս Ներքին տեսություն՝ Թիֆլիսի 3-րդ իզական զիմնազիայի կեանքից // ՄԾԱԿ, 29. IX. 1918:

<sup>10</sup>ՀԱԱ, ֆ. 441, գ. 1, զ. 30, թ. 22:

<sup>11</sup>«Мы обращаем Ваше внимание на то, что распределение мужских и женских гимназий, произведенное Министерством, не соответствует процентному отношению детей армян в них. Для 1600 детей армян и стольких же армянок в средних учебных заведениях должны быть отведены минимум по две полные гимназии; поэтому для удовлетворения потребностей обучения мы считаем необходимым объявления чисто армянской гимназией и V мужской, в которой армяне составляют более 48 %. Вместе с этим необходимо открытие параллелей при IV мужской гимназии для детей армян в составе всех классов, которые постановлено национализовать для армян. Только выделение названного количества гимназий для армян может кое-как справиться с той большой потребностью в образовании, которую мы находим в Тифлисе. Что касается женских гимназий, мы принуждены остановиться на гимназиях находящихся в армянских районах: III женск[ой] и VI женск[ой], который должны быть объявлены чисто армянскими, а также параллели при V женской гимназии. Мы обращаем Ваше

պատասխան ՀԱԽ-ի դիմումի՝ լուսավորության նախարարությունն իրազեկեց, որ դպրոցների բաժանման մասին նախակին որոշումը բեկման ենթակա չէ, և «հայացված» դպրոցների թվաքանակն առաջմ մնալու է նույնը<sup>12</sup>:

Կառավարությունը կարգադրել էր վրացացված զիմնազիաներն ազգայնացնել միանգամից մինչև Ե դասարանը: ՀԱԽ-ի վճռի համաձայն, որի մասին տեղեկացվել էր լուսավորության նախարարությանը, որոշվում է, նախ և առաջ, ազգայնացնել պետական հայկական միջնակարգ դպրոցների Ա դասարանները՝ մյուսներում դասավանդումն առաջմ թողնելով ոռուսերեն<sup>13</sup>: ՀԱԽ-ը մտահոգված էր նրանով, որ Թիֆլիսում զգալի թվով հայեր թերահավատորեն էին տրամադրված հայկական դպրոցների նկատմամբ: Դա բխում էր նրանց հայերեն լեզվին վատ կամ էլ առհասարակ չտիրապետելու հանգամանքից: Այսպես, III իջական միջնակարգ դպրոցի Ա դասարանի աշակերտների ծնողական ժողովում պարզվեց, որ 68 դպրոցականից հայերեն վարժ են խոսում միայն երկուսը: Քանի որ տարրական դպրոցի դասընթացը երեխանները ոռուսերենով էին ավարտել, ապա ծնողները դեմ էին զիմնազիայի առաջին դասարանի ազգայնացմանը, ինչ-

---

внимание на необходимость национализовать I коммерческое училище и торговую школу (վերջինս 1910 թ. հիմնադրել էքարերար Ա. Սանթաշյանը – Բ. Ռ.) для детей армян, которых в этих учебных заведениях насчитывается свыше 75 %», – луисавորության նախարար Գ. Լասիխշվիլուն ուշացած իրազեկում էին ՀԱԽ-ի անդամները (տե՛ս ՀԱՍ, ֆ. 441, գ. 1, գ. 30 թ. 2-2 դր.): Պարզվեց, որ Սանթաշյանի առևտրական դպրոցը «ուղարձության որոշման համաձայն ազգայնացման չի ենթարկվում, դասաւանդութիւնը լինելու է ոռուսերեն, վրացերէն լեզուն պարտադիր կը լինի բոլորի համար. ուժեղացված է հայերէնի դասաւանդութիւնը» (տե՛ս և Լրատու // ՀՈՐԻԶՈՆ, 18. IX. 1918): Այսպիսով, ինչպես երևում է, դպրոցական ոլորտում ՀԱԽ-ի հետագա աշխատանքի համար ավելի արդյունավետ կլիներ մինչև նախարարության դիմելը՝ ուսուցչական հասարականության հետ տեղում պարզել բոլոր խնդիրները:

<sup>12</sup> Տե՛ս ՀԱՍ, ֆ. 441, գ. 1, գ. 30, թ. 6:

<sup>13</sup> Դպրոցական կեանքը 1918-ին // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 5. I. 1919:

պես դա առաջարկում էր ՀԱԽ-ը, և նման քայլը համարում էին հակամանկավարժական<sup>14</sup>: Լուսավորության նախարարությունից ՀԱԽ-ին ուղղված հարցմանը, թէ ի՞նչ անել այս պարագայում, դպրոցական բաժինը պատասխանեց, որ «Եթէ մինհստրը նպատակահարմար գտնի թէ՝ հայերի, թէ՝ վրացիների համար որոշ ընդհանուր յանձնարարություն անել, մենք դէմ ոչինչ չենք ունենայ, պայմանով, եթէ երեխաները յիրավի մայրենի լեզվին չեն տիրապետում»<sup>15</sup>: Սակայն, նկատի ունենալով հենց այս զանգվածի «տատանողական» տրամադրությունները, ՀԱԽ-ը լուսավորության նախարարությանը առաջարկում էր փակել ուսական բաժանմունքները պետական հայկական զիմնազիաներում, իսկ Թիֆլիսի խառն ուսուցմամբ (IV և V) զիմնազիաներում հայ մանուկներին տեղավորել միայն հայկական դասարաններում<sup>16</sup>: Եվ քանի որ հայերենին չտիրապետող երեխաների ծնողները՝ ուսական զիմնազիա ընդունվելու համար գրություն տալու խնդրանքով դիմում էին ՀԱԽ-ին, ապա կարելի է ենթադրել, որ լուսավորության նախարարությունը հարգել էր ՀԱԽ-ի պահանջը<sup>17</sup>:

Ըստ 1918 թ. հուլիսի 26-ի կառավարության № 886 որոշման՝ ազգայնացրած պետական դպրոցներում նախ պետք է ուսանեին Վրաստանի բաղարացիություն ընդունած ծնողների զավակները, ապա՝ ազատ տեղերի դեպքում, նաև օտարահապատակների երեխաները<sup>18</sup>:

Լուսավորության նախարարությունն իր կազմի մեջ ստեղծեց հայկական պետական դպրոցների վարչություն, որտեղ աշխատում էին հիմնականում վրաց կամ այլ ազգերի ներկայացուցիչներ: Այս հարցի կապակցությամբ ՀԱԽ-ի 1918 թ. սեպտեմբերի 18-ի նիստում նշվեց նշանակեցին «հայ կեանքին բոլորովին

<sup>14</sup> Տե՛ս ՀԱՍ, ֆ. 441, գ. 1, գ. 30, թ. 4:

<sup>15</sup> Նոյն տեղում, թ. 10:

<sup>16</sup> Տե՛ս ՀԱՍ, ֆ. 441, գ. 1, գ. 30, թ. 3, 19 շր2:

<sup>17</sup> Տե՛ս ՀԱՍ, ֆ. 441, գ. 1, գ. 30, թ. 29, 30:

<sup>18</sup> Դպրոցական խնդիրը Վրաստանում // ՀՈՐԻԶՈՆ, 7. VIII. 1918:

անծանոթ մարդկանց»<sup>19</sup>: Նոյնը կատարվեց տեսուչներ (տնօրեն) նշանակելիս, որը չէր համապատասխանում նախարարության մինչ այդ տված խոստումներին և, ընդհանրապես, ազգայնացման որդեգրած պահանջներին: Մամուլում կորուկ և ծայրահեղ կարծիքներ հրապարակվեցին, թէ «ազգայնացումը միջնակարգ դպրոցներում տարրում է ամենախայտառակ, այլանդակ ձևերով, հայացրած զիմնազիաներում տէր ու տնօրէն են դարձել հին, օտարազգի կամ միայն անոնով հայ բիւրոկրատներ...»<sup>20</sup>: Անվանի հայագետ Ե. Տէր-Մինասյանը հեզնանքով գրում էր, որ սա «մի անհասկանալի բան էր տրամարանական տեսակետից, բայց որը հասկանալի կարող է լինել իբրև մի քաղաքական քայլ»<sup>21</sup>: ՀԱԽ-ը ցանկանում էր, որ այդ դպրոցների վարիչները նշանակվեն իր հայեցողությամբ, և ոչ միայն լինեն հայազգի մարդիկ, այլ նաև վարժ ու գրագետ տիրապետեն հայերենին<sup>22</sup>: Այս առթիվ

<sup>19</sup> Տէ՛ և ՀԱՍ, ֆ. 441, գ. 1, գ. 30, թ. 18-18 շրջ.:

<sup>20</sup> Բնընացրումը անհրաժեշտ է // ԱՇԽԱՏԱԻՈՐ, 26. X. 1918:

<sup>21</sup> Տէ՛ և ՀԱՍ, ֆ. 441, գ. 1, գ. 30, թ. 19:

<sup>22</sup> Ի տարբերություն III օրիորդաց զիմնազիայի, որտեղ ազգությամբ վրաց տնօրեն էր նշանակված (Զուրացվիլի), III արականի վարիչը թեկուզն հայ էր (Սաֆարյան), սակայն չզիտեր մայրենի լեզուն (տե՛ և Բերինեան Բ. III տղայոց զիմնազիայի օրիներզը // ՄՇԱԿ, 10. X. 1918): Դիմելով Վրաստանի վարչապետին՝ ՀԱԽ-ի անդամները գրում էին. «Мы считаем необходимым для успешного проведения национально-культурной автономии назначение администрации в названных учебных заведениях из педагогов-армян, которые только могут провести в жизнь национализацию, дать надлежащую серьезную постановку учебного дела в национализуемых учебных заведениях и вызвать симпатию к ней и в той части населения, которая еще не сумела уяснить себе необходимость и плодотворность этой меры» (տե՛ և ՀԱՍ, ֆ. 441, գ. 1, գ. 30, թ. 16-17): Այս խնդրանքը մնաց անարձագանք, քանի որ երկու տարի անց ևս «Թիֆլիսի III-րդ իգական հայկական զիմնազիայում, որ տարեց տարի «ազգայնանում է», դեկավար շարունակում է մնալ մի վրացի, միւս դպրոցների դեկավարներն են երեւ հայեր են, միանգամայն անպատճաստ իրենց կոչումին ու դիրքին» (տե՛ և Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի դպրոցական քաղաքականութիւնը // ՆՈՐ ԽՕՍՔ, 13. IX. 1920):

հնչած բողոքին ի պատասխան, լուսավորության նախարարության պաշտոնյաները հայտնել էին, թե ազգայնացրած զիմնազիաների վարչակազմը վերահաստատվել է մեկամյա ժամկետով, որից հետո թափուր տեղերի առաջացման դեպքում նկատի կառնվի նաև ՀԱԽ-ի անդամների այդ պահանջը<sup>23</sup>:

Ըստ ժամանակի մամուլում հնչած տեսակետի՝ համեմատաբար լավ վիճակում էին գտնվում տարրական այն դպրոցները, որոնց վերահսկողությունը հանձնված էր քաղաքային վարչություններին: 1919–1920 ուստարում Վրաստանի մայրաքաղաքում գործում էին 24 վրացական, 23 ուսական, 18 հայկական<sup>24</sup>, 2 թաթարական, ինչպես նաև օսմանական, գերմանական, լեհական, հունական, ասորական տարրական տեսակի մեկական կրթական օջախ<sup>25</sup>: Թիֆլիսի վարչությանը պատկանող հայկական տարրական դպրոցներն ունեին իրենց առանձին տեսուչը<sup>26</sup>:

Քաղաքներում գտնվող դպրոցների իրավական պատկանելության հարցը մի շարք դեպքերում որոշվում էր ստիպողական կարգով: Այսպես, Սղնախի հայկական (նախկին՝ Մարիամյան օրիորդաց) դպրոցը լուսավորության նախարարության 1918 թ. հուլիսի 19-ի կարգադրությամբ դուրս էր բերվել հայկական տեղի կոմիտեի իրավասությունից և հանձնվել քաղաքային վարչության տնօրինման<sup>27</sup>:

<sup>23</sup>Տե՛ս ՀԱԱ, ֆ. 441, գ. 1, գ. 30, թ. 16:

<sup>24</sup>Այդ թվում նաև ստորին տեսակի տարրական 11 դպրոց՝ Հավաբարի I, IV, V և օրիորդացը, Նավթըլուի, Կուկիայի I և VI, Սոլոլակի, Պուշկինի անվ. II, Շատուրյանի անվ., Բգմալովյան (տե՛ս ԲՕԲԵԱ, 18. IX. 1919):

<sup>25</sup>Համեմատության համար նշենք, որ 1916 թ. Թիֆլիսում գործում էին 12 ուսական, 10 հայկական, 10 վրացական և թաթարական ուսական քաղաքային մեկական ուսումնարաններ (տե՛ս Տիֆլուս // ԲՕԲԵԱ, 23. I. 1920. Նաև՝ Խրոնիկա: Գործական աշխատավայրեր // ՍԼՈՎՕ, 11. III. 1920):

<sup>26</sup>1918–1919 ուստարվա սկզբում այդ պաշտոնը վարում էր ուն Սարգիս Աբովյան:

<sup>27</sup>ՀԱԱ, ֆ. 441, գ. 1, գ. 26, թ. 4:

Պետական միջնակարգ հայկական դպրոցներից բացի, Թիֆլիսում գործում էին նույն աստիճան ունեցող Ներսիսյան, Հովհաննյան (Անանյան), Գայանյան հանրային կրթարանները: Գավառներում, սակայն, 1918 թ. հայկական միջնակարգ ուսումնական հաստատություններ չկային: Բացառություն էր կազմում, թերևս, Թելավին, որտեղ հայ անհատների ջանքերով բացվել էր մասնավոր գիմնազիա<sup>28</sup>: Հետազայում հաջողվեց նույն տեսակի հայկական դպրոց ունենալ նաև Գորիսում:

1918-1919 ուստարվա բացվելուց հետո, Թիֆլիսից և այլ բաղաքներից զատ, ՎԴՀ-ի արևելյան հայաշատ զավառներում վերագործարկվել էր միայն երեք պետական տարրական հայկական դպրոց (2-ը՝ Շուլավերում, 1-ը՝ Շալկայի Ղուշի գյուղում, որը միակ կրթական օջախն էր շրջանի 13 գուտ հայաքնակ գյուղերի համար)<sup>29</sup>: Համեմատության համար կարելի է նշել, որ

<sup>28</sup> Եթք տեղի պետական գիմնազիան ենթարկվեց ազգայնացմանը, այսինքն վրացացվեց, Թելավի հայերը իմարտեցին իշխանություններին թույլ տալ իրենց բանալ սեփական գիմնազիա: Նրանք հայցեցին այդ նպատակի համար և շենք, և՝ որոշ գումար, որպես նպաստ: Լուսավորության նախարարության միջոցով իրագելվեց, որ նա կարող է նպաստել հայերին, եթե վերջիններս ընդունեն Վրաստանի հպատակությունը: Թելավի հայերը ժողով գումարելով, միաձայն որոշեցին ընդունել այդ պահանջը: Շուտով Թիֆլիսից ժամանում է մի հանձնաժողով, որին, ի միջի այլոց, հանձնարարված էր շենք գտնել հայկական գիմնազիայի համար: Տեղի իշխանությունները առաջարկեցին մի շարք շինություններ, որոնք այնպիսի վիճակի մեջ էին, որ այնտեղ դպրոց բանալ բոլորովին անհնարին էր (տե՛ս Թելավում // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 19. X. 1918): Ի վերջո, «Թելավ քաղաքի ուսումնարական յանձնաժողովը <...> դիմել է Թիֆլիսի հարուստ վաճառական, տեղիս քաղաքացի Ալեքսանդր Ռուստոմեանցին, [որը] իր լայնածաւալ սեփական տունը, III Նազօրինի փողոցի վրա գտնվածը, յատկացրել է գիմնազիային, որտեղ արդեն սովորում են մօտ 180-ի չափի երեխաներ» (տե՛ս Թերինեան Բ. Առաջին հայկական գիմնազիան Թելավում // ՄԵԱԿ, 2.X.1918):

<sup>29</sup> Նահանգի հայկական դպրոցների տեսուչը (ուն Տեր-Գրիգորյան) վկայակոչում էր, որ «անցեալ տարրուա [իմա՝ 1917 թ. – Բ.Ս.] սեպտեմբերին ուզեցի պետական հաշուվ 5 դպրոց բանալ Ծալկայի հայ

նախորդ ուստարում դրանց թիվը 35 էր և «բոլոր այդ դպրոցները ազգայնացված էին»<sup>30</sup>:

Վելիսցիսէ գյուղում (*Սղնախի գավառ*) «դպրոցը ենթարկւել է ազգայնացման, և չնայելով, որ աշակերտների համարեայ երեք չորրորդը հայեր են, մեկ քառորդ վրացի, պարապմունքները կատարում են վրացերէն»<sup>31</sup>:

Արխազական ժողովրդական խորհուրդը, նկատի ունենալով երկրամասի ազգային բազմազանությունը, 1918 թ. հուլիսի 25-ին վճռել էր իր տարածքում դպրոցների ազգայնացումը շղարձնել պարտադիր՝ հարցի լուծումը թողնելով բնակչության տեղական ժողովներին<sup>32</sup>: Այս քայլը, թերևս, վրաց կառավարության որոշման պատճախանն էր, որը արխազական տարրական կրթարանների համար կայդրեր պատրաստող Սուխումի ուսուցչական դպրանոցը (հայտնի էր «Горская школа» անվամբ) վերածել էր վրաց-արխազական խառը տեսակի դպրոցի<sup>33</sup>: Սուխումի շրջանային Հայոց ազգային խորհուրդը, տեսնելով, որ վրաց-արխազական մրցակցությունը գնալով էլ ավելի է թեժանում և Արխազիայի պետական ուսումնարանների թվից հայերին դժվար

---

գիտերում, բայց մինհատրութիւնը միջոցներ չտւեց. ստիպուած եղայ տեղական միջոցներով բանալ Դարաքեօվ, Նարդիվան, Խաչքեօվ, Ղզըլիլսա և Դաշբաշ գիտերում: Սակայն նորաբաց դպրոցները հազի կարողացան իրանց գոյութիւնը պահպանել մինչեւ նոյն [ուս]տարուայ յունուար ամիսը, ներկայ [1918–1919 ուս]տարուայ սկզբին նորից միջոցներ խնդրեցի ու մերժում ստացայ, ուստի այդ դպրոցները փակուեցին» (տե՛ս ՀԱԱ, ֆ. 441, գ. 1, գ. 43, թ. 1 շրջ.):

<sup>30</sup>Տե՛ս նույն տեղում, թ. 2:

<sup>31</sup>Դպրոցական բոլորը հաւասար իրաւունքներ ունեն // ՆՈՐ ԱՇԽԱՏԱԲԵՐԸ, 2. VIII. 1919:

<sup>32</sup>Արխազիան և ազգայնացումը // ՀՈՐԻԶՈՆ, 31. VII. 1918: Նաև՝ Հրոնիկա: Աբխազի և ուկանականացաւածաւ // КАВКАЗСКОЕ СЛОВО, 1. VIII. 1918.

<sup>33</sup>Заседание правительства Грузии // КАВКАЗСКОЕ СЛОВО, 24. VII. 1918.

թե որոշ բաժին հատկացվի, վերաբացել էր նախկին ծխական դպրոցները<sup>34</sup>:

Դրությունը համեմատաբար բարվոք էր նաև Սովոր շրջանում: Տեղի ՀԱԽ-ը իրավիրել էր ուսուցական խումբ և ընտրել էր շրջանային դպրոցական իր տեսուչին: Պահանջված ծախսերը ՀԱԽ-ը իրականացնում էր դրամական հասուկ գոնդից, որը ստեղծվել էր զյուղական համայնքներից եկամտի 5 տոկոսի գանձման միջոցով: Այսպիսով, ՀԱԽ-ի գործադրած ջանքերի շնորհիվ հիմնվեց 14 տարրական հայկական դպրոց, և Սովոր շրջանի հայարնակ բոլոր զյուղերը, բացառությամբ, թերևս, 2 բնակավայրի, ունեցան իրենց կրթարանները<sup>35</sup>:

1918 թ. օգոստոսի 30-ին Թիֆլիսում 194 մանկավարժի մասնակցությամբ և հասարակական գործիչ Թ. Խզմայյանի նախագահությամբ ստեղծվել էր Հայկական ուսուցական խորհուրդ: 1919 թ. դեկտեմբերի 21-ին այն վերանվանվեց և կոչվեց Վրաստանի հայկական դպրոցների ուսուցիչների արհեստակցական միություն<sup>36</sup>: Հետագայում այդ կազմակերպությունը մտել էր

<sup>34</sup> ՀԱԱ, ֆ. 441, գ. 1, գ. 26, թ. 15:

<sup>35</sup> Պոնտացի Ա. Դպրոցական գործը Սովիում 1918-1919 ուս. տարում // ԱՇԽԱՏԱԻՈՐ, 13. VIII. 1919: Ա. Բ. Հակոբյանն իր հուշերում լրացուցիչ տեղեկություններ է հաղորդում Սովոր շրջանում կրթական ոլորտի կազմակերպման մասին. «Ազգ. Խորհուրդը դպրոցի գործին յատուկ յանձնաժողով մը ընտրեց, որ սկսաւ զբաղիլ այդ գործով: Անոր կողմէ լիազօր ընկեր մը որկուեցաւ Թիֆլիս, ուր կուսակցական ընկերներու աջակցութեամբ վարձեց 28 հոգանոց ուսուցչական խումբ մը ընկ. Յ. Զառաֆեանի դեկավարութեան տակ: Ընկ. Յ. Զառաֆեան կովկասահայ լաւագոյն մանկավարժներէն մէկն էր, աւարտած էր Սորբոնի համալսարանը, ուղղամիտ, լուրջ և պատրաստուած ուժ մը: Ան պիտի մասը քաղաքը և իբրև կրթական տեսուչ պիտի այցելէր շրջանները, ուղղոթիւն տալու ուսուցիչներին և հսկելու ծրագրի գործադրութեան» (տե՛ս ՀԱՅՐԵՆԻՔ, 1931, սեպտեմբեր, էջ 159):

<sup>36</sup> Հայ ուսուցութեան ընդհանուր ժողով // ԱՇԽԱՏԱԻՈՐ, 24. XII. 1919:

Վրաստանի ուսուցչական միության մեջ որպես «հայկական դպրոցների դասաստուների սեկցիա»<sup>37</sup>:

Հարկ է նշել, որ ոռուական տիրապետության օրոք պետական դպրոցներում ուսում ստացած հայերն ընդհանրապես մայրենի լեզվի թույլ պատրաստություն ունեին: Ազգայնացված դպրոցներում դասավանդում էին ոռուական կրթություն ստացած անձիք, զինավորապես քաղաքային ուսումնարաններում և տարրական քառամյա դպրոցներում ուսանած «ցենզովիկները»: Քիչ էին ուսուցչական դպրանոցը կամ հայոց թեմական կրթարաններն ավարտած մասնագետները<sup>38</sup>: Թիֆլիսի նահանգի հայկական պետական դպրոցների մտահոգիչ կացության մասին բարձրածայնել էր նրանց տեսուցը: «Ես աշխատել եմ, – զրում է նա, – միայն կասեցնել դպրոցական գործի փլուզումը՝ ստեղծագործական աշխատանքը յետաձելով մօտիկ ապազային: Եւ այդ բանը ինձ աջողություն էր, սակայն տաճկական արշաւանքը տակնուվրայ արաւ ամեն ինչ: Ահա համարեա մի տարի է, որ իմ

<sup>37</sup> Քրոնիկոն // ՍՇԱԿ, 13. II. 1921:

<sup>38</sup> «Մի քանի հոգի միայն աւարտած էին ուսուցչական սեմինարիան կամ հայոց թեմական դպրոցներ եւ միայն մեկը, մի քահանայ, Վարդաբլուր ուսումնարանի ուսուցիչը, աւարտած է Էջմիածնի ճեմարանի լսարանական դասընթացները: Պետական դպրոցներն աւարտած ուսուցիչները և վարժուհիները ընդհանրապես հայոց լեզուից թոյլ պատրաստութիւն ունեին: Որովհետեւ հնարաւորութիւն չը կար կազմակերպելու հայոց լեզուի թէկուզ կարճ ժամանակեայ կուրսեր, ես սահմանափակուել եմ միայն ինքնակրթութեան միջոցներ յանձնարարելով ուսուցիչներին ու վարժուհիներին, այն է՝ հայոց լեզուի դասագրքերի, օժանդակ միջոցների հետ ծանօթացնելով եւ այլն: Խսկ որտեղ հնարաւորութիւն է եղել, հոգաբարձութիւնների համաձայնութեամբ հայոց եկեղեցական-ծխական դպրոցների եւ նոյն տեղերում գունող պետական ժողովդական դպրոցների դասաստուները պարապել են միատեղ, ըստ որում ոռուաց լեզուն երկու դպրոցներում (ծխական եւ պետական) աւանդել է պետական դպրոցի դասաստուն, իսկ հայոց լեզուն, օրինակ, աւանդել է ծխական դպրոցի դասաստուն», – ՀԱԽ-ին իրագեկում էր մեզ համար անհայտ ժամանակակիցը (տե՛ս ՀԱՍ, ֆ. 441, ց. 1, գ. 43, թ. 2 շրջ.):

ֆունկցիաները կայանում են միայն ընթացիկ գրագրութիւնները վարելու, ոռմիկները դուրս գրելու մէջ եւ այլն, որը թէեւ ծանր, բայց զուտ դպրոցական – մանկավարժական գործի տեսակէտից անօգուտ, անարդինաւէտ եւ անշնորհակալ գործ է»<sup>39</sup>:

Աննախանձելի դրության մէջ էին նաև Վրաստանի հայոց եկեղեցական ծխական դպրոցները: Աշխարհամարտի ընթացքում այդ դպրոցներից շատերը փակվեցին կամ դասընթացները կրծառվեցին: 1917–1918 ուստարում ծխական դպրոցները չունենալով թեմական տեսուչներ և ուսումնական խորհուրդներ, բացառապես թողնված են եղել հոգևորականների հոգացողությանը<sup>40</sup>: Դրանց զգալի մասը 1918–1919 ուստարում մնացել էր՝ փակ՝ շենքերը գաղթականներով լցված լինելու<sup>41</sup>, մյուսներն էլ նյութական միջոցների բացակայության պատճառով<sup>42</sup>: Գաղթա-

<sup>39</sup>Տե՛ս ՀԱԱ, ֆ. 441, գ. 1, գ. 43, թ. 5:

<sup>40</sup>Խզմալեան Թ. Դպրոցական գործը // ՀՈՐԻԶՈՆ, 21. VIII. 1918:

<sup>41</sup>Թիֆլիսում՝ Ս. Բեթղեհեմ, Ս. Գևորգ, Ս. Սարգս, Ս. Կարապետ, Ս. Աստվածածին և Վանքի դպրոցները (տե՛ս ՀԱԱ, ֆ. 441, գ. 1, գ. 43, թ. 24): 1918 թ. ապրիլի 1-ից դպրոցական շենքերը հաստկացվեցին գաղթականությանը, սակայն ն. թ. օգոստոսին նրանցից պահանջնեցին տեղափորվել այլ բնակարաններում (տե՛ս ՀԱԱ, ֆ. 441, գ. 1, գ. 26, թ. 16):

<sup>42</sup>Հեղափոխական ցնցումները Հայ Առաքելական եկեղեցուն գրկեցին վանրապատկան և այլ տեսակի բոլոր հողերից, ինչը կտրեց հոգևորականությանը կայուն եկամուտների աղբյուրից: Ամենայն հայոց կարողիկոս Ն.Ս.Օ.Ս.Ս. Գևորգ Ե Տփղիսեցին հանդես եկավ եկեղեցական կալվածքների աշխարհականացման (բոնագրավման) դեմ առավել քան հիմնավոր բողոքով: «Էջմիածնի և այլ վանքերի, ինչպես և եկեղեցների հողերը, – ասում էր Վեհափառը, – դարձերով ծառայում են ժողովրդի և հոգևորականութեան կուլտուրական նպատակներին: Այդ հողերը նուիրել են ոչ թէ միայն Անդրկովկասի, այլ ամբողջ աշխարհի հայերը և նրանց տնօրինութիւնը պատկանում է միայն ամբողջ հայ ժողովրդի ներկայացուցչութեան, այլ ոչ զանազան քաղաքական կուսակցութիւնների ներկայացուցչներին» (տե՛ս Մելիքյան Վ. Հ. Անդրկովկասյան Կովիսարիատի ստցիալ-տնտեսական և կրթական-լուսավորական գործունեությունը // ԼՐԱԲԵԾ հասարակական գիտությունների, 2010, թիվ 3, էջ 34): Այսպես, Վիրա-Խմերեթական հայոց թէմը Ախալցիսայի գավա-

կանության վերադարձից հետո Զավախքում հայկական դպրոցների մեծ մասն այդպէս էլ չվերաբացվեց: 70 հայկական բնակավայր ունեցող Զավախքը հիշյալ ժամանակաշրջանում ուներ միայն 10-ը հայալեզու դպրոց<sup>43</sup>: Բոլորն էլ վերաբացվել էին ՀԱԽ-ի հրահանգով և նրա դրամական միջոցներով<sup>44</sup>: Դյուրին չէր այդ խնդրի իրազործումը, քանի որ ֆինանսական միջոցների խիստ պակաս էր զգացվում<sup>45</sup>: Մինչդեռ պետությունն ամեն կերպ օժանդակում էր զավարի վրացական գյուղերի դպրոցներին: Լուսավորության նախարարությունը հետամուտ եղավ, որ սեփական կրթարան ունենա Զավախքի վրացաբնակ չորս գյուղերից յուրաքանչյուրը<sup>46</sup>: Նման տեսակի խորականության մեծ ու փոքր նշանները կարելի էր հանդիպել նաև այլ դեպքերում: «Այս անարդարությունը խիստ ծանր էր զայիս վիրահայոց սրտին, – կարդում ենք Ա. Զամայյանի մտորումներում, – որովհետև նրանք, մի կողմից, տեսնում էին, որ վրաց կառավարությունը արտակարգ շրայլությամբ դրամներ է բաց թողնում կրթական-մշակութային հաստատությունների ցանկով գուտ վրացարնակ շրջանները ծածկելու համար, իսկ մյուս կողմից՝ գիտակցում էին, որ պետական և համայնական հաստությների շատ խոշոր մասը հայերից էր զանձվում»<sup>47</sup>:

Վրաստանի նորակազմ ՀԱԽ-ի 1918 թ. օգոստոսի 2-ի առաջին իսկ նիստը նվիրված էր դպրոցական խնդրին<sup>48</sup>: Նրա գործկումին կից ստեղծվել էին միջնակարգ և տարրական դպրոցների գործերով լիազորված բաժիններ, որոնց վարիչներն էին, համա-

---

ում գրկվեց 20 հազար դեսյատին վարելահողից, որոնց շահագործումից ստացած եկամուտները XIX-րդ դարի 50-ական թվականներից ի վեր ծառայում էին կրթական գործի պահպանման և զարգացման համար (տե՛ս MEMORANDUM. C. 84):

<sup>43</sup> ՀԱԱ, ֆ. 441, գ. 1, գ. 30, թ. 40:

<sup>44</sup> Տե՛ս Դպրոցական՝ Զամայյում // ԱՇԽԱՏԱՒՈՐ, 24. XII. 1919:

<sup>45</sup> Ախալքալաքի դպրոցների համար // ԱՇԽԱՏԱՒՈՐ, 2. XI. 1919:

<sup>46</sup> MEMORANDUM. C. 87-88.

<sup>47</sup> Տե՛ս Զամայյան Ա. Հայ-վրացական կենցիոր, Երևան, 2011, էջ 161:

<sup>48</sup> Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգ. Խորհրդում // ՀՈՐԻԶՈՆ, 4. VIII. 1918:

պատասխանաբար, Երվանդ Տեր-Մինասյանը և Անուշավան Ստամբուլյանը<sup>49</sup>: 1919 թ. աշնանը ձևավորվել էր միասնական վարչություն, որին դեկավար էր կարգվել Ներսիսյան վարժարանի բազմափորձառու ուսուցիչ Խսահակ Հարությունյանը:

ՀԱԽ-ը ցանկանում էր Վրաստանի տարածքում վերահսկողության իրավունք ունենալ հայկական բոլոր դպրոցների նկատմամբ<sup>50</sup> և եռանդուն միջնորդություններ ու բանակցություններ էր վարել մինչև անգամ լուսավորության նախարարի հետ: Վերջինիս հետ ՀԱԽ-ի անդամների (Ա. Երզնկյան, Ե. Տեր-Մինասյան, Ա. Ստամբուլյան) տեսակցության ժամանակ «հարց յարուցվեց նաև այն խնդրի մասին, որ մինչև կուլտուրական ինքնավարութեան հարցի լուծումը, Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի ներկայացուցիչները իրաւունք պիտի ունենան վերահսկողութիւն ունենալու ազգայնացած պետական դպրոցների և մասնաւոր դպրոցների հայկական առարկաների դասավանդութեան վրայ: Պ. Մինիստրը [Գիորգի Լասիսիշվիլի – Բ.Ս.] խոստացաւ բավարարել մեր խնդիրները, յայտարարեց իրեն կուլտուրական ինքնավարութեան կողմնակից, որի համար իրը թէ օրինազիծ է մշակում և յայտնեց, որ մինչև այդ ինքը շատ ուրախ կ'յինի գործակցել մեզ հետ»<sup>51</sup>: Այս խոստումներով բավարարված լինելով՝ ՀԱԽ-ը լիա-

<sup>49</sup> Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդուրդ // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 8. X. 1918:

<sup>50</sup> «Элементарные требования культурной автономии дают, во всяком случае, право контроля над своими просветительными и культурными учреждениями», – аսված է վավերագրում (տե՛ս ՀԱԱ, ֆ. 441, գ. 1, գ. 30, թ. 17):

<sup>51</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 441, գ. 1, գ. 30, թ. 19-20 շրջ.: Նախարարը նաև ասել է, որ «առհասարակ մենք ուշացել ենք, ինարաւորութեան սահմաններում կաշխատի բաւարարել Ազգ. Խորհրդի ներկայացուցիչներին: Այս ուսումնական տարրում այլևս նշանակուած Վերատեսուչները չեն փոխուի, բայց ուսուցիչ-ուսուցչուինները կարող են նշանակուել այն ցուցակից, որ կը ներկայացնէ մեր գործադիր կոմիտեն» (տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդուրդ // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 28. IX. 1918): ՀԱԽ-ը, թերևս, օգտվել էր Վերջին իրավունքից և առաջարկել էր, օրինակ, Չոր-

գորել էր իր անդամ Ե. Տեր-Մինասյանին վերահսկելու հայագիտական առարկաների (հայոց լեզու, գրականություն ու պատմություն) ուսուցումը պետական և մասնավոր դպրոցներում: Այդ մասին լուսավորության նախարարությանը տեղյակ էր պահվել<sup>52</sup>: Առաջ քաշելով սույն պահանջը՝ ՀԱԽ-ը հենվում էր ՕԶԱԿՈՍ-ի հայտնի որոշման վրա, որը ազգայնացված դպրոցներում ուսումնական ծրագրերի մշակման և իրականացման առաջնահերթ իրավունքը սույն ազգային ներկայացուցական մարմիններին էր վերապահում<sup>53</sup>: Շուտով, սակայն, վրաց պաշտոնյաները մերժեցին ՀԱԽ-ի նախաձեռնությունը: Նախարարությունն իր կարծիքը հիմնավորում էր նրանով, թե մինչև չպարզվի Վրաստանում մշակութային ինքնավարության տեսակը, վերահսկման հարցն օրակարգից դուրս է հանվում<sup>54</sup>: ՀԱԽ-ը, համաձայն չինելով այդ պարզաբանման հետ, Վրաստանի վարչապետին բողոքում էր, թե նույնիսկ ուսուական տիրապետության օրոր հայ հոգևորականությունն ուներ այդ իրավունքը, ուստի և այժմ դա պետք է անցնի իր իրավասությանը: ՀԱԽ-ն պատրանք էր տաճում հետազյում, մշակութային ինքնավարության մասին ենթադրվող օրենքի վավերացումից հետո, ամբողջությամբ իրեն ենթարկել Վրաստանի

բորդ գիմնազիայում հայոց լեզվի, գրականության և պատմության ուսուցչի թափուր հաստիքի համար սեփական թեկնածուին (տե՛ս ՀԱԱ, ֆ. 441, գ. 1, գ. 30, թ. 34):

<sup>52</sup> «7. X. 1918 г. Господину Министру Народного Просвещения Грузинской Республики. В дополнение отношения нашего от 4-го октября 1918 года за № 43, Армянский Национальный Совет сообщает, что со стороны Совета уполномоченным по ознакомлению с постановкой учебного дела в национализуемых для армян Гимназиях и преподаванием Армянских предметов в неармянских Правительственных и частных гимназиях избран член Совета Ерванд Галустович ТЕР-МИНАСЯН, на имя коего просим выдать надлежащее удостоверение и одновременно оповестить об этом все вышеупомянутые учебные Заведения. Председатель. Секретарь» (տե՛ս ՀԱԱ, ֆ. 441, գ. 1, գ. 30, թ. 5):

<sup>53</sup> Silogava V. Shengelia K. Նշան. աշխ., էջ 222-223:

<sup>54</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 441, գ. 1, գ. 30, թ. 8:

բոլոր պետական հայկական դպրոցները<sup>55</sup>:

Զնայած վրաց պաշտոնյաների տված բազում խոստուսներին՝ դրանք իրական գործի չեին վերածվել զիսավորապես լուսավորության նախարարության դիմադրության պատճառով<sup>56</sup>: Այս առթիվ Ե. Տեր-Մինասյանը գեկուցում էր ՀԱԽ-ին, որ «մինչև այսօր չ'նայելով բոլոր գործ դրած ջանքերին, բանաւոր և գրաւոր միջնորդութիւններին Ազգային Խորհրդի Գործադիր մարմնին չի յաջողուում փորր-ինչ կանոնաւորել իրավասութեան խնդիրը և ապահովել Ազգային Խորհրդի վերահսկողութեան իրաւունքը դպրոցական գործի մէջ: Խօսքը վերաբերում է ներկայումս զիսաւրապես պետական և մասնաւոր զիմնազիաներին: Վրաց կառավարութեան լուսաւորութեան մինիստրութիւնը յուրացրել է գործունեութեան այնպիսի ձև և գործելակերպ, որ միանգամայն անհամապատասխանում է Վրաստանի հայութեան կենսական շահերին և ոչ մի ձև, ոչ մի կերպով չի հարմարում կուլտու-

<sup>55</sup> «Предоставления всецело в наше ведение национализованных для армян учебных заведений», – аսված է ՀԱԽ-ի վավերագրում (տե՛ս ՀԱՍ, ֆ. 441, գ. 1, գ. 30, թ. 17):

<sup>56</sup> «Վրաց կառավարութեան լուսաւորութեան նախարարութիւնը Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի ներկայացուցիչներին քանի անգամներ ասել է, որ շատ ուրախ կը լինի գործակցել նրա հետ, որ ի հարկէ Ազգային Խորհուրդը պետք է որոշ դեր խաղայ ազգայնացած դպրոցների գործում, մինչև որ կուլտուրական ինքնավարութեան օրինագծով ամբողջ գործը կանցնի նրան, և այլն, և այլն, բացի այս բոլորը մինչև այսօր մնացել են լոկ խօսքեր: Ո՛չ այն պատճառով, որ Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի Գործադիր մարմնը միշոցներ չէ ձեռք առել այս ուղղութեամբ – Գործադիր մարմնը մի քանի անգամ գրաւոր և բերանացի դիմումներ է արել այս հարցի մասին, – այլ այն պատճառով, որ անհասկանալի եղանակով Գործադիր մարմնի բերանացի դիմումներին տրուել է վրաց կառավարութեան լուսաւորութեան նախարարութիւնից գոհացուցիչ պատասխան, մինչդեռ նոյն խնդիրների մասին եղած գրաւոր դիմումներին ստացել են միանգամայն անզոհացուցիչ և մերժողական պատասխան» (տե՛ս Դպրոցական գործի դրութիւնը Վրաստանում// ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 2. XI. 1918):

րական ինքնավարութեան ամենատարրական պահանջներին, այլ բացարձակ կերպով ժխտում և ոչչացնում է այն<sup>57</sup>:

Այսպիսով, ՀԱԽ-ը կատարյալ անհաջողություն կրեց Վրաստանի նորակազմ հանրապետության իշխանությունների հետ վարած երկարատև բանակցություններում: Կուսակցությունների ներկայացուցիչները ՀԱԽ-ում միակարձիք էին, որ սույն կառույցը պետք է լինի վիրահայերի դպրոցական գործի միակ տերն ու տնօրենը: Վրաց պաշտոնյաները, սակայն, արտաքրուստ բարի կամք դրսւորելով և սիրալիք վերաբերմունքի արժանացնելով իրենց այցելած ՀԱԽ-ի բանագնացներին, ի վերջո, հստակ հասկացնել տվեցին, որ ոչ մի դեպքում և ոչ մի պարագայում համաձայն չեն լինի ճանաչել վիրահայերի ուսուցման գործում նրա դեկավար լիազորությունները: Մերժվեց նաև ՀԱԽ-ի վերահսկողական գործառույթի իրավունքը պետական դպրոցների նկատմամբ: Պաշտոնյաները, միխրաբելով զայրացած հասարակայնությանը, խոստանում էին ամեն ինչ կարգավորել ապագայում՝ մշակութային ինքնավարության մասին թեզը սահմանադրական օրենքի վերածման և, հետևաբար, համապատասխան իրավական դաշտի ստեղծման պարագայում:

1918 թ. օգոստոսի 6-ի նիստում ՀԱԽ-ը որոշեց իր իրավասությանը ենթարկել մինչ այդ Վիրահայ թեմին պատկանող դպրոցները<sup>58</sup>: Նա, փաստորեն, «իրաւական խնդիրը չվճռելով՝ իր վրայ է վերցնում դպրոցների փաստական կառավարությունը»<sup>59</sup>: Դա, անշուշտ, վաղուց մտածված քայլ էր, որը, սակայն, ՀԱԽ-ում չարժանացավ միաձայն որոշման: ՀԺԿ-ի լիազորները տարակուսանքով վերաբերվեցին վիճահարույց սույն քայլին՝ գործընկերներին կոչ անելով թեմի հետ հարցը լուծել համերաշխարք և փոխադարձ համաձայնությամբ, սակայն «առաջարկությունը չէ

<sup>57</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 441, գ. 1, զ. 30, թ. 19-20 շրջ.:

<sup>58</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 441, գ. 1, զ. 26, թ. 15 շրջ.:

<sup>59</sup> Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 19. III. 1919:

անցել<sup>60</sup>: Վեծի առարկան հիմնականում ծխական դպրոցներն էին, որոնց կացությունը, ինչպես արդեն նշվել էր, անմիտաբ ու թշվառ էր: Երկար տարիներ գոյություն ունեցող և սեփական շինություններով ապահովված Դադեթ-Խաչենի, Շամշուլդայի և Բոլնիս-Խաչենի դպրոցները, օրինակ, փակ էին: Բորչալուի հայշատ շրջանում մնացել էր միայն երկու գործող ծխական կրթարան՝ Աղբուլարում (կամ՝ Բելի Կյուչ, այժմ՝ Թեթրի Ծղարո) և Դուրնուկում<sup>61</sup>: Այդպես, Վրաստանի հայարքնակ շատ ու շատ այլ վայրերը ևս զրկված էին սեփական դպրոցներ ունենալու հնարավորությունից:

ՀԱԽ-ի այս քայլերին ի պատասխան՝ տարածվեց Վրաստանի և Խմերեթի թեսի հոգնոր առաջնորդ Սիհիթար Էպիսկոպոս *Տեր-Մկրտչյանի* 1918 թ. հոկտեմբերի 5-ի № 298 կարգադրությունը: «Վերջին ժամանակներս, — գրում էր սրբազնը, — թեմիս հայոց եկեղեցական ծխական դպրոցների հոգաբարձրութիւններից ուսանք Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի Գործադիր Մարմնից ստացել են գրութիւններ, որոնցով Գործադիր Մարմնը տրամադրութիւն է ցոյց տուել միջամտին լինելու Հայոց եկեղեցական դպրոցների գործերին, որոնք գտնում են բացառապես ծխական համայնքների և հոգնոր իշխանութեան տեսչութեան ներքոյ: Ուստի և պատուիրում եմ Ձեզ որևիցէ թիւրիմացութիւնից խուսափելու համար շրջաբերականով բացատրել շրջանի Հոգաբարձրութիւններին, որ նրանք պարտասոր են անշեղ դեկապարուել Նորին Վեհափառութեան Ազգիս Ընդհարական Հայրապետի կողմից մեր եկեղեցական-ծխական դպրոցների համար հաստատուած ընդհանուր ծրագրով և կանոնադրութեամբ, ուստի և որևիցէ կողմնակի միջամտութիւն դպրոցական

<sup>60</sup> Տե՛ս ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 19. XI. 1918: Նաև՝ նույն օրաթերթը, 19. III. 1919:

<sup>61</sup> Տե՛ս Դպրոցները պատմական Սոմխեթիայում // ԱՇԽԱՏԱՒՈՐ, 21. XI. 1918:

գործերում անընդունելի է<sup>62</sup>: Վիրահայ թեմի առաջնորդը միանշանակ պատվիրել էր «հոգաբարձուներին չլսելու ոչ մի իշխանութեան, քացի, իրեն հոգևոր իշխանութեան, որ տէր և տնօրէն է հանդիսանում յիշեալ դպրոցների»<sup>63</sup>:

1918 թ. հոկտեմբերի 17-ի նիստում ՀԱԽ-ը որոշում է դպրոցական խնդրում գործել կտրուկ և պաշտպանել իր «ֆրավունքները» հոգևորականության «ուսնագություններից»<sup>64</sup>, քանի որ սոցիալիստական հոսանքների զաղափարախոսությունն ավանդաբար տողորված էր հակակերական ոգով: Ուստի սուր վեճի հետևանքով կրքերն այն աստիճանի շիկացան ու լարվեցին, որ դաշնակցական օրաթերթի էջերում հրապարակվեց անխոհեմ հայտարարություն, թե «ոչ մի սրբազն կամ հոգևոր իշխանութիւն որեւէ մասնակցութիւն չպիտի ունենայ մատաղ սերնդի դաստիարակութեան գործում»<sup>65</sup>: Ազատամտական քննադատները, պահանջելով եկեղեցու և դպրոցի առանձնացում, մոռանում էին նշել նաև հոգևորականության ունեցած հսկայական մշակութային դերը մեր ժողովրդի լուսավորության ասպարեզում:

Գայանյան միջնակարգ օրիորդաց դպրոցում հիշյալ խնդիրը նույնպես դարձավ անախորժությունների պատճառ: Կրթական այդ օջախում զրեթե մեկ տարի սուր հակամարտություն էր ծավալվել հոգաբարձության և ուսուցչական կոլեկտիվի միջև: Դարոցը մատնվել էր լիակատար անգործության: ՀԱԽ-ը նպատակահարմար գտավ միջամտել ու իր գործկոմին հանձնարարեց անմիջապես վարել դպրոցի գործերը<sup>66</sup>: Վերջինիս «նախաձեռնութեամբ ընտրուած է նոր հոգաբարձութիւն, որը և

<sup>62</sup> Տե՛ս Սրբազն Առաջնորդի շրջաբերականը // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 19. X. 1918:

<sup>63</sup> Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 19. X. 1918:

<sup>64</sup> Տե՛ս Վիրահայ Ազգային խորհուրդ // ՀՈՐԻԶՈՆ, 20. X. 1918:

<sup>65</sup> Տե՛ս Հոգևորականութիւնը և դպրոցական գործը // ԱՇԽԱՏԱԽՈՐ, 8. X. 1919:

<sup>66</sup> Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 8. X. 1918:

իրաւիրել է նոր տեսուչ՝ յայտնի հայագետ և բանասէր Ստեփան Մալխասեանին, սա ևս հոգաբարձութեան հետ միասին կազմել է ուսուցչական խումբը 22 հոգուց բաղկացած, որից 12-ը բարձրագոյն կրթութեամբ տէր անձինք են, միւսները՝ միջնակարգ»<sup>67</sup>: Այս բայլերը ապահովեցին կրթարանի հետագա կայուն և ստեղծարար աշխատանքը: 1920-1921 ուսուարում այն ուներ շուրջ 500 աշակերտուիի:

Մի շարք դպրոցների հոգաբարձուներ «հնարաւոր չեն գտնում ճանաչել Ազգային Խորհրդի իրաւասութիւնը, յենուելով այն սկզբունքի վրայ, թէ առայժմ վտանգաւոր է, բաղաբական հորիզոնը և մեր կուլտուրական ինքնավարութեան պայմանները չպարզուած, նախվին հոգնոր իշխանութեան իրաւունքները կրծատել և նոր մարմնի իրաւասութիւն ընդունել, որի իրաւունքների սահմանները որոշ չեն և կառավարութեան կողմից էլ ճանաչուած չեն: Տեսակէտներ, որ միշտ պարզել է Հայ ժողովը դիմականը Կուսակցութիւնը, բայց չէ անցել Ազգային Խորհրդի մէջ: Այսպէս է պատճառաբանում Ազգային Խորհրդի իրաւասութիւնը շճանաչելը, օրինակ, Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը»<sup>68</sup>: Սակայն, ինչպէս երևում է, հոգնորականությունը նույնպէս լիարժեքորեն չէր վերահսկում այս ուսումնարանը: «Ի՞նչ է պատճառը, որ դպրոցի հոգաբարձութիւնը հաշիւ չի տալիս հասարակութեանը դպրոցի ուսումնական և տնտեսական վիճակի մասին իրապարակով, ինչպէս լինում էր առաջ, ուր են գնում միլիոնները, ինչի՞ վրայ և ի՞նչպէս են ծախսում բարերարների կտակները.... - իրավացիորեն հարց էր հնցում մամուլում: - Հարիւրաւոր միլիոնների արժեք ունեցող կալուածքների տէր դպրոցի աշակերտութեան թիւը իջել է երկու հարիւրի <...> մինչդեռ ոչ շատ հեռու անցեալում այդ թիւը հազարից անցնում էր (երբ դպրոցը բաժանմունքներ ուներ Սօլօլակում և Հաւլա-

<sup>67</sup> Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 3. XI. 1918:

<sup>68</sup> Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 19. III. 1919:

բարում»<sup>69</sup>: Ինչպես տեսնում ենք, ՀԱԽ-ի և հոգևորականության միջև ծագած տարածայնությունը տարավ վիրահայ մի շարք դպրոցներում վերստուգիչ ասոյանների աշալուրջ հսկողության վերացման, ոմանց էլ հնարավորություն ընձեռեց գործել միմիայն սեփական շահի բավարարման տեսակետից:

Սովորական Հայոց «Ազգային Խորհրդի իրաւասութիւնը լիովին ճանաչում են և ենթարկում նրան այն դպրոցները, որոնք նիւթական կարիք և օգնութեան ակնկալութիւն ունի <...> Կարիք ունեցող թէ՝ տարրական, թէ՝ միջնակարգ դպրոցները խոշոր օժանդակութիւն են ստացել Գործադիր մարմնի որոշման համաձայն այն 100 հազար ոուրլուց, որ յատկացրել էր Ազգային Խորհրդը դպրոցական գործին: Մի օժանդակութիւն, որ մեր դպրոցական կեանքում եզակի է և մինչև այժմ չի եղել»<sup>70</sup>, – պնդում էին ՀԱԽ-ի դպրոցական բաժնի վարիչները:

Դժվար է այսօր կոսիկ իրական այն դրդապատճառները, որոնք ստիպել են Վրաստանով մեկ ցրված հայ բնակչությանն իրենց դպրոցները ենթարկեցնել ՀԱԽ-ին: Որ այս որոշումները չեն եղել թերև և վճռվել են երկարատև մտորումներից հետո, հուշում է Սուրամի<sup>71</sup> և Բորժոմի<sup>72</sup> դպրոցների ճակատագիրը:

<sup>69</sup> Տե՛ս Ներսիսեան դպրոցը եւ նրա «ցմահ» հոգաբարձուները // ՄԾԱԿ, 27. I. 1921:

<sup>70</sup> Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 19. III. 1919:

<sup>71</sup> Սուրամի հայ հասարակայնության ժողովը վճռել էր «դպրոցն այսուհետև ժողովրդականացնել, անջատելով հոգևոր իշխանութեան գերիշխանութիւնից և ենթարկել Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդին, կատարելով վերջինից բխած բոլոր հրահանգներն ու կարգադրութիւնները անշեղ ու անթերի» (տե՛ս Սուրամի հայոց դպրոցը // ԲԱՆՎՈՐԻ ԶԱՅՆ, 28. IX. 1919):

<sup>72</sup> Բորժոմի հայերի բազմամարդ «ժողովն որոշում է, այսուհետև դպրոցին եկեղեցականի տեղ ժողովրդական անոնը տալ, վերացնել կրօնի դասաւանդութիւնը և ամբողջովին ենթարկել Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդին, այլև չճանաչելով հոգևոր իշխանութեան կարգա-

Ֆինանսական խնդիրները, անկասկած, գերակայում էին բոլոր պարագաներում: Նման բնույթի հարցերը վճռողից էր հաճախ կախված կրթական օջախների լինել, չլինելը: Այսպես, Կավթիսիսկի զյուղի (Գորիի գավառ) դպրոցի հոգաբարձությունը համաձայնել էր մինչ այդ Հայ քահանաների միության միջոցներով պահպող կրթարանը ենթարկել ՀԱԽ-ին, քանզի վերջինս իր վրա էր վերցրել դպրոցի երկու ուսուցչուհիների վարձատրությունը<sup>73</sup>:

ՀԱԽ-ի ենթակայության տակ, այս կամ այլ կերպ, հայտնվեց շուրջ 50 հայկական ժողովրդական դպրոց (տե՛ս աղյուսակ № 1)<sup>74</sup>:

Ամբողջ վիրահայության վստահության քվեն չստացած ՀԱԽ-ը, այնուամենայնիվ, բարոյական ոչ մի հիմք չուներ ստիպել հայկական ոչ պետական կրթարաններին ենթարկվել իր իրավասությանը: Կարծիք էր հնչում, թե «Չաստ ցանկալի է, որ մեր միակ զերագոյն մարմինը՝ Ազգային Խորհուրդը իրաւիրէր դպրոցական և այլ ազգային կուլտուրական հիմնարկութիւնների և հաստատութիւնների ներկայացուցիչներին, նաև ձեռնհաս անհատներ, որոնց զեկուցուէր մեր դպրոցական գործը իր ամբողջութեամբ և այդպիսի մի պատկառելի հեղինակաւոր ժողովի կողմից հաւանութիւն ստացած հրահանգով գեթ ժամանակաւորապէս Ազգային Խորհուրդը վարէր դպրոցական գործը, առանց բացառութեան, բոլոր դպրոցներն ևս ենթակայ անելով իր իրաւասութեան»<sup>75</sup>:

---

դրութիւնները դպրոցական գործերում» (տե՛ս Գաւառական կեանք. հասարակական ժողովը Բորժոմում// ԲԱՆՎՈՐԻ ԶԱՅՆ, 27. X. 1919):

<sup>73</sup> ԱՇԽԱՏԱԲԻՈՐ, 28. XII. 1919:

<sup>74</sup> Վրաստանի Հայոց ազգային խորհուրդը և նրան ենթակա դպրոցները // ՆՈՐ ԽՈՒ, 27. IX. 1920:

<sup>75</sup> Դպրոցական խնդիր // ՍՇԱԿ, 30.I.1921:

Դպրոցների տիպը (աստիճանը)	Դպրոցների թիվը	Աշակերտների թիվը				Աշակերտների թիվը դասարաններում			
		Խողովոք	առջիկներ	Աղջակածը	Դասարաններ	Խողովոք	առջիկներ	Լորպետ	Միջնական
ստորին տարրական	45	1940	1926	3866	134	20	60	29	
բարձր տարրական	5	269	884	1153	36	8	58	32	
միջնակարգ	3	26	461	484	18	12	44	27	

1919 թ. օգոստոսի 1-ին Վրաստանի ՀԱԽ-ն ընդունեց «Կանոնադրություն Վրաստանի հայոց ժողովրդական դպրոցների»<sup>76</sup>: Ըստ դրա ուսումը սկսվում էր 7 տարեկանից: Ուսման տևողությունը ստորին տեսակի տարրական կրթարանում 3-ամյա էր<sup>77</sup>, բարձր կոչված տարրական աստիճանը ուներ 4-ամյա ծրագիր<sup>78</sup>: Բացի այդ, միջոցների տնտեսման նպատակով ՀԱԽ-ը 1919-1920 ուստարուց իր տարրական դպրոցները վերածեց երկսեռերի<sup>79</sup>: ՎՀՀ-ում տարրական բոլոր դպրոցներում ուսուցումը պարտադիր էր և անվճար: Թեև պետական միջնակարգ դպրոցները վճարովի էին, սակայն դրանց ուսման վարձը զգալիորեն ցածր էր մասնավորներից: ՀԱԽ-ին ենթակա միջնակարգ դպրոցներում

<sup>76</sup>Տե՛ս Տեղական կենանք // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 5. VIII. 1919:

<sup>77</sup>ՀԱՍ, ֆ. 441, գ. 1, գ. 48, թ. 61:

<sup>78</sup>Կանոնադրություն Վրաստանի հայոց ժողովրդական դպրոցների // ՆՈՐ ԽՕՍՔ, 2. XI. 1920:

<sup>79</sup>Տե՛ս ՀԱՍ, ֆ. 441, գ. 1, գ. 48, թ. 84:

ուսման վարձը զգալիորեն զերազանցում էր պետականը<sup>80</sup>: 1919 թ. հոկտեմբերին ՀԱԽ-ի գործկումը որոշեց ուսման վարձից ազատել ժողովրդական դպրոցների ուսուցիչ-ուսուցչուհիների զավակներին<sup>81</sup>: ՀԱԽ-ին պատկանող կրթարաններում 1919-1920 ուստարում դասավանդում էր 211 ուսուցիչ-ուսուցչուհի (տե՛ս այդուսակ N 2)<sup>82</sup>:

## Այլուսակ № 2

Ուսուցչա-մանկավարժական կազմ					
ուսուցիչ-ուսուցչուհիների կրթական աստիճանը					
դպրոցների տիպը (աստիճանը)	բարձրագույն միակուղացք	մասնագիտական միակուղացք	առանց ցեղողի միակուղացք	ընդունելով	
սովորին տարրական	2	61	22	24	109
բարձր տարրական	13	21	7	7	48
միջնակարգ	24	20	9	1	54
ընդամենը	39	102	38	32	211

ՀԱԽ-ը ձեռնարկել էր կազմել ուսուցական ցանկ, և այն մանկավարժները, ովքեր ցանկանում էին աշխատատեղ ստանալ, մինչև 1920 թ. մայիսի վերջը պետք է դպրոցական բաժնին ներկայացնեին իրենց համապատասխան վկայականները: Նախատեսվում էր, որ 1920-1921 ուստարում դպրոցներում կաշ-

<sup>80</sup> ՆՈՐ ԽՕՍՔ, 27. IX. 1920:

<sup>81</sup>Տե՛ս ՀԱՍ, ֆ. 441, գ. 1, զ. 90, թ. 2:

<sup>82</sup> ՆՈՐ ԽՕՍՔ, 27. IX. 1920:

իստեհն միայն նրանք, ովքեր կլինեն միասնական ցանկի մեջ<sup>83</sup>:

Հստ իր խոսակցական լեզվի՝ Վրաստանի հայ ազգարնակ-չությունը բաժանվում էր երկու հիմնական մասի՝ հայախոս և վրացախոս: Թիֆլիսահայերի ավելի քան 80 % համար մայրենի լեզուն հայերենն էր, գրագետ էր 55.3 %-ը, իսկ վերջիններիս 73.7 %-ը գրագետ էր նաև իր ազգային լեզվով: Երկրի գյուղաբնակ հայության շրջանում անհամեմատ ցածր գրագիտության աստիճանը, որը կազմում էր ընդամենը 23.9 %, ոչ ցանկալի ցուցանիշ էր: Վրաստանում բնակվող 27.6 % հայազգի երկրագործների համար մայրենի լեզուն վրացերենն էր: Վրացախոս հայերը, բացի Թիֆլիս և Քուրայիս քաղաքներից, անհամեմատ շատ էին Կախիերիայի և Շիդա Քարրլիի պատմական զավառներում: Առանձնապես ցածր էր հայերենի՝ որպես մայրենի լեզվի, տիրապետողների տեսակարար կշիռը Սոնախի (25.6 %), Գորիի (12.7 %) և Թելավի (11.5 %) շրջաններում<sup>84</sup>:

Վրահայերի գյուղերում «բոլոր դպրոցներն ել անապահով են, - ընթերցողին իրազեկում էր մասուը, - և չունին մշտական նիւթական աղբիւր, որի պատճառով շատ անզամ տարին երկու ուսուցական կազմ փոխելով ու մեծաւ մասամբ ել դպրոցից նոր ելած անփորձ ու պաշտոնին անձեռնաս դաստիարակության մատուցությունը՝ դպրոցը ևս առաւել հետադիմել ու կորցրել է իր վեհութիւնը վիրախոս հայ ժողովրդի աշքում»<sup>85</sup>: ՀԱԽ-ի նախազահության կարծիքով իր գանձարանի միջոցներն առաջին հերթին պետք է ուղղվեին վրացախոս հայերի բնակության շրջաններում հայկական դպրոցների բացմանը<sup>86</sup>: Որոշվեց 1919 թ. դեկտեմբերից ձեռնամուխ լինել այդ գործին<sup>87</sup>:

<sup>83</sup> Հայտարարություն // ՆՈՐ ԱՇԽԱՏԱԽՈՐ, 22. III. 1920:

<sup>84</sup> Ալեքսանյան Հ. Ա. Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1917-1941 թթ., Երևան, 2014, էջ 87-90:

<sup>85</sup> Կրթական գործը Գորու զաւառում // ԲԱՆՎՈՐԻ ԶԱՅՆ, 28. IX. 1919:

<sup>86</sup> Տե՛ս ՀԱՍ, ֆ. 441, գ. 1, գ. 48, թ. 66:

<sup>87</sup> Լրատու. Նոր դպրոց // ԱՇԽԱՏԱԽՈՐ, 13. XI. 1919:

Վրաց իշխանությունները, սակայն, հրաժարվում էին արտոնել հայկական կրթարանների բացումը<sup>88</sup>: 1918-1919 ուստար-վա սկզբին լուսավորության նախարարության կարգադրությամբ վրացախոս հայերի երեխանները պետք է կրթվեին վրացերեն լեզվով, իսկ հայերենի ուսուցումը մնում էր իրքն առանձին առարկա<sup>89</sup>: Կամայական սույն որոշումը որոշակի ըմբռություն առաջացրեց հայերի միջավայրում և «այս կարգադրության հետևանքով ծղնէրցիք [Ծղներ զյուղ, Թիֆլիսի զավառ - Բ. Ս.] փակեցին իրենց դպրոցը»<sup>90</sup>: Արհեստական վիճաբանություն էր հրահրվել նաև «մայրենի» և «մայրական» լեզուների խնդրի շուրջ:

<sup>88</sup> ԱՇԽԱՏԱԽՈՐ, 22. Ի. 1920: 1919 թ. դեկտեմբերին Հայաստանի Հանրապետության հանրային կրթության նախարար Ն. Աղբայանը դիմում է կառավարության անդամներին, մասնավորապես գրելով. «Վրաստանի քաղաքականությունը բավական պարզված է մեր դպրոցների վերաբերմամբ՝ ամեն կերպ արգելքներ հարուցել, որ մեր դպրոցները չվերաբացվեն, մասնավանդ վրացախոս [հայերի] զյուղերում: Վրաստանի Հայոց ազգային խորհուրդը Թիֆլիսում նյութական աջակցություն խնդրեց հատկապես վրացախոս [հայերի] զյուղերի համար: Ի տես այս երևոյթների խնդիր է հարուցվում, թե մեր հանրապետությունը քաղաքական նպատակներով պետք չէ», որ դպրոցական հաստատություններին օժանդակի հարեւան հանրապետությունների մեջ, որոնք մեր կառավարության համբերատար ողին չունեն և հետամուտ են հայ զանգվածների ապազգայնացման, առնվազն զլանում են նրանց ազգային կրթությունը նպաստել և աջակցել: Ինձ թվում է, որ մեր կառավարության պարտականությունն է հակադրել այս քաղաքականությանը շոշափելի և իրական միջոցներով: Այս է՝ դրամական այնպիսի կացություն ստեղծելով հայ դպրոցների համար հարեւան հանրապետության մեջ, որ նրանք եթե ոչ գերազանց, գոնե հավասար պայմանների մեջ լինեն տիրող ժողովրդի դպրոցների համեմատությամբ և չստիպվեն փակվելու կամ կառավարության բոնության առջև տեղի տալու միջն կատարյալ ապազգայնացում» (տե՛ս Վարդանյան Գ.Վ. Նշվ. աշխ., էջ 37-38):

<sup>89</sup> Տե՛ս ՀԱՍ, ֆ. 441, գ. 1, գ. 43, թ. 3:

<sup>90</sup> Տե՛ս Տեր-Միրաբեան Յ. Վրաստանի հայոց դպրոցները // ԱՇԽԱՏԱԽՈՐ, 3. VII. 1919:

Վրաց պաշտոնյաներն ասում էին, թե իրենք դեմ չեն լինի, որ հայերենով դասավանդումն իրականացվի այնտեղ, որտեղ բնակչությունը զիտի այն, իսկ որտեղ խոսում են միայն վրացերենով, ապա դա նրանց «մայրենի» լեզուն պետք է համարել առանց ազգային պատկանելության<sup>91</sup>: Կավթիսիսկի զյուղի (Գորիի գավառ) ավագ վարժուիկի Օ. Սանուկյանը ՀԱԽ-ին տեղեկացնում էր, որ 1919 թ. նոյեմբերին դպրոցների շրջանային տեսուչը և զյուղապետը իրենից պահանջել էին, որ տեղի հայոց ծխական դպրոցում բոլոր առարկաները այսուհետև ափանդվեն վրացերեն լեզվով, իսկ հայերենը կարելի է ուսումնասիրել միայն Գ դասարանից: Հակառակ պարագայում տեսուչը սպառնացել էր փակել դպրոցը<sup>92</sup>: Սույն պաշտոնյայի նման պահվածքը, անշուշտ, թելադրված էր իր դեկավար ատյաններից: Լուսավորության նախարարության տարրական դպրոցների վարչության պետ Գ. Ճումբուրիձեն ճանաչելով, որ ՀԱԽ-ը Վրաստանում ունի 49–51 կրթարան, միաժամանակ պնդում էր, թե «այդ դպրոցները շատ կասկածելի բնույթ և ուղղություն ունեն: Դրանք զիսավորապես նախկին հայոց ծխական դպրոցներն են կազմում, որոնց տիպն ու ուսուցման ծրագիրն ընդհանրապես անընդունելի պետք է համարել դեմք կրատական հանրապետության համար»<sup>93</sup>: Մրան արձագանքեց ՀԱԽ-ի վարչության անդամ Իս. Հարությունյանը. «Ազգային Խորհրդի պահած դպրոցների ծրագրերը ոչ թե միայն համապատասխանում են նորագույն մանկավարժական պահանջներին, այլև հիմնված են ամենադեմք կրատական սկզբունքների վրա: Արդյոք պարոն հողվածագիրը բարեհաճե՞լ է ծանոթանալ այդ ծրագրերին, թե միայն դիտավորյալ ենթադրություններ է անում»<sup>94</sup>:

<sup>91</sup> ԱՇԽԱՏԱԲԻՈՐ, 15. III. 1920:

<sup>92</sup> Վրաստան. Ինչպես հասկանալ (նամակ խմբագրութեան) // ԱՇԽԱՏԱԲԻՈՐ, 29. XI. 1919:

<sup>93</sup> Հարությունյան Ի. Վրաստանի տարրական դպրոցների զիսավոր վարիչ պ. Ճումբուրիձի յօլվածի առթիվ// ՄՇԱԿ, 1. X. 1920:

<sup>94</sup> Տե՛ս նույն տեղում:

Հարկ է նշել, որ ոչ բոլոր վրացախոս հայ ծնողներն էին ցանկանում իրենց զավակներին կրթել վրացական դպրոցներում: Այսպես, Վելիսցիխեկի (Սղնախի զավառ) պետական դպրոցում 1917-1918 ուստարվա վերջում ուսանում էր 115 հայ դպրոցական: Ազգայնացումից հետո՝ 1918 թ. սեպտեմբերին, դպրոցը բաժանվել էր երկու մասի՝ հայկական և վրացական: Սակայն Գ. Ճումրուրիձեն, համարելով, որ տեղի հայերի համար վրացերենը «մայրենի» լեզու է, կարգադրել էր ուսուցումն իրականացնել միայն վրացերենով: Այդ պահից դպրոցում շարունակել է ուսանել 40 հայ մանուկ<sup>95</sup>: Լուսավորության նախարարը ՀԱԽ-ին առաջարկել էր «վրացախոս հայերի մէջ դասաւանդութիւնը վրացերէն լեզուվ կատարել մինչև որ երեխաները կը տիրապետեն հայերէն լեզվին»<sup>96</sup>: Սակայն իրավացիորեն հարց է առաջանում, թե ինչպէս սյուրացնել լեզուն, եթե այն չի դասավանդվում: Վրացախոս հայ քնակչությունը կարուտ մնաց հայերեն լեզվի յուրացումից, քանի որ զեմստվուները ՀԱԽ-ին արգելում էին զյուղական վայրերում հիմնել հայկական դպրոցներ, իսկ պետականներում էլ ոչ մի տեղ չէր հասկացվում հայերենին, գոնե իբրև առարկայի: Այդ արգելքի հիմնական պատճառաբանությունն այն էր, թե, իբր, հակամանկավարժական է երեխաներին սովորեցնել մի լեզվով, որով նրանք չեն խոսում: Հայ միջավայրը, սակայն, դա միանշանակ ընկալում էր իբրև քաղաքականություն, որն ուղղված էր հայության մի ստվար հատվածի ուժացման<sup>97</sup>: Ա. Զամայանը, որը եղել է ՀՀ-ի ներկայացուցիչը Թիֆլիսում, հաստատում է, որ Վրաստանի կառավարությունն արգելում էր հայկական ազգային դպրոցներ ունենալ վրացախոս հայերի համար: «Պատրվակ բռնելով, – գրում է նա, – թե մանկավարժական կանոնների համաձայն, մանուկների նախնական ուսուցումը պետք է մայրենի լեզվով կատարվի՝ վրաց

<sup>95</sup>Տե՛ս ՀԱԱ, ֆ. 441, գ. 1, գ. 48, թ. 48; Նաև՝ Վրաստան. Տեղեկություններ Կախեթից// ԱՇԽԱՏԱԲՈՐ, 18. VI. 1919:

<sup>96</sup>ԲԱՆՎՈՐԻ ԶԱՅՆ, 14. III. 1920:

<sup>97</sup>Վրկնակի հաշվապահության դպրոցական քաղաքականութեան մէջ// ՆՈՐ ԽՕՍՔ, 8. XI. 1920.

դպրոցական տեսչությունները պահանջում էին, որ վիրախոս հայերը իրենց զավակներին վրացական դպրոցներ ուղարկեն: <...> Հին ոռուսացման քաղաքականության հետքերով ընթացող այս վրացացման ակնհայտ ճշումը ժամանակին շատ կրքեր հարուցեց մեր մասով և հասարակական շրջանակների մեջ: Սակայն, նա ունեցավ նաև խիստ բարեբար ազդեցություն. վիրախոս հայերը, որ մինչ այդ բավական հեռացել էին ազգային տրամադրություններից՝ տեսնելով <...> այս վերաբերմունքը վերստին հառեցին իրենց աշքերը դեպի մայր ժողովուրդը»<sup>98</sup>:

Վրաց խորհրդային պատմագրության մեջ այն տեսակետն է իշխել, թե դպրոցի անջատումը եկեղեցուց Վրաստանում տեղի է ունեցել Հեղիկոսի 1921 թ. ապրիլի 15-ի դեկրետի համաձայն<sup>99</sup>: Այսինքն երկրում կոմունիստական կուսակցության իշխանության հաստատումից անմիջապես հետո: Նկատենք, սակայն, որ այդ որոշումն ընդունվել և կենսագործվել է կյանքում դեռ առաջին հանրապետության օրոք: Վրաց խորհրդարանը որոշել էր 1918 թ. դեկտեմբերի 1-ից վերացնել կրոնական ուսմունքների դասավանդումն իր երկրի աշխարհիկ կրթական հաստատություններում<sup>100</sup>: Լուսավորության նախարարությունը պահանջում էր այդ սկզբունքին հետևել նաև ՀԱԽ-ին պատկանող դպրոցներում: Իս. Հարությունյանը հետևյալ կերպ էր մեկնաբանել. «Վրոնի խնդրի վերաբերմասք մենք ըստ էությամբ համաձայն լինելով, ըստ ձևի չէինք կարող համաձայնել, քանի որ դա խախտում էր [մեր դպրոցների] ինքնավարության սկզբունքները»<sup>101</sup>: Լուսավորության նախարարության ճնշման տակ միայն 1919 թ. մայիսի 30-ին ՀԱԽ-ը մի որոշում է արձակել, ըստ որի իր ենթակայության տակ գտնվող դպրոցներում արգելվում էր կրոնի դասավանդումը: Այնուհետև նոր մշակած ու պարտադիր դարձած ուսուցման ծրագրերի մեջ այդ առարկան այլևս տեղ չգտավ:

<sup>98</sup> ՀԱՅՐԵՆԻՔ, 1929, մարտ, էջ 117:

<sup>99</sup> История Грузии (учебник), Тбилиси, 1960, с. 363.

<sup>100</sup> Хроника // КАВКАЗСКОЕ СЛОВО, 4. XII. 1918.

<sup>101</sup> ԱՇԽԱՏԱԲՈՂ, 15. III. 1920:

ՀԱԽ-ի նախազահությունն առաջարկում էր իրեն ենթակա դպրոցներում 1919-1920 ուստարում անշեղորեն գործադրել սույն որոշումը<sup>102</sup>: Թեև եղել էին առանձին դպրոցներ, որտեղ աշակերտուների ծնողները ցանկացել էին շարունակել կրոնի դասընթացները, սակայն դրանք եղել էին ծրագրից և դասացուցակից դուրս: 1920 թ. հունիսին ՀԱԽ-ի դպրոցական վարչությունը դարձյալ մի շրջաբերական էր հղել իր բոլոր կրթարաններին՝ նախազգուշացումով, որ կրոնի դասերի արգելման մասին որոշումն անվերապահորեն իրազործվի<sup>103</sup>: Դրա հետ համաձայն չեն ոչ միայն Հայ Առաքելական եկեղեցու ներկայացուցիչները<sup>104</sup>, այլև ՀԱԽ-ի որոշ անդամներ (Ե.Գ. Տեր-Մինասյան<sup>105</sup> և այլք): ՀԱԽ-ի ոչ մտածված և անխոհեմ այդ որոշումը դարձյալ տարավ հարաբերությունների սրման նրա ու ազգային եկեղեցու միջև: Վիրահայ թեսի առաջնորդարանը ևս մի ապարդյուն փորձ կատարեց իրեն վերաենթարկելու ՀԱԽ-ի ժողովրդական դպրոցները: Կրթարանների վարիչները ստացել էին բարձր հոգևորական այրերի հրահանգները դպրոցներում ճանաչել միմիայն եկեղեցական իշխանության իրավունքները<sup>106</sup>: Դարեր շարունակ հայ

<sup>102</sup> Տե՛ս ՀԱՍ, ֆ. 441, գ. 1, գ. 90, թ. 1:

<sup>103</sup> ՆՈՐ ԽՈՒՔ, 4. X. 1920:

<sup>104</sup> «Վիրահայ Ազգային Խորհրդի գործելակերպից // ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 12. VI. 1919:

<sup>105</sup> Նկատենք, որ Ե.Գ. Տեր-Մինասյանի հուշերում ընդգրկված ՀԱԽ-ի մասին համառոտ դրվագը չի պարունակում կարևոր որեւէ նյութ կամ տեղեկություն սույն կառուցի պատմության ուսումնասիրման տեսանկյունից (տե՛ս Տեր-Մինասյան Ե. Նշվ. աշխ., էջ 90): Հայ ժողովրդական դպրոցներում կրոնի դասերի արգելման մասին ՀԱԽ-ի վավերագրում բացակայում է Ե. Տեր-Մինասյանի ստորագրությունը: Նետևաբար, ՀԱԽ-ի դպրոցական վարչության դեկավարի պաշտոնից 1919 թ. նոյեմբերին նրա հրաժարականը, թերևս, փոխկապակցված էր սույն կնճռու հարցի հետ: Ե. Տեր-Մինասյանը, սակայն, նախընտրել է լուել դրա մասին, քանզի իր հուշերը գրվել են խորհրդային տարիներին:

<sup>106</sup> Հայ կղերականության «ապեկունութիւնը» // ԲԱՆՎՈՐԻ ԶԱՅՆ, 26.X.1919:

Եկեղեցու ազգանվեր գործունեության շնորհիվ էր հայ դպրոցը պահպանել իր ազգային ուրույն դիմագիծը: Այս առումով, Ե. Տեր-Մինասյանը մատնանշում էր. «Կրօնի ուսուցումը առանձնապես մեծ նշանակութիւն ունի այնպիսի դպրոցի համար, որը ցանկանում է լինել ազգային»<sup>107</sup>: Լուսավորության նախարարության տարրական դպրոցների վարչության պետ Գ. Ճումբուրիձեն պնդում էր, թե հայկական ժողովրդական դպրոցները տողորված էին «կերական ոգով», որը նա անընդունելի էր համարում իր «դեմոկրատական հանրապետության» համար<sup>108</sup>: Առաջ քաշված այդ «ծանրակշիռ» կովանը՝ տագնապով ընդունվեց ավանդապաշտ հայ հասարակայնության կողմից: «Մշակի» հոդվածագիրն արձանագրում էր, որ «երբ <...> պետությունը բաժանում է իրենից եկեղեցին, քնական ու տրամաբանական է, որ իր՝ պետական դպրոցների մեջ չափանիվեն և ոչ մի կրոնի դասէր: Բայց երբ <...> այլ ազգի ժողովրդին [ստիպում են] <...> իրենց ազգային ժողովրդական դպրոցներից վերացնել իրենց կրոնը. թերևս մի օր էլ [կարգելեն] իրենց պատմությունը, գուցեւ լեզուն...»<sup>109</sup>:

Դպրոցներում կրոնի դասավանդման վերացման հետ նորից կարևորվել էր վրացախոս հայերի իրավական կացության հիմնահարցը: Կտրվում էր ևս մի կարևոր լար, որը նույնիսկ ուսական տիրապետության ժամանակաշրջանում նրանց կապում էր հայության հետ: Վտանգվել էր վիրահայի ազգային ինքնությունը: «Ի՞նչ արժե դեմոկրատական կարգը Կախեթիայում ապրող վրացախոս հայի համար, - գրում է դեպքերի ականատեսը, - երբ նա գրկած պիտի լինի իր ազգային դպրոցում իր ազգային կրոնը դասավանդվելու իրավունքից, քանի որ հենց կրոնով է որ մնացել է հայ, որ պահել է իր ազգությունը, իր լեզվի հետքերը»<sup>110</sup>: Գիտակցելով հարցի կարևորությունը՝ այն բարձրա-

<sup>107</sup> Դարձյալ կրոնի դասավանդության վերացման մասին // ԺՈՎՐԴԻ ԶԱՅՆ, 1. I. 1919:

<sup>108</sup> Կյմբուրձը Գ. Եսե օբ արմանական ակոլան // СЛОВО, 16. X. 1920.

<sup>109</sup> Խայթունի. Դարձյալ հայ դպրոցների մասին // ՍԵՍԿ, 29. X. 1920:

<sup>110</sup> Տէ՛ս նույն տեղում:

ձայնել էին նաև Զեզվի, Թելեթի, Կոջորի և հայաշատ այլ բնակավայրերի կրթարանների հոգաբարձուները: Նրանք իրավացիորեն մատնանշում էին, որ ՀԱԽ-ի «որոշումը կրօնի դասաւանդութիւնը վերացնելու հայոց դպրոցներից, անցանկալի հետևանք և ազդեցութիւն կունենայ այդ զիտերի վիրախօս հայ ազգաբնակութեան վրայ: Հայ եկեղեցին և կրօնը եղել է մինչև այսօր նրանց միակ կապը իրենց ազգութեան ամբողջութեան հետ»<sup>111</sup>:

ՎՄԴԲԿ-ի կենտրոնի անդամ Լ. Նաթաձեն, արտահայտելով պաշտոնական տեսակետները, պահանջում էր Վրաստանում Հայ Առաքելական եկեղեցու հետնորդներից ոչ բոլորին հայ համարել<sup>112</sup>: Իսկ «Քուրայիսի միջնակարգ դպրոցներից մէկի մանկավարժական ժողովում, -իրազեկում էր ընթերցողին մամուլը, - ազգայնացման հարցի շուրջը եղած վէճերի ժամանակ, մերժմել էր հայերէն լեզվի աւանդելու առաջարկութիւնն այն հասարակ պատճառով, որ մանկավարժական խորհրդի նախազահը ամենալուրջ կերպով պնդել էր, թէ Վրաստանի սահմաններում հայեր չկան, իսկ նրանք, որոնք հայ անունն են կրում, ոչ այլ ինչ են, եթէ ոչ վրացիներ, լուսաւորչական դավանանքով...»<sup>113</sup>: Հետևաբար, երբ կառավարությունը սկսել էր գյուղերում բացել տարրական կրթարաններ «Ճրի և պարտաւորական ուսումնիք ապա այդ դպրոցներում հայ աշակերտութեան համար ոչ միայն հայոց լեզուվ չի տարում դասաւանդութիւնը, այլև այդ լեզուն չի աւանդում իբրև առարկայ»<sup>114</sup>:

Այսպիսով, չի կարելի չնկատել վրացախոս հայերի ուժացման ծրագիրը օր առաջ գործի դնելու և իրականացնելու ակընհայտ ցանկությունը: Դա առաջին դեպքը չէր, երբ վրացիներն այս հարցը բարձրաձայնում էին: 1906 թ. լուս տեսած մի հետազոտության մեջ հեղինակը գրում էր. «Շատ ապշեցուցիչ է և միաժամանակ վշտալի, որ Վրաստանում կարելի է հանդիպել այն-

<sup>111</sup> Տե՛ս ՀԱՍ, ֆ. 441, գ. 1, գ. 63, թ. 8:

<sup>112</sup> ԲՈՐԵԲԱ, 23. VI. 1920.

<sup>113</sup> Ռիոնի ափերից// ՀՈՒՒՉՈՆ, 15. VIII. 1918:

<sup>114</sup> Տե՛ս ՀԱՍ, ֆ. 441, գ. 1, գ. 48, թ. 83:

պիսի վրացի <...> [որը] հայադավանության է պատկանում: Հայադավան վրացիներին այսօր ստիպում են արհամարհել սեփական վրացերենը և դրա փոխարեն խոսել իրենց համար օտար լեզվով: Սակայն, չքավարարվելով դրանով, չեն սովորեցնում նրանց գրել և կարդալ վրացերեն լեզվով»<sup>15</sup>: Նկատենք, որ սույն տողերի հեղինակը, միաժամանակ ստիպված էր խոսովանել, որ հայադավան այդ «վրացիները» համառորեն շարունակում են իրենց հայ կոչել:

Հայերի ազգային ինքնության գորավիզ լինելու պահանջը կարևորվել էր նաև Աբխազիայում: Այստեղ բնակվող հայության 99.3 %-ի համար հայերենը մայրենին լեզու էր, որը բացառիկ բարձր ցուցանիշ էր: Գրագիտության մակարդակով արխազահայությունն ուներ միջին ցուցանիշ, որը կազմում էր 33.6 %, իսկ վերջիններիս 94.4 %-ը գրագետ էր նաև իր ազգային լեզվով<sup>16</sup>:

Վրաստանի ՀԱՆ-ի տարրական դպրոցների վարիչ Ան. Ստամբուլյանը գրում էր, որ 1918-1919 ուստարում «երջանիկ բացառություն է կազմում Սուխումի շրջանը, ուր տեղական [Հայոց] Ազգային Խորհրդի միջոցով վերսկսվել է դպրոցական գործունեությունը։ Այլ տեղերի համեմատությամբ այստեղ մոցված է հայ մանուկների պարտադիր ուսում, բոլոր գյուղերում բացված են դպրոցներ՝ ուսուցիչների բավարար քանակով և նախանձելի վարձատրությամբ»<sup>17</sup>։ Մասունքն էլ ընթերցողներին իրազեկում էր, որ «Արխագիայի Հայոց Ազգ Խորհրդի համար

<sup>115</sup> ქართველი გრიგორიანები. სომხის რჯულის ქართველები. ისტორიული მიმოხილვა შავშელისა [ზაქარი ჭიჭინაძე]. თბილისი, «ცოდნა»-ს გამოცემა, 1906, გვ. 11. Հավելենք, որ այսօր էլ Վրաց որոշ հեղինակներ աշխատում են «հայադապան վրացիների» մասին թերթ Միտքը դարձալ հրամցնել իրենց հանրությանը (տե՛ս Կутատելաձե *K. Об арменизации грузин согласно грузинской периодике на рубеже XIX – XX вв.* // Кавказоведческие разыскания (Тбилисский госуниверситет), Тбилиси, 2010, с. 522):

<sup>116</sup> Ալեքսանյան Հ. Ա. Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1917-1941 թթ., Երևան, 2014, էջ 91:

<sup>117</sup> ΣUU, §. 441, g. 1, q. 26, p. 15:

դպրոցական գործը հոգացողութեան ամենամեծ առարկան է եղել: <...> Չնայած զիտացիների այս տարւայ տնտեսական անմիջաբար դրութեանը, շնորհիւ ծխախոտի <...> ցածր գնի <...> ներկայ [1919–1920] ուսումնական տարում ոչ միայն վերաբացւել են անցյալում գործող դպրոցները, այլ դրանց վրայ աւելացել են բոլորովին նորերը Գագրիի և Կողորի շրջաններում: Ազգ. Խորհուրդը ամենամեծ ուշադրութիւն է դարձրել հնարաւոր սահմաններում ապահովել ուսուցիչների տնտեսական դրութիւնը և ազատել նրանց կենսական մժերքների գների աստիճանական բարձրացումից»<sup>118</sup>:

Վրաստանի հայոց ժողովրդական դպրոցների կանոնադրության հիման վրա էին գործում նաև Աբխազիայի հայկական կորթարանները<sup>119</sup>: Դրանք բոլորը տարրական դպրոցների տեսակին էին պատկանում: Սուխումի քաղաքային, ինչպես նաև Ծերելդայի և Մծառայի դպրոցները երկդասյան էին (իմա՝ 5-ամյա ծրագիր), սակայն Աբխազիայի հայկական այլ կրթարանները ունեին մեկական դասարան (իմա՝ 3-ամյա ծրագիր)<sup>120</sup>, ի տարբերություն պետական դպրոցների, ուր ուսուցումը չորսամյա էր<sup>121</sup>: 1918–1920 թթ. Աբխազիայում հայկական դպրոցների թիվն աճել էր՝ 12-ից դառնալով 30, որտեղ ուսանում էին 1567 աշակերտ, այդ թվում՝ 511 աղջիկ<sup>122</sup>: Դասավանդող 57 ուսուցչի աշխատանքը հսկում էին տեսուչը (Վաղարշակ Աղեկյան, այնուհետև՝ Տիգրան Սողոմոնյան) և հրահանգիչը: Աբխազ ականավոր մանկավարժ և հասարակական գործիչ Անդրեյ Չոչուան վկայում է, որ հայ ուսուցիչները տեղացի չէին և, աշխատանքի հրավիրվելով նոյեմբերից մայիս, վարձատրվում էին բնամթերքով<sup>123</sup>: Ի տարբերություն Վրաստանի հայկական ժողովրդական այլ

<sup>118</sup> Դպրոցական գործը Աբխազիայում // ԲԱՆՎՈՐԻ ԶԱՅՆ, 5. X. 1919:

<sup>119</sup> ՆՈՐ ԱՇԽԱՏԱՎՈՐ, 1. X. 1920:

<sup>120</sup> ՏԵՐ-ՍԻԼԻԱՐՔԵԱՆ 8. Վրաստանի հայոց դպրոցները // ԱՇԽԱՏԱՎՈՐ, 3. VII. 1919:

<sup>121</sup> ԱՇԽԱՏԱՎՈՐ, 22. X. 1920:

<sup>122</sup> ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 409, թ. 63:

<sup>123</sup> Կոչուա Ա. Մ. Հայոց պատմություն, տ. 3., Սուխում, 1976, ս. 90.

դպրոցների, Արխագիայի կրթարանները չեին ֆինանսավորվում ՀԱԽ-ի բյուջեից, դրանց ծախսերն ամբողջովով հոգում էր տեղի հայ համայնքը<sup>124</sup>:

Կառավարությունը մինչև կրթության մասին օրենքի մշակելը որոշել էր ողջ երկրում ինչպես և Արխագիայում, տարրական դպրոցների վարելու գործը հանձնել տեղական գեմսովների վարչություններին<sup>125</sup>:

1920 թ. աշնանը Գ. Ճումբուրիձեն պնդում էր, թէ լուսավորության նախարարությունը պետական գանձարանի հաշվին Արխագիայում պահում է 27 տարրական հայկական դպրոց<sup>126</sup>: Իս. Հարությունյանը գրուն էր, որ «Սուխումի շրջանի [Հայոց] Ազգային Խորհուրդը դիմել է կառավարութեանը և նպաստ խնդրել իր շրջանի 30 դպրոցների համար: Կառավարութիւնը խոստացել է նպաստ տալ և ահա պ. Ճումբուրիձեն այդ դպրոցները ևս մտցրել է [պետական դպրոցների ընդհանուր] թում մէջ, չնայելով, որ այդ դպրոցներն ամբողջովին ենթակայ են Ազգային Խորհրդին [և մինչև] այժմ նոյնիսկ մէկ կոպէկ դրամ էլ չեն ստացել կառավարութիւնից ու անցեալ [1919-1920 ուսիտարի ամբողջովին պահուել են հայ գիւղացիների հաշուով]<sup>127</sup>: Ըստ Սուխումի ՀԱԽ-ի անդամ S. Սողոմոնյանի, «Շրջանի հայ գիւղացին մինչև այսօր տւել է իր [դպրոցների] ուսուցիչներին հաց, իւղ, հաւ և այլն, բայց շնորհիւ այն բանի, որ կառավարութիւնը համարեա սնանկացրել է այդ շրջանի հայութիւնը, նա այսօր անընդունակ է մի կտոր աւելորդ հաց ունենալու, որպէսզի ուսուցիչներին բաժին հատկացնի <...> Սուխումի շրջանում կառավարութիւնը բիւջէի եկամուտների մեծ մասը ստացել է հայ գիւղացու բրտինքով մշակած

<sup>124</sup> ԲԱՆՎՈՐԻ ԶԱՅՆ, 8. VIII. 1920:

<sup>125</sup> Լրատու. Արխագիայի դպրոցներ // ՆՈՐ ԱՇԽԱՏԱԿՈՐ, 26. VIII. 1919:

<sup>126</sup> Ճումբուրիձեն Գ. Դարձեալ հայ դպրոցների մասին // ԱՇԽԱՏԱԿՈՐ, 22. X. 1920:

<sup>127</sup> Հարությունեան Ի. Վրաստանի տարրական դպրոցների գլխավոր վարիչ պ. Ճումբուրիձենի յօղվածի առթիվ // ՄԵԱԿ, 1. X. 1920:

ծխախոտի միջոցով։ Ինչ ու այդ նոյն գիւղացին իրեն իրաւունք չպէտք է համարի կառավարութիւնից պահանջելու <...> իր աշխատանքից ստացած գոնէ մի չնշին մասը և հոգայ իր մանուկի ուսման գործը»<sup>128</sup>.

Ուստի Սուխումի շրջանային ՀԱԽ-ի ղեկավար Խ. Ավդալբեյյանը 1920 թ. սկզբին դիմել էր լուսավորության նախարարին և խնդրել, որ նա պետական միջոցներից աշխատավարձի հավելումներ վճարի Արխագիայի հայկական դպրոցների ուսուցիչներին, ինչպէս դա ընդունված է եղել պետական դպրոցների համար։ Մասուր իրազեկում էր, որ «Սուխումի [շրջանային] Հայոց Խորհուրդն աշխատում է պետութիւնից զեմստուների միջոցով <...> նպաստ ստանալ և պահել իր դպրոցները, որոնք ժողովրդի տնտեսական քայրայման պատճառով ծանր դրութեան մէջ են Խայտնվել»<sup>129</sup>։ Այս հարցով վրաց պաշտոնյաների հետ մի շարք բանակցություններին մասնակից է եղել նաև Վրաստանի ՀԱԽ-ի գործկումի ղեկավար Ա. Երզնկյանը, քանի որ ենթադրվում էր, թե արխազահայ դպրոցներին տրվելիք կառավարական նպաստը կհատկացվի հենց այդ կառույցի միջոցով<sup>130</sup>։ Կառավարությունը արխազահայ դպրոցների ուսուցիչներին խոստացավ փետրվար ամսից սկսած 800-ական ուրիշ հավելում տալ մինչև ֆինանսական նոր տարվա սկիզբը, որից հետո վճարել ամբողջական աշխատավարձ։ Սակայն, ինչպէս գրում է արխազահայ դպրոցների տեսուչ Տ. Սողոմոնյանը, «ոչ մեր դպրոցները և ոչ էլ որեւ ուսուցիչ պետական գանձարկովից ոչ մի կոպէկ չի ստացել»<sup>131</sup>։ Իրականում վարկը տրամադրվել էր 1920 թ. ապրիլին, քանի որ Ճումբուրիձեի ասելով՝ «այդ ժամանակ նախարարութեան մէջ մշակում էր 1920-1921 բիջէտային տարւայ նոր նախահաշիվը և [Արխագիայի] հայկական դպրոցներն առանց արգելքի մտցւեցին պետութեան հաշտով պահուղ կառավարական դպրոցների թվի

<sup>128</sup> ՆՈՐ ԱՇԽԱՏԱԲՈՐ, 2. X. 1920:

<sup>129</sup> ԲԱՆՎՈՐԻ ԶԱՅՆ, 3. X. 1920:

<sup>130</sup> ԱՇԽԱՏԱԲՈՐ, 9. X. 1920:

<sup>131</sup> Դարձեալ պ. Ճումբուրիձեի յօդվածի առքիվ // ՄՇԱԿ, 31. X. 1920:

մէջ»<sup>132</sup>: Երկու կիսամյակների համար նախատեսված դրամը փոխանցվել էր Աբխազիայի գեմստվոներին, սակայն համապատասխան հիմնարկները Սուխումի շրջանային ՀԱԽ-ին այդ մասին չէին իրազեկել: 1920 թ. օգոստոսին կայացել էր շրջանային ուսուցական ժողով, որը Սուխումի ՀԱԽ-ին պարտավորեցրել էր պարզել աշխատավարձերի խոստացված հավելումների ճակատագիրը: Սուխումի ՀԱԽ-ի նախագահ Խ. Ավդալբեզյանը շուտով մեկնեց Թիֆլիս՝ հույս ունենալով գտնել այդ հարցի պատահանը: 1920 թ. սեպտեմբերին, սակայն, Սուխումի շրջանի գավառական գեմստվոների կենտրոնական վարչությունը շրջարարական էր հեղեղ Աբխազիայի հայկական բոլոր դպրոցներին, որով տեղեկացնում էր, թէ նրանք անցնում են գեմստվոների վերահսկողության ներքո և այնուհետև պահպելու էին վերջիններիս միջոցների հաշվին, իսկ նախկին ուսուցիչներն էլ ազատվում են աշխատանքից: Դա նշանակում էր, որ ուսուցիչներին վարձելը և ընդհանրապես դպրոցական գործի դեկավարությունն անցնում է գեմստվոների վարչություններին: Խ. Ավդալբեզյանն իսկույն դիմում է հղում լուսավորության նախարարի տեղակալ Ն. Գ. Ցինցաձեին, որտեղ մանրամասն ներկայացնում է իրավիճակն ու մատնանշում, որ նման «հանգամանքներում Սուխումի շրջանի գեմստուներն անկարող են բաւարար բարձրութեան վրայ պահել հայ ազգային դպրոցները»<sup>133</sup> և նրանք պիտի շարունակվեն պահ-

<sup>132</sup> ԱՇԽԱՏԱԲՈՐ, 22. X. 1920:

<sup>133</sup> Այսպես, Աբխազիայի գավառական գեմստվոները ունակ չէին ինքնուրույն հոգալ իրենց ենքակա դպրոցների կարիքները: Սամուրգական գավառի վարչությունը դիմել էր լուսավորության նախարարությանը Գալիի քառամյա բարձր տեսակի տարրական դպրոցը Փինանսավորելու խնդրանքով: 1919–1920 ուստարում Գումիստայի վարչությանը պատկանող դպրոցներից 6-ը դարձյալ մնում էին փակ ուսուցիչների շինելու հետևանքով: Այդ պարագայում Աբխազիայի գեմստվոները համաձայնության էին եկել լուսավորության նախարարության հետ՝ ազգային դպրոցներն ընդգրկել ընդհանուր պետական ցանկի մեջ (տե՛ս Հրոնիկա: հօգատայստво самурзаканского земства // БОРЬБА, 5. XI. 1919. Նաև՝ Զemskaya и городская жизнь // БОРЬБА, 28. XII. 1919):

վել Հայոց Խորհրդի ղեկավարութեամբ: Կառավարութիւնը պիտի նպաստ տայ հայ դպրոցներին զեմստուների միջոցով: Հայոց Խորհուրդը [դարձայլ] կը կազմի ուսուցչական խմբերը, կը ներկայացնի զեմստուներին ուսուցիչների ոռձիկների հաշիւը և կստանայ դրամը և կը բաշխի նրանց խաշխատավարձը, իսկ տարւայ վերջում ընդհանուր տեղեկագիր կը ներկայացնի իր դպրոցների մասին: Այսպիսով Սուխումի շրջանի Հայոց Ազգ-Խորհրդը իրեն է վերապահում հայ դպրոցների ամբողջ ղեկավարութիւնը, իսկ կառավարական օրգաններին՝ զեմստուներին մնում է միայն ընդհանուր հսկողութեան գործը, որը առանց [կառավարական] նպաստ տալու անզամ նրանց իրաւունքն է»<sup>134</sup>: Վրաց պաշտոնյան, սակայն, Ազդալբեզյանի խնդրանքը մասամբ է ընդունելի համարում և առաջարկում է հայկական ժողովրդական դպրոցները վերջնականապես ենթարկել զեմստվոներին<sup>135</sup>: Քանի որ դա հայկական կողմի համար ընդունելի չէր, բանակցությունները ճախողվեցին<sup>136</sup>:

Իրադարձությունների զարգացան ահա նման ընթացքը ցույց տվեց, որ Աբխազիայի հայկական դպրոցների կարգավիճակի հարցը դարձավ այն փորձաքարը, որը պարզորոշ բացահայտեց պաշտոնական Թիֆլիսի իրական ծրագրերը հայկական ոչ պետական, մասնավորապես ՀԱԽ-ին ենթակա դպրոցների հետագա ճակատագրի նկատմամբ: Լուսավորության նախարար «Ռամիշվիլին հրձվում էր <...> և ուրախ էր, որ Սուխումի [շրջանի հայկական] դպրոցները կառավարությանն են անցել: <...> Եթե Ռամիշվիլին հրձվում է, ուրեմն մի վատ բան է կատարվել մեզ համար»<sup>137</sup>, - իր գործընկերներին տեղեկացնում էր ՀԱԽ-ի վարչության անդամ Արշակ Միանսարյանը: Իս. Հարությունյանն էլ եղածը զնահատում էր իրքն «նախադուռ մեր դպրոցները զեմստվոյական դարձնելու համար»<sup>138</sup>:

<sup>134</sup> ԲԱՆՎՈՐԻ ԶԱՅՆ, 3. X. 1920:

<sup>135</sup> ՆՈՐ ԱՇԽԱՏԱԽՈՐ, 1. X. 1920:

<sup>136</sup> ՆՈՐ ԱՇԽԱՏԱԽՈՐ, 2. X. 1920:

<sup>137</sup> Տե՛ս ԱՇԽԱՏԱԽՈՐ, 9. X. 1920:

<sup>138</sup> Տե՛ս ԱՇԽԱՏԱԽՈՐ, 1. X. 1920:

Աբխազիայի հայկական դպրոցների շուրջ առաջացած քաշքառությունը բացահայտեց կառավարության իրական ծրագրերը: Նախարար Ն. Վ. Ռամիշվիլին այն կարծիքին էր, որ, նախքան պետական նպաստ հասնացնելը, հայկական բոլոր ժողովրդական դպրոցները պետք է պարտադիր և զյսանց հանձնվեին զեմստվոներին<sup>139</sup>: Վիրահայերի մի զգալի հատվածը ծանր տարավ այս հերթական հարվածը: «[Հեմոկրատական հանրապետության] ոչ մի հայ քաղաքացի չէր էլ կարող երնակայել, որ մի գեղեցիկ օր Վրաստանի լուսաւորութեան մինհստրի կողմից առաջարկ կարդի հայկական դպրոցները նրա “խնամքին” հանձնելու»<sup>140</sup>, – զայրանում և ըմբռատանում էր դաշնակցական հոդվածագիրը:

Այսպիսով, հայկական ժողովրդական դպրոցները հայտնրվել էին երկրնտրանքի առօս. նախ հավելյալ դրամական միջոցներ չունենալու հետևանքով անխուսափելիորեն սնանկանալ և այնուհետև փակվել կամ էլ զյսանց ենթարկվել պետական նպաստը բռնած գեմստվոներին, որոնք ամբողջովին արդեն վրացացվել էին: Հեռանկարում, սակայն, վերջին հանգամանքն առաջացնում էր հայկական դպրոցների համար ազգային դիմագիծը կորցնելու երկյուղ:

Ուսուցական մտավորականությունը հայտնվել էր ծայրաստիճան ծանր կացության մեջ Վրաստանում տիրող համընդհանուր և սաստիկ տնտեսական զգնաժամի պատճառով: Մամուլը հաղորդում էր, որ «այն չնշին ոռծիկները (4 մինչև 9 հազար ուլիցի), որ սահմանած են [Վիրայշայոց Խորհրդի կողմից ուսուցիչների համար՝ միանգամայն անրաւարար են: Հազիւթ թէ ընտանիքաւոր մի մարդ կարողանայ այդպիսի ոռծիկով ապրել: Հազիւթ թէ շատ պատրաստած մի անձնատրութիւն համաձայնի ուսուցչական ասպարեզում աշխատել այդպիսի վարձատրութեամբ: Այս հանգամանքը աւելի լուրջ բնույթ է ստանում, եթէ նկատի առնենք, որ քաղաքային և զեմստային դպրոցների ուսուցիչներին, բացի մինհստրութեան սահմանված նորմերից,

<sup>139</sup> Տե՛ս ՆՈՐ ԱՇԽԱՏԱԻՈՐ, 30. IX. 1920:

<sup>140</sup> Տե՛ս ՆՈՐ ԱՇԽԱՏԱԻՈՐ, 29. IX. 1920:

հաճախ տրում է նաև յավելյալ վարձատրութիւն և պարէն<sup>141</sup>: Տեսակետ է հնչում, որ «պէտք է խնդրել Վրաստանի կառավարութիւնից հայկական դպրոցների պահպանութեան համար որևէ զումար համապետական միջոցներից, որոնք լրացնում են հարկերով՝ որ վճարում է այժմ նաև Վրաստանի հայ ազգաբնակութիւնը: <...> [Դա] կը լինի արդարացի և համապատասխան ազգային փոքրամասնութիւնների իրաւունքների [ապահովման] սկզբունքին»<sup>142</sup>: Պատասխանը, սակայն, եղավ այն, թէ ՎԴՀ-ի լրսավորության նախարարությունը դրամ չունի ու չի կարող բավարարել ՀԱԽ-ի դիմումներից և ոչ մեկը<sup>143</sup>:

Հայկական ժողովրդական դպրոցների ֆինանսական վիճակը ծանրանում էր նաև նրանով, որ վրաց «առցիալիստական» կառավարությունն իրականացնում էր հայ ուննոր խավի սնանկացման քաղաքականություն: Դրա հետևանքով ՀԱԽ-ը ձեր կարողանում անհրաժեշտ գումար հանգանակել: ՀԱԽ-ի վարչության անդամ Ան. Սուտամբուլյանը հայտնում էր, որ հայզգի «հարուստները դժւարանում են իրանց վրայ դրած տուրքը վճարելու և խորհրդի դրութիւնը կամաց-կամաց կրիտիկական է դառնում»<sup>144</sup>: Հետևաբար, մամուլում այն միտքն է հնչում, որ «միայն բարեգործական միջոցներով ու այլ պատահական եկամուտներով չի կարելի խոշոր դպրոցական գործ կազմակերպել»<sup>145</sup>:

Ըստ Վրաստանի ՀԱԽ-ի նախազահության դեկավար Բ. Թոփյանի, «անցյալ տարվա [ֆինանսական եկամուտների] բացը ծածկելու համար վրաց կառավարությանը արված դիմումը մերժվել էր, իբր թէ ազատ վարկ չունենալու պատճառով: Հայաստանի կառավարությունը ոչ մի հնարավորություն չունի Վրաստանի

<sup>141</sup> Անելիքներ // ՆՈՐ ԱՇԽԱՏԱԲՈՐ, 30. IX. 1920:

<sup>142</sup> Վերմիշեան Խ. Մեր դպրոցների դրութիւնը // ՄԾԱԿ, 17. II. 1920:

<sup>143</sup> Ճումբուրիձե Գ. Դարձեալ հայ դպրոցների մասին // ԱՇԽԱՏԱԲՈՐ, 22. X. 1920:

<sup>144</sup> ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 91, թ. 14:

<sup>145</sup> Վրաստանի Հայոց ազգային խորհրդի դպրոցական քաղաքականութիւնը // ՆՈՐ ԽՕՍՔ, 13. IX. 1920:

հայկական դպրոցների ծախսերը, եթե ոչ ամբողջ, ապա գոնք մեծ մասը իրեն վրա վերցնելու<sup>146</sup>: Ուսումնական տարվա հենց սկզբից հայկական դպրոցները կանգնած են փակման վտանգի առաջ»<sup>147</sup>: ՀԱԽ-ի գործկոմի փարիչ Ա. Երգնլյանն էլ գտնում էր, թե ստեղծված պայմաններում հայկական բոլոր դպրոցները պետք է ենթարկվեն պետությանը: «Հայկական ժողովրդական դպրոցները չպետք է հակադրել զեմստվայականներին»<sup>148</sup>, – իր միտքը այսպէս էր եղրափակում Ա. Երգնլյանը:

Ֆինանսական խնդրի լուծումից բացի, ՀԱԽ-ը ցանկանում էր օրինականացնել իր տնօրինության տակ գտնվող ժողովրդական դպրոցները, որոնց գրանցման համար լուսավորության նախարարությանը ներկայացվել էին բոլոր հիմքերը: Այդ դիմումին, սակայն, պատասխան չտրվեց<sup>149</sup>: Կարծիք էր ձևավորվել, որ Վրաստանի «կառավարութիւնը զիտակցօրէն սարոտաժի է մատնում [Հայոց] Ազգային Խորհրդի դիմումները, ամիսներով ձգձգում նրանց պատասխանելը, որպէսզի փաստորէն զրկի Խորհրդին դպրոցական գործը վարելու հնարավորութիւնից»<sup>150</sup>:

Վրաստանի լուսավորության նախարարը հայկական ժողովրդական դպրոցների համար նշանակել էր կառավարական վերաստուգիչ (ոմն Մամուլով), որը, վրաց պաշտոնյաների հավաստիացումների համաձայն, օժտված էր միայն տեղեկատվական գործառույթով և, իբր, չէր միջամտելու հայկական կրթարանների ներքին անցուղարձին: Այս հարցը 1920 թ. մարտին քննության առարկա դարձավ Վրաստանի ՀԱԽ-ում: ՎՄՌԿ-ի խմբակցությունը միակն էր, որի անդամները հակված էին ճա-

<sup>146</sup> Օգնության խնդրանքով դիմելու փաստը հաստատում է նաև Ա. Զամայանը. «Վիրահայ Ազգային Խորհուրդը հարկադրված էր Հայաստանի կառավարութեան Նիթական օգնութեանը դիմել՝ Վրաստանի հայկական դպրոցների անխուսափելի փակումը կանխելու համար» (տե՛ս ՀԱՅՐԵՆԻՔ. 1929, ապրիլ, էջ 147):

<sup>147</sup> ՀԱՍ, ֆ. 441, գ. 1, գ. 91, թ. 23:

<sup>148</sup> ՀԱՍ, ֆ. 441, գ. 1, գ. 91, թ. 25:

<sup>149</sup> ԱՇԽԱՏԱԲՈՂ, 15. III. 1920:

<sup>150</sup> ՆՈՐ ԱՇԽԱՏԱԲՈՂ, 29. IX. 1920:

նաշել նախարարության վերահսկման իրավունքը: ՀԱԽ-ը, սակայն, մերժեց ՎՄԴԿ-ի առաջարկը<sup>151</sup>, քանզի իր «Թեզեր»-ում որդեղրված վիրահայության մշակութային ինքնավարության սկզբունքները չէին նախատեսում պետական մարմինների որևէ միջամտություն հայկական ժողովրդական դպրոցների գործերին:

1920 թ. աշնանը ՀԱԽ-ում տեղի ունեցան բուռն քննարկումներ՝ նվիրված Վրաստանում հայկական ազգային դպրոցի ճակատագրին: Լեռն (Ա. Բաբախանյան) իր գործընկերների ուշադրությունը սենուեց սկզբունքային մի շարք հարցերի վրա: «Խոսում են այն մասին, ասում եր ականավոր պատմաբանը, - թե դրամը ամեն բան պետք է որոշի: <...> Ուրեմն, եթե վրաց կառավարությունը մեզանից շատ դրամ ունի, մի թե դա կնշանակի, որ նա մեզանից ավելի լավ կտանի դպրոցական գործը, կամ մեր դպրոցները ավելի մոտ կլինեն նրա սրտին, քան մեր սրտին: <...> Հայ մանուկ սերնդի համար դպրոցը խորթ չպետք է լինի: <...> Եթե վճռել եք Սուխումի [ՀԱԽ-ի] պես «փրկել» դպրոցական գործը՝ մի մոռացեք, որ այդ դեպքում մենք Վրաստանում ընդմիշտ կորցնում ենք ազգային դպրոց պահելու իրավունքը: <...> Եթե կան կարծիքներ, թե կարելի է դպրոցները զեմստվոներին հանձնել, ապա այդպիսիները թող գիտենան, որ մենք կզերադասենք մեր դպրոցները փակել, քան օտարին հանձնենք<sup>152</sup>: Մեկնարանությունները, թերևս, անտեղի են, քանզի «հայկական համարում է միայն այն, ինչ որ պահուում ու դեկավարուում է հայի ձեռքով ու միջոցներով»<sup>153</sup>:

Սանուկ սերնդի կրթության և դաստիարակության անշափ կարևոր գործը միշտ էլ եղել է հայ հասարակայնության ուշադրության և հոգատարության կիզակետում: Ուստի մեր ավանդապաշտ մտավորականությունը ձգտում էր լրացնավորության միջոցով ազգի համար կրթված անհատներ պատրաստելու: Մայր

<sup>151</sup> ԲԱՆՎՈՐԻ ԶԱՅՆ, 14. III. 1920:

<sup>152</sup> ԱՇԽԱՏԱՀՈՐ, 8. X. 1920:

<sup>153</sup> Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի դպրոցական քաղաքականությունը // ՆՈՐ ԽՕՍՔ, 13. IX. 1920:

Հայրենիքից օտարված և աշխարհով մեկ սփոված հայ համայնք-ները առաջնային խնդիրներից են համարել սեփական դպրոց-ների բացումը և դրանց պահպանումը:

«Յայտնի է, - տեղեկացնում էր ընթերցողին «Մշակ» լրագիրը, - որ վրաց կառավարութեան և Վրաստանի Հայոց Ազգային խորհրդի մէջ կայացած համաձայնութեան հիման վրայ՝ մինչև Սահմանադիր ժողովի կողմից օրէնք հրապարակուելը - փորրամասնութեանց ինքնաւարութեան մասին - հայոց դպրոցները մնում են նախկին դրութեան մէջ. այսինքն լիովին անկախ և ինքուրոյն կազմակերպութեամբ, սակայն գեմստվօներն իրաւունք են համարում ինկատի չառնել այդ հանգամանքը:

Զեմստվօները ցանկանալով աւելացնել իրենց շրջանի դպրոցների թիւը, նոր դպրոց են բաց անում հենց այն զիւղում, որտեղ արդէն հայ դպրոց կայ, թէն շրջակայ մի քանի զիւղեր մնում են առանց դպրոցի:

Երբեմն էլ շբաւականալով դրանով իրենց բացած դպրոցը տեղատրում են հայ դպրոցի շէնքի մէջ, այդ դեռ բաւական չէ, պատահում են դէպքեր, որ զեմստվօն գրաւելով հայ դպրոցի շէնքը կ տեղատրուելով այնտեղ՝ խլում է նաև դպրոցական կարասիքը, նստարանները, գրասեղանները, գրատախտակը և հայ դպրոցի ուսուցիչն ու երեխանները մնում են դրւար <...>

Պատահել են դէպքեր էլ, երբ զեմստվօները ցանկացել են նաև իրենց իրաւասութիւնից բարձր խնդիրներ վճռել և այդ ուղղութեամբ պահանջներ արել - օրինակ՝ նրանք ժխտել են հայ դպրոցի և հայոց լեզուի գոյութեան իրաւունքը և պահանջել, որ հայ դպրոցում բոլոր առարկաններն աւանդուեն վրացերէն լեզուով և, երբ այդ պահանջը չի իրագործուել, ուժով փակել են դպրոցը»<sup>154</sup>:

Հետևաբար, Վրաստանի իշխանությունները ազգային փոր-րամասնությունների մշակութային ինքնավարության խնդրի մասին վճռի կայացումից շատ առաջ արդէն հարմար պատրվակ

<sup>154</sup>Տե՛ս Վրաստանի գեմստվօները եւ հայոց դպրոցները // ՍՇԱԿ, 9. II. 1921:

էին փնտրում հայկական ինքնավար ժողովրդական դպրոցները պետականացնելու համար: Դա իրականացվեց Վրացհեղիկոսի ոռոշմամբ, երբ երկրի հանրակրթական բոլոր հաստատությունները 1921 թ. ապրիլի 15-ին անխորհրդական ժողովում ընթարկվեցին լուսավորության ժողովաստին<sup>155</sup>:

Այսպիսով, հանրագումարի բերելով վերը շարադրած նյութը, կարելի է հանգել հետևյալ եզրակացության.

- ✓ հայազգի և վիրայալները նպատակ ունեին վիրահայերի, ջավախահայերի և արխազահայերի համար ստեղծել այնպիսի դպրոց, որտեղ մատուց սերունդը ոչ միայն կուսաներ հայագիտական առարկաներ, այլ նաև կդաստիարակվեր ազգային ու ավանդապաշտ ոգով, ինչը հուսալի երաշխիք կլիներ ուժացման վտանգից խուսափելու համար,
- ✓ ՎՇՀ-ի իշխանությունները մտադիր էին ՀԱԽ-ին զրկել վիրահայերի, ջավախահայերի և արխազահայերի ազգային գործերը տնօրինելու իրավունքից,
- ✓ փաստորեն, մինչև անգամ ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնավարության խնդրի մասին վերջնական վճիռը, պետական ասոյանները ժամ առաջ փորձում էին յուրացնել Վրաստանում ինքնուրույն գործող հայկական ժողովրդական դպրոցների համակարգը,
- ✓ ազգային բոլոր կրթարանները վրացացված գեմստվոներին ենթարկելու լուսավորության նախարարության պարտադիր պահանջը հայկական դպրոցների համար նշանակում էր սեփական դիմագիծը կորցնելու երկյուղ:

<sup>155</sup> Атанелишвили А.Г. Против буржуазной фальсификации истории Советской Грузии. Тбилиси, 1983, с. 213.

Եկել է ժամանակը բազմակողմանի քննարկել կովկասագիտության համար կարևորություն ունեցող և հետաքրքրություն շարժող Վրաստանի նորագույն պատմության կնճռու հիմնախնդիրները։ Առավել ևս, որ վրաց առաջին հանրապետության պատմությունը լուսաբանող աղյուրները դեռ լիարժեք ուսումնասիրված չեն և, թերևս, նորովի մեկնաբանման կարիք ունեն։ Խոսքը, գերազանցապես, երկրում ազգային հարցի առաջացման և արմատավորման մասին է։ Ուստի, արդի հետազոտողը պարտադրված է նյութը շարադրելիս հաշվի նատել վերռիիշյալ կարենոր հանգամանքի հետ, և, հետևաբար, իր վերլուծություններն անցկացնի սույն պրիզմայի միջով։ Թեմայի ճիշտ լուսաբանումը և վերծանումը ոչ պակաս կարենոր է նաև վրաց-հայկական ազգամիջյան փոխհարաբերությունների պատմության ուսումնասիրման տեսանկյունից։

Սույն մենագրությունը գրելիս մեր առաջ նպատակ էինք դրել, մասլով պատմական կոնկրետ ժամանակի՝ տվյալ դեպքում 1918–1921 թթ. շրջանակներում, ուրվագծել հասարակական-քաղաքական այն համապատկերը, որն իշխում էր Վրաստանում ազգային հարցի բներացման բնագավառում։ Հանրապետություն հոչակելով՝ վրաց առաջնորդները երկրի բոլոր ազգություններին շրայլ խոսումներ էին տալիս նորաթուիս պետության կազմում նրանց լուսավոր ու բարգավաճ հեռանկարների մասին։ Իրենց հայրենիքը «դեմոկրատական» երկիր հայտարարելով՝ վրաց վերնախավը, հետևաբար, պեսոր է իր վրա վերցներ նաև պարտականություն՝ հետևել ժողովրդավարության ժամանակի չափանիշներին, քանի որ նրանց համար այդ առումով օրինակ էին ծառայում եվրոպական քաղաքակրթական հենքի վրա կառուցված մոդելները։

Նշենք, որ վրաց վերնախավն իր ցեղակիցների ինքնորոշմամբ ազգային հարցը մեծամտաբար համարեց լուծված Վրաստանին բաժին ընկած բոլոր տարածքներում։ Վրացական կառավարությունը, որը, ինչպես հայտնի է, հաստատվել էր գերմա-

նական սվինի օժանդակությամբ, այլևս չեր ուզում հաշվի նստել երկրի ոչ վրաց ազգությունների շահերի հետ: Դրանով իսկ, նախ և առաջ, անտեսվեց սեփական ճակատագիրը տնօրինելու ազգային փոքրամասնությունների օրինական իրավունքը: Ավելին, ազգային հաղածանքը, որը գոյություն ուներ ոուսական ինքնակալության ժամանակ, «մենշևիկյան» կառավարության խորական քաղաքականության հետևանքով երկրում ընդունեց էլ ավելի կատարյալ ձև: Վրացական կողմն իր «ազգային խորհուրդ» կոչված կառույցը կամայաբար օժնեց օրենսդրական լայն իրավունքներով: Քաղաքացիության մասին օրենքը եղավ այն առաջին գործիքը, որը կիրառվեց ազգային փոքրամասնություններին իրավագուրկ դարձնելու համար: Երկրորդի դերում հանդես եկավ լեզվի մասին օրենքը: Երկրի բոլոր բնազավառների սրբաց վրացականացումը, իբր, պայմանավորված էր սեփական լեզվի պահպանման վրաց մտավորականների պահանջով: Այս «վեհ» զաղափարները, սակայն, ունեցան նաև իրենց ստվերային կողմը: Վրացականացման քաղաքականությունը բացահայտեց մեկ այլ նպատակ ևս: Բանն այն է, որ լեզուն դարձավ այն հմտությունը, որի միջոցով ջարդվեցին օտարազգի մտավոր ուժերը և երկրի պետական կառավարման լայն ասպարեզը բացվեց միայն վրաց վերնախավի համար: Նրա ձեռքն անցան որոշումների ընդունման բոլոր լծակները: Դա միանշանակ տարավ դեպի արհեստական մեկուսացում և վրաց պետության նկատմամբ օտար դարձրեց ազգային փոքրամասնությունների բազմազանությունը, ինչը վերջիններիս միջավայրում ծնեց սեփական ինքնակար միավորներ ունենալու անդրդվելի ցանկություն: Վրաց քաղաքական վերնախավն արհեստականորեն կասեցնելով մի շարք ազգությունների ինքնորոշման գործընթացը, ինչպես նաև երկրի ոչ վրաց բոլոր ազգություններին զրկելով քաղաքացիական լիակատար իրավունքներից, այդպիսով, ասպարեզ բերեց ազգային թեժ հարցը: Հետևաբար, վերջինիս կարգավորման պահանջը, որպես առաջնահերթ և առանցքային գերխնդիր, մոռավ Վրաստանի քաղաքական օրակարգ, քանզի արխազները, օւերը, թուրք-մեսխեթցիները և աջարները ցանկանում էին գործնա-

Ազգային փոքրամասնությունների կացության չլուծված խնդիրները հրաշալի առիթ էին ստեղծել թէ՝ ուս «սպիտակ» մեծապետականների և թէ Ռուսաստանի կոմունիստական կառավարության համար միջամտելու Վրաստանի գործերին: 1918-ին վերածնված վրացական անկախ պետականությունը, երեք փոքրկուտ տարիների ընթացքում անցնելով բազում փորձությունների միջով և բախվելով շատ ու շատ վտանգավոր և կնճռու խնդիրների հետ, ի վերջո, հայտնի պատճառներով, անկարող եղավ դիմագրավել Խորհրդային Ռուսաստանի զինված հարձակմանը: Դետք է, սակայն, փաստել, որ ներքին քաղաքականության բազմատեսակ և կնճռու խնդիրները, առաջին հերթին ազգամիջյան փոխարարքերությունների կարգավորման ոլորտում, իրենց լուծումը չգտնելով Վրաստանի Դեմկրատական Հանրապետության գոյության շրջանում, օրակարգի մեջ էին մնում նաև խորհրդային կարգերի հաստատումից հետո:

Ստալինյան վարչակարգի բոնատիրության տարիներին ԽՍՀՄ-ում ստեղծված քաղաքական թունավոր մթնոլորտը ևս նպաստեց վրացական ազգայնական ծրագրերի իրականացմանը: Տարբեր պատրվակներով և, նույնիսկ, «միջազգայնականության» հաստատման կարգախոսների քողի տակ ոչնչացվեցին բազմաթիվ ոչ վրացական պատմամշակութային կոթողներ, առաջին հերթին հայկական եկեղեցիներ և գերեզմանատներ: Ավելին, Վրաստանում բնակվող ազգային փոքրամասնությունները դարձան էթնիկ զուման թիրախը, որին զոհ գնացին հազարավոր հայեր, ասորիներ, թուրք-մեսիսէթցիներ, գերմանացիներ, հույներ... Այսպիսով՝ Կրեմլ, փորձելով վրաց հանրությանը հաշտեցնել խորհրդային իշխանության գերակայության զադափարի հետ, այս կամ այն չափով նաև ներողամսություն էր դրսնորում վրացական ազգայնական տարրերի ծավալապաշտական ձգուումների նկատմամբ: Այդ «աշքակապությունը», ի վերջո, «փոքր կայսրության» վերածեց Խորհրդային Վրաստանը:

Ազգային փոքրամասնությունների կացության շղուծված խնդիրները հրաշալի առիջ էին ստեղծել թե՝ ոուս «սպիտակ» մեծապետականների և թե՝ Ռուսաստանի կոմունիստական կառավարության համար միջամտելու Վրաստանի գործերին: 1918-ին վերածնված վրացական անկախ պետականությունը, երեք փորորկուտ տարիների ընթացքում անցնելով բազում փորձությունների միջով և բախվելով շատ ու շատ վտանգավոր և կնճռուտ խնդիրների հետ, ի վերջո, հայտնի պատճառներով, անկարող եղավ դիմագրավել Խորհրդային Ռուսաստանի զինված հարձակմանը: Պետք է, սակայն, փաստել, որ ներքին քաղաքականության բազմատեսակ և կնճռուտ խնդիրները, առաջին հերթին ազգամիջյան փոխհարաբերությունների կարգավորման ոլորտում, իրենց լուծումը զգունելով Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության գոյության շրջանում, օրակարգի մեջ էին մնում նաև խորհրդային կարգերի հաստատումից հետո:

Ստալինյան վարչակարգի բոնասիրության տարիներին ԽՍՀՄ-ում ստեղծված քաղաքական թունավոր մթնոլորտը ևս նպաստեց վրացական ազգայնական ծրագրերի իրականացմանը: Տարբեր պատրվակներով և, նույնիսկ, «միջազգայնականության» հաստատման կարգախոսների քողի տակ ոչնչացվեցին բազմաթիվ ոչ վրացական պատմամշակութային կոթողներ, առաջին հերթին հայկական եկեղեցիներ և գերեզմանատներ: Ավելին, Վրաստանում բնակվող ազգային փոքրամասնությունները դարձան էթնիկ զուման թիրախը, որին զոհ գնացին հազարավոր հայեր, ասորիներ, թուրք-մեսխեթցիներ, զերմանացիներ, հույներ... Այսպիսով՝ Կրեմլը, փորձելով վրաց հանրությանը հաշտեցնել խորհրդային իշխանության գերակայության զաղափարի հետ, այս կամ այն չափով նաև ներողամտություն էր դրսնորում վրացական ազգայնական տարրերի ծավալապաշտական ձգուումների նկատմամբ: Այդ «աշքակապությունը», ի վերջո, «փոքր կայսրության» վերածեց Խորհրդային Վրաստանը:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂՔՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

### 1. ՏՊԱԳԻՐ ՍԿԶԲՆԱՂՔՅՈՒՐՆԵՐ

#### ա) ուսուերեն

- 1.1. Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии [под ред. Войтинского В.С.]. Тифлис, 1919.
- 1.2. MEMORANDUM, Учредительному Собранию о Национальном Самоуправлении армян в Грузии. [Тифлис, 1921].
- 1.3. Документы внешней политики СССР, том III. Москва, 1959.
- 1.4. Борьба за победу советской власти в Аджарии, документы и материалы (1917-1921). Батуми, 1961.
- 1.5. Борьба за Октябрь в Абхазии (1917-1921). Сборник документов и материалов. Сухуми, 1967.
- 1.6. Дни господства меньшевиков в Грузии. Документы и материалы (составитель Девдариани Г.). Тифлис, 1931.
- 1.7. «Демократическое» правительство Грузии и английское командование. (Составитель и автор предисловия Сеф С. Е.) // КРАСНЫЙ АРХИВ (журнал, Москва), 1927, № 21, с. 122-173.
- 1.8. Документы об армяно-грузинском пограничном споре в Лори (декабрь 1920 г.- январь 1921 г.). (Составитель и автор предисловия Сукиасян А.) // ИФЖ (журнал, Ереван), 2010, № 1, с. 253-262.

#### բ) Վրացերեն

- 1.9. საქართველოს დემოკრატიული რესპუბლიკის 1921 წლის յონსტიტუცია (90 წლის გადასახედიდან), II გამოცემა, ბათუმი, 2013. [Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության 1921 թվականի Սահմանադրությունը (90-ամյակի տարեդարձը) II հրատարակություն, Բաթումի, 2013]

#### գ) անգլերեն

- 1.10. Adjara and The British Empire 1918-1921, Second Edition (Selections from The British National Archives on Adjara). London, 2008.

**η) հայերեն**

- 1.11. Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն). Փաստաթղթերի ժողովածու, կազմողներ՝ Գալոյան Գ. և ուրիշ, Երևան, 2000.

**2. ՀՈՒՇԵՐ ԵՎ ԵՐԿԵՐ**

**ա) հայերեն**

- 2.1. Զամալեան Ա. Հայ-վրացական կնճիռ (առաջարանը և ծանոթագրությունները՝ Խ. Ստեփանյանի), Երևան, 2011:
- 2.2. Խատիսեան Ա. Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, 1968:
- 2.3. Վրացեան Ս. Հին թղթեր նոր պատմութեան համար, Բեյրութ, 1962:
- 2.4. Միմոնյան Ե. Ախալցիսան կրակե օղակում՝ 1917-1921 թթ. դեպքերի հուշագրություն, Երևան, 2000:
- 2.5. Ռուբեն. Հայ յեղափոխականի մը յիշատակները, Է հատոր, Լու Անջելես, 1952:
- 2.6. Տեր-Մինասյան Ե. Հուշեր իմ կյանքից (Պ. Սուրայյանի խմբագրությամբ և առաջարանով), Երևան, 2005:
- 2.7. Էջեր Մանուկ Աբեղյանի պատմահրապարակախոսական ժառանգությունից (Կազմող, առաջարանի և ծանոթագրությունների հեղինակ Ս. Զաքարյան), Երևան, 2013:

**բ) ռուսերեն**

- 2.8. **Авалов З. Д.** Независимость Грузии в международной политике (1918-1921 гг.). Париж, 1924.
- 2.9. **Жордания Н. Н.** Моя жизнь. Стэнфорд, 1968.
- 2.10. **Байков Б.** Воспоминания о революции в Закавказье (1917-1920 гг.) // Архив Русской Революции, том IX. Берлин, 1923, с. 91-194.
- 2.11. **Величко В. Л.** Кавказ: Русское дело и междуплеменные вопросы. Москва, 2003.
- 2.12. Воспоминания участников гражданской войны в Юго-Осетии. Сталинири, 1957.

- 2.13. Воронович Н. В. Меж двух огней (Записки зеленого) // Архив русской революции, том VII. Берлин, 1922, с. 53-183.
- 2.14. Воронович Н. В. «Зелёные» повстанцы на Черноморском побережье // Деникин-Юденич-Врангель: Мемуары (Революция и Гражданская война в описаниях белогвардейцев, 2-е изд., сб. сост. Алексеев С. А.). Москва – Ленинград, 1931, с. 159 – 206.
- 2.15. Джугели В. Тяжёлый крест (Воспоминания народогвардейца). Тифлис, 1920.
- 2.16. Квинитадзе Г. И. Мои воспоминания в годы независимости Грузии, 1917–1921. Париж, 1985.
- 2.17. Мещеряков Н. Л. В меньшевистском раю (Из впечатлений поездки в Грузию). Москва, 1921.
- 2.18. Сталин И.В. Сочинения, том V. Москва, 1947.
- 2.19. Чочуа А. М. Собрание сочинений, том III. Сухуми, 1976.
- 2.20. Фавицкий В. Зелёная армия в Черноморье // ПРОЛЕТАРСКАЯ РЕВОЛЮЦИЯ (Исторический журнал Испарта, Москва), 1924, № 8-9, с. 43-71.
- 2.21. Лукомский А. С. Деникин и Антанта // Деникин-Юденич-Врангель: Мемуары (Революция и Гражданская война в описаниях белогвардейцев, 2-е изд., сб. сост. Алексеев С. А.). Москва – Ленинград, 1931, с. 74 – 115.

**գանգերեն**

- 2.22. Bechhofer C.E. In Denikin's Russia and the Caucasus, 1919-1920. London, 1921.

**3.ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՅԼ  
ՈՒՍՈՒՄՆԱՄՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**ա) հայերեն**

- 3.1. Մելքոնյան Ա. Ա. Զավախյը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Երևան, 2003:
- 3.2. Մելքոնյան Ա. Ա. Նյութեր Ախալցխայի և Ախալքալաքի դպրոցների պատմությունից (19-րդ դար – 20-րդ դարի սկիզբ), Երևան, 2005:

- 3.3. Ալեքսանյան Հ. Ս. Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1917-1941 թթ., Երևան, 2014:
- 3.4. Սարգսյան Վ. Հայ-Վրացական հարաբերությունները 1918-1921թթ., Երևան, 2002:
- 3.5. Մանուչյան Ա. Ս. Ախալցիսայի և Ախալքալաքի զավառների 1918-ի ինքնապաշտպանությունը, Երևան, 1992:
- 3.6. Կնյազյան Դ. Աղրբեջանական դեմոկրատական հանրապետության կովկասյան քաղաքականությունը 1918-1920 թթ., Երևան, 2008:
- 3.7. Մաիլյան Բ. Վ. Արխագիայի կարգավիճակի հիմնահարցը 1917-1921 թթ., Երևան, 2008:
- 3.8. Հակոբյան Ա. Հայաստանի Հանրապետության պարբերական մամուլի պատմություն 1918-1920 թթ., Երևան, 2005:
- 3.9. Հակոբյան Վ.Ա. Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության ձևավորումը և առաջին քայլերը, Երևան, 2015:
- 3.10. Վարդանյան Գ. Վ. Մշակույթը Հայաստանի առաջին Հանրապետությունում, Երևան, 2003:
- 3.11. Զարքարյան Ա. Հ. Շիրվանզադեի հրապարակախոսական ժառանգությունից (1914-1919 թթ.), Երևան, 2006:

**բ) ուսւերեն**

- 3.12. **Минасян С.** Этнические меньшинства Грузии: потенциал интеграции на примере армянского населения страны. Ереван, 2006.
- 3.13. **Ментешашвили А.** Октябрьская революция и национально-освободительное движение в Грузии (1917-1921). Тбилиси, 1987.
- 3.14. **Мерквиладзе В. Н.** Создание и укрепление советской государственности в Грузии (1921-1936). Тбилиси, 1969.
- 3.15. **Хармандарян С. В.** Ленин и становление Закавказской федерации (1921-1923). Ереван, 1969.
- 3.16. **Драбкина Е.** Грузинская контр-революция. Ленинград, [1928].
- 3.17. **Эристов-Шарвашидзе Н.** Памятная записка о нуждах грузинского народа. Москва, 1906.

- 3.18. Мирцхулава И. И. Аграрно-крестьянский вопрос в Грузии в 1900-1921 гг. Тбилиси, 1978.
- 3.19. Махарадзе Ф. Диктатура меньшевистской партии в Грузии. Москва, 1921.
- 3.20. Жвания Г. Великий Октябрь и победа советской власти в Грузии. Тбилиси, 1987.
- 3.21. Карапетян С. Мэры Тифлиса. Ереван, 2003.
- 3.22. Ишханян Б. Метаморфоза грузинской социал-демократии (причины и критика явления). Баку, 1919.
- 3.23. Ишханян Б. Экономические и общественные основы армяно-грузинского антагонизма (критический анализ). Тифлис, 1914.
- 3.24. Джапаридзе А. Месхети: мусульманизация грузин. Тбилиси, 2008.
- 3.25. Волхонский М., Муханов В. По следам Азербайджанской демократической республики. Москва, 2007.
- 3.26. Шафир Я. Тайны меньшевистского царства. Тифлис, 1921.
- 3.27. Плиев Б.З. Борьба трудящихся Южной Осетии за советскую власть в 1917-1921 гг. Цхинвали, 1977.
- 3.28. Дзидзоев В. Д. Кавказ конца XX века: тенденции этнополитического развития (историко-политологическое исследование). Владикавказ, 2004.
- 3.29. Дзидзоев В. Д., Дзулаев К. Г. Южная Осетия в ретроспективе грузино-осетинских отношений. Цхинвал, 2007.
- 3.30. Очерки истории Юго-осетинской автономной области, том I. Тбилиси, 1985
- 3.31. Цховребов В. Д., Санакоев М. П. Южная Осетия в период трех революций. Тбилиси, 1981.
- 3.32. Блиев М. М. Южная Осетия в коллизиях российско-грузинских отношений. Москва, 2006.
- 3.33. Топчишвили Р. Осетины в Грузии: миф и реальность. Тбилиси, 2009.
- 3.34. Захаров В. А. и др. Абхазия и Южная Осетия после признания: исторический и современный контекст. Москва, 2010.
- 3.35. Амия М. [Орахелашвили Д. И.]. Путь грузинской Жиронды. Тифлис, 1926.
- 3.36. Гамахария Дж., Гогия Б. Абхазия – историческая область Грузии (исторические документы, материалы, комментарии с древнейших времен до 30-х годов XX века). Тбилиси, 1997.

- 3.37. Гурко-Кряжин В. А. Абхазия (изд. Научной Ассоциации Востоковедения при ЦИК СССР). Москва, 1926.
- 3.38. Дзидзария Г. А. «Киараз» (об Абхазской революционной крестьянской дружине 1917-1921 гг.). Сухуми, 1981.
- 3.39. Басария С. Абхазия: в географическом, этнографическом и экономическом отношении. Сухум-Кале, 1923.
- 3.40. Лежава Г. П. Изменение классово-национальной структуры населения Абхазии. Сухуми, 1989.
- 3.41. Дзидзария Г. А. Очерки истории Абхазии. Тбилиси, 1963.
- 3.42. Деникин А. И. Очерки русской смуты. В 3-х книгах. Книга третья – Вооруженные силы Юга России. Москва, 2005.
- 3.43. Вадачкория Ш. Вопросы грузино-армянских взаимоотношений в политической мысли Грузии (1918-1920). Тбилиси, 1999.
- 3.44. Сталин И. Марксизм и национальный вопрос. Ленинград, 1950.
- 3.45. Шаумян С. О национально-культурной автономии. Москва, 1959.
- 3.46. Осипов А., Никифоров И. Национально-культурная автономия: идея и реализация – эстонский опыт. Таллин, 2008.
- 3.47. Атанелишвили А. Г. Против буржуазной фальсификации истории Советской Грузии. Тбилиси, 1983.
- 3.48. Лакоба С. З. Очерки политической истории Абхазии. Сухуми, 1990.
- 3.49. Чугаенко Ю. А. Грузия – Южная Осетия: исторические первопричины противостояния. Киев, 2013.

#### q)шынqлეрEն

- 3.50. Silogava V. & Shengelia K. History of Georgia: from the ancient times through the «Rose revolution». Tbilisi, 2007.
- 3.51. Lang D.M. A modern history of Georgia. London, 1962.
- 3.52. Suny R.G. The making of the Georgian nation. California (USA), 1988.
- 3.53. Kazemzadeh F. The struggle for Transcaucasia (1917-1921). New York, Oxford, 1951.
- 3.54. Pipes R. The formation of the Soviet Union (Communism and Nationalism 1917-1923). Cambridge, Massachusetts (USA), 1964.
- 3.55. Melkonyan A.A. Javakhk: in the 19<sup>th</sup> century and the 1<sup>st</sup> quarter of the 20<sup>th</sup> century (A historical research), Yerevan, 2007.

### դ)Վրացերեն

- 3.56. յարտցելո ցրոցորուանցօ (Սռմես ՌՋՇԱԼՈՍ յարտցելք-ծօ. ութորուցլո մօմօնեօլցա Շաշվելուս Դայարո չոշո-նաց). տօնութու, «Հոռօճա»-Ե ցածրութա, 1906. [Լուսա-վորչական վրացիներ (Շավելիի [Զաքարի Ճիճինաձե] պատմական տեսությունը՝ Հայկական դավանանքի վրա-ցիներ), Թբիլիսի, «Ցողոնա», 1906:]
- 3.55. յայցլու Ռ. Ջ. տօնութու մռասաելցուծա 1803-1970 թթ. (Սբաթուսթոյշր-շյոնոմոյշրո նարյացյո), տօնութու, 1979. [Կակուխա Շ. Թբիլիսիի բնակչությունը 1803-1970 թթ. (տնտեսավիճակագրական ակնարկ, Թբիլիսի, 1979):]

## 4. ԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒԵՐ ԵՎ ՀԱՆԴԵՍՆԵՐ

### ա) հայերեն

- 4.1. Աբեղեան Ա. Ազգային փորրամասնութիւնները Անդրկով-կասում // ՀԱՅՐԵՆԻՔ (հանդես, Բոստոն), 1929, ապրիլ, էջ 65-78:
- 4.2. Սկակով Ա. Աբխազիայի հայերը անցեալում եւ ներկայում // Համշէն եւ համշէնահայութիւն (գիտաժողովի նիւթեր), Երևան-Պէյրութ, 2007, էջ 81 - 86:
- 4.3. Ղաֆադարյան Վ. Գ. Ախալցխայի 1917-1918 թթ. ինքնա-պաշտպանական կոիվները // ԲԱՆԲԵՐ Հայաստանի ար-խիվների, 1988, № 1, էջ 142 - 160:
- 4.4. Դարբայան Խ. Հայոց արևտրատնտեսական ներկայությունը Թիֆլիսում (ուշ միջնադար - 1918 թ.) // 21-րդ ԴԱՄ (ամսա-գիր, Երևան), 2008, № 1 (19), էջ 124-151:
- 4.5. Մելիքյան Վ. Հ. Անդրկովկասյան Կոմիսարիատի սոցիալ-տնտեսական և կրթական-լուսավորական գործունեությու-նը // ԼՐԱԲԵՐ հասարակական գիտությունների, 2010, № 3, էջ 23-39:

4.6. Հակոբյան Ա. Հայաստանի Հանրապետության անկախության ուղին // ՊԲՀ, 2008, № 1, էջ 20-33:

բ) լուսերեն

- 4.7. **Маилян Б. В.** К вопросу о политическом статусе Абхазии (март 1917-февраль 1921 гг.) // ВЕСТНИК Российско-Армянского Университета (гуманитарные и общественные науки), 2009, № 2 (8), с. 27-43.
- 4.8. **Маилян Б. В.** «Сочинский вопрос» в российско-грузинских отношениях (июль 1918 г.– май 1920 г.) // Третья годичная научная конференция Российско-Армянского Университета. Сборник. Часть I. Ереван, 2009, с. 77-82.
- 4.9. **Маилян Б. В.** К вопросу о территориальном конфликте на Черноморском побережье Кавказа (июль 1918 г.– май 1920 г.) // Историческое пространство (Проблемы истории стран СНГ), Москва, 2013, с. 174-207.
- 4.10. **Маилян Б. В.** Армяне в контексте миграционных процессов в Абхазии и её этнополитической истории конца XIX – начала XX веков // Наири (Альманах: сборник материалов об Армении и армянской диаспоре). Ниж. Новгород, 2013, № 6, с. 169-187.
- 4.11. **Маилян Б. В.** Краткий очерк изгнания армян из Джавахка в 1918 году // Седьмая годичная научная конференция Российско – Армянского Университета. Сборник научных статей. Ереван, 2013, с. 77-83.
- 4.12. **Маилян Б.В.** К проблеме актуализации вопроса самоопределения Грузии на рубеже XIX и XX веков // Историческое пространство (Проблемы истории стран СНГ), Москва, 2014, с. 33-61.
- 4.13. **Маилян Б.В.** О некоторых аспектах армяно-грузинских отношений на рубеже XIX и XX веков // Армения и христианский Кавказ (Республиканский симпозиум, посвященный 1700-летию принятия христианства в Кавказской Албании и Грузии, Ереван, 15-16 декабря 2015 г.), Ереван, 2015, с. 143-146.
- 4.14. **Закарян А.** Малоизвестный исторический документ (грузино-турецкое соглашение 1914 г.) // ИФЖ (журнал, Ереван), 2005, № 3, с. 254-257.

- 4.15. Оганджанян А. А. Банки Закавказья до установления советской власти и идея создания «Армянского банка» // ИФЖ, 1970, № 1, с. 227-232.
- 4.16. Кутателадзе К. Об арменизации грузин согласно грузинской периодике на рубеже XIX – XX вв. // Кавказоведческие разыскания (Тбилисский госуниверситет), Тбилиси, 2010, с. 519-529.
- 4.16. Тверитинов И.А. Гибель Абхазского госархива // ОТЕЧЕСТВЕННЫЕ АРХИВЫ (журнал, Москва), 1994, № 4, с. 124-125.
- 4.17. Цвижба Л.И. Гибель документальных источников Республики Абхазия (1992 г.) // ВЕСТНИК АРХИВИСТА (журнал, Москва), 2001, № 1 (61), с. 256-263.
- 4.18. Куртов А. А., Вьюнов В. Н. Миф о попранной демократии // КАВКАЗСКИЕ НАУЧНЫЕ ЗАПИСКИ (журнал, Москва), 2010, № 1 (2), с. 163-185.
- 4.19. Попов А. Л. Из эпохи английской интервенции в Закавказье // ПРОЛЕТАРСКАЯ РЕВОЛЮЦИЯ (Исторический журнал Испарта, Москва), 1923, № 6-7, с. 222-274.
- 4.20. Чумалов М. Ю. Этнокультурное развитие армян в Абхазии // Малые и дисперсные этнические группы в Европейской части СССР. Москва, 1985, с. 106-119.
- 4.21. Симоненко Р.Г. Национально-культурная автономия на Украине 1917-1918 годах // ВОПРОСЫ ИСТОРИИ (журнал, Москва), 1997, № 1, с. 50-63.
- 4.22. Гатагова Л.С. Революция 1917 г. и этнополитическая ситуация на Кавказе // История народов России в исследованиях и документах. Москва, 2004, с. 145-158.
- 4.23. Гасымов З. Азербайджан и Грузия в период становления (1918-1921 гг.): военное строительство и сотрудничество в военной сфере // КАВКАЗ & ГЛОБАЛИЗАЦИЯ (журнал, Институт стратегических исследований Кавказа, Баку. Central Asia & Central Caucasus Press AB, Швеция, Lulea), 2007, № 1, с. 113-121.

բ) Վրացերեն

- 4.24. Ճշճարագյ ծոբօթ. Առմենիա ծարքական հոգո և այսական շալութի (XX ամյակների 10-ամյա վայրեն) // Հարություն

დიპლომატია, წელიწდეული, ტომი V. თბილისი, 1998, გვ. 485-497. [Կուպատաձեն Բ. Հայկական բուրժուազիայի դերը Վրաստանում (XX դարի 10-ական թվականներ) // Վրացական դիվանագիտություն, տարեգիրք, հատ. V, Թբիլիսի, 1998]

- 4.25. Տասոտօց զելա, զենցրալո ածյալ (ծալո) մայաժայուղո და մշեսեց-չացաեցտուս Տայոտեխ (1918 թ.) // յարտցու დიპლომატიա, წელიწդეუլո, ტომი VI, თბილისი, 1999, გვ. 306-324. [Սահիթիձե Գ. Գեներալ Աբել (Բալո) Մադաշվիլի և Մեսխեթ-Զավախեթիայի հարցը (1918 թ.) // Վրացական դիվանագիտություն, տարեգիրք, հատ. VI, Թբիլիսի, 1999]
- 4.26. յշաբածած ծონքո. Տայարտցցալուս օշինեմուս Տայոտեխ Ռუսյուս IV Տատառօնութուն // յարտցու დიპլომաტიա, წელიწդեպալո, ტոմի VI. თბიլიսი, 1999, გვ. 222-233. [Կուպատաձեն Բ. Վրաստանի ինքնավարության հարցը ուսական IV Պետական դրումայում // Վրացական դիվանագիտություն, տարեգիրք, հատ. VI, Թբիլիսի, 1999]
- 4.27. չացաենժայուղո լցջալա, մյորյ օնքյընացորնալուս լցջացուուս զո՞նօցի Տայարտցցալութուն და յարտցու პայման 1920 წյալս // յարտցու დიպլոմաტიա, წელიწդեպալո, ტոմի VII. თბიլიսი, 2000, გვ. 480-488. [Զավախիշվիլի Լ. Երկրորդ Բնտերնացիոնալի պատվիրակության այցը Վրաստան և 1920 թվականի վրացական մամուլ // Վրացական դիվանագիտություն, տարեգիրք, հատ. VII, Թբիլիսի, 2000]

## 5. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՅՔԵՐԻ ՑԱՆԿ ա) ուսերեն

- 5.1. Кавказский Календарь на 1917 г. Тифлис, 1916.
- 5.2. Население Закавказья (Всесоюзная перепись населения 1926 г. Краткие итоги. Издание ЗакЦСУ). Тифлис, 1928.
- 5.3. Энциклопедический словарь, русского библиографического института «Гранат», том III, V. Москва, 1911.
- 5.4. История Грузии. Учебник под ред. Бердзенишвили И. Тбилиси, 1960.

- 5.6. Вачнадзе М., Гурули В. История Грузии (XIX-XX века). Учебное пособие. Тбилиси, 2004.
- 5.7. История Абхазии. Учебное пособие под ред. Лакоба С. З. и др. Гудаута, 1993.
- 5.8. Щуциев А. Атлас этнополитической истории Кавказа (1774-2004). Москва, 2006.
- 5.9. Тедеева У. Ш. Национальный вопрос в Грузии и проблема самоопределения южных осетин в 20-е годы XX века // НАУЧНЫЕ ВЕДОМОСТИ Белгородского государственного университета. Серия: История. Политология. Экономика. Информатика. 2012, выпуск № 19, том 24. Ст. и [http://cyberleninka.ru/article/\[28.03.2014\]](http://cyberleninka.ru/article/[28.03.2014]).
- 5.10. Мемед Абашидзе и Армения. Ереван, 2010.

### բ)Վրացերեն

- 5.11. საქართველოს ისტორია. XX საუკუნეები. (სახელმძღვანელო ისტორიის ფაკულტეტის სტუდენტებისთვის.) თბილისის უნივერსიტეტის გამომცემლობა, თბილისი, 2003. [Վրաստանի պատմություն, XX դար, ուսումնական ձեռնարկ պատմության ֆակուլտետի ուսանողների համար, Թբիլիսիի պետական համալսարանի հրատարակչություն, Թբիլիսի, 2003]

### գ)հայերեն

- 5.12. Ով ով է. Հայեր. Կենսագրական հանրագիտարան, հատ. I, Երևան, 2005:

## 6. ՊԱՐՔԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒՀ

### ա) հայերեն

- 6.1. ՀՈՐԻԶՈՆ [ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ], հասարակական, գրական, քաղաքական օրաթերթ ՀՅԴ արևմտյան բյուրոյի, Թիֆլիս, 1918:
- 6.2. ՄՇԱԿ, քաղաքական-գրական ամենօրյա լրագիր, Թիֆլիս, 1918-1921:
- 6.3. ԱՇԽԱՏԱԲՈՐ [ՆՈՐ ԱՇԽԱՏԱԲՈՐ], բանվորական և գյուղացիական օրաթերթ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան կողմանը, Թիֆլիս, 1918-1921:

թյան Վրաստանի կենտրոնական և Թիֆլիսի տեղական կոմիտեների, Թիֆլիս, 1918-1920:

- 6.4. ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ, քաղաքական, հասարակական, գրական օրաթերթ, Թիֆլիս, 1918-1919:
- 6.5. ՆՈՐ ԽՈՍՔ, սոցիալ-դեմոկրատական (ինտերնացիոնալիստների) շաբաթաթերթ, Թիֆլիս, 1920:
- 6.6. ԲԱՆՎՈՐԻ ԶԱՅՆ, Վրաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության հայկական սեկցիայի օրգան՝ շաբաթաթերթ, Թիֆլիս, 1919-1921:
- 6.7. ԳՈՐԾԱՎՈՐ, սոցիալ-դեմոկրատական հնչալյան կուսակցության Թիֆլիսի մասնաճյուղի օրգան՝ շաբաթաթերթ, Թիֆլիս, 1919:
- 6.8. ՅԱՌԱԶ, աշխատավորական օրաթերթ, ՀՅԴ Վրաստանի կենտրոնական կոմիտեի օրգան, Թիֆլիս, 1919:
- 6.9. ԼՐԱԲԵՐ, հասարակական, քաղաքական և գրական լրագիր, Թիֆլիս, 1918:

#### բ)ուսերեն

- 6.10. БОРЬБА, ежедневная газета, издание Центрального Комитета социал-демократической рабочей партии Грузии, Тифлис, 1918-1921.
- 6.11. ГРУЗИЯ, ежедневная газета, издание грузинской национал-демократической партии, Тифлис, 1918-1919.
- 6.12. ЖИЗНЬ НАЦИОНАЛЬНОСТЕЙ, еженедельное издание Народного комиссариата по делам национальностей (Наркомнаца), Москва, 1920.
- 6.13. ЗАКАВКАЗСКОЕ СЛОВО, ежедневная газета, Тифлис, 1919.
- 6.14. КАВКАЗСКИЙ ВЕСТНИК, ежемесячный научно-литературный журнал, Тифлис, 1905.
- 6.15. КАВКАЗСКОЕ СЛОВО, ежедневная газета, Тифлис, 1918-1919.
- 6.16. НАРОДНОЕ ЗНАМЯ, издание Закавказского комитета российских социалистов-революционеров, Тифлис, 1919.
- 6.17. СВОБОДНАЯ ГРУЗИЯ [ВЕСТНИК ГРУЗИИ], ежедневная газета, издание Верховного Совета Республики Грузия, Тбилиси, 1991.

- 6.18. СЛОВО, ежедневная газета, Тифлис, 1920-1921.
- 6.19. СОЦИАЛ-ДЕМОКРАТ, еженедельная газета, издание Закавказского оргкомитета Российской социал-демократической рабочей партии, Тифлис, 1919.
- գ)Վրացերեն
- 6.20. «Տայառություն Ռյածածկով», մտաշրոბություն («Սարքավելու Ռեսպուբլիկա»/«Վրաստանի Հանրապետություն», կառավարակամ լրաբեր, Թիֆլիս), 1919.
- 6.21. «Երտուծա», որգանու Տայառություն և օրգանական մասնակիություն («Էրթուրա»/«Միասնություն», Վրաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության կենտրոնական կոմիտեի օրաթերթ, Թիֆլիս), 1917-1919.
- 6.22. «Տայառություն», Տայառություն և յուղագործություն («Սարքավելու»/«Վրաստան», Վրաստանի ազգային դեմոկրատական կուսակցության զիսավոր կոմիտեի օրաթերթ, Թիֆլիս), 1918-1919.
- 6.23. «Տաեալեռ Տայթյ», մտաշարություն («Սարքավելու»/«Մարտական ազգային դեմոկրատական գործ»), Վրաստանի սոցիալիստ-փեղերախախտների հեղափոխական կուսակցության զիսավոր կոմիտեի օրաթերթ, Թիֆլիս), 1918.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	5
Գլուխ I. ՎՐԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՍՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ .....	11
Գլուխ II. ԱԶԱՐԻԱՅԻ ԵՎ ՍԱՍՑԻՆ - ՄԵՍԽԵԹԻԱՅԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՊԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՀԱՎԱԲԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՔԱՏՈՒՄ.....	56
Գլուխ III. ՀԱՐԱՎԱՅԻՆ ՕՍԵՐԻ ԻՆՔՍՈՐՈՇՄԱՆ ՀԱՐՑԸ.....	87
Գլուխ IV. ՎՐԱՑ-ԱԲԽԱԶԱԿԱՆ ՓՈԽԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	105
Գլուխ V. ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹՈԶԱԽԸ ԱԲԽԱԶԻԱՅՈՒՄ.....	120
Գլուխ VI. ՎՐԱՍՏԱՆԻ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՉԻՈՒՄ ԵՎ ՏԵՂԻ ՀԱՅ ՀԱՍՏԱՔԻ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ .....	154
Գլուխ VII. ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՃՈՒՄԸ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	168
Գլուխ VIII. ՎԻՐԱՀԱՅԵՐԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՆՔՍԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԵԼՈՒ ԾՐԱԳԻՐԸ .....	201
Գլուխ IX. ՀԱՅԵՐԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽԸՆ-ԴԻՐՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ .....	218
ՎԵՐՋԱԲԱՆ .....	262

ԲԵՆԻԱՄԻՆ ՎԻԿՏՈՐԻ ՍԱԻԼՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՀԱՅԵՐԻ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ  
ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
(1918 – 1921 թթ.)

BENIAMIN VIKTOR MAILYAN  
NATIONAL ISSUE AND STATE OF ARMENIAN  
POPULATION IN THE REPUBLIC OF GEORGIA  
(1918 – 1921)

БЕНИАМИН ВИКТОРОВИЧ МАИЛЯН  
НАЦИОНАЛЬНЫЙ ВОПРОС И ПОЛОЖЕНИЕ АРМЯН  
В РЕСПУБЛИКЕ ГРУЗИЯ  
(1918 – 1921 гг.)

Համակարգչային էջադրումը՝ Վ. Պայտանի

Հրատ. պատվեր N 712  
Ստորագրված է տպագրության՝ 14.09. 2016 թ.:  
Չափսը՝ 60 × 84 <sup>1</sup>/<sub>16</sub>: Թուղթ՝ N 1, օֆսեթ տպագրություն:  
17.5 տպագր. մամուլ:  
Տպարանակը՝ 150 օրինակ:  
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան  
Երևան, Բաղրամյան 24:

13000 m.J

ԳԱԱ Դիմնարար Գիտ. Գրադ.



FL0438004

